

ՆՈՐ ԵՐԶԱՆ

IV ՏՈՒՐ

# ՄՈՒՐՁ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ս. Գ Ի Ր

№ 12

Փ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր

1904



Խ Ի Յ Լ Ի Ս

Արագաստիկ Ա. Բուժաթէրաճէի

Նիկոլայեակի փող., № 21.

Скоропечатни Ар. Кутумеладзе, Ник. ул., № 21.

1904

# ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## № 12

	Նրբ.
1. ԿՈՅՐԸ (պատկերներ գիւղից), Վ. Փափազեանի . . .	5
2. ՉՄՐՈՒԽՏԵԱՅ ԵՐԳԵՐ ոտան. Ա. Խասակեանի . . .	39
3. ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ, (վերջ) Ծերունկի . . .	40
4. ՉԱՐԼՁ ԴԻԿԵՆՁԻ ԾՆՆԴԵԱՆ ԱՐՉԱԿ ԵՐԳԵՐԻՑ, Թարգմ. բնագրից Միխիթար ՏԼԸ-Անդրէ- ասեանցի . . . . .	72
5. ԼՈՒՌ ԿԱՅ, ոտան. Յովն. Յովնանիսեանի . . .	95
6. ԴԱՐԱԼԱԳԵԱՉ ԿԱՄ ՎԱՅՈՅ ՉՈՐ, Մ. Տ.-Ա.-ի . . .	73
7. ԱՂԲԻՐԻ ՄԷՉ, ոտան. Ա. Խասակեանի . . .	106
8. ՄԻ ԲԱՆԻ ՕՐ ԱՐՅԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ, Լ. Սար- գրսեանի . . . . .	107
9. ԱՄՊԻԿ (Պուշկին), ոտան. Հասօր . . . . .	126
10. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.—Բանաստեղ Ակակի Ծերեմեկին:—Վրաց մամուլի յօդուածները հայերի մասին:—Հրատարակչական գործը եւ գրական նորու- թիւններ:—Վրական ինքի կազմելու իղմեր, Տ. Փի- րումեանի . . . . .	127
11. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) Ռ. Խանազադի «Խղէալիզ մէ Մատրիալիզմ».—2) Շերամի «Սիրոյ Չոմեր».—3) «Պարատու ծառ- րի բուժարան եւ այլիք» Եղբ. Գ. և Մ. Փրիդոնեանց- ների.—Էր. Սար: . . . . .	133
12. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ. . . . .	138
13. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ.—Բիօլոգիական նշանաւոր տե- տեմիւններ: Ժառանգականութեան վերաբերեալ մէտ- րիաներ: Զարգացման եւ «արդէտներ» մէտրիաներ: Զարդ Վարվինի վարդապետութիւնը: Սամոնէլ Բա- լաղեանի . . . . .	139
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Վատաստական կանոնադրու- թիւնների 40-ամեակը:—Հիմնական բեֆորմների սերտ կարը:—Ի՞նչ է պահանջում ուսու լաւագոյն ինտելիգեն- ցիան:—Ի՞նչ Թումանովները եւ „НОВ. ОБОЗР.“ Լ. Ս. Ֆինլանդական, սէյմի բացումը:—Վատաստա- նական վճիռներ:—Մամուլի միջանի օրդանների մասին պատժական կարգադրութիւններ: † Ա. Ն. Պըպլին:	

Նոր շրջան IV տարի

Հրատ. XVI տարի

# ՄՈՒՐՃ

ԳՐԵԿՆԵՆ, ՀԵՍՏԵՐԵԿԵԿՆ ԵՒ ՔԵՂԵՔԵԿՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 12

Փ Ե Կ Տ Ե Մ Ի Ե Ր

1904



Թ Ի Ճ Ի Ս

Ցպարան Ա. Զուժանիսյանի, Նիկ. № 21.

Скоропечатня Ар. Кутателадзе, Ник. ул., № 21.

1904

Дозволено цензурою. Тифлисъ, 10 декабря 1904 года

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## № 12

	Երե.
1. ԿՈՅՐԸ (պատկերներ գիւղից), Վ. Փափազեանի . . .	5
2. ԶՄՐՈՒԽՏԵԱՅ ԵՐԳԵՐ ոտան. Ա. Խասակեանի . . .	39
3. ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ, (վերջ) Ժերուկի . . .	40
4. ԶԱՐԼԶ ԴԻԿԵՆԶԻ ԾՆՆԴԵԱՆ ԱՐՁԱԿ ԵՐԳԵՐԻՑ, Թարգմ. բնագրից Մխիթար Տէր-Անդրէ- ասեանցի . . . . .	72
5. ԼՈՒՌ ԿԱՅ, ոտան. Յովհ. Յովհաննիսեանի . . .	95
6. ԴԱՐԱԼԱԳԵԱԶ ԿԱՄ ՎԱՅՈՅ ՁՈՐ, Մ. Տ.-Ա.-ի . . .	73
7. ԱՂԲԻՒՐԻ ՄԷՁ, ոտան. Ա. Խասակեանի . . .	106
8. ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ԱՐՅԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՆԻՒԲՈՒՄ, Լ. Սար- գըսեանի . . . . .	107
9. ԱՄՊԻԿ (Պուշկին), ոտան. Հասօի . . . . .	126
10. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.—Բանաստեղ Ակակի Մերեթելին:—Վրաց մամուլի յօդուածները հայերի մասին:—Հրատարակչական գործը եւ դրական նորու- թիւններ:—Գրական իրոնց կազմելու իղձեր, Տ. Փի- րումեանի . . . . .	127
11. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) Ռ. Խանազադի «Իդէալիզմ թէ Մատերիալիզմ».—2) Չ. Շերամի «Սիրոյ Ձոներ».—3) «Պողատու ծառե- րի բուժարան եւ այգիք» Եղբ. Կ. եւ Մ. Փրիդոնեանց- ների.—Եր. Սար: . . . . .	133
12. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ . . . . .	138
13. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ.—Բիօլոգիական նշանաւոր տե- սութիւններ: Ժառանգականութեան վերաբերեալ թէօ- րիաներ: Զարգացման եւ «աղէտների» թէօրիաներ: Զարդ Գարվինի վարդապետութիւնը: Սամուէլ Բա- լաղեանի . . . . .	149
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Դատաստանական կանոնադրու- թիւնների 40-ամեակը:—Հիմնական բէթորմների սերտ կապը:—Ի՞նչ է պահանջում ուսու լուսագոյն ինտելիկեն- ցիան:—Իշ. Թումանովները եւ „НОВ. ОБОЗР.“ Լ. Ս. Ֆինլանդական, սէյմի բացումը:—Դատաստա- նական վճիռներ:—Մամուլի միջանի օրդանների մասին պատժական կարգադրութիւններ: † Ա. Ն. Պրզպին:	

— Աստուածաշունչը մաթորուսերէն:— Էջմ. Սինոդի կարգադրութիւնը ու ցանկալի լրացում նրա մէջ:— Սիօնիստների սրտգամաւորութիւնը ներք. գործ. միմիատրրին: 149

15. ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻԻՆ.— Պորտ-Արտուրի վիճակը: . . . 155

16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . 156

17. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ . . . . . 159

18. ՊՈՍՏԱՐԿՂ. . . . . 160

19. ՎՐԴՊԱԿՆԵՐ. . . . . —

20. «ՄՈՒՐՃ» 1901—1904 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ . . . 161

21. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . . 175

22. ՅԱԻԵԼՈՒԱԾ. Ջէյմս Մորիէր՝ «ՀԱՁԻ ԲԱՐԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարսպետեան. 337—408

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ զրել պարզ, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէտագրութեան, ուղղագրութեան և նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը և՛ բնագիրը:
2. Չբնորոնուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացուած են: ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնուում:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեանն առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարուած են անվճարելի:
4. Խմբագրութիւնն իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուշնի» համարը շտապուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:
6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկին նամակագրոջմ կամ պոստային բլանկ:
7. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպ.: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի խմբագրատանը իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով:

# Կ Ո Յ Ր Ը \*

(Պատկերներ գիւղից)

## I

Չնայելով որ ճոթեղէնի երկու խանութ միայն կար  
գիւղական հրապարակում, բայց կիրակոսեաց Գալօինը  
անհամեմատ աւելի լաւն էր:

Նախ որ, Սարօսեաց Թորոսի խանութի նման «Վհու-  
դի բազար» չէր. այսինքն, ամենինչ միմեանց կողքի և  
երար վրայ լցրած՝ մի նեղ ու ցածրիկ ծակ.—մաստակը  
չթի կողքին, պապիրոսը ապակու մօտ և ձէթի տակա-  
ռի առաջ, նէֆտի ու մազուտի ամաններն էլ, ներս  
մտնելուն պէս, ըթիգ տակը:

Ո՛չ, Գալօի աղան ծառայել էր քաղաքում, մարդ  
էր տեսել, խանութ կառավարել գիտէր: Ճոթեղէնը  
կարգով, մաքուր դարսած խանութի մի մասում, ա-  
ռանձին, ապակէպատ դռնով բաժանմունքի մէջ, իսկ  
այս միւսը՝ ծառայում էր միմիայն մանրունքի—ապա-  
կեղէն, երկաթեղէն, ուտելիք, ծխելիք. մազուտը, ձէթ  
ու նէֆտն էլ ծածկուած դռան ետեւը:

Բացի դրանից, խանութի առջև գանուտղ հովանո-  
ցածև պատշգամբը աւելի լայն էր, գետինը աւաղ վը-  
ռած, սինները հարթ դռնաւորած. իսկ դռան կողքին  
Գալօի աղան խնամքով շինել էր մի երկար նստարան,  
վրան խոտով ու կտաւով օթոց կապած:

\*) Այս, նախընթաց և յետագայ պատկերները, թէև միմեանցից անկախ,  
բայց ունին իրենց մէջ մի ընդհանուր կապ: Ծ. հեղին.

Այդտեղ էր, որ գիւղի մէջ մի պառայից յետոյ, վարժապետը հրաւիրեց մեզ նստելու:

Իսկապէս տեսարանն էլ այդտեղից վատ չէր: Ճիշտ մեր գիմացը, ցցուած էր շաքարի գլխի նմանող Ծաղկասարը—ամենաբարձր այդ բլուրը լեռնադաշտի մէջ, որի կրճքից դէպի վտակն էր խոնարհուել գիւղը իր տըների մէջ կզմինդրեայ տանիքներով և գլխին, իբր աննման ծոպաւոր զարդ, ունէր կարմիր, դեղին և կապոյտ շերտերից խառն մի ստուեր, որ վայելչօրէն նօսրանալով ծայրերից, գոյնզգոյն երիզներ էր դնում պուրակի կողերին, հասնում—գդոււմ էր ամենաբարձր կէտին կռթնած ժայռերը և երկնքի պարզ-կապոյտ խորքի վրայ նկարում գեղատեսիլ գունազանութիւն (nuance):

Ծաղկաւետ զառիվայրի վրայ էր կանդնած գիւղը: Պարտէզների շարքը հասնում էր մինչև դաշտը կտրուկ վտակին, այնուհետև, ոչ-աւելի քան երեք վերստ լայնութիւն ունեցող արտերի ծայրից ցցոււմ էին անտառոտ լեռների կոյտերը:

Եւ ծաղիկ, ծաղիկ, բլուրաւոր, անհաշիւ, անուշահոտ ու կենսապարար: Առաւօտեան թարմ օդի մէջ բուրում էին նրանք արբեցնելու չափ:

Այնտեղ ուր նստել էինք, գրեթէ գիւղի կենտրոնն էր, ցեխոտ ու ապտտ մի փոքրիկ տարածութիւն, բացուած երեք գլխաւոր փողոցների միացման կէտի վրայ: Հինգ թէ վեց էին խանութները, երևում էին—գերծակ, կոչկակար, այլև մի պայտառ, որ կըռած մի անկիւնում, պայտեր էր շինում:

Գիւղացիներ այդ պահուն, շատ չկային կանգ առած հրապարակի վրայ, եղածներն էլ ցանուցբիւ կանգնել խօսում էին այս-այն խանութի առած, մինչ սայլեր ճռճաւով, կովեր բառաչելով՝ ծանօթէն անցնում էին մեր առջևից:

—Ինչպէս է, հաւանում էք մեր գիւղը:

Առաջնորդել էր մեզ, ցոյց էր տուել զեղեցիկ շքր-շակայքը, գիւղական սիրուն եկեղեցին, հրաւիրել էր

ճաշակելու սառնորակ ու անուշահամ աղբիւրների ջրերը և այժմ ուզում էր մեր ապաւորութիւնը իմանալ:

—Օ՛ր, այն, դրսիս է այստեղ, գոչեց ոգևորութեամբ ծերունի ընկերս—երևի այստեղ ապրողը չի մեռնիլ:

Սիւնին կռթնած և մեզ ականջ դնող Գալօի որդին և վարժապետը ծիծաղեցին:

—Ձի մեռնիլ, սասց վերջինս—ինչպէս չէ, դուք խօ տեսնք մեր գերեզմանատունը:

—Այո, բայց շատ գերեզմաններ չկային:

—Նորն է, հինը լցուել է արդէն... Հիւանդութիւններ շատ կան դիւզում, միամիտ եղէք, այստեղ էլ մարդիկ մեռնում են... և գուցէ աւելի շատ՝ բան քաղաքում:

—Ի՞նչպէս, հիւանդութիւններ այսպիսի շրջալ բընութեան մէջ...

Վարժապետը ժպտեց, յետոյ պահ մի մերամտածոտ մնաց և ծերունի ընկերոջն դառնալով, սասց.

—Ինչպէս երևում է, դուք վաղուց է որ քաղաքից դուրս չէք եկել... Այս բոլորը նոր և շափաղանց սուր հակադիր է քաղաքի սեղմ օդին, փաշտն ու ժխտին... Այն, բայց մենք... չէ որ մենք ծնել ենք սրան մէջ, սովոր ենք տեսնելու այս ամենը:

—Բնական է, դիտեցի ես:

—Այո, բայց... շարունակեց նա—բայց այս բոլորը արդէն ձանձրացրել, վաղուց ձանձրացրել է մեզ, եթէ կ'ուզէք՝ նոյնիսկ անտանելի դարձել... Ձեզ նման եկաւորները միայն, երբ սրանչացումն են արտայայտում, միքանի ըստով յաջողում են հրապոյրի նշոյլներ զարթեցնել մեր մէջ՝ դէպի հայրենիքի հողն ու անտառը... Անշարժ, անկեանք գեղեցկութիւն, միշտ միեւնոյն բանը՝ միեւնոյն տեղում, ամեն ըստէ... Եւ վերջապէս ի՞նչ կայ զմայլելու... ճշմարիտ է, վարդ ու ծաղիկով լի է երկիրը, բայց չէ որ փուշեր կան, սրբան փշեր... Ո՛չ, մարդկանց կողմիցը՝ իրան կարգին—դա անհաշիւ է, ա-

հաւոր. սակայն հէնց բնութիւնը ինքն էլ փշեր է արտադրում. արիւնոտող, յօշոտող փշեր...

— Դուք յոռետես էք. երևի մշտապէս անփոփոխ, այլև միակերպ կեանքը զգուեցրել է ձեզ:

— Սյո... մշտապէս միակերպ... Սկսում է մարդ նոյնիսկ ատելութիւն զգալ դէպի այդ ամենը... Մեր պարտէզն օրինակ. մանել չեմ կարող, ծնուած օրիցս նա ամեն օր աչքիս առջևն է իր սիրտ խառնող միաձևութեամբ... Գոնէ հնար լինէր փոփոխելու, ուրիշ ձև տալու նրան...

— Բարեզարդեցէք, նոր ծառեր տնկէք, մշակեցէք... Ի՞նչն է խանդարում ձեզ:

Վարժապետը դուրսը երերցրեց, յետոյ դառն ժըպիտով ձեռքը պարզեց դէպի դաշտ ու լեռ և ասաց.

— Ի՞նչ էք տեսնում այդտեղ... Անտառ, եղևնիների պուրակ, յետոյ՝ ծաղիկ, ս'չ թէ միքանի, այլ միքանի հարիւր տեսակ, բուրմունքով օդը լի, թռչունների ճըռուողիւն, վտակների կարկաչ... այնպէս չէ, որ այդ բոլորը բանաստեղծական է, դրախտային... Ա՛հ, բայց, մնացէք էլի միքանի օր և կը տեսնէք թէ ինչն է խանդարում մեզ բարեզարդելու մեր սիրտ խառնող միաձև բնութիւնը... Յանկարծ՝ մէկ էլ տեսար մթնեց ամեն կողմ, հարուած կապարի նման ամպերը եկան ծածկելու արև, երկնակամար, ապա մի խոնաւ, զգուելի անձրև, այդ անիծեալ հիւսիսից դալով, տեղաց ու տեղաց... Ո՛չ թէ մի ժամ կամ դոնէ մի օր... Ո՛չ, այլ երբեմն մի ամբողջ շաբաթ՝ օրուգիշեր, նոյնիսկ երկու շաբաթ... Մշո՛ւշ, խոնաւ, ցե՛խ, ճահիճ շուրջդ, տանդ առաջ, նոյնիսկ տանդ մէջ... Եւ ամեն հրապոյր կորուով է, ամեն զուարթ դէմք մթազնում, ծաղիկներն էլ կարծես անհետանում են ճզփացող թացութեան մէջ, մարդիկ ջղային են դառնում, ատում բնութիւնը, ատում իրար... և խմում են, խմում... Ինչ արած, պէտք է վերջապէս մի բան անել մուսնալու համար, որովհետև

դա մէկ, երկու անգամ չէ, այլ ամբողջ տարին, ամեն տարի...

Ու լուեց, ծնօտը ձեռնափայտի կոթին կռթնցնելով:

— Իզուր ես այգքան տխուր դոյներ փռում մեր լեռնագաշտի վրայ, վարժապետ, խօսեց Գալօի որդին սառը, անտարբեր շեշտով— լաւ օրեր էլ ունինք... ամեն տարի խօսալէս չէ...

— Միշտ, շեշտեց վարժապետը— Մեր աչղ Մարտիրոսը իրաւունք ունի երբ երգել է թէ՛ «Տարին 40 օր արևի երես չի տեսնում մեր երկիրը»...

— Ինքը իհարկէ չի տեսնիլ, որովհետև կոյր է. ժպտեց Գալօի որդին— բայց դէհ, որ 40 օր չլինի, այս բոլորը— պտուղ, ցորեն, դարի... ինչպէս կ'աճի... Գուք դրան մի լսէք, — դարձաւ նա մեզ— այսօր ինչպէս երեւում է, քէֆը տեղը չի:

Այս բոլորը մի այնպիսի տարօրինակ հեգնախառն ձևով ասաց նա, որ նոր միայն սկսեցի ուշադրութեամբ գննել այդ երիտասարդին: Անհասկանալի էր, ծաղրում էր, թէ յերաւի, դէմ խօսում վարժապետին:

Կռթնել էր սինկին և կեցուածքի ու ժպիտների մէջ մի ինչ-որ, գիւղի համար անսովոր բան ունէր:

Գիւղացու նման էլ չէր: Հագել էր մաքուր և լաւ նոյնիսկ օսլայած շապիկ, թէև առանց վզկապի:

Չնայելով որ ակնարկը վարժապետին էր՝ աչքերի անկիւններում հազիւ նշմարուող հեղնական ժպտի ծաղբերով, սակայն յաճախ դառնում էր դէպի այսայն կողմ հաւաքուող, կամ այսայն կողմից անցնող գիւղացիների, և սուր, հետախուզող, նրանց շարժումներների միտքն ըմբռնել կամեցողի ուշադրութեամբ՝ հետևում էր հրապարակի վրայ եղածներին:

Ուզեցի խօսեցնել նրան, ըմբռնելու համար այդ տիպարը:

— Լաւ խանութ ունիք, ասացի— իսկ առևտուրը ինչպէս:

—Ի՛հ, արեց նա արհամարհութեամբ—եթէ այս գիւղացոյ նայէինք, մեր օրը օր չէր լինիլ:

Ու խուսափեց ինձ նայելուց:

—Պարոն Արշակը, նկատեց վարժապետը—առեւտուր ունի շնա գիւղերի հետ. դալիս են ճոթ են տանում և փոխարէնը իր ժամանակին իւղ, պանիր, ցորեն... Բացի դրանից, հայրը կարողութեան տէր է, ունի հսօղեր, դանազան եկամուտներ...

«Եկամուտ» բառը նա շեշտեց: Զգացի, բայց ձայն չհանեցի. իսկ Արշակը ուսերը թօթուեց և առանց մի առարկութիւն անելու՝ ակնարկը դարձրեց մի կողմը:

Մինչ այդ՝ ծերունի ընկերս, որ անշարժ նստել և մանաւանդ տխուր խօսքեր լսել երբէք չէր սիրում, ելաւ, մօտ գնաց գիւղացիների և նրանց հետ խօսակցութեան բռնուեց:

Ահա այդ միջոցին էր, որ մի ձիաւոր, դուրս դալով եկեղեցու կողմի փողոցից, կանգ առաւ հրապարտակի վրայ:

Նրա երևոյթը անմիջապէս շարժում յառաջացրեց ամեն կողմ:

—Վնյ, Ալեքսէյն է... ձայնեց իսկոյն Արշակը և մի քանի քայլ դուրս գնաց դէպի ձիաւորը:

Վարժապետն էլ ելաւ ու դիմաւորեց:

Եզրով սակայն անտառապահն էր հրացանը ուսին և փամփշակալը կրծքի վրայ:

## II

Իւրաքանչիւր պաշտօնեայ, լինի նոյնիսկ անտառի հասարակ պահապան—և եթէ կ'ուզէք այս վերջին տեսակի ստորին պաշտօնեաները մանաւանդ—կարևոր անձնաւորութիւն է գիւղում: Պիտի գիւղացի լինել և կամ գիւղում ապրելով թափանցել գիւղացոյ ներքին կեանքի մէջ, ըմբռնելու թէ ի՛նչ մեծ նշանակութիւն

ունի մի այդպիսի պաշտօնեայի տխուր կամ ուրախ տրամադրութիւնը՝ գիւղացոց կեանքի համար:

Եւ գիւղացիք ամեն ջանք ի գործ են դնում միշտ ուրախ տրամադրութեան մէջ պահելու նրանց:

Այդ էր պատճառն ահա, որ հրապարակի վրայ կանգնած գիւղացիների մէջ իսկոյն մի շարժումն ընկաւ: Գիւղացի Սարօենց Թորոսի խանութից կաշնիկազ դուրս նետուեց նախ մի կլորիկ—հաստլիկ մարդ և վազեց գէպի ձիաւորը: Այս կողմից էլ Գրիչօենց Մկրտիչը, ժպիտը գէմբին՝ ցցուեց իր խանութի շէմքին, իսկ վարժապետը ժպտուն, ձեռքը պարզած՝ գնաց մինչև ձիաւորի առաջնդակի առաջ:

Չիօց իջնելուն պէս, անտառապահը շրջապատուեց: Սարօենց Ջաւադը լայն ծիծաղով պարզեց նրան իր ձեռքը և հնչեղ ձայնով կանչեց ուսերէն.

—Այ բարև քեզ, Ալեքսէյ, ի՞նչպէս եղաւ որ մեզ էլ յիշեցիր...

Մտերմական և սիրալիր գէմքեր ստացան ամենքը, օգնեցին իջնելու, մէկը անմիջապէս ձին տարաւ կապելու և բարբը ուղղուեցին գէպի Գրիչօենց Մկրտիչի խանութը:

—Է՛հ, գործ կայ, ասաց պահապանը—պըոտտոկոլ (արձանագրութիւն) պիտի գրեմ:

—Ա՛յ, ա՛յ, ծիծաղեց վարժապետը—ի՞նչ է եղել, փոյա են գողացել էլի...

—Տօ, թո՛ղ է՛, մէկ, ձայնեց Ջաւադը—հլա մէկ գնանք մեզ մօտ զակուսկի անենք... Հը՞, Ալեքսէյ, գընանք, նոր արազ ունիմ:

—Միւնոյն է, ժպտեց պահապանը—Մկրտիչն էլ կ'ունենայ:

—Ունիմ, իհարկէ, կանչեց Մկրտիչը—նոր գինի էլ ստացել եմ:

Յետոյ բոյորն էլ, վարժապետն ու անտառապահը ամենից առաջ՝ մտան խանութ, մինչ կաղլիկը պահ մի հեռացաւ, խանութը իր եղբօր որդուն պահ տալու:

—Ազնւո՛ւ, ասաց նա իր խանութի առաջ կանգնող գիւղացոց—Բախչիենց Մուրադի համար եկած կը լինի. վազէք ասէք գերանները պարտկի, մինչև մենք սրա գլուխը բիչ տաքացնենք...

Մնացի մենակ նստած խանութի առաջ և դարձացած՝ դիտում էի այդ ամենը: Բայց երկար չմնացի այդպէս, սրովհետև քիչ յետոյ վարժապետը դուրս թըռաւ խանութից, եկաւ դէպի ինձ և ասաց.

—Համեցէք դուք էլ, մի բիչ կը խօսենք այնտեղ, եկողը մեր անտառապահն է:

Խանութի ետևում մի փոքրիկ սենեակ կար, ուր իսկոյն բոլորս էլ սեղ բռնեցինք մեծ — աղտոտ սեղանի առաջ: Վարժապետը մօտ դնաց Մկրտչին ու մի բան ասաց նրան և ահա քիչ յետոյ սեղանի վրայ երևաց նախ օղի, հաց ու պանիր, յետոյ խոշոր շշերով գինի: Ինձ ծանօթացրին անտառապահի հետ:

Գիւլի փայտ տուողն է. բացատրեց կամայուկ վարժապետը: Եթէ նրան չշոյէին, ո՞վ գիտէ, ամբողջ ձմեռը կարող էր առանց փայտի թողնել գիւղացոց: Այսինքն իհարկէ, սոմսակ ունեցողներին, նշանակած չափով թոյլ կը տար կտրելու, բայց ախր բոլորը խօտոմսակ չունէին, և վերջապէս ճրտեղից գիւղացին կարողանար վճարելով ունենալ տախտակացու, գերան... ծախելու փայտ... Ապրել էր հարկաւոր, ուստի և պէտք էր շոյել, ուտեցնել խմեցնել, երբեմն էլ ափը շօշափել, խաղեցնել...

Թէև դէպի գիւղացիք անտառապահը համարձակ, գրեթէ իշխանաբար էր վարւում, բայց ինձ հետ նա համեստաբար սկսեց: Ատամների միջով միքանի ուսսերէն բռներ դուրս թողեց և ձեռքը տարաւ օղիի բաժակին:

Օս էր. արտասանութիւնը և սոսկալի ուսսերէնն էլ այդ ցոյց տուաւ:

—Գիտէք, դարձաւ ինձ այդ ժամանակ վարժապետը, նախապէս պահանջելով լռութիւն սենեակի մէջ ե-

զողներին—Մեր Ալեքսէյը, պարոն Երուանդ, մի շատ լաւ, ընկեր տղայ է. թող ձեզ ծանօթացնեմ նրա հետ... վաղըց նա մեր անտառների գլխաւոր պահապանն է (ОБЪЕДИЧИКЪ), բայց դեռ ոչ մի վատութիւն չենք տեսել և յոյս ունենք, որ այս անգամ էլ չենք տեսնիլ նրանից...

Պահապանը ժպտեց և գլուխը ցնցեց: Թէև հայերէն էր խօսում վարժապետը, բայց նա հասկանում էր շատ լաւ:

—Ո՛չ, ներեցէք... շարունակեց վարժապետը—ինչ չո՛ւ ես ծիծաղում, Ալեքսէյ, սո՛ւտ եմ ստում... մինչև օրս դեռ ոչորի ոչ կացինն ես խլել, ոչ ցեւը (չլթան) և ոչ էլ մի քնպէս վրաս տուող պրոտոկոլ (արձանագրութիւն) կազմել... Ի՛նչ ասէք, ա՛ խալիւր, քիչ լաւութիւն էք տեսել այս մարդուց... ո՞ր մէկդ իր ուղածի չափ վայտը չի ունեցել, ո՞ր մէկիդ մերժել է էլ դերան, էլ խօրոտ \*)... Այդպէս է, պարոն Երուանդ, ես չեմ ստում, Ալեքսէյը մեր բարեկամն է, խմենք առաջ մէկ նրա կենացը...

Ասաց և ձեռքի մեծ բաժակով օղին մի ուժպով դատարկեց, ու երբ նստում էր՝ աւելացրեց ժպտելով.

—Անտառի մէջ, պարոն, այն եղենիների կողքին մի սքանչելի տեղ խրճիթ ունի՛ որ քէֆդ դայ... Մի օր կը դնանք քէֆի, մի բաւ դառը կը տանենք... Այնպէս չէ, Ալեքսէյ:

—Համեցէք, ասաց պահապանը և նոյն կերպով պարպեց մեծ բաժակով օղին:

Սոսկացի երբ տեսայ, թէ ինչպիսի՛ դիւրութեամբ ամենքը դատարկեցին թէյի բաժակների մէջ կէսից աւելի տեղ բռնող օղին: Այն էլ ի՛նչ օղի: Երբ բերանս առի մի կում—կարծեցի թէ կրակ էր, սպիրտ էր ամբողջովին:

Բանից դուրս եկաւ, որ ցորենի օղի էր այդ, գիւ-

\*) Երկար ճիւղեր, որոնցից գիւղերում ցանկապատներ են շինում յաճախ:

դացոց պատրաստածը «Փիժ հացի» օղի: Առնագաշտը բուսցնում էր ցորենի հետ խառն, ցորենանման ինչ որ կանաչ հատիկ: Նեղ տարին այդ հացից ուտում էին անգամ: Մի գիւղացի պատմեց ինձ, որ այդպիսի հացը «գժուացնում է»: Բայց իսկապէս՝ նա արբեցնում էր աւելի վատ, քան ողելից բմպելիները: Ահա այդ իսկ հացից շինած օղին էր, որ այժմ այնքան առատութեամբ խմում էին գիւղացիները:

Գիւղում գինեատուն չկար, ո՛չ: Առաջ եղել էր, բայց, որպէս վարժապետը բացատրեց, որովհետեւ շատ անկարգութիւնների, կռիւ և աղմուկի պատճառ էր դառնում, իր և քահանայի միջնորդութեամբ ու ջանքերով փակուեց:

— Իբր թէ շատ լաւ արիք, մէջ մտաւ մի գիւղացի — հիմի պակաս ենք խմում, պակաս ամեն կիրակի կըուում, ծեծկում, միմեանց հայհոյում:

Յիրաւի, աւելի վատ էր եղել: Ամենքն էլ խոստովանուեցին: Առաջ դոնէ մաքրած և թոյլ օղի էին խրմում. իսկ այժմ... բայց գինեատան փակուելը իր երկար պատմութիւնն ունէր:

— Մի հարցնիլ թէ ինչու է փակուել կամ ինչպէս, պարո՞ն, յորդորեց ինձ մի գիւղացի — փակուելն իր ատառը ունէր, օյինները եղաւ որ...

Վարժապետը, որ լսում էր, սասնեց տեղիցը:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ ամեն բան չես պատմում, գօչեց նա — ինչո՞ւ էք թողնում որ այս մարդիկը սխալ հասկանան... Ա՛յ, թողէք ես պատմեմ ճիշտը, ուսումնական մարդիկ են, թոյլ դասեն...

Եւ վերաբրիւն ու գլխարկը միշտ հազին, խմած երկու խոշոր բաժակ օղիից գլուխը տաքացած՝ ոտքի ելաւ մի ձեռքին հաց ու պանիր, միւսումը օղի և թեթեակի կակազելով ասաց.

— Ա՛ խալիւր, դձըք էլ լսեցէք...

Սենեակի մէջ դարձեալ տիրեց լռութիւն. կարծում էին թէ վարժապետը մի նոր կենաց է առաջարկելու:

—Ըստեղ, խօսեց նա—էլի կրկնում են թէ մեր միկիտանի (գինետուն) փակուելը աստառ ունի, որ օյլններ եղան... Էս քանի մէկ, անպէր. դուք ու ձեր Աստուածը, դուք չէիք որ, ձեզնից շատերը չէին որ, գիշերով եկան ինձ մօտ, խնդրեցին, ստիպեցին, պրիստաւին խնդիրը գրել տուին թէ միկիտանը կռիւ ա բցում, զարմազալ... Հը՞, սուտ եմ ասում...

—Ձէ, ճիշտ ա, ինչի սուտ, ասաց մի գիւղացի—դէ Էնն, տեսաք որ Սարօենց ձեռքն էր մնալու միկիտանը, ձեր ցեղը մէջ ընկաւ, խնդիր գրեցիք, դու էլ ուսումնարանը մէջ տեղ քցեցիր...

—Հրն տես, հրն տես... բարկութիւնից կարմրեց և ընդհատեց նրան վարժապետը—ըտէնց մի խօսալ, ս կարապետ... ինչի, ես վարժապետ եմ, թէ միկիտան չի... Իմ ինչիս էր պետքը միկիտանը, ես ինձի ինչ...

Փոքրիկ սենեակը հեղուհեղ լցում էր գիւղացիներով: Մեծ մասը երիտասարդ, նոր սերունդն էր և բոլորն էլ, առանց ուէ բացառութեան՝ «կարտուղներով»: Այլ և հագուստը փոքրիշատէ եւրոպական հագուստի նմանեցնելու յաւակնութեամբ: Ոյ տեղ էր գտնում—նստում էր, ոյ չէ՛ կութնում էր պատին, կամ պզզում մի անկիւնում: Մի ինչ-որ կարճահասակ ծերունի էլ, որ իր սպիտակ մեծ մօրուքովը շատ նման էր հնամենայ նահապետի, զուարթ ծիծաղը դէմքին ներս խծկուեց, որոնեց տեղ, յետոյ մագլցեց լուսամուտի պատուանդանի վրայ և խոշոր փափախը ծռած, երկար փայտը ծնօտին դէմ տուած՝ սկսեց լսել:

Չնայելով որ լսում էի վարժապետի խօսքերը, բայց և զննում էի ներս մտնողներին: Այլազան էր ամբօխը: Կային նոյնիսկ չէկեր, կարմիր-հրաչէկ կարմիր մազերով երիտասարդն էլ իր զլուխը դուրս էր ցցել երկարահասակ ու խոշոր ըթով Գրիշօենց Մկրտչի ետևից և ինձ էր նայում:

Եւ այդ բոլորը տգեղ էր, խիստ տգեղ. դէմքերը գրեթէ թուումս ու դեղնած, չոր, վաղածամ կնճիւռնե-

րով լի, մեծ, այլանդակ քթեր, կռպիտ և յանդուզն դժեր: Աւելացրէք դրա վրայ և այն, որ շնտաշատերի հայեացքները արտայայտում էին քծնախառն աներեւութիւն: Միմեանց ակնարկներ անել, աչքով-ունքով շարժումներ, անասելի հայհոյանքները, իբր շատ սովորական բառեր, շարտել միմեանց, խօսքերը «համեմել» լիաի համեմատութիւններով, այլ և ճգնել անպատճառ, թէկուզ տափակ, սրախօսութիւններ անելու...

Հին սերնդի մէջ սակայն, նկատեցի քիչուշտ համակրելի դէմքեր: Եւ երբ ծերունի ընկերս էլ ներս մտնելով բերաւ իր հետ գիւղացիների նոր մի խումբ—երեւան եկան Ծ—Յ ծերունիներ հին հազուստով բոլորն էլ, խոշոր փափախներ դլխներին: Ահա օրինակ, այդ վաթսուհամեայ անձը, որ մօտեցաւ, ձեռքը պարզեց ինձ և դէմքի վրայ անկեղծ սիրալիրութեան ժպիտ՝ բարի դալուստ մազթեց: Համակրելի էր նաև այդ միւս ծերունին, որ իր խոշոր թաթերի մէջ սեղմեց պարզած ձեռքս ու ասաց.

— Բարի լինի դալուստդ, պարոն:

— Շնորհակալութիւն:

— Մենք շատ ուրախացանք երբ լսեցինք որ ձեզ պէս կրթուած մարդիկ ուզում են մեր գիւղում ապրել: Եթէ ոչինչ էլ չանէք, ձեր այտակ լինելն էլ մեզ օգուտ է. ասած է՝ որ հոտուէտ մի հատ խնձորը թէկուզ, դնես կոշտ քարերի մէջ, հոտիցը նրանց էլ կը կաշի...

Պահ մի վարժապետը ստիպուեց ընդհատել իր խօսքը, ներս մտնողների բարեկերի վերջին սպասելով: Բայց երբ տեսաւ որ նոր եկողները խօսակցութեան նոր նիւթ մէջտեղ բերին, ձեռքի օղին մի ումպով և զայրացած կուլ տուաւ, հացը բերանն առաւ, մի բան մըռմըռաց քթի տակին, նստեց և բաժակը դարձեալ լցրեց:

Այնքան անկեղծ ձևով ինձ հետ խօսող ծերունուն պատասխանել չյաջողուեց ինձ, որովհետև դարձեալ մի նոր խումբ ներս լցուեց:

—Պան, պան... էս ինչքան լցուել էք ըստեղ... լսուեց դուան միջից մի խոշոր ձայն և երևան եկաւ Սարօենց Թորօսի կողլիկ ու հաստլիկ եղբայրը, համարձակ ճղեց քաղմութիւնը, ձեռքը ինձ պարզեց ու ասաց.

—Խնդրեմ ծանօթանանք... Սարօեան Չաւադ:

Եւ հպարտութեամբ վիզը ցցեց ու գիւղացիներին նայեց: Կարծես ուղում էր ասել թէ՛ «հը», սնց է, կարծում էք չգիտեմ քաղաքացոց ձեերը»:

—Լաւ ձայն ունի, քմծիծաղով գիտեց վարժապետը:

—Ինչի՞ չէ, ասաց կօկողավիղ կազլիկը—երգեր էլ գիտենք...

Ու ճգնեց նստել: Տեղ չկար, բայց սրան հրեց, նրան հրձտեց և ճիշտ դիմացս, անտառապահի կողքին խժկուեց—տեղաւորուեց:

Գեր, լայն գէմքով և յանգուզն հայեացքով մի երիտասարդ էր այդ, որ միշտ բարձրաձայն, գրեթէ դուռարով էր խօսում. ճգնում էր ցոյց տալ, որ քաղաքում շատ է ապրել, քաղաքացիների գէմքը նրան անսովոր չէ, որ ինքը կռակաւ և անտաշ գիւղացիներից շատ է բարձր, անփորձ ու վախկոտ չէ, այլ որ ոչոքից վախ չունենալով, կարող է միշտ բարձր էլ խօսել:

Հագել էր մեր նման, առանց մտանալու մէջքի և վարախքի այլազան կարկատանները. մի ինչար տափակ և աղատտ «կարտուղ» կոխած մինչև ականջները, մօրուքը խնամքով ածիլած, ընչացքի ծայրերը գոռողաբար գէպի վեր ոլորած... Որից վախ ունէր, օրէնք չգիտէր, ի՞նչ է, մարդ չէր տեսել, քաղաքացոց հետ չէր նստել—կանգնել: Եւ այդ՝ նա շեշտում էր միշտ, և որպէսզի գիւղացի անտաշները չմտանային երբէք, կրկնում էր գոռալով ու ձեռքի կարձ վայալը ուժգնօրէն իջեցնում սեղանի վրայ...

Բայց, մտնելուն պէս, սկսեց անտառապահի հետ

խօսել:—Նո՛ւ մօյէ պոչտննիէ<sup>1)</sup>: Ալեքսի, խմենք, քէֆ  
անենք... ճշմարիտ է, հերթը եղբօրս է քէֆը սկսելու  
և հարբելու, բայց գէ՛հ, ո՞նց կը լինի որ գու մեզ մօտ  
գաս և ես մի լաւ չհարբեմ... Նալէ՛յ, տօ՛ պո՛լնի նա-  
լէյ...<sup>2)</sup> Ադա՛, սարսնոյ գարձաւ նա խանութպանին—  
ո՞ր ես թողել էս անտաշները ներս լցուն... քաշուէք,  
քաշուէք, ի՛նչ կայ, մարդ չէք տեսել... գեղացի էք  
էէ... հէնց որ մի քաղաքացի էք տեսնում... տօ, քա-  
ղաքումը շաքաթներով ապրէք, մարդ տեսէք, որ ըզէնց  
քէզ զապրոսա<sup>3)</sup> ներս չխժկուէք... եա թէ չէ՛ ադա՛,  
վեր կացէք մեր աունը գնանք. սաեղ սկի վոզդուխ<sup>4)</sup> էլ  
չկայ...

—Դէ լաւ, ձէ... ձէնց կտրիր քիչ... կտրիր... կա-  
կազեց վարժապետը կխտվին ելնելով և դատարկեց օ-  
զին—Թոյ ուրիշներն էլ խօսան...

Ու բոլորովին ելաւ: Գինետան հարցը վերաւորել էր  
իրան: Ուղեց նորից նոյն նիւթին դառնալ:

—Մօյէ պոչտննիէ՛... ինչո՞ւ չէ, ճչաց Զաւադը—  
բայց ո՞ր ես եղպէս շուտ կակղել, վարժապետ. այ,  
թոյ մէկն էլ մենք կոնծենք... ըսէնց... էս լուծիլիան<sup>5)</sup>  
լցրու, տօ... իմ հաշուին. Ալեքսէյը սղձ կենայ... էսօր  
էլ միս չեն մորթել որ մի խորոված էլ անենք...

—Է՛ն էի ասում. ուշք չգարձրեց նրան և սկսեց  
վարժապետը—չէ՛, ա՛ խալիսը... սպասեցէ՛ք... Կարապե-  
տը ասում էր որ միկիտանը կս... կողպել ենք, որով-  
հետև...

—Դէ լաւ, նու, աստա՛ւ<sup>6)</sup>... ընդհատեց նրան ան-  
տառապահը—լա՛ւ էր արել՝ կողպել էք. ի՛նչ է, էս պա-  
կան միկիտան ա...

—Չէ, չէ, Ալեքսէյ, պաստո՛յ<sup>7)</sup>... դօշեց վարժապե-

<sup>1)</sup> Յարգանքներս:

<sup>2)</sup> Լեցուր, լիքը լեցուր. <sup>3)</sup> Առանց հարցնելու. <sup>4)</sup> օդ.  
<sup>5)</sup> Շիշ. <sup>6)</sup> Թող. <sup>7)</sup> Սպասիր.—բոլորը ուտերէն բառեր են ա-  
ղաւաղուած:

առ և թևովը մեծ շարժում գործեց — ինչո՞ւ... թո՞ւ... թող պարզուի, շատ են խօս... խօսում...

— Ահ, կանչեց այն կողմից Հայր Աբրահամին նը՝ մանող ծերունին կանաչի սուր ձայնով — էս ի՞նչ ջհուղի ժամ շինեցիք ըստեղ, ձեր տունը շինուի... կացեք, մէկ մեր զօնազները խօսեն, քաղաքից են եկել, թաղա խաբարներ կ'իմանան...

— Հա՞... նո՞ւ... զիջաւ վարժապետը, որ արգէն հարբել էր — ըն՛, թն՛ պարտնները խօսան... Հը՛մ, ինչո՞ւ չէ, թաղա խա... խաբարներ... Համեցէք...

Ու ձեռքի բաժակը դարնելով անտառապահի բաժակին, երկունն էլ միմեանց ժպտելով՝ խմեցին:

Առհասարակ անտառապահը քիչ էր խօսում: Ըստ երևոյթին՝ քաջու՛մ էր մեղնից: Շուտով սակայն Ջաւազը դարձաւ դէպի նա և սկսեց ցած ձայնով մի բան պատմել. վարժապետը ընկերիս հետ բռնուեց խօսակցութեան և այսպէս, խօսակցութիւնը ընդհանուրից՝ մասնաւորի դարձաւ:

— Ի՞նչ, պատմիր տեսներ, պարտն, դարձաւ ինձ ծերունի երեսփոխը — պատմիր նոր բաներ... սկանձ մի անիլ շատ էք մեր շահիւնների ավեզցիեզ խօսքերին. մի քիչ շատ են քաղաքի երեսը տեսել...

### III

Այդպէս էր որ սկսեց մեր ծանօթութիւնը գիւղացոց հետ, գինետան մէջ, օղիի և գինու շիշերի առաջ: Պաշտօնապէս միայն Մարօենց Ջաւազն էր, որ ձեռքը պարզելով, քաղաքացու նման, իր անունն ու ազգանունն էր տուել: Միւսները բոլորն էլ խօսակցութեան բռնուեցին և ահա ամենքի հետ էլ ծանօթացանք:

Սկզբում ոչորի անունը չգիտէի: Եւ ի՞նչ հարկ իմանալ: Կնճուտ, չոր դէմքեր էին, որ միմեանցից սակաւ էին զանազանում: Ամենքն էլ մեզ նայելիս՝ նախ մեր շորերն էին զննում, ապա, խորին ուշադրութեամբ լը՝

սոււմ մեզ, դիտում մեր գէմքի գծերը, կարծես կամե-  
նալով իմանալ թէ ինչ տեսակ մարդիկ էինք մենք:  
Իսկ երբ բաւական լուռ քննել էին, կամաց-կամաց, խո-  
րամանկ, պտուտաւոր հարցութիւններով տեղեկանում էին  
թէ ո՞րտեղացիներ էինք, քաղաքում ինչ գործերի տէր,  
այնտեղ սեփական տներ ունէինք, թէ՛ վարձուորներ  
էինք, ամուսնացած, ընտանիքի տէր... և թէ ինչ նը-  
պատակով էինք դիւզ գալ ուղում—ամառանոց, քէֆի  
համար, թէ՛ սեւ գործի ձեռնարկելու, շահ սպասե-  
լու... Եւ եթէ գործի ձեռնարկելու՝ ինչ էինք մտադիր  
անելու, օրինակ, մեղուներ ունենալ, կազմք ցանել,  
ծառ տնկել... բայց դրանք խօ բոլորն էլ դիտեն... Իսկ  
նոր, նոր բան... ուրիշ ոչ ինչ աւայժմէ Բայց չէ՛ որ այդ  
բոլորը ո՛չ մի եկամուտ չէր բերիլ, մարդ դրանով միթէ  
կարող էր փող աշխատել... Մտադիր չէինք հարստա-  
նալ, փող շահել... Զարմանք: Ուրեմն ի՞նչու էինք ե-  
կել: Գիւղի կեանքը ուսումնասիրելու, գիւղացոց օգ-  
տակար լինելու... ճի՞շտ էինք ստում, թէ՛ ծիծաղում  
էինք իրենց վրայ... Երևի քէֆի համար էինք եկել...  
Իսկ եթէ ծառեր էինք ուղում տնկել, ուրեմն ինչ հո-  
ղի վրայ: Ընկերութեամբ... ինչու չէ, որքան պիտի  
տնկէինք: Հինգ-վեց հարիւր, իսկ յետոյ ծառերը հօ-  
ղատիրո՞ջը կը մնար... Ո՞վ ասես որ իր հողը, պարտէզը  
չտար...

Եւ այսպէս, զգուշաւոր, մանուածապատ հարցու-  
փորձով՝ իմացան ամեն ինչ: Իսկ մեր տուած միամիտ,  
պարզ և անկեղծ ճշտութեամբ, պատասխանների ժամա-  
նակ՝ դուք պիտի տեսնէիք թէ գիւղացոց մէջ ինչպիսի  
մնչկատակ էր տեղի ունենում: Անխարկներ միմեանց,  
ժպիտներ, այլև միամիտների իրենց ճանկերի մէջ ձը-  
գողների սարգային արտայայտութիւններ:

Ու ինչ որ, մեր մտադրութիւնները դիտենալուց ա-  
ռաջ վատ էին խօսել օգի, հողի մասին, վարպետօրէն  
սկսեցին ետ առնել, այժմ գովում էին սեւ, բարեբեր  
հողը, սքանչելի օգը, երկրի բեղմնաւորութիւնը...

Երկար չտեսց մասնաւոր խօսակցութիւնը: Միմեանց սեղմելով մեր գլխի վրայ չրջան կազմող հեռաբլբլները միառմի ցրուեցին: Գիտցել էին ինչ որ պէտքըն էր, մնում էր այժմ տեսնել թէ որպիսի՝ ձևերով կարելի էր ուստայնն ընկած ճանճերից օգտուել: Պարզ է—երևի մտածում էին նրանք—անշուշտ ճանճարացած բազաբլից, փող ունին և եկել են ինչ-որ երազներ իրականացնելու... դուցէ և, ո՞վ գիտէ, նոր ձեռնարկութիւններ պիտի անեն և առայժմ ծածկում են... Յամեմենայն դէպս իրենց պէտք էր զգոյշ, աշաւուրջ մնալ և որսը ձեռքից չփախցնել... Այն մէկը—ձերունին, միամիտ մարդ էր երևում. նրան խաղացնելն ու խաբելը դժուար չէր. իսկ այս միւսը դեռ լուռ էր, քիչ էր խօսում, բայց չար մարդ էր նկատում...:

Եւ այս բոլորը ես ոչ միայն միառմի կարգում էի նրանց դէմքերի վրայ, հասկանում էի վարմունքներից, այլև մէկ-մէկ էլ ականջիս էին համոտ հատուկորդատողութիւններ, նկատողութիւններ, սրտից դժուար չէր կցել և որոշ եղբակացութեան հասնել:

Ծերունի ընկերոջս անունը իսկոյն «պապաշա» գըրին: Անողը Զուազն էր: Համարձակ և շատ շուտով մտերմացաւ նրա հետ, միասին խմեցին, իրար ծիծաղելի պատմութիւններ արին:

Ու խմում էին: Հարբել էին շատերը, իսկ մի ինչ-որ զլուխը կախ և քիթը միշտ կարմիր պարօն էլ—պարօն ասացի, որովհետև ճգնում էր նա այդպէս ցոյց տալու իրեն—անընդհատ գինի էր խմում, շիշեր դատարկում:

Երեսօրօխը միայն նստած մնաց ինձ մօտ. միւսները հեռացան և խմբեր կազմեցին:

— Այդպէս... արեց ձերունին, մի վայրկեան լուռ խորհելուց յետոյ—ուզում էք դուք էլ մեզ նման մեր հողը մշակել... եթէ իմանամ որ քէֆի համար է, ա՛մառը հէնց անցկացնելու—խօսք չունիմ, բայց, եթէ ուզում էր շահուել... Սահակենց Մանուկը ձեզ, օրի-

նակ, չի խօսել մեր հողի, մեր մարդկանց կամ օդի մասին...

—Խօսել է, ասացի ես—մարդիկը վատ չեն երևում, հողն էլ լաւ է թւում, իսկ օդը, ասում են, որ անձրեւային է:

—Անձրեւայինը իրա՛ կարգին, բայց ասել է, որ մեր հողը առանց լու՛, շա՛ս լաւ աղբելով՝ բան չի բուսցնիլ, որ անձեւը կարճատև ամառը...

Բայց Ձաւաղը, որ երևի աննկատելի՛ լսում էր մեզ, ականջը մեր կողմն էր, յանկարծ ընդհատեց ծերունուն և գոչեց.

—Ինչի՛ ես էդպէս խօսում, ամի. ինչի՛, մեր հողի ի՛նչն ա... պակաս բան ա բուսցնում՝ որ բէջարես \*)... բաս էսքան ծաղիկները, անտառը, ջուրը... ճիշտ չե՛մ ասում, պապաշա՛:

Ընկերս ծիծաղեց և ասաց.

—Դէ՛ ի՛նչարկէ. մենք էլ խօ տեսնում ենք... Եւ վերջապէս ի՛նչ կայ, աղբ թի՛չ ունիք. ամբողջ գիւղը— ինքը միթէ՛ հէնց աղբի մէջ չի նստած...

Շատերը ծիծաղեցին, սրախօսողութիւն համարելով: Ձաւաղը ամենից բարձր բրբջաց, մինչ մի գիւղացի մօտեցաւ ծերունի խրատչին և ասաց.

—Ամի, քաղաքացոյ սիրտն ի՛նչի ես կտարում. իւրենք խօ մեզանից լաւ գիտեն, թող տեսնեն, էլի՛:

—Բան չե՛մ ասում, ի՛նչ եմ ասում, չիսթուեց ծերունին—եանի ասում էի, որ առաջուց իմանան...

—Էդ քո ի՛նչ բանն ա... կանչեց նրա վրայ Ձաւաղը —քո հողը լաւը չի, իմը շա՛ս լաւն ա, իմը կը տամ:

—Հա՛, բո՛ս, մէկը քո հողն ա լաւ, մէկին էլ իմը:

—Դէ՛, գէ՛, ա՛նասա \*\*) տեղդ նսաի, ձայնեց Ձաւաղը բարկութեամբ—մեր հողին վատ ասելը բերնիդ չի ընկել... լաւ էն ա, ամի, որ գու չխօսաս... իմ պա-

\*) Որ կարողանաս, հասկանաս:

\*\*) Անձայն

պաշան—գարձաւ նա ընկերիս—քեզնից էլ ու մեզնից էլ լաւ գիտի... Աղբ էլ որ ուզենայ, ա՛յ, մեր տան առաջը մի սարի չափ կայ հինը, հնքան տամ որ սազ դաշտը ծածկի... Հ՞ը, սրան ի՛նչ կասես, պապաշա՛

Երեսփոխը լուեց, նայեց իրեն ուղղած զայրագին ակնարկներին, գլուխը ցնցեց, յետոյ կամայուկ ելաւ և գուրս գնաց:

Թէև լսում էի և կիսովին գէմքս անտառապահին էի դարձրել, բայց լաւ նկատեցի թէ ինչէր կատարուեցին այնուհետև լուսթեամբ:

Մերունուն գիւղացիները մոմոոցով ճանապարհ բացին, Զաւաղը մի թունդ հայհոյանք չպրտեց նրա ետևից կիսաձայն, յետոյ միքանի երկասարգներ գուրս գնացին նրա ետևից, գուռը խնամքով փակեցին և լսեցի թէ ինչպէս դուրսուում էին խանութի մէջ:

Ելայ և ուզեցի գուրս գնալ, սենեակի օդը ծանրացել էր և արբածների տեսքը զգուելի էր դառնում: Բացի դրանից, հետաքրքիր էր թէ ի՛նչ էին ասում այնտեղ ծերունի երեսփոխին: Բայց Զաւաղը երևի ըմբռնեց մտադրութիւնս, որովհետև մէկէն պարզուեց գէպի ինձ մի բաժակ զինի ձեռքին և գոչեց.

—Ո՛ւր ես գնում, պարոն, հլա մէկ էս բաժակով խմիր պապաշայիս կենացը... Չե՞ս խմում, չհաւանեցիր մեր զինուն... Իէ՛, ի՛նչ անենք, մեր սարերում խաղող չի բուսնում... Հլա մէկ սողասիր, քեզ ասելքներ ունիմ...

—Ասա՛, կանգ առի ես:

Դու էդ ախմախի խօսքերին մի լսիլ. գու ջահիլ մարդ ես, գիտես որ մարդ երբ ծերանում ա, խելքը քիչ պակասում ա... համ էլ դա միքիչ ընէնց էլի...

Առանց ուշք դարձնելու խօսքերին, գիմեցի գէպի գուռը: Ճշմարիտ է, այնտեղ կանգնածները ճանապարհ տուին ինձ, բայց ջանացին խօսակցութեան բռնել, մէկն էլ ինձնից առաջ գուրս նետուեց և երբ ես խանութ ելայ, այնտեղ կատարեալ լուսթիւն էր տիրում, երեսփոխն էլ յանցանք գործածի Ժպիտ գէմքին՝ ինձ նայեց:

Ձգացի, որ աւելորդ էր որևէ բառ արտասանել և դուրս գնացի խանութից, անցայ հրապարակն ու սկսեցի գէպի եկեղեցին ելնել մենակ:

Կամաց էի քայլում: Բացի այն, որ տեսածներիցս ու լսածներիցս առաջացած անախտով տպաւորութեան տակ՝ խորհում էի, այլ և զննում էի շուրջս:

Եկեղեցուց վեր, խճուղին ելնելու կէտում դիմացս դուրս եկաւ մի ինչ որ կոյր և նիհար ծերունի, որ շօշափելով ճանապարհը, զգուշութեամբ քայլեր զնեւով՝ դիւզն էր իջնում:

Երբ տանաձայնս լսեց, պահ մի կանգ առաւ:

— Բարեւ, ծերունի, ասացի ես:

Երեսիս նայեց իր բերրից զուրկ աչքերով, ձեռքի գաւազանը գէպի իրեն քաշեց և ասաց.

— Ասածու բարին... դու ո՞վ ես... Հն, չլինի՞ դու ես այն քաղաքից եկած մարդը:

Ես եմ. իսկ դու աչքդ Մարտիրոսը խօսես:

Է՛հ, ինչ աչքդ, քեզ մատաղ, երգ ասող ենք... ասած ունիմ— «բո՛ւ Մարտիրոսն էլ իրան աչքդ է կարծում, երգ է յօրինում, ձայնին լսեցէք»...

— Դա խօ Ձիւանիի խօսքերն են, բարեկամ:

— Այո՛, նա «խեղբի աչեցէք» է ասել, ես էլ «ձայնին լսեցէք»... Ո՞ւր ես գնում էսպէս, հրամանքդ:

— Ոչինչ, ման եմ գալիս. իսկ դու այդ կոյր տեղովը գորտեղից ես գալիս:

— Իս վերևումը մի արտ ունենք, կնտեղ էի: Ասի տեսնեմ ի՞նչպէս է բուսել:

— Տեսնո՞ր, ժպտեցի ես:

Կռացայ ձեռք տուի, է՛հ, փառք իրեն, մի թզաշափ բարձրացել ա... ամն գիժ ցորեն շատ է լինելու:

— Ի՞նչպէս խոսցար:

— Իմանում ա. գիժի տերերը փայլուն, ընէնց փունփունկ ա ըլում... Ըստեղ կանգնելը լաւ չի, պարոն, թէ կ'ուզես իջնենք ժամի մօտ, ընտեղ գերեզմանարարեր կայ, նստենք ըիչ խօսանք. ես թէ չէ՛ համեցէք մեր:

տուն զնանք, միասին ճաշենք... ես ուզում էի մէկ քեզ հետ խօսալ...

—Չէ, տուն զնալը թող մնայ, բայց ի՞նչ ենք եկեղեցու մօտ:

Կոյրը վայառ պարզեց և քայլել սկսեց:

—Թո՛ղ թեղ ըռնեմ և տանեմ քեզ. մօտեցայ նըրան:

—Հո՞... շնորհակալ եմ, բռնիր ..

Եւ երբ թեկեցը բռնել քայլում էինք, ձեռքովը բռնեց մի ձեռքս ու ասաց.

—Թո՛ղ մէկ հրա ձեռքդ շօշափեմ... ես մարդու ճանաչում եմ իրա ձեռքիցը .. տեսնեմ .. Հո՛, երևում ա որ պիսէր <sup>1)</sup> ես եղել...

—Ի՞նչպէս իմացար:

—Իմացայ էլի... Ա՛յ, ա՛յ ձեռքիդ միջամատը—գրիչը ի՞նչ նրանով ես բռնում—ծայրի վրայ կաշին կոշտացել ա... ամա չար բնութեան աէր մարդ էլ ես երևում... ընէնց էլի, հեշտ բարկացող...

—Ի՞նչպէս իմացար...

—Ինչի՞... ես ի՞նչ կոյր չեմ եղել... Է՛հ, Աստուած բալրի պատժեց ինձ, ո՞վ ա իմանում. առաջ ես էլ աչքեր ունէի, սեղ սպիտակից ջսկում էի, դրում էի —կարգում... Ա՛յ, նրանից իմացայ, որ գրեւիս գրիչը պինդ, շատ պինդ ես հուպ տալիս, ընտուր էլ կաշին քար ա կտրել...

—Յետո՛յ, հուպ տալը միթէ միայն չար մարդը կարող է:

—Չէ, բայց ընէնց, թո՛ւնդ ես դրելու ժամանակը, էլի... Հո՛ր, Աստուածդ սիրես, դու բազարումը ի՞նչ գործի էիր:

—Վարժակիտի նման բան:

—Հո՛... լու բաս, ամառս եկել ես մեր գիւղը անցկացնես, էլի... Չհասնո՞ք հալա... Հո՛, համա հրէս

<sup>1)</sup> Գրագիր:

ժամի կողքի մեծ բարը... Այ, գնանք դէնը, էն միւս կողքին...

—Յարէթ աղայի գերեզմանի մօտ...

—Հնա, նրանից քիչ հեռու... Գիտես, էդ Յարէթ աղան իմ ախպէրն էր.. օղորմի հոգուն...

Յիշեցի Սահակեանի պատմածը և լուռ մնացի։ Ապա, երբ տեղաւորել էի ծերունուն ապառաժի մի կտորի վրայ, որ երևի իբր գերեզմանաքար նետուած էր այդտեղ, ինքս էլ նստեցի կողքին։

—Թէ ծխում ես՝ ծխիր, ասաց կոյրը— ես բռնօթի \*) եմ քաշում։

Ասաց, երկար մուշտակի քղանցքը ետ տուեց ու արխալուզի գրպանից հանեց ըթախոտի փոքրիկ տուփը, միքանի արծաթէ կտորներով պատած դօտիի միջի կարմիր թաշկինակով նախ քիթը մաքրեց, յետոյ փոշին լցրեց ըթածակերի մէջ, աչքերը սևեռեց հեռուն ու ասաց.

—Հէյ դիտի հայ, աշխարհ... որ աչքերս սաղ լինէր, ես կը թողնայի որ մենակ ման գաս գեղումը, գեղի շների հետ կախ տաս... ես թէ չէ՝ ըստե՛ղ կը նրստէինք և ոչ թէ էն մեր սիրուն ձորագլուխներումը, չուռան ջրի, հով ծառերի տակ, էն լաւ-լաւ ծաղիկների մէջ... Ախ, ախ, պարոն վարժապետ, շատ, շատ կարօտել եմ մեր սարերին, մեր անտառին ու ձորերին. մէկ էլ տեսնէի, մի կ'ուշտ, աչքով վայելէի ու յետոյ մեռնէի ..

#### IV

Պահ մի երկուսս էլ լուռ մնացինք։ Ծերունու անձկութիւնը յուզեց ինձ։ Նայեցի դէմքին։ Բերրից զուրկ աչքերը լցուել էին արցունքով և դէմքը կնճռոտուել։

Մասներով հուպ տուած ըթախոտի կէսը նա դար-

\*) Գթախոտ։

ձեռք ներս կոխեց ըթածակերի մէջ, լեցուած արցունքը դատարկեց թաշկինակով, յետոյ, երևի աւելի սովորութիւնից՝ քան ցրտից - ծածկեց մուշտակի քղանցքով ծնկները և ասաց.

— Ես միշտ խօսյալէս չէի... Ես էլ մի ժամանակ զօջաղ տղամարդ՝ չափնիւմ էի մեր անտառները. դորձը վախենում էր ինձնից .. իսկ այժմ, ի՞նչ եմ ես... մի ուրուական, որ պատում եմ գիւղում և սրտիս նեղութիւնից, բարկութիւնից՝ երգեր երգում.—

Է՛հ, կոյր երգիչ տխուր ստուեր անցեալի,

Դու մեզ երբէք զուարթ երգեր չես տալի.

Օրը խաւար քեզ համար, արևն անփայլ քեզ համար.

Շնտ ապրեցիր—այս աշխարհ թող, հալւի...  
— Քո գրածն է, հարցրի ես:

— Ի՛մ... Այսպէս շատերը ունիմ. ասում եմ՝ գրում են...

Է՛հ ի՞նչ անեմ, տղէտ մարդ եմ, երգերս էլ տղէտ, անտաշ՝ ինձ նման... Է՛հ, քիչ-միչ կարգացել եմ, լոյս դառնայ Սարգիս վարդապետի հոգին—նո՛ս է ինձ դաս տուեր:

— Վաղ՞ուց է սր կոյր ես:

— Տասը տարուց աւելի... Ձիուց ընկալ, յետոյ երկար հիւանդ պառկեցի և երբ սաքի ելայ—կոյր էի... Է՛հ, փոռը Իրեն, Նրա կամքը հնաբաժնի այդպէս էր... Դէ՛հ, բայց, հերիք է իմ մասին. մի քիչ էլ դու ասա... Եկել էք գիւղը, լսել եմ, ուզում էք ըստեղ ապրել... Վարժապետը պատմեց... Գիտե՞ս, եղբօրս սրգին է:

— Այդ ի՞նչ շատ ազգականներ ունիս:

— Գիւղի կէսից աւելին... Եօթը եղբայր ենք: Գալօն էլ իմ եղբայրն է, անիծուի նա:

— Այն հարուստ խանութատէրը:

— Այո՛... Էդ ջաղացի առան խօս գիտե՞ս—դուքաններինցը ցած. ընտեղից դէնը համարեա կիրակոսեցից ցեղն է, դէսը՝ Սարօնեցից ցեղը:

— Այդ Զաւաղի ցեղը:

— Հո՛ւ. ծանօթացնո՞ւր .. Խմուղ, լիրբ տղայ է. քաղա-

քի միկիաանների որդի... Ասենք մեծ եղբայրն էլ մի բան չի. այ, նրանց հէրն էր լաւ մարդ. աղբատանէր, բարի... Էդ ինչից ա, վարժապետ, դու կը գիտենաս — որ լաւ հօր ազան էլ է փիւս գուրս գալիս...

— Փառանգութեան օրէնքը գեւ լաւ չէ ուսումնասիրուած. ս՛վ գիտէ. շրջանը, գոյութեան կուռի միջավայրը...

Հը՛մ, արեց ծերունին, որ աշճանացած՝ լսում էր ինձ — չնեղանաս, վարժապետ, բայց ասածներդ գլխումըս չմտան. մէկ էլ ասեն...

Նոր աշքի եկայ, որ յիրաւի, ծերունին սչինչ չպիտի հասկացած լինէր ասածներիցս: Ծիծաղս եկաւ:

— Ոչինչ, սչինչ... ասացի—ներիր որ մի քիչ խըրթին խօսեցի... ուզում էի ասել թէ մարդս սնց կրթուի, ինչ մարդկանց հետ որ նստի—կանգնի, նրանց բնութիւնն էլ կը ստանայ:

— Էդ մէկը ճիշտ ասացիր... Զաւազը մեր ազականուած գիւղաքաղաքումն է մեծացել, մեծ եղբայրն էլ այնքան խման-հարբանների հետ ունեցածը ծախեց, որ ըսէնց խարաբ էլաւ, գնաց... Հմի էլ, հրէ՛ն, բեօխլի օգնական ա. աչքովդ պիտի տեսնաս թէ սնց ա պլոկում գիւղացոց, սնց ա գազանի պէս փէտը քաշում սրտ-նրս փրայ...

— Իսկ ձեր ցեղը:

— Մեր մէջ էլ կան փտերը, ես խօ մեր ցեղը չեմ գովում... Այ, մէկը հէնց էդ Գալօն... Գիտէս ինչս ա. եղբայրս ա. բայց չնից փխն ա... էս ա տաս տարուց աւելի, մեզ հետ խօսով ա, թէ ի՛նչ—նրան չես օգուտ տալիս... Ախր սնց տամ. մի անդամ յիմարացայ՝ փող պարար աւի—հինգ տարի քերթեց կաշիս... Բայց էլի մեր ցեղի մէջ մարդիկ կան. Սարօենց ցեղը:

— Հա՛, միջահատեցի ես—լսել եմ, գիւղը երկու ցեղի է բաժանուած և երկուսն էլ իրար մըստում են... Լաւ չէ այդ. հայկական այդ ազատտ յատկութիւնը զըզ-

ուեցրեց: Ախր ի՞նչ ունիք իրար հետ, մի՞թէ չէք կարող հաշտ, գոնէ առանց իրար փրատելու ապրել:

—Հը՛մ... արեց նորից ծերունին—Երեւում ա որ նրանք արգէն իրանց կողմն են քաշել... բայց աես վարժապետ, կը փորձես՝ կը տեսնաս. նրանց հետ զործ որ բռնես կը փոշմանես... Թէ նրանց հողը՝ հող չի. թէ մարդիկը՝ մարդիկ չեն:

—Լաւ, լաւ թո՛ղ բամբասանքը .. Հաւատացած կացիր, որ մեզ խաբել կամեցողը կը զղջայ... Ես լաւի հետ լաւ եմ, վատի հետ՝ կրկնապատիկ վատ:

—Ապրես, կարգն էլ հէնց էզ ա... բայց, քեզ համար եմ ասում, լաւ կը լինի որ առուի է՛ն զրադի հողերն էլ մէկ տեսնես:

—Այդ թո՛ղ. ինձ այն աստ, թէ ինչո՞ւ ձեր գիւղացիք այգբան խմում են և բոլորն էլ կարծես խօսք մէկ են արել, որ մեզ միշտ խաբուած պահեն... Մենք խօ իրենց փրատ տեսլու չենք եկել .. Բիչ առաջ, դուքանում երեսփոխը ուղեց զիւզի մասին մի քիչ ճիշտ բաներ ասի մեզ—քիչ մնաց կտրտէին խեղճին:

Ծերունին գլուխը կախ՝ մնաց մի բոպէ, յետոյ նորից ինձ նայեց իր աչքերով, բռնեց ձեռքս, սեղմեց ու ասաց.

—Ախ, քեզ մատաղ, պարոն եղբայր, ինչո՞ւ ես իզուր եկել՝ չցաւած գլուխդ աւետարանի տակ դնում... Մեր ջահիճների հետ, Աստուած ազատի, գործդ լաւ բռնիր հա՛... էլ առաջուան սերունդը չի մնացել, ոչ... զալբու-թիւնն \*), սո՛ւտ, ինչ ասես՝ քաղաքիցը լցուել է մեր կողմը... Ախ, երկաթուղին, այդ անիծուած մաշինը բերեց բոլորը... Մեր ջահիճները քաղաք շա՛տ տեսան, շա՛տ... լսիր քեզ ինչ կ'ասեմ... Ես կոյր եմ, չէ՛. լաւ, որ ծարաւ լինեմ և ուղեհամ բուն աղբիւրը գտնել, թէ ցոյց առուզ չլինի՝ կը գտնեմ... Ո՛չ իհարկէ, ստիպուած պիտի կեղտոտ ջրիցը խմեմ... չեմ էլ տեսնում ախր, որ

\*) Սարերայուլթիւն:

նա կեղտոտ է... խմում եմ, խմում՝ մինչև ծարաւս կտրի... Դէ՛, խմածս էլ ամենից շատ՝ կեղտ կը լինի, որովհետև կեղտը միշտ ջրի երեսին է կանգնում, միշտ աւելի շուտ է մարդուս բերնին մօտենում... Ըտէնց էլ մեր հիմիկուան սերունդը. հէնց որ քաղաք են ընկնում, ճանապարհը, աղբիւրի ճանապարհը ցոյց տուող չկայ — նրանք էլ ծարաւ, ինչ կեղտոտ ջուր ասես՝ խմում են... Ա՛յ հէնց վրաները որ նայես — կը հասկանաս: Խօ տեսնի ես ինչպէս են հագնւում, իրենց հայրերը հլա փափախով, արխալուզով են, իրենք մէկ էլ տեսար՝ բինջակ, կարտուզ, ճոճուան կօշիկ, ձեռքին փէտ, մատանի... Ըտէնց էլ ամեն բանը. ինչ որ հայրերն են տալիս՝ չեն վերցնում. ծարաւ են՝ քաղաքի կեղտոտ ջրերիցն են խմում. էն անիծուած տեղումը մէկ մարդ էլս չկայ՝ որ մեր ազերանցը ձեռքիցը բռնի՝ տանի բուն աղբիւրի մաքուր ջրին ..

— Այդ ձեր հայրերիդ պարտքն է. ինչո՞ւ չէք կըրթում, լաւ կողմը ուղղում նրանց:

— Հը՛մ... ուղղել, սովորեցնել... Տօ հիմիկուան աշխարհը այլ է, այլ. հիմիկուան որդիքը ոչ իրենց հօրն են մարդատեղ դնում, ոչ էլ թողնում որ նրանք մի խօսք ասեն: Հրէն, երէկ երեկոյ չէր, որ լսում էի թէ ինչպէս եղբօրս որդին իր հօրը վրայ գտուում էր թէ՛ «ինչ ես հաջում քեաֆտառ շան պէս, դարաչի կտրել դիխիս»...

Խոնչ առարկէի, չէ որ ինքս էլ յաճախ տեսել էի, թէ ինչպէս որդին գոռում է հօրը վրայ և հայրը խեղճ ու կրակ՝ արտասուքի է դիմել՝ իրեն մխիթարելու համար:

— Ին՞ս... շարունակեց ծերունին — եղպէս էն, էղպէս... բայց ա՛յ, բան չեմ ասիլ, եթէ որդիս արժանիք, ինձնից աւելի կատարելութիւն ունենայ և ինձ հրամայի սուս կենալ... Ուրախ էլ կը լինիմ: Գլուխս նրա ստի տակին կը դնեմ — բայց մէկ իմանամ է՛, որ նա ինձնից լաւն է, խելօք, կատարեալ... Աշխարհս էլ

հէնց առաջ չի երթալ, թէ որդին՝ հօր վրայ կատարեալ չի... Ըտէնց չի:

— Այդպէս է:

— Շատ ապրես... Ես միշտ մտածել եմ, որ կատարեալ ուսումը մարդուս լաւացնում ա, համա կիսատը՝ լրբացնում:

— Ճիշտ է:

— Այ, մի երգ էլ ունիմ ասած գրա վրայ.

Լաւ կարգալը, որդեակ սիրուն

Կը լինի տանդ մեծ սին,

Կը տայ քեզ համեստութիւն:

Կիսատ կարգալը, որդեակ անպէտք,

Չի թողնիլ ոչ մի լաւ հետք,

Կը դարձնի քեզ լիբբ անտուն...

— Լաւ չեմ ասել... Յետոյ աւելացնում եմ թէ՛

Աւելի լաւ է մնալ տգէտ,

Քան ուսանիլ կիսատ, անպէտք:

— Ի՞նչ երևի շատ այդպիսի գրուածքներ կ'ունենանաս:

— Ունիմ: Բոլորը գրել եմ տուել մի տետրակում...

Հիմի ճաշի ժամանակ է, թէ արժան կը համարես, վեր կաց դնանք մեր տուն, համ կը ճաշենք, համ էլ կասեմ քեզ բոլորը:

Ու ոտքի ելաւ: Լռութեամբ թիւը բռնեցի և սկսեցինք իջնել դէպի հրապարակը, որից յետոյ էր ջրաղացի առուն:

Կոյրի յաճախ իմաստուն խօսակցութիւնը հաճոյք էր պատճառում ինձ: Երևում էր, որ մարդը աշխարհ էր տեսել, այլև իր 10 տարուայ կուրութեան ընթացքում, ինքնամիտփ խորհրդածութիւններով հասել էր այն ամենին, ինչ որ ժողովրդի իմաստութիւնն է արտադրում:

Ճանապարհին նա քիչ խօսեց: Հրապարակից անցնելիս, նկատեցի թէ ինչպէս գիւղացիք հետաքրքրու-

Թեամբ մեզ էին դիտում, ակնարկներ անում միմեանց  
և ժպտում:

Երբ անցնում էինք Գալօի խանութի առջևից, որ-  
զին, որ նստել էլ նստարանի վրայ, հեզնույ ժպտով  
մեզ նայեց:

— Ընկերս դեռ այնանց է, հարց ատլի նրան, գի-  
նեսանը ակնարկելով:

— Ո՛չ, ասաց նա— նոր դուրս եկան խմբովին և  
վարժապետի մօտ— այգիովժը գնացին:

Կոյրը, քիչ անցնելուց յետոյ, թեքուեց գէպի ինձ  
և ցած ձայնով ասաց.

— Հիմի մինչև երեկոյ կը բակին, յետոյ կը սկսեն  
կախ, զարմազալ... ամաճս ընկերդ:

— Կ'ուզարկենք, կը կանչենք նրան:

— Հն, թող գայ, ինչ նրանց ընկերն է: Մենք էլ  
օզի, գինի սենենք ճաշին, բայց դէհ, բանի ես ողջ եմ,  
իմ տունը հարբեցողի երես չի տեսնիր...

Հարբեցողը ոնց թէ մի խող ազտատ,

Յեխի մէջ թաթախում է ձեւը ու սար,

Գնչովը լկատում ա ցեխը

Գլխի տեղակ գլուխն ա դառնում արեխը:

— Այդ էլ քսնն է:

— Իմն է, ես ուրիշի գրածները չեմ ասում: Լսիր  
մնացածը... Առուն հասանք... Դէ լաւ, ջաղացի տակն  
ա կարմունջը, բայց նեզ ա, դու անցիր, հիմիկանց գէ-  
նը ես մեծակ էլ կարամ գետը, սովոր եմ... Դու լսիր  
մնացածը. —

Թէ ուղենայ մի խօսք ասել,

Կ'ատես իշի ձէնն ես լսել.

Վայ թէ քէֆին ես կպել...

Բերնի ցեխը վրադ շուռ կը տայ:

— Այդ տողը չեղաւ, բարեկամ, ժպտեցի ես.

— Հն, դիտեմ... Արտիցը գալիս ուրիշն էի մտա-  
ծում գտնել, բայց դու ուստ եկար... վնաս չունի,

գիշերս պառկելիս կը դանեմ... Հիմի լսիր վերջին կտորն էլ.

Հարբեցողը ոչ տուն ունի, ոչ ընտանիք.—

Որտեղ գինի—ընտեղ նրան հարսանիք:

Մարտիրոսը, ճիշտ է, գինի խմել էլ գիտէ,

Բայց չի կորցնում մարդկային խիղճանիք...

## V

Հազիւ անցել էինք առուից և պտոյտ էինք դորձում ինչ որ բարակոյտերի առջևից, որ ոչչառ հեռու լսուող մի ազմուկ կանգ առնել տուաւ կոյրին:

—Բ՛՛՛... կանչեց նա վախեցած—կուիւ ա. կտեսս մեր տան կողմերումն ըլի, մեր աղերանց ձէնն ա...

—Ձեր տունը այդքան մօտ է:

—Հ՛՛՛. էս երեցողը աղբօրս—Յաբէթինն ա, յետոյ մերը... Հլա մէկ շուաշուտ գնանք:

Մտառանջ ու վախեցած՝ ծերունին թէև խփուում էր պատերին, դայթում էր յաճախ, բայց շտապով առաջ բայլեց:

Ինչ յետոյ կանգ էինք առնում մի երկյարկ շինութեան առաջ, որի մօտից, դէպի վտակն էր փուում ընդարձակ, ծառազարդ և սիրուն պարտէզների մի շարք: Յիրաւի, ծերունին իրաւունք ունէր, առուի այս կողմերի հողերը շատ աւելի լաւ ու բեղմնաւոր էին երևում:

Այդպէս էլ էր: Մարօյենց ցեղի բռնած կողմը, հրապարակից սկսած դէպի վեր՝ տարօրինակ կերպով տները զուրկ էին պարտէզներից, մինչ այս կողմը լինէր էր ծառատառններով ու ջրերով:

Բայց երկար չկարողացայ շուրջս ղննելով զբաղուել, որովհետև կոյրի տան առաջ տեղի էր ունենում մի այլանդակ տեսարան:

Խանութի ետևում խմուղ—արբեցողների խումբն էր ամբողջովին այնտեղ և գեռ մի նոր դէմք էլ աւելի:

10—15 հոգի, բոլորն էլ արբած, երերուն, աղմկալից խօսող, միմեանց չհասկացող— ժողովուհե էին ինչ որ գերանները կոյտի առաջ և ալմկում, կանչուաում էին:

Անտառապահը, վարժապետը, նոր դէմքը— որ, ինչպէս տեղեկացայ, Զաւադի եղբայր տանուտէրն էր — խառնուել էին իրար: Անտառապահի դէմքը կարել էր վարժապետը և ճգնում էր համոզել նրան, իսկ Զաւադի եղբայրը կանչում էր.

— Ինչի, ախպէր, փէտ են գողացել, թող պրատակոյ շինուի... ո՞ւր էք ողջ գիւղը ձեր կրակովը էրում...

— Ղաւա՛մ, Ալէքսէյ, նո՛ւ... համոզում էր ուսուցիչը:

— Ինչո՞ւ գողացած. գտում էր մի երիտասարդ, որ կոյրի որդին էր— էս փէտերը ես առել եմ, առել...

— Աստուած գլխիդ բնոր դցի, Գրիգոր, ձայնում էր մի պառաւ էլ հեռուից— տունդ գլխիդ ընկնի, բաս մինակ մեզ տեսար...

Միւս գիւղացիք շրջապատել էին, իսկ Զաւադը, չարամիտ քրքրիջը բերնին, ընկերիս մի կողմն էր բաշել և ինչ որ բան էր բացատրում տաքութեամբ:

Երջակայ տանիքներից, փողոցի անկիւններից, Գաւլօի պատշգամբի լուսամուտից՝ դուրս էին ցցուել զլուխներ, կին, մանուկ, աղամարդ՝ կիտուել էին ամեն կողմ:

Եւ ամբողջ այդ ալմկոյ խումբը այնքան հարբած էր, որ իրար վրայ էր ընկնում, առանց միմեանց լսելու գուգտում, վիճում:

— Մն ինչ ա, տօ... առաջ քայլեց կոյրը բարձրաձայն կանչելով— Յակօբ, այ աղայ, Արա՛մ, զո՞ ինչ ա, ի՞նչ ա եղել...

Ամուսնուն տեսնելով, ճչացող պառաւը մօտ վազեց, բռնեց թևիցն ու ասաց.

— Ի՞նչ պիտի լինի, տնա՛ջէնի մարդ. հրէն, Սարօենը մատնել են, պահապանն էլ եկել՝ պրատակոյ ա գրում...

— Ո՞նց թէ պրատակոյ, ինչի...

— Փէտերի համար... էն նոր բերած տախտակա-

ցուների... ասում ա՛ զողացել էք, ծածուկ բերել. ես  
10 մանէթ կը տաք, ես թէ չէ՝ փէտերն էլ տանում եմ  
ու ձեզ էլ դատատանի քաշ տալիս...

—ԲՕ... բա ըսէնց բան կ'ըլի, արեց կոյրը—ինչի,  
մենակ մերը տեսաւ... ես էգ օձ Գրիգորի հօրը... աս  
մէկ զէնը կացեք տենամ... Ո՞ւր ա արեչչիկը, վարժա-  
պետն ուր ա...

Ասաց, հրեց իր գէմը կեցողներին ու բայլեց գէպի  
գերամաների կողմը, որի տեղը նա լաւ գիտէր և դուշա-  
կում էր թէ նրա շուրջը պիտի կենտրոնացած լի-  
նէին ազմկազները:

—Հո՛ւ, հրէս եկաւ Մարտիրոսը—ինքը, նկատեց տա-  
նուախրո՞յ օգնականը.—հլա մէկ արի, Մարտիրո՛ս, էս ո՞ւր  
ա քո տղէն մէշիցը ծառեր գողացել բերել:

—Սդա ինչ ես հաջում, ճշաց նրա վրայ կոյրը—  
սո՛նց թէ գողացել... մէկ գնանք քո տունը, տեսնենք  
դո՛ւ ես մէշէն (անտառը) դարակել-բերել, թէ՛ մենք...  
ո՞ւր ա արեչչիկը:

—Ըստեղ եմ, յառաջացաւ գէպի նա երերուելով  
անտառապահը—դու... էն փէտը պրօտօկօլ, տասը մա-  
նէթ...

—Ո՞նց, տասը մանէթ... տօ ես քեզ նման հար-  
բանին տասը սիլլա (ապտակ) կը տամ որ թիչ խմես...  
ինչի, բիլէթ չունիմ, փէտ բերելու ինձ իրաւունք չկայ...

—Ունես... էս փէտը... գողացած ա. ես... ես  
կարել էի Մարտե՛նց համար... ը՛ր՛մ... եանի ինձ հա-  
մար...

—Տօ ի՛նչ ես դու տալի. լաւ տեսել ես փէտը,  
թէ էս խէզ քեօխովին ես սկանձ գնում. ես թէ չէ  
փօղդ ա պակասել ու մարդ չգտնօր գեղումը...

—Ադա քօ՛ւ, քօ՛ւ... մէջ ընկաւ տանուախրի օգնա-  
կանը, մի լիբը ծիծաղ գէմքին—դու որ չես տեսնում  
գերամաները, մենք չե՛նք տեսնում... էլ ո՞ւր ես ուչունցի  
(հայհոյանք) տանում բանը... էն ա, ասա որ գողացել-  
բերել էք, հանիր մի ոսկի կոխիր ձեռքը, փէտն էլ ես

տուր տանենք՝ պրծնի-գնայ էլի... ուր ես կրակը մեծացնում...

—Տօ չօռ ու ցաւ կը տամ... կը տամ որ տանէք...

Վարժապետը, որի աչքերը փոքրացել, բայց ճըզնում էր զսպել իրեն և տեղն ու տեղը կանգնած՝ օրօրում էր, շրթունքները պրկում, ձեռքի փայտը ամուր կոխում գեանին, ճակատը կնճռում և աշխատում էր խիստ կերպարանք ստանալ—փորձեց միջամտել:

Եւ երբ կոյրը, տանուտէրի օգնականն ու անտառապահը՝ զրեթէ երես-երեսի մօտեցրած, ստների վրայ լարում, երեք աքաղաղների պէս ճչում էին, նա ձեռքը 3—4 անգամ թափահարեց, գահավիժմամբ առաջ նետուեց, երկու թևերովը լայն շարժում գործելով եւ մղեց շրջապատողներին, մտաւ աքաղաղների մէջ տեղ, ուժգին հրումով հեռացրեց նրանց միմեանցից ու դռչեց:

—Եաւնչ... եաւաշ ստում եմ էէ... եաւաշ ես էլ սսեմ... Դնւ, Ալէքսէյ, պաշօ՛լ (կորիք)... հեռու գնա... Ըաէնց: Դնւ էլ քեօխա, ոէխդ քեկ բաշիր ու եալլան, դէնը... Բաէնց... Հիմի դնւ, ամի, ինձ լսիր...

—Ինչի «եալլա դէնը» ձայնեց ստների վրայ ցցուելով քեօխախն—եանի ուղում էք որ ցէպս \*) կախեմ... եա... եա թէ չէ... Ադա ուր ա գզիրը... Շան որդի Սահակ, էդ ուր ես կորել...

—Տօ սուս էէ... սուս մէկ, կանչեց նրա վրայ վարժապետն ու ստները լայն-լայն դնելով՝ ճգնեց հաւասարակշռութիւն ստանալ՝ չօրօրուելու համար: Յետոյ, կուրծքը ցցեց, գլխարկը պինդ կոխեց գլխին, դէմքը կնճռեց ու սոսց:

—Ո՛ւր ա Զաւադը... Հնւ, ըստեզ ես... Լաւ, այ ամի, խօ տեսնում ես էդ շան որդի կազին... խօ տեսնում ես... Լնւ նայիր... չէս տեսնում, ի՛նչ ա, աչք չունեմ... թիւ ես դրա... էս ամէնը դրան բանն ա .. էս խեղճ աբէչչիկը սկի էլ չէր իմանում, որ ձեր Արամը

\*) Գիւղապետական նշանը, շղթան:

փէտ ա բերել. դեղն էր եկել որ Բախշիենց Մուրադի գողացած փէտերը բռնի: Դէ՛, Ջաւադի բարեկամն ա ախր, խօ գիտես... Հը՛մ, ինչ ա, որ նրանը մոռանայ, սրան շուռ տուաւ դէսը... Ամա, բայց որ...

— Հա՛... միջահատեց նրան կատաղութեամբ կոյրը — ուր ա էդ շան սրգին, էդ, էդ...

Ու փայտը բարձրացրեց:

— Փի՛է, փի՛է... կանչեց հեռուից Ջաւադը վախեցած — ա՛ճ, էդպէս շնօ կը լինի... չես ամաչում, վարժապետ...

Յետոյ մէկէն, վախը փոխելով յանդգնութեան, կամ, աւելի ծիշտն ասել, վախն աւելի սաստկանալուց, մի քայլ առաջ նետուեց ու ահաւոր ծիշով կանչեց.

— Տեսնո՞ւմ էք էս շան ցեղը, էս շան... այ ես ձեր... այ ես ձեր...

Ու միմեանց ետեւից, կարծ փայտը ցցած, կաղ ոտքի վրայ լարուած, կոկորդը պատուելու չափ ճշտով սկսեց նա այնպիսի հայհոյանքներ, այնպիսի լիտի բառեր, որ լսողները խառնուեցին իրար, վարժապետը երկու ձեռքերով ականջները փակեց, անտառապահը ապշած՝ ետ քաշուեց, իսկ ընկերս բերանաբաց մնաց...

Ճարունակելով կաղլիկը ամենքի ձայնի վրայ լռխտղ աղաղակներն ու հայհոյանքները, վախից գունատ, ստուկումով լի աչքերը, նա կամաց-կամաց ետ քաշուեց, ապա թքեց և սկսեց հեռանալ դէպի առուն: Այնտեղ, փոխանակ կամուրջից անցնելու — երկար կօշիկներովը մտաւ ուղղակի ջրի մէջ, այնտեղից էլ դարձաւ, էլի ճըշաց մի բոպէ, առուն միւս կողմն էլ մի վայրկեան մեզ նայելով հայհոյեց և անհետացաւ...

Մի բոպէ ամէնքը լուռ էին, յետոյ յանկարծ մէկը բրբջաց, ապա ծիծաղ երեսաց բոլոր դէմքերի վրայ, իսկ կոյրը, փայտը ցած թողնելով՝ ասաց.

— Ը՛մ ես քո վախկոտ հուզուդ...

Այնուհետև մէկէն ազմուկն իջաւ, մարդիկ սկսեցին ցրուել, մնացողները հանդարտ, համողիչ կերպերով

չըջապատեցին անտառապահին, և չէր անցել հինգ բուսակ, որ տանուտէրի օղնականը անհետացել էր, իսկ վարժապետը անտառապահի թեւը մտած, կոյրի առաջնորդութեամբ, ետեւերիցը մենք էլ, մտանք մի ընդարձակ սենեակ, ուր շուտով սփռոց փռուեց և երևաց շիշերով օղին և գինին...

— Ըտէնց հնա... ձայնեց վարժապետը— սյ, հիմի լաւ ելաւ... Տօ ի՛նչ դողացած փայտ, ի՛նչ տանուտէր... ողջ գեղը, բոլոր գեղերը դողանում են... Դու գինի աւսա, գինի... խմենք, Ալէքսէյ, կը շօրտու <sup>1)</sup> պրատակօլ մրատակօլ... ինչի, դու չե՞ս իմանում որ մէկը հէնց ինքը տանուտէրը ողջ անտառը թալանումա ու տարեկան ինչքանի տախտակ ա ծախում... նա՛, վազմի՛, պէ՛յ (ա՛ռ, խմիր)... Գօ կենացը, Մարտիրոս ամի...

Եւ երբ սկսել էինք ուտել, կոյրը որ լուռ և գունատ, պատառներ էր շինում, երկար չխօսելուց յետոյ՝ մէկէն ինձ դարձաւ և խուլ ձայնով ասաց.

— Մարդիկ կան, պարոն եղբայր, որ ծնուելու օրիցը հէնց՝ իրանց տեղումը չեն ծնում, ուրիշ տեղի վայել են, բայց բախտը նրանց յետի մէջ ա բերել-բցել... Մարդիկ էլ կան, որ ծնած օրիցը շան կաթ ծծածի պէս շուն են ըլում, բայց բախտը նրանց մարդկանց մէջ ա բերում— բցում... Ո՛ւր ես եկել մեր գեղը, ափսոս չե՞ս... Ա՛ռ, սոս մի-մի բաժակ էլ մենք խմենք, բեալքի թէ մի քիչ անասունի նման մենք էլ կարողանանք մտածել, թէ չէ՝ մարդու պէս ապրելը մեր բանը չի... ու տեղը չի... Ըտէնց չի, վարժապետ...

— Թ՛ող, թ՛ող, ամի... խմեց վարժապետը տխուր, խիստ տխուր գէմքով— խմենք, խմենք որ մոռանանք, թէ չէ՝ մարդու պէս չի ապրում, չէ...

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

\*) Սատանային թող գնա, թող գրողը տանի:

\*  
\* \*

Զմրուխտեայ երգեր, երազներ շքեղ,  
Գարնան վարդի հետ եկան, գնացին.  
Համբոյր ծաղկաբոյր և սէր հրաշագեղ  
Գարնան վարդի հետ եկան, գնացին:

Ուրիշի նման բոյն չչինեցիր,  
Կեանքի մըրըրկով զարնուած թռչուն.  
Ու հիմա մենակ ու սրբ մնացիր.—  
Եւ թարմ տարիներդ եկան, գնացին:

Մնացիր անտուն ու թափառական,—  
Ընկեր, բարեկամ եկան, գնացին.  
Մնացիր մուրր օտար ճամբէջում,  
Քարավան, երամ եկան, գնացին...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

---

# ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՑՈՒՄՍ \*

XXIV

Վ ա ն Ի ր ա ղ ա ք ր

Եկեղեցիները, եկեղեցիների թիւը, ձևը, ներքին կազմը, կոշնակ, զանդ, ժամեր-  
զուժին, նիւթական վիճակը, զանձանակ և իր խնդիրը, երեսփոխի պաշտօնը  
և երեսփոխները, քահանաները, արժանիքը, անտեսական վիճակը, եկամուտի  
աղբիւրները, լուստրարը, ժամկոչը, ժողովրդի վերաբերմունքը դէպի եկեղեցին,  
ժամանակի հոսանքը և իր ազդեցութիւնը, վանեցու կրօնասիրութիւնը, վերաբե-  
րումը դէպի վանքերը, ուխտադնացութիւն, Վաքազ, Վարմուր, Ս. Գրիգոր և Ս.  
Խաչ վանքերը, սրանց բարոյական, տնտեսական վիճակը, վիճակագրական տե-  
ղեկութիւններ Վան քաղաքի եկեղեցիներին 1902 թուի մասին:

Վանն ունի ներկայումս 12 եկեղեցի, որոնցից 5-ը Այգես-  
տանում, իսկ 7-ը Գաղաքամիջում: Եկեղեցիներն ընդհանրապէս  
միաձև են, շինուած են քարով և հողի աղիւսով, աւելի վերջին  
օրերումս վերանորոգուած եկեղեցիները աչքի են ընկնում ի-  
րանց ընդարձակութեամբ, լուսաւորութեամբ և սլաքը ճաշակով,  
Վանի միւս շէնքերի պէս եկեղեցիների ծածկը կազմում է  
միմեանց մօտ ձգուած գերաններից, որոնց վրայ մարդակ, ե-  
ղէզն շարելուց և փոելուց յետոյ  $\frac{1}{2}$  արշինաչափ հողով ծածկում,  
ամրացնում և յարգախառն կաւով ձեփում են, ծածկը աւրա-  
նում է պատերի և եկեղեցում երկու կարգ շարուած փայտէ  
հաստ սիւների վրայ: Կտուրների վրայ կան մէկ կամ երկու  
մեծ և փոքր գմբէթներ—տախտակից և փայտից պատրաս-  
տուած, յատուկ զանգակաւորներ չունին եկեղեցիները, ոմանք  
ունին տաճար, իսկ միւսները պարզ խորան կամ սեղան մէկ  
հաստ մեծ կինդրոնում և երկու փոքր, նրա աջ և ձախ կողմե-  
րում: Եկեղեցիների պատերը ներսից ներկուած են սպիտակ  
սոււաղով, յատակները տախտակամած են, որոնց վրայ փռուած  
են խսիրներ և կապերաներ ու գորգեր: Աջ և ձախ պատերի  
վրայ (եկեղեցու ներս) կան փոքր-փոքր պահարաններ, ուր տեղա-

\*) Տես «Մուրճ», № 11.

ւորում են եկեղեցի մտնողները իրանց կօշիկները (կօշիկով եկեղեցի մտնելը ներելի չէ): Բոլոր եկեղեցիներն էլ ունին մէկ կամ երկու յարկից բաղկացած վերնատուններ կանանց համար: Եկեղեցիների սեղանները անհրաժեշտաբար զարդարւում են Աստուածածնի պատկերներով, որոնց առջ կազմուած աստիճանաձև սեղանի վրայ շարւում են բազմաթիւ մոմի աշտանակներ. խաչեր, աւետարաններ, ծաղկամաններ, ծաղիկներով զարդարուած մեծ և փոքր սփռոցներ և այլն: Պատերից կախւում են մեծ կամ փոքր քանակութեամբ պատկերներ հին և նոր կտակարաններից, մանաւանդ աւելի շատ տեղ են բռնում այսուայն սուրբերի պատկերներ (հայ, յոյն և լատին եկեղեցական նշանաւոր և սրբացած դէմքեր): Լուսավարդութեան համար եկեղեցիներում զործածում են մեծ և փոքր ջահեր 5—10 մոմակալներով, կանթեղներ և աշտանակներ. ջահերը և կանթեղները թողով կախւում են առաստաղից, իսկ աշտանակները դրւում են սեղանների վրայ կամ հաստատուած են պատկերների առջ (սիւնների և պատերի վրայ). կանթեղների մէջ վառւում են կտաւասի ձէթ, իսկ ջահերի և փոքր աշտանակների համար մեղրամոմ:

Ժամաւորներին եկեղեցի հրաւիրելու համար զործածում են զանգ և փայտէ կոջնակ (այս արածուութիւնը նոր է ձեռք բերուած). թէ առաւօտ և թէ երեկոյ ժամերգութեան սկսելուց կէս ժամ առաջ, նախ կոջնակի ձայնով իմաց է տրւում ժամերգութեան սկսուելը, ցանկացողները այդ ձայնը լսելիս պատրաստուած են եկեղեցի երթալ, իսկ զանգերը հնչելուց յետոյ անմիջապէս սկսւում է ժամերգութիւնը: Բացառիկ երեոյթ է հետևեալ սովորութիւնը, որ գոյութիւն ունի Թիւրքիայի միայն միքանի հայաբնակ մասերում: Ամեն առաւօտ, ամառ թէ ձմեռ առանց բացառութեան եկեղեցու ժամկոչներից իւրաքանչիւրը առաւօտեան ժամերգութիւնից 1—2 ժամ առաջ վերցնում է ձեռքի յատուկ փայտի կոջնակը, և զարնելով և հոգևոր երգեր երգելով ժողովրդին հրաւիրում է զարթնել քնից և եկեղեցի երթալ, իւրաքանչիւր զոան առաջն էլ կանգնում է և զոների մուրճն էլ ձեծում է:

Այգեստանի բոլոր եկեղեցիներում, ամեն օր առաւօտ և երեկոյ առանց բացառութեան ժամերգութիւն կատարւում է, իսկ շաբաթ և կիրակի օրերում պատարագ լինում է (պատարագ կատարւում է առաւօտեան ժամերգութեան կից): Քաղաքամիջի 7 եկեղեցիներումն էլ մինչև սրանից 5 տարի առաջ ամեն օր ժամերգութիւն կատարւում էր. բայց նկատուելով թէ տարէցտարի եկեղեցիների հասոյթները պակասում և եկե-

ղեցի յաճախողների թիւը նուազում է, 1899 թուին այցելուհովիւ Ներսէս եպ. Արսլանեանի օրով կարգադրուեցաւ, որ Քաղաքամիջի 7 եկեղեցիները միանան, այդ կարգադրութեան համաձայն՝ այժմ այդ եկեղեցիներում ժամերգութիւնը կատարւում է հերթով, իւրաքանչիւր եկեղեցում մէկ ամիս շարունակ ժամերգութիւն կատարւում է:

Վանի եկեղեցիները ընդհանրապէս նիւթապէս աղքատ են: Եկեղեցիների հասոյթների աղբիւրները համարւում են ժամանակի ընթացքում զանազան բարեգործների կողմից նուիրուած անշարժ կալուածներ (տուն, խանութ, արտ, ջրաղաց, ձիթահան, ծառաստան կայն) և օրէցօր ծխականների տուած նուէրները (ննջեցեալի, պսակի, գանձանակի և ուրիշ աննշան պարագաներից):

Ներկայ դրութեան համաձայն ամեն կիրակի և նշանաւոր տօն օրերին, պատարագի ժամանակ կամ նոյնիսկ առաջ, ժողովըրդի մէջ շրջում է եկեղեցու գանձանակ, իսկ սրանից յետոյ՝ շրջեցնում են միարանութեան ինչպէս նաև աղքատների գանձանակ: Միքանի տարիներից իվեր Վանում գանձանակ շրջեցնելու դրութեան փոփոխութեան մասին Վանումն էլ խօսուում է: 1902 թուի սկզբից սկսած Այգեստանի Նորաշէն կոչուած թաղի ծխականները համաձայնութիւն գոյացնելով իրանց մէջ, առաջնորդարանից արտօնութիւն ստացան և վերցըրին գանձանակ շրջեցնելու դրութիւնը, դրա փոխարէն որոշուեցաւ, որ երեսփոխը եկեղեցուց դուրս ծխականներից հաւաքէ կամաւոր կերպով յանձն առած իրանց բաժին տարեկան նուէրը: Մի տարուայ փորձը ցոյց տուեց, որ այս դրութիւնը օգտակար է ամեն կողմից, նախ՝ որ այլևս եկեղեցում 3-4 անգամ շրջող գանձանակը շրջելուց դադրելով, դադրում է նաև ժողովրդի ուշադրութիւնը խանգարելուց, երկրորդ՝ շատ անգամ և շատեր 2 կոպէկ անգամ իրանց մօտ չունենալու ամօթից դրդուած՝ գանձանակ պատյախի ելած ժամանակ չեն ստիպուիլ եկեղեցուց դուրս գալ, երրորդ՝ տարուայ մէջ երկու անգամ եկեղեցու երես չտեսնող, ուրեմն և եկեղեցուն տարին 10 կոպէկ չտուող հարուստները, նոր դրութեան համաձայն պարտաւորւում են իրանց վիճակի համամատ նուէր տալ եկեղեցուն, չորրորդ և վերջապէս ներկայ ձևով գանձուած գումարը նախորդ տարիների կրկնապատկից էլ աւելի եղաւ, որովհետև թէ եկեղեցին, թէ միարանները և թէ օգնութեան արժանի աղքատները կրկին անգամ աւելի են վարձատրւում: Որքան որ այս փորձը աջող եղաւ և անցեալ և այս տարումն էլ նոյն եկեղեցում շարունակւում է, բայց շատերը նոյնիսկ Նորա-

շէնի ծխականներէց կասկածում են յարատևութեան մասին, որովհետև, ասում են կասկածողները, այս դրութեան կանոնաւոր յարատևութիւնը կախուած է միմիայն երեսփոխի բարեացակամութիւնից և գործունէութիւնից: Իսկ Նորաշէնի ներկայ երեսփոխի դերը և գործը կատարող ուրիշ երեսփոխ չկայ Վանի միւս եկեղեցիներում. արդէն այդ է պատճառը, որ միւս եկեղեցիները դեռ տատանւում են:

Եկեղեցիներէի հասոյթները ծառայում են իրանց գրկում թաղային ծխական վարժարաններ պահելու և եկեղեցու նիւթական պէտքերը մատակարարելու համար: Եկեղեցիներէի անմիջական ընդհանուր վերահսկողութիւնը յանձնուած է թաղային խորհուրդներին, իսկ մասնաւորապէս բուն եկեղեցու ներքին գործերի կառավարութիւնը յանձնուած է թաղ. խորհուրդի կողմից ընտրուած երեսփոխին: Երեսփոխներն ընտրուում են անորոշ ժամանակով, թաղի մէջ շատ թէ քիչ վստահութիւն վայելող անձնաւորութիւններից. տարին մի անգամ երեսփոխը հաշիւ է ներկայացնում թաղ. խորհուրդին. սա իր ձեւական քննութիւնները կատարելուց յետոյ, եկեղեցում կարգում է այդ հաշիւը և վաւերացնում է: Նկատելի է, որ երեսփոխները ներկայումս վերջին աստիճան կամայականութեամբ են վերաբերում դէպի իրանց պաշտօնը. ժողովուրդը դժգոհ է իր երեսփոխներից նրանց անպիտանութեան, կամայականութեան և անվստահութեան պատճառով. ոմանք պատմում են, որ նախկին տարիներում, երեսփոխները շատ բարեխղճութեամբ էին վերաբերում դէպի իրանց պաշտօնը, որոնք ջերմեռանդութիւնից զերդուած՝ ամեն տեսակ ծառայութիւններ անել չէին զլանում, իսկ վերջին 10—20 տարիներում այդ պաշտօնը վարողներն ընդհանրապէս իրանց անձնական շահու համար են ստանձնում այդ պաշտօնը, և ցաւալին այն է աւելի, որ սրանք խիստ ծոյլ են իրանց կոչման նկատմամբ. այս կարգի բողոք և գանգատ անողները միխթարում են իրանց այս տեսութեամբ, թէ «երեսփոխները, եկեղեցու փողեր ուտում են, բայց չկշտանալուց զատ, իրանց ունեցածն էլ տալիս են վրան», և իրանց ասածը հաստատելու համար ցոյց են տալիս տասնեակներով պաշտօնաթող երեսփոխներ, որոնք իրանց պաշտօնը թողնելուց յետոյ աննախանձելի վիճակի են ախրացել: Ժողովրդի գանգատը երեսփոխների ընչաքաղցութեան մասին, իրաւացի է (անշուշտ բացառութիւն կազմողներ էլ գտնւում են), նոյնպէս ճիշտ կարելի է համարել և այն տեսութիւնը, թէ շատերը ժոժովրդի առաջ խարդախ հռչակուած երեսփոխներից՝ աննախանձելի վիճակի են թարկուել են, բայց և այնպէս երեսփոխի

պաշտօն ստանձնողները երբէք չեն վախենում ժողովրդի այդ նկատողութիւններից. բարեբախտաբար ներկայումս շատ սահմանափակուած է երեսփոխների գործունէութիւնների սահմանը, օգտուելու աղբիւրները շատ քչացել են:

Ներկայումս բառի բուն նշանակութեամբ վստահելի և պատուաւոր անձինք, թէև ժողովրդից ընտրուած են իբրև երէցփոխ, բայց չեն ստանձնում պաշտօն, նախ, այն պատճառով, որ զլանում են իրանց ժամանակի մի փոքր մասը հասարակութեան ծառայութեան նուիրել, երկրորդ ժողովրդի քննադատութիւնից ազատ մնալու նպատակով. ահա այս պատճառով էլ երեսփոխների մեծ մասը կազմուած է այնպիսի անձնաւորութիւններից, որոնք կամ անգործ են բոլորովին կամ իրանց զբաղումները ներում են այս տեսակ պաշտօն յանձն առնելու համար: Որքան ժողովուրդը դժգոհ է իր երեսփոխներից, նոյնքան և զուցէ տաան անգամ էլ երեսփոխներն են դժգոհ ժողովրդից: Գանգատուած են թէ ժողովուրդը եկեղեցու նկատմամբ չի ճանաչում իր պարտականութիւնը, երէցփոխի պաշտօնը ծանր է, նոյնիսկ ոմանք էլ ասում են թէ «առանց վարձատրութեան չենք կարող ծառայել»...

Երեսփոխների պաշտօնը սահմանող որոշ կանոններ չկան Վանում. տեսնում էք այսինչ եկեղեցու երեսփոխը այնպիսի արտօնութիւն ունի, որ միւս եկեղեցիներում թաղ. խորհրդին է վերապահուած, կամ թէ չէ այնպիսի ծառայութիւններ է անում, որ քահանային, լուսարարին կամ ժամկոչներին է վերաբերում. անշուշտ որոշ օրէնքերի բացակայութիւնից է, որ շատ զեղծումներ են պատահում երեսփոխների պաշտօնավարութեան մէջ:

Վանի եկեղեցիներից իւրաքանչիւրն ունի 1—4 քահանայ, նայած ծխականների թուին: Վանի քահանաներն ընդհանրապէս իրանց կոչման նկատմամբ միջակ արժանաւորութեան տէր կարելի է համարել: Այժմուայ քահանաների մեծագոյն մասը, ինչպէս նախ քան քահանայական կոչումն ստանալը, նոյնպէս և այժմ քահանայական պաշտօնի մէջ, վարել են և վարում են ուսուցչութեան պաշտօն, այդ պատճառով էլ շատ թէ քիչ հմուտ են հայերէն հին և նոր լեզուներին, ծանօթ են հին և նոր կտակարանների բովանդակութեան և հայոց եկեղեցու դաւանութեան սկզբունքներին, կան և այնպիսի քահանաներ (օր Տ. Մեսրոպ ք. Ճանիկեան), որոնք իրանց բնածին տալանդով և ինքնաշխատութեամբ զարգացումի մէջ այնքան առաջ են գնացել, որ ոչ թէ միայն իբրև հոգևորական, այլ իբրև զարգացած մարդ շատ բարձր տեղ կարող են գրաւել մեր պոլ-

սարնակ և թիֆլիսեցի կուսակօն և ամուսնացած հոգևորականներին մէջ: Ոմանք վանեցի քահանաներից թէ հմուտ են իրանց հոգևորական կոչման, թէ հրապարակագրութեան մէջ բաժին ունին և թէ լաւ էլ քարոզիչ են:

Իրանց վարք ու բարքով, անձնական հեղինակութեամբ վանեցի քահանաները Պոլսի և Կովկասի քաղաքաբնակ շատ քահանաներից բարձր են. եթէ դուրս հանենք ամբողջ կէս դարու մէջ ապրող 100-ից աւելի քահանաներից 1—2 բացառութիւն կազմողները, պիտի կարողանանք ասել, թէ սրանք իրանց կոչման տրամադրութեան համաձայն—շատ վայելուչ դիրք պահում են հասարակութեան մէջ, բարոյականութեան մէջ մեղանշել, խաղածուրութեան, գինեմսուրութեան նուիրուել, ինչպէս անում են մեր զարգացած տէրտէրներից շատերը, չափազանց հազուադիւտ երևոյթ է վանեցի քահանաների մէջ: Չնայած իրանց աննշան վարձատրութեան և ժողովրդի աղքատանալու պատճառով օրէցօր իրանց եկամուտների պակասելուն՝ դարձեալ հազուադիւտ են և նոյնիսկ կարող եմ ասել թէ երբէք չեն պատահում ախպիսի տէրտէրական շահախնդրական շանթալից դանդատներ ու կռիւներ, որոնց մենք ականատես ենք լինում ամեն օր, Կովկասի այսուայն քաղաքների քահանաների շրջանում: Սրանց վարձատրութիւնը տարեկան 15 լիրայից—130 բուբուլց դէն չի անցնում, սրա կէսով գոհացողներն էլ փոքր թիւ չեն կազմում: Իրանց վայելած դիրքի շնորհիւ հասարակական խնդիրներում ունին ձայն և ազդեցութիւն որոշ չափով:

Ընդհանուր իրողութիւնն էր քահանաների մասին, որ մենք նկարագրեցինք. բայց նշաններ ցոյց են տալիս, որ վանումն էլ կամաց-կամաց քահանաների դիրքը պիտի խախտուի, ժողովուրդը աւելի բարձր կարողութեան և արժանաւորութեան տէր քահանաներ ունենալու պահանջ պիտի ունենայ, միևնոյն ժամանակ նորերին տեսնելիս հներին փնտռի: Արդէն կամաց-կամաց խուլ բողոքներ լսում են ժողովրդից քահանաների մասին, իրանց նիստուկացի, վարքի, պաշտօնի մէջ ցոյց տուած անհոգութիւնների և զեղծումների մասին: Քահանաների կողմից էլ փոխադարձ դանդատներ ժողովրդի անպարտաճանաչութեան մասին օրէցօր աւելի սուր կերպարանք են ստանում:

Քահանաները միմեանց հետ հաշտ ապրել չեն սիրում, նրանց խօսակցութիւնը միմեանց հետ ընդհանրապէս առերես է. կարելի է ցոյց տալ և ախպիսի քահանաներ, որոնք տարիներով իսկ միմեանց հետ խոռով են:

Քահանաների եկամուտների աղբիւրն են—մկրտութիւնից, պսակից, ննջեցեալի թաղումից, Ջրօրհնէքի և Զատիկ տնօրհնէքից, գերեզմանօրհնէքից, երբեմն տօն օրերում եկեղեցում միաբանութիւն (քահանայ, լուսարար, ժամկոչ) անուով շրջող գանձանակից գոյացող հասոյթները, ինչպէս նաև ուրիշ երկրորդական կամ անուղղակի նուէրներ, օր.՝ մանուկի քառասունքի առիթով տրուած փոքր նուէրը, պատարագիչ քահանայի ժողովրդի մէջ խնկարկելով շրջած ժամանակ ստացած նուէրը, խոստովանութեան ժամանակ ոմանց կողմից տրուած նուէրը և այլն: Բացի տնօրհնէքից, գերեզմանօրհնէքից, յիշէքից և միւս աննշան աղբիւրներից գոյացած հասոյթներից՝ մնացած բոլոր եկամուտները հաւաքուած են գանձանակի մէջ և հաւասարապէս բաժանուած են պաշտօնակից քահանաների վրայ: Այժմ ընթերցողին վանեցի քահանայի եկամուտի մասին մօտաւոր մի գաղափար տալու համար գնում եմ այստեղ մի քանի թուանըշաններ, որոնցով կարելի լինի հասկանալ քահանաների վարձատրութեան չափը:

Վանում վճարում են քահանաներին.

Մանուկի մկրտութեան համար	2—5 զրշ.—16 կ.—	40 կող.
Պսակի համար . . . . .	10—20 » —80 կ.—1 թ. 60 »	
Ննջեցեալի » . . . . .	5—20 » —40 կ.—1 թ. 60 »	
Տնօրհնէքի » . . . . .	30—40 փար.—6 կ.—	8 »
Գերեզմանօրհնէքի համար .	20—40 » —4 կ.—	8 »
Քառասունքի տութիւ . . . . .	40—60 » —8 կ.—	12 »
Գանձանակին և		

Յիշէքին մասնակցողները վճարում են 5—10 փարայ 1—2 կող.:

Գրեթէ միջին հաշիւն է, որ մենք գրինք այստեղ. թէև միշտ աւելի շատ բռնեցինք հաշիւը: Ինկատի պէտք է ունենալ, որ մեծ տեղ են բռնում ձրի կատարուած պսակները, թաղումները, տնօրհնէքները և այլն և այլն: Վանը գաղթական մուրացկաններով լեցուն է. չէ՞ որ նրանք էլ մարդ են, ծնում են, ամուսնանում, մեռնում են, բայց փող չունին, քահանաների համար սովորական է դարձել ձրի կատարել զրանց համար եկեղեցական արարողութիւն:

Անուբանալի է, որ տարէցտարի քահանաների եկամուտը պակսուած է, թէև միւս կողմից նրանց ծախսերը շատանում են (հին քահանաները շատ էին վարձատրուած և շատ գծուած կեանք էին վարում, իսկ նորերը, իրանց գերերին համապատասխան բնակարան, հագուստ և այլ ծախսեր ունենալու ստիպուած են): Վանի քահանաներն էլ պահանջում են որ իրանց սոճիկ որոշուի, բայց 4—5 տարիներից իվեր հրապարակի վրայ արժարձուող այս խնդիրը դեռ լուծում չի ստացել:

Վանի եկեղեցիներից իւրաքանչիւրն ունի մէկ լուսարար (ոմանք օգնականներ էլ ունին), 2—3 ժամկոչ: Թէ լուսարարի և թէ ժամկոչների ոտճիկներն որոշուած չեն. նրանց եկամուտի աղբիւրներն են,—պսակից՝ 1—2 զր., ննջեցեալից՝ 2—3 զր., մկրտութիւնից՝ 1 զրուշ, կիրակի օրերում եկեղեցում պտտող գանձանակից ամեն անգամ 2—3 զ.: Կան ուրիշ աննշան աղբիւրներ էլ: Տարեկան եկամուտը հազիւ թէ 7—800 զրուշ (50—60 ը.): Լուսարարի վարձատրութիւնը մի քիչ աւելի է լինում քան ժամկոչներինը:

Եկեղեցու միաբանութեան բոլոր անդամներն՝ թէ քահանայ, թէ լուսարար, թէ ժամկոչ, նկատելի է, որ տարէցտարի թերութիւններ են ցոյց տալիս փրանց պաշտօնի և ծառայութեան մէջ, այն ամենօրեայ պատճառաբանութեան հիման վրայ, թէ «մեր վարձատրութիւնն էլ քիչ է, անգոհացուցիչ է»: Այս պատճառով էլ օրէցօր եկեղեցիների մէջ կարգ ու կանոն, բարեկարգութիւն խանգարուած է, անհամաձայնութիւններ և անկարգութիւններ են առաջ գալիս: Քահանան իր գործը իր պաշտօնակցին է թողնում, ժամկոչը՝ ժամկոչին, լուսարարն էլ քահանային կամ ժամկոչին: Հսկող մարմինների աղբեցութիւնն էլ կամաց-կամաց թուլանում է: Ժողովուրդը կամենում է իր մեղքը բառնալ թաղ. խորհրդի, երեսփոխի, քահանաների, լուսարարի, ժամկոչների, տիրացուների, դպիրների վրայ և դրանով արդարացիւ իր օրէցօր սառող ջերմութիւնը դէպի եկեղեցի, բայց իրողութիւնը բոլորովին հակառակն է ցոյց տալիս, ժամանակի ընդհանուր հոսանքն է, որ ինչպէս աշխարհիս ամեն մի անկիւնի, նոյնպէս և Վանի վրայ ազդում է իր ոյժը: Վանեցին չունի այժմ այն անսահման հետաքրքրութիւնը դէպի եկեղեցական խնդիրները, որ ունէր սրանից 20—30 տարի առաջ(աւելի առաջ չերթանք): Այդ անուշ ժամանակներում կատարելապէս տիրապետում էր աւետարանական պատգամը. «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ և ամենայն բանիւ, որ ի բերանոյ Տեառն», իսկ այժմ այդ պատգամը յեղաշրջուել և հակառակ իմաստ է ստացել՝ «ոչ միայն բանիւ կեցցէ մարդ, այլ և հացիւ»: Արդարև այն երանելի ժամանակներում, վանեցին հացի խնդրով շատ քիչ էր զբաղւում, նրա մտաւնը հացով, գինով և ձէթով միշտ լեցուն էր: Վանեցին իր ստամոքսը պարարելուց աւելի հոգս էր տանում իր հոգին ուսմանցիւ աստուածահաճոյ և հոգեշահ զբաղումներով, ամեն օր—հասարակ, տօն թէ կիրակի—եկեղեցի էր գնում, ջերմ եռանդով և լի հաւատով աղօթում էր, ունկնդիր էր լինում քահանաների, դպիրների անուշ եղանակներին, զմայլում

էր, հոգեկան բաւականութիւն էր գտնում, տուն դաւնալիս պարապ ժամերին, մանաւանդ իրիկունները սկսում էր կարդալ կամ լսել յայսմաւուրքների, ճառընտիրների, վարք սրբոց-նեւրի հրաշալի, հոգին զիւթող, մէկը միւսից աւելի հետաքրքրաշարժ պատմութիւնները. նրանք, որոնք տաք տան մէջ հնարաւորութիւն չունէին այս պատմութիւնները լսելու, եկեղեցումն էին այդ գոհացումը ստանում, ժամերգութիւնից դուրս քահանաները, տիրացուները նստում էին և եկեղեցու ատենից կարգում ու բացատրում էին նրանց աւուր պատշաճի և տօնի հերոսների պատմութիւնները: Հոգեզմայլութեան աստիճանին հասած ժողովուրդը ի՞նչպէս չոգևորուէր եկեղեցիով, ի՞նչպէս նրա հաւատը օրէցօր չորրորդուէր. անա այդ ոգևորութիւնն էր, որ առաջ էր բերում ժողովրդի անսահման հետաքրքրութիւնը դէպի եկեղեցին և գրգում էր նրան հոգ տանել եկեղեցու պայծառութեան, որով նա իր կարողութեան չափով առատ նուէրներ էր տալիս եկեղեցուն, տեսնում էր՝ եկեղեցին պէտք ունի որևէ սպասի, նա նուիրում էր, և պէտք է ասել, որ Վանի եկեղեցիները իրանց ներկայ նիւթական կարողութեան հասել են ոչթէ ներկայ սերունդի, այլ նախորդների այդ առատաձեռնութեան շնորհիւ: Միայն եկեղեցին չէր որ ժողովրդի նուէրներով բարեկարգուում էր. այլ նաև լիառատ կերպով վարձատրուում և չափից աւելի յարգանքի արժանանում էին եկեղեցու սպասաւորները — քահանայ, տիրացու, դպիր, լուսարար, ժամկոչ ևայլն: Իսկ այժմ իրողութիւնը ցոյց է տալիս բոլորովին հակառակ երևոյթ: Եկեղեցի յաճախելու սովորութիւնը մնացել է ծերունիներին, զաղթականներին, անգործներին, մուրացկաններին: «Ժամը, ասում են այժմ վանեցիները, մարդու փոր չի կշտացուներ»: Արդարև ժամավաճառութիւն է համարուում այժմ հասարակ օրերը երթալ ժամերով եկեղեցում կանգնել, հացի խնդիրը չի թողնում. 8—10 տարեկան մանուկներն անդամ հացի խնդրով են զբաղուում, իրիկուններն էլ ճրագով են տուն դառնում: Վերացուել է թէ եկեղեցիներից և թէ տներից և յայսմաւուրքի և նմանօրինակ հոգեշահ գրքերի ընթերցումը, մի բոլոր անգամ չունի վանեցին այժմ այդ գրքերով զբաղուելու համար, եկեղեցական խնդիրներ, եկեղեցու պաշտօնեաներ իրանց վիճակով վանեցումիտքը զբաղող կարևոր խնդիրների մէջ երկրորդական տեղն են բռնում: Ահա սրանից է առաջ գալիս եկեղեցու պաշտօնեաների լքումը. լքումին յաջորդում է թերութիւն և թերութեան վրայ ծագում է ժողովրդի գանգատ. եկեղեցու պաշտօնեաները գանգատուում են ժողովրդից առարկելով թէ ջերմեռանդութիւնը

պակասել է, կրօնասիրութիւն, ժամասիրութիւն չի մնացել, իրանց յարգ ճանաչող չկայ կայլն կայլն, իսկ ժողովուրդն էլ գանգատոււմ է, թէ իր պաշտօնեաները իրանց նախորդների արժանաւորութիւնները, առաւելութիւնները չունին, թերութիւններով լեցուն են կայլն: Այժմ թող ընթերցողը դատի և որոշի, թէ որի գանգաւան իրաւացի է և որքան, իսկ մենք երկու խօսք էլ աւելացնենք վանեցիների կրօնասիրութեան և կրօնական ներկայ համոզումների մասին: Որքան որ ահագին լեռ է տեսնուում հին և նոր սերունդների կրօնասիրութեան մէջ, որքան որ ժամանակակից հոսանքն ազդել է վանեցիների կրօնական համոզումների վրայ էլ, բայց և այնպէս ներկայ պայմաններումն էլ մենք կարող ենք ասել թէ վանեցի կրօնասէր ժողովուրդ է. տօն և կիրակի օրերի առաւօտները եկեղեցիները լեցոււմ են ժամաւորների բազմութեամբ, շաբաթ և նախատօնակ երեկոները նոյնպէս երկսեռ բազմութիւն շտապոււմ է եկեղեցին, իսկ հասարակ օրերի առաւօտները գործի գնացողները, ընդհանրապէս եկեղեցու մօտից անցնողները, մտնում են եկեղեցի, խաչակնքում, ծնրադրում և անմիջապէս դուրս ելնում և շարունակոււմ իրանց ճանապարհը. իսկ եկեղեցի մըտնելու դիւրութիւն չունեցողները իրանց տան մէջն են անում այդ ազօթքը և ապա սկսում են գործի: Կրօնական համոզումները ներկայիս մէջ բաւական տարբերոււմ են մօտիկ անցեալում գոյութիւն ունեցող հասկացողութիւններից, ժողովրդի գաղափարն այժմ համեմատաբար աւելի լայն և ուղիղ է կրօնական խնդիրներում, քան անցեալում և դա մասամբ տեղական դպրոցների և մասամբ օտար դաւանութիւնների կողմից Վանում մուսը գործող միսիօնարութիւնների պատճառով:

Ժողովուրդը ներկայ պայմանների մէջ, իր տնտեսական ներկայ տալնապի մէջ, այնուամենայնիւ ջանք չի խնայում եկեղեցու նիւթական վիճակը բարուղեղու: 1896-ի տաճնապի ժամանակ, անհատական շէնքերի հետ այրուեցան նաև Այգեստանի 5 եկեղեցիներից երեքը. ժողովուրդը իր դառն վիճակի մէջ կարճ ժամանակից յետոյ ձեռնարկից եկեղեցիների վերանորոգութեան և երեքն էլ առաջուանից աւելի հաստատուն և պեղեցիկ ձևով վերանորոգուեցան ժողովրդի ջերմեռանդութեամբ հաւաքուած կոպէկներով:

Վանեցիների կրօնական հասկացողութիւնների վրայ երկու միմեանց հակառակ ազդեցութիւն գործեց 1896 թուի աղէտը. ոմանք այդ աղէտը վերագրեցին իրանց մեղքերի շատանալուն և այդ դէպքը համարեցին իբրև զգաստացուցիչ միջոց (այդ համոզումն էին տարածոււմ նաև կաթոլիկ և բողոքական

եղբայրները), իսկ ումանք ընդհակառակն համոզուեցան, թէ քրիստոնէական ամենաբարձր հասկացողութիւնները, իդէալները վանեցու համար գոյութիւն ունենալուց դադարելու են...

Վանեցիները շատ հին ժամանակներից սկսած՝ սէր են ցոյց տուել դէպի վանքերը, այժմ էլ այդ սէրը բաւական վառ վիճակի մէջ գտնոււմ է: Վանքերը սիրելի են նրանց համար, նախ իբրև ուխտատեղի—սրբավայր և ապա իբրև զբօսավայր: Գուցէ նախորդ սերունդները նայում էին վանքերի վրայ լոկ մենաստանի, ուխտատեղու վրայ և տարուան մէջ միքանի անգամ մօտիկ կամ հեռաւոր վանքերը գնում էին ուխտի համար, սակայն այժմ ակնյայտնի իրողութիւն է, որ վանքերը Վանում հետզհետէ ուխտատեղիից աւելի ամառանոց զառնալու կերպարանքն են ստանում և վանքերը ուխտի երթալ—զուարճանալու իմաստն է ստանում: Անցեալները շերմեռանդ վանեցիներն ուխտի էին գնում հեռաւոր տեղեր, Երուսաղէմ, Էջմիածին և սահմանակից Պարսկաստանի Նախավկայ, Թաղէոս Առաքեալ, Ինչպէս նաև Մշոյ Ս. Կարապետ և ուրիշ հեռաւոր վանքեր. իսկ այժմ այդ վանքերից և ոչ մէկն էլ դնալու հնարաւորութիւն և դիւրութիւն չունին, նոյնիսկ նահանգի զանազան մասերում գտնուած վանքերն էլ յարմարութիւն չունին երթալու: Հոգոց վանք, Տիրամայր, Նարեկ, Տ. Յուսկան Որդի վանքերը, որոնք Վանից 1-2 օրով հեռու են, սրանից 8—10 տարի առաջ, տարուայ մէջ իրանց տօնի օրերին տաննեակ հազարներով ուխտաւորներ էին ընդունում իրանց մէջ, այժմ այդ թիւը չափազանց նուազել է և գրեթէ միքանի վանքերի համար բոլորովին դադարել է, և որովհետև այդ ուխտագնացութեան շնորհիւ տարուայ մէջ 1—2 օրում հաւաքուում էր վանքի տարեկան եկամուտի մի որոշ մասը, այժմ այդ գումարի պակսելու պատճառով՝ յիշեալ վանքերը գրեթէ ամայի վիճակ են ստացել: Այժմ մնում է վանեցիներին գոհանալ քաղաքի շուրջը եղող չորս վանքերով, որոնք են Վարազ, Ս. Դրիզոր, Կարմըւոր և Ս. Խաչ: Այս վանքերը թէ իրանց անցեալով և թէ ներկայով կարևոր դեր են կատարել և վանեցիների կեանքի վրայ մեծ ազդեցութիւն են ունեցել: Մեր նպատակից դուրս է իհարկէ սրանց անցեալի մասին որևէ խօսք ասել, իսկ ներկայի մասին անհրաժեշտ ենք համարում միքանի տող տալ:

Այս չորս վանքերը քաղաքից և միմեանցից մարդու հասարակ քայլերով 1—2½ ժամ հազիւ հեռաւորութիւն ունեն: Սրանցից ամենանշանաւորն է հռչակաւոր Վարազայ ս. Նշանի վանքը: Այս վանքը իր անցեալի մէջ միքանի անգամ ունեցել

է իր փայլուն շրջանները, միջանի անգամ կանգնել և ընկել է, սակայն մեր այս յօդուածի մէջ մեզ համար հետաքրքիր է ամենավերջին վերականգնումը, որ տեղի ունեցաւ XIX դարու կէսերին. այդ դարի առաջին կէսի վերջերում, այս վանքը ներկայանում էր, իր նիւթական հարստութեամբ, իբրև ապաստարան միջանի ծոյլ և անգործ վանականների և ամարանոց՝ միջանի վանեցի հարուստ էֆէնդիների և բէյերի, որոնք իրանց ընտանիքի հետ ամառնային դուարճութիւններ կատարում էին Վարազայ հովասուն վանքում առատութեամբ և ձրիաբար վայելելով վանքի կաթն ու մածունը, եղն ու մեղրը, սերն ու կարգը: Այս ժամանակները վանեցիներից վառվոուն մէկ երիտասարդ—Կոբժոց Մկրտիչը, վարդապետ ձեռնադրուելով Ադթամարի վանքում ու կարճ ժամանակի մէջ, իր կարգակիցների հակակրօթեան և հալածանքի ենթարկուելով՝ Պոլիս է ապաստանում, ուր միջանի տարի առաջ ձեռք բերած դիրքը աւելի ամրացնելով, յաջողում է 1956 թուին դեկտեմբերին դառնալ Վան և իբրև վանահայր Վարազայ՝ մտնել վանքը և ազատել այդ հարուստ մենաստանը անգործ վանականների և հաճոյամով աղաների շահատակութիւններից: Յաջորդ տարուն գարնան սկզբին՝ հիմնում է վանքի ժառանգաւորայ վարժարանը, ուր հաւաքւում են 25-ի չափ քաղաքացի և գիւղացի աշակերտներ, միևնոյն ժամանակ ձեռնարկում է իր հետ բերած 70,000 դուրուշնոց փայտէ մածուկով տպարան լանալ և հրատարակել «Արծուի Վասպուրական» հանդէսը և ուղևորել ժողովուրդը այդ ամսագրի հայրենասիրական, պատմական, կրօնական, բանաստեղծական յօդուածներով: Այս երևնամասայ շրջանի մէջ, վանքը տնտեսապէս հարստացաւ, մի ափ անմըշակ հող չմնաց, յարմարաւոր տեղերը ծածկուեցան հազարաւոր պիտանի ծառերով, և ժառ. դպրոցից էլ դուրս եկան բաղմաթիւ շատ թէ քիչ նշանաւոր վարդապետներ, քահանաներ, ուսուցիչներ, թէ գրական ասպարիդի, թէ Վանի քաղաքացիների ու գիւղացիների և թէ նոյնիսկ ամբողջ հայ հասարակութեան համար, ինչպէս Արսէն վարդ. Թոխմախեանը: Խրիմեանը 1885 թ. Պոլիս հեռացուելուց յետոյ, երբ տեսնում է որ անկարող է այլևս իր վանքը դառնալ, հրաժարւում է վանահայրութեան պաշտօնից, որով 1886 թուին Վարազայ վանահայրութիւնը անցնում է Վանայ առաջ. տեղապահ Գրգորիս եպ. Ալէաթշեանին: Սա և սրա յաջորդները աւելի կամ պակաս հոգատարութեամբ վարելով Վարազայ վանահայրութեան պաշտօնը, վանքը բաւական շէն վիճակով բերում հասցնում են մինչև համբաւաւոր 1896 թիւը: Վանի ար-

հաւիրքին Վարազն էլ մասնակից է լինում. վանքի միաբանները, աշակերտները և վանքում աշխատող մշակները, ծառաները սրախողխող են լինում, ոչխարն ու այծը, եզն ու գոմէշը թալանւում, շէնքերի մի մասը այրացաւեր լինում և վանքի իրեղէնները կողոպտւում են. մէկ խօսքով վանքը ամայանում է, կատարեալ աւերակակոյտ է դառնում: Բայց իր անունով վանեցիներին դիւթող այս վանքը, հազիւ թէ միքանի շաբաթ է մնում ամայի. ահա դեռ հազիւ խաղաղութիւն վերականգնած է, վանեցիները իրանց տան աւերակների միջից վազում են Վարագայ աւերակներին այցելութիւն տալու և եթէ կարելի է Վարագը նորից շէն դարձնելու: Ոմանք միքանի բոպէ յուսահատւում են տեսնելով վանքի կատարեալ աւերումը. ոմանք ընկնում են դէս ու դէն, վարդապետ են փնտռում վանքի համար վանահայր և միաբաններ պատրաստելու նպատակով և ոչոք գտնելով՝ նոյնպէս յուսահատութեան նշաններ են ցոյց տալիս, համոզուած լինելով թէ առանց վանահայրի վանքը չի կարող որեէ կերպով կառավարուել: Բայց ժողովուրդը մտածում է և ճանապարհ գտնում է հետեւեալ կերպով—որոշում է Վարագայ կառավարութեան գործը յանձնել աշխարհականների. առաջնորդարան, պատրիարքարան ուրիշ աւելի յարմար տնօրինութիւն անելու անկարող գտնուելով՝ ընդունում են այդ ձևը և ընտրում է 7 անդամից բաղկացած հոգաբարձութիւն, որ անկախ Վանի առաջնորդարանից, պատրիարքարանի անմիջական իրաւասութեան տակ, սկսում է իր գործունէութիւնը: Ահա այդ օրուանից սկսած՝ ինչպէս Վարագը, նոյնպէս և ուրիշ շատ վանքեր անցնում են աշխարհականների ձեռքը: Նայելով աշխարհական հոգաբարձուների այս եօթնամեայ պաշտօնավարութեան շրջանի վրայ, տեսնում է, որ աշխարհականները աւելի ընդունակ և տրամադիր են վանքի թէ անտեսական և թէ բարոյական մասը կառավարելու, քան մէկ, կամ միքանի վարդապետներ: Վարագն այժմ 20-ական թուականի Վարագից շատ աւելի լաւ վիճակի տէր է. ունի ոչխար, եզ, գոմէշ. բանեցնում է արօր, գութան. մշակում է մշակելի հողերը, պահում է բաւական կանոնաւոր վարժարան, աւերակ շէնքերի փոխարէն, այժմ ունի աւելի ընդարձակ տարածութեամբ, երկյարկանի, ճաշակաւոր հոյակապ շէնքեր, որոնց շինութեան մէկ մասը աւարտել է արդէն:

Վարագայ վանքի հոգաբարձուներն ընտրուած են Վանի առաջնակարգ վաճառականներից: Այժմ վանքն ունի երկու վարդապետ միաբան, որոնցից մէկը Վրդանէս վ. Տէր Սարգրսեան՝ Վարագայ հին և բնիկ միաբանն է, որ վանահայրի անունով ընկած է վանքի մի խուցի մէջ և միայն եկեղեցու

ներքին գործերում ցոյց է տալիս իր վանահայրութեան պաշտօնը: Միւս վարդապետը անցած տարի ձեռնադրուեց, որը տարուայ մեծ մասը վանքից դուրս շրջում է այսուայն գիւղերը և հոգաբարձութեան հրահանգով հաւաքում է վանքի այսուայն հասոյթները ևայլն:

Ներկայումս Վարապն ունի ընդարձակ տարածութեամբ մշակելի հողեր, որոնք ամեն տարի հերթով մշակուում են, եղած հացահատիկները վանքի գործածութեան բաւականութիւն տալուց յետոյ, երբեմն էլ ծախում են. ունի նաև լայնատարած արօտավայրեր, մարգագետիններ, որոնցից ստացուած խոտով վանքը իր պէտքերը հոգալուց յետոյ, նոյնպէս ծախում է. ունի նաև ծառատաններ, ուր բացի փոքր քանակութեամբ զանազան պտղատու ծառերից, կան նաև մեծ քանակութեամբ բարդի, ուռի և ուրիշ անպտուղ ծառեր, որոնց մի մասը այս վերջին 2—3 տարուայ ընթացքում կտրուում և զործածուում է վանքի շինութիւնների մէջ: Ոչխարների թիւը ներկայումս հասնում է մօտ 300-ի, իսկ անցած տարուայ գառներից 200 հատ պիտի ծախուեն: Այս տարուայ գառների և ուլերի թիւը հասնում է 500-ի, որով ամեն տարի մօտ 100 լիբայի ոչխար է ծախում միայն. ունի նաև 20-ի չափ դոմէշ և եզ. վանքը մշտապէս կերակրում է օրական մօտ 100 հոգու, որոնցից 50-ի չափ որբանոցի աշակերտներն են, իսկ մնացածները վանքի միւս միաբաններն, մշակներն պատահական ուխտաւորներն ևայլն:

Անցած զարնան Վարապայ և Կարմրուրի վանքերի հոգաբարձութիւնները, երկու դրացի վանքերի տնտեսական շահն ինկատի ունենալով՝ որոշեցին այդ երկու վանքերը միացնել, միքանի անգամ խոն ժողովներ ունեցան գաւառային վարչութեան հետ և կանոնադրութիւն կազմելով պատրիարքարան ուղարկեցին, բայց Պոլսոյ Կենդրոնական վարչութիւնը դեռ մինչև այժմ չէ պատասխանել:

Վարագի Որբանոցը ներկայումս չունի շատ միտիթարական վիճակ, սրանից 2—3 տարի առաջ, երբ պատրիարքարանից ստանում էր պարբերաբար ամսական 20 լիբա և ուրիշ տեղերից էլ բաւական խոշոր գումարներով նուէրներ էր ընդունում, անհամեմատ աւելի լաւ վիճակ ունէր, այն ժամանակ որբերի թիւը 100-ից անցնում էր, դպրոցի մէջ պաշտօն ունէին աւելի կարող ուսուցիչներ: Իսկ ներկայ 1903/904 ուս. տարուայ սկզբում աշակերտների թիւը 40-ի է իջել, բիւդջէն չափազանց սեղմուել է:

Հոգաբարձութիւնն որոշել է որբանոցին միացնել նաև Գեկտեմբեր, 1904.

հոգևոր դպրոցի եռամեայ մի շրջան, միջնակարգ ուսման ծրագրով և այդ մասին էլ զիմել է պատրիարքարանին և աջակցութիւն է խնդրել, սակայն այս հարցի պատասխանն էլ դեռ չի ստացուել: Եթէ հոգաբարձութեան այդ ծրագիրն իրականանայ, անշուշտ Վարազը պիտի կարողանայ մեծ ծառայութիւն անել Վասպուրականի ամբողջ թեմին, ինչպէս երբեմն արել է արդէն: Իրաւի ամբողջ Վասպուրականի ընդարձակ թեմում չկայ մէկ հատ հոգևոր դպրոց, ուր կարելի լինէր պատրաստել թեմի համար շատ թէ քիչ կարող հոգևորականներ: Մեր հոգևորականների, մանաւանդ գիւղական ու վանական հոգևորականների մէջ կատարեալ տգիտութիւն է տիրում: Օտար միսիօնարութիւնները քաղաքում և մանաւանդ գիւղերում հիմնական ծրագրով դաւանափոխութեան գործը առաջ են տանում: Վարազ հոգևոր դպրոց պահելու դիւրութիւն ունի, նրան պակսում է միայն տարեկան 100 լիրայի կամ 1000 բուբլու մի գումար, մնացած ամեն յարմարութիւններն ունի: Վանում ոչմի վանք այդ յարմարութիւնը չունի:

Ս. Գրիգորի վանքը՝ Վարազից գէպի հլուսիս, շինուած Վարազայ և Շուշանից օձապտոյտ ձորամիջում՝ թէև տէր է նոյնպէս ընդարձակ վարելահողերի, արօտավայրերի և անտառակների, բայց մինչև 90-ական թուականները շատ անշուք վիճակի մէջ էր գտնուում: 1896-ի դէպքերից յետոյ, այս վանքն էլ ուշագրութեան առարկայ դարձաւ, սրա համար էլ կազմուեցաւ հոգաբարձութիւն, որ անմիջապէս ձեռնարկեց աղջիկների համար քաղաքի յարմարաւոր մի մասում որբանոց բանալ, միւս կողմից էլ վանքը զարգարել օգասուն և գեղեցկադիր երկյարկ սենեակներով: Տիկին Նադիրեանն եղաւ ս. Գրիգորի վանքին շունչ ու կենդանութիւն տուողը, նրա բարեսէր ձեռնարկութեան շնորհիւն է, որ վանքը մինչև այժմ բարոյապէս և նիւթապէս կերակրել ու մեծացրել է 400-ից աւելի որբ և չքաւոր աղջիկներ: Այժմ այս որբանոցը 100-ի չափ որբ աշակերտներ ունի, որոնք վայելում են բաւական շատ կանոնաւոր խնամք և հոգածութիւն: Ներկայումս կարելի է ասել, որ ս. Գրիգորի որբուհիները աւելի բախտաւոր պայմաններումն են գտնուում քան Վարազի որբերը: Ս. Գրիգորի որբանոցը տարեցատարի ամուսնացնում է սանուհիները, մինչև այժմ ամուսնացող որբուհիների թիւը հասնում է 7-ի:

Կարմրւորի վանքը միջակութեան սահմանից կրքէք դուրս չի եկել, կալուածական հարստութիւնը Վանի միւս վանքերի հետ համեմատելով միջակ է, բարոյական գիրքը միջակ է, հոգևոր վիճակը միջակ է, հոգաբարձութեան գործունէութիւնը

միջակ, վերջապէս ամեն ինչ այստեղ միջակ է. այս վանքն էլ մինչև անցած 1902 թիւը պատրիարքարանից նպաստ ստանալով պահում էր 30 որբով որբանոց, սակայն նպաստը դադարելուց յետոյ՝ երբ Վարազայ հետ միացաւ, 10-ի չափ որբերին ուղարկեց Վարազ և իր օձիքն ազատեց: Կարմրուորի, Վարազի միացումը Կարմրուորի գիրքը բոլորովին պիտի նսեմացնի, վանքը պիտի զրկուի իր դարևոր պատկասելի վեհութիւնից, միաբանութիւնը Վարազ պիտի փոխադրուի, վանական աւելուի ձայնը ընդհատ-ընդհատ պիտի հնչուի տաճարի կամարների տակ, ուխաւորերի բազմութիւնը գուցէ մի քիչ նուազի և գրեթէ Կարմրուորը՝ այսպէս ասած՝ Վարազի գիւղատնտեսական կայարանը պիտի դառնայ. երկրագործական բերքերը, պարագաները Կարմրուորում պիտի ամբարուեն և Կարմրուորը քաղաքի և Վարազի միջև յարմարաւոր մի կայարան պիտի դառնայ, ըայց գլխաւորը սա է, որ միացած վանքերը տնտեսապէս պիտի շահեն:

Կուսանաց սարի կրծքի վրայ հանգչող և հարաւից Վանի հովտի վրայ նայող բարձրադիր կանաչազարդ Ս. Պաշի վանքը իր քոյր վանքերի մէջ ամենահամեստն է, ամենից պարզասէրն ու աղքատն է, մէկ քառուրդ դարու չափ վայելում է իրանից աւելի համեստ, մտաւորապէս աղքատ մի վանական վարդապետի վանահայրութիւնը: Ունի միքանի օրավար վարելահող 30—40-ի չափ սխար, 7—8 հատ սրբ, որբերի թուի կէսի չափ էլ հոգաբարձուներ, անշշուկ կերպով պահում է իր գլուխը, տարուայ ընթացքում 1—2 անգամ քաշում է իր ծոցը վանեցիներից բաւական թուով ուխտաւորների, որոնցից ոմանց զըլուխը ամեն անգամ պատառոտելով և արիւնտոտելով իրանց մուրազին հասցնում, իր խաչ-համբոյրն և զարպամն առնում և ետ է ուղարկում:

Ահա Վանի 4 վանքերի ներկայ վիճակը: Թէև այս տեղեկութիւնները շատ քիչ և անբաւարար կարող են նկատուել, սակայն մեր նիւթի մէջ սրանից աւելին չի կարող մտնել: Արդարև վանքերի ներկայ վիճակի ուսումնասիրութիւնը կարևոր և հետաքրքրական է, ըայց մենք մասնազէտներին ենք թողնում այդ. մեր վանքերը՝ մանաւանդ նրանց տնտեսական վիճակը՝ հետազօտութեան, ուսումնասիրութեան և ուշադրութեան արժանի և կարօտ են:

Վանի եկեղեցիներում չկան արձանագրութեան կանոնաւոր տոմարներ, եղածներն էլ վերին աստիճանի անկանոն վիճակի մէջ են գտնուում: Ծնունդի, սրակի, մահուան արձանագրութիւնները խառնիճաղանձ կերպով մատիտով նշանակուում

են քահանաների կողմից լուկ փողի հաշիւ պահելու համար եթէ չլինէր այդ փողի հաշիւը, այդ կիսատ-պուտ արձանագրութիւնն էլ պիտի չլինէր:

Վան քաղաքը ներկայումս ունի 12 եկեղեցի (5 Այգեստանում և 7 միացեալ՝ Քաղաքամիջում), 15 քահանայ, 8 լուսարար, 16 ժամկոչ: 1902 թուականի մէջ Վանում հաշուում էին 2510 տուն ծուխ, պատահել է 808 մկրտութիւն, որից 420 մահչ, 388 աղջիկ: Ապօրինի դաւակների թիւն է 14: 210 պըսակ է կատարուել, 442 մահուան դէպք է պատահել, որից 286-ը պատկանում է արական, իսկ 156-ը իգական սեռին: Յենուելով այս վիճակացոյցի վրայ, տեսնում ենք, որ մահուան դէպքերը ծնունդի դէպքերի կէսից միքիչ աւելի են: Թէև չկարողացանք ճիշտ գտնել թէ մեռնողների այսուայն հասակին պատկանողները քանիեքորոզ մասը կազմում են, բայց և այնպէս վստահաբար կարող ենք ասել, որ Վանում մեռնողների 70<sup>0</sup>/<sub>0</sub> կազմում են մանուկները: Այստեղ ամեն տարի զանազան հիւանդութիւններ, մանաւանդ, ծաղիկ, փորահարութիւն, վարդախտ, բկացաւ մանուկների մէջ բեթլեհեմական կոտորածներ են գործում: Ներկայ տարուայ յունիսից սկսած մինչև այժմ— հոկտեմբերի վերջը, ծաղիկ և փորահարութիւն կոտորել են 500-ից աւելի մանուկներ, դեռ կոտորածը շարունակուում է: Ծաղիկի պատուաստի սովորութիւնը 20 տարուց աւելի է լինում, որ մտել է Վան, և միքանի տարուց իվեր քաղաքային վարչութիւնը պատուաստի շիջուկ է բերում քաղաք և ձրի պատուաստում է իրան դիմողներին, բայց դժբախտաբար դեռ ևս վանեցի ծնողները, մասնաւորապէս մայրերը դարևոր նահապաշարումից ազատուած չեն, պատուաստին շատ կարևորութիւն չեն տալ. «պատուաստել», այդ կարգի հասկացողութիւն ունեցողների մօտ նշանակում է «Աստուծոյ դէմ մեղանչել»: Սրանք աւելի յամասում են իրանց համոզումների մէջ, երբ տեսնում են, որ երբեմն պատուաստուածները նորից բնուում են ծաղիկով և մեռնում են: Վանում մինչև այժմ էլ դեռ յոռի գաղափար է տիրում առհասարակ բժշկականութեան մասին, թէև հիւանդութեան դէպքերում, կարելի է ասել, միշտ էլ բժիշկների գիմումներ լինում են, բայց և այնպէս հաւատ չունին բժիշկների վրայ: Այդ բանում վանեցիները մեղաւոր չեն, իրաւունք ունեն, Վանը մինչև այսօր բախտաւորութիւն չի ունեցի շէնք-չնորքով մէկ հատ բժիշկ ունենալու, արաբութեամբ միմեանց յաջորդող քաղաքային, զինուորական, կարանդինի բժիշկները միշտ էլ ցոյց են տուել, որ շատ քիչ հմտութիւն ունին իրանց արհեստի մէջ, իսկ բողոքական միսիօնարութեան

բժիշկները մինչև որ 10 հոգի չուղարկեն «Յիսուսի բով» 1 հոգի չին կարող ազատել մահուան ճանկերից: Պատուելի Ջորջ Րէյնոլդ 15—20 տարի վանեցիների վրայ պրակտիկայի փորձեր արաւ, մինչև որ կարողացաւ շատ թէ քիչ փորձառութիւն ձեռք բերել իր մազերը սպիտակացրեց, բայց արդէն այժմ հեռացել է նա բժշկական ասպարէզից և գործը յանձնել է իր յաջորդ գոհտոր Լըրբին: Այս բարեմիտ երիտասարդ բժիշկն էլ դեռ բոլորովին անհմուտ է, մինչև որ յաջողի հմտութիւն ձեռք բերել նա էլ անշուշտ պիտի հեռանայ ասպարէզից: Մէկ խօսքով Վան բժիշկ չունի, հմուտ բժշկի կարօտ է քաշում, բայց ո՞ր հմուտ բժիշկն է որ համաձայնում է Վան մասնել: Մենք մեծախօսներ, պոռոտախօսներ, մարդասիրութիւն, ազնուութիւն քարոզողներ շատ ունինք, որոնք՝ թող ներուի ինձ ասել—միայն խաբեբաներ, կեղծաւորներ և անսիրտ մարդիկ են... Պոլսում այսօր դիպլոմաւոր դոկտորներ կան, որոնք Պոլսոյ բազմաթիւ թերթերում ամեն օր մարդասիրարար բժշկական յօդուածներ են հրատարակում, հրահանգներով փրկիչ հանդիսանալ են ուզում մարդկութեան, թերթերի վերջին էջերումն էլ իրանց մասին րեկլամներ են հըրատարակում, թող այս կողմը գաւառացիները՝ վանեցի, մըշեցի բժշկի կարօտ քաշեն... Մեր բուն խնդրից շեղելու և այս կծու խօսքերը գործածելու պատճառը ներկայումս շարունակուող մանուկների կտորածի աղբեցութիւնն է. ամեն օր իւրաքանչիւր եկեղեցու գերեզմանատունն 4—5 մանուկ թաղւում է, քանի-քանի տներ եւ ճանաչում, որ մի շարաթուայ մէջ գրկուել են միանգամայն իրանց 2—3 ծաղկահասակ դասակներից:

Նկատելու արժանի երևոյթ է, որ Վանում հասակաւոր աղջիկների (10—20 տարեկան) մահուան դէպք շատ քիչ է պատահում. օր. Արարուց եկեղեցում կարողացանք ստուգել, որ այս կարգին պատկանող աղջիկների մահուան դէպք չի պատահել ամբողջ մի տարում, նոյնը կարող ենք ասել գրեթէ Վանի մասին: Աղջիկների փոխարէն բազմաթիւ զոհեր են տալիս կանայք, մանաւանդ նորահարսները: Ծննդաբերութիւնը վերջին տարիներումս, բաւական մեծ թուով կտորածներ է անում: Ասում են իբրև թէ սրանից 20—30 տարի առաջ ծընընդաբերութեան առթիւ պատահած մահուան դէպքերը շատ աննշան տեղ էին բռնում, սակայն այժմ այդպէս չէ: Վանում մանկաբարձ բժիշկներ չկան—միայն համայնագէտ դոկտոր Լըրբն է, որ այդ ձևով մէջն էլ երբեմն փորձեր անում է. մեր ծննդաբեր կանանց բախար յանձնուել է տատմէրների, որոնք

իրանց արհեստի մէջ ունեցած մասնագիտակտն հմտութիւնը ձեռք են բերել երկար տարիների ընթացքում:

Վանում չքաւորութիւնից մեռնողներ էլ շատ են պատահում: Մինդի պակասութիւն, անյարմար պատասպարան, ձմեռուայցուրտը շատերին գլորում են դէպի գերեզման:

Սրանից 20—30 տարի առաջ Վանում հարիւրներով կարելի էր համրել 100, 110 և նոյնիսկ 120 ամեայ ձերունիներ, իսկ այժմ գրեթէ շատ հաղուագիւտ են այդ հասակի պատկանողները: Վանի ձերունիները ներկայումս հասնում են միջին հաշուով 60—70 տարուան, 70-ից անցնողները շատ փոքր թիւ են կազմում:

Վանի օդն է, որ իր բնակիչներին կենցաղավարութեան անյարմար պայմանների մէջ շատ թէ քիչ նպաստաւոր պայմաններ է ներկայացնում առողջապահական պահանջների մէջ: Այլապէս կարելի է ասել, որ մահուան դեպքերը պիտի կրկնապատկուէին և եռապատկուէին. բնութիւնը վանեցիկների միակ և ամենահմուտ բժիշկն է: Երբեմն ամառուայ ընթացքում, երբ տաքութեան աստիճանը միքիչ բարձրանում է, տիֆ, ինֆլուէնցա և փորահարութիւն (լուծ) սկսում են իրանց կոտորածները, չեն խնայում ոչ մանուկի, ոչ պատանիի և ոչ երիտասարդի. բարեբախտաբար, շատ շուտ-շուտ չենք հանդիպում այդպիսի տարիների:

## XXV

Բողոքական միսիօնարութիւն. Պորտ ընկերութեան մասնաձիւղը Վանում. գործունէութեան սկիզբը. առաջին քայլերը. ձեռք առնուած միջոցները. նոր շէրջան և ոգևորութիւն. 1895 թիւը. Ջորջ Բէլնոյցի գործունէութիւնը. բողոքական միսիօնարութեան գործունէութեան փնտախար և օգտակար կողմերը. որբանոցը. Ջ. Բէլնոյցի նկարագիրը. բողոքականացածների նկարագիրը. բուն մեծագործութիւն. միսիօնարական հաստատութիւնները:

Բողոքական միսիօնարութիւնը վաղուց է ոտք կոխել թիւրքիայի հողի վրայ, բայց գրեթէ ուրիշ ոչ մի ազգից ընդունելութիւն չգտնելով՝ հայ ժողովուրդը միայն գրկաբաց ընդունեց այդ նորամուտ կամ նոր ժողայի վարդապետութիւնը: Աւելի քան  $\frac{1}{2}$  դար լինում է, որ օսմանեան պետութիւնը հայ բողոքականութիւնն առանձին համայնք է ճանաչում և հաստատել է հայ-բողոքականների համար ազգապետութիւն: Պոլսի մէջ բողոքական բարոյիչները արմատ հաստատելուց յետոյ՝ սկսեցին ճիւղեր արձակել դէպի գաւառները. այդ ճիւղերից մէկը,

վերջապէս 1872 թուին յանուն Ամերիկայի Պորտ ընկերութեան՝ մուտ գործեց նաև Վանուս: Առաջին առաքեալներն եղան երկու պատուելիներ՝ Բէյնոլց և Բարնըմ: Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և Վանուս բողոքական միսիօնարութիւնը իր պրոպագանդան գործնական ճանապարհի վրայ ձգելու նպատակով ձեռք զարկեց կրթական գործին: Վանեցիների ազգային կրթական գործը շատ տխուր և անկերպարան վիճակի մէջ էր գտնուում այդ ժամանակ: Միսիօնարները կարճ ժամանակի մէջ ձեռնարկում են Այգեստանում և Քաղաքամիջում ջուկ-ջուկ բանալ իրական և արական սեռի համար վարժարաններ: Վանեցիները սկզբում շատ անտարբերութեամբ են վերաբերում զէպի այդ մօրուքաւոր պատուելիները, ծիծաղում են նրանց մօրուքներին, զբլխարկներին և լեզուի վրայ. սակայն Քրիստոսի անուան համար Ամերիկայից Վան համառոտ Առաքեալները այդ անարգանքներից Քրիստոսաւանդ պատուելի համաձայն չեն խրտնում. հաստատամտութեամբ շարունակում են 6—7 տարի իրանց գործը և ահա կամայ-կամաց իրանց կիրակնօրեայ ժողովներին ճարում են բաւական թուով հանդիսականներ: Չտես, խեղճ ու կրակ վանեցիների աչքը շլայնելու համար ամեն միջոց գործ են դընում զպրօցը արտաքուստ փայլուն ցոյց տալու. էլ քարտէզներ, էլ գոյնզգոյն ջրաներկ պատկերներ, էլ խորհրդաւոր վերտառութիւններ չհնաց, որ չմոցրին իրանց դպրոցների և ժողովարանի մէջ: Միսիօնարութեան կրթական այսօրինակ մեթոդով և գրաւիչ եղանակով ժողովրդի սիրտը կամաց-կամաց սկսան գրաւել, կրթական գործի չափ ոյժ տուին նաև աւետարանական կամ քարոզչական ճիւղին, ինչպէս նաև բժշկական կարևոր մասին: Այսպէս օր. Դոկտոր-Պաստեօր Բէյնոլցը մէկ կողմից վարում էր դպրոցի տեսչութեան պաշտօնը, միև կողմից կիրակնօրեայ ժողովներում ստանձնում էր քարոզչի դերը. միաժամանակ իբրև բժիշկ ամեն օր վազում էր դէսուդէն հիւանդներին բժշկելու կամ «Յիսուսի քով զրկելու»: 90-ական թուականներին, բաւական թուով՝ ժողովարանի սիրողներ կային, 8—10 հոգի մասնակցում էին հաղորդութեան, 1—2 ընտանիք էլ ընդունել էին պաշտօնապէս բողոքական դաւանութիւն: Սակայն միսիօնարութիւնը զոհ չէր իր վաստակից, 20—22 տարում հազիւ թէ 22 հատ անգամ էր ճարել՝ այնինչ հազարաւոր զոլարներ էին ծախսուել, տասնեակներով քարոզիչներ հկել՝ քարոզել՝ ու գնացել էին: Ամէն անգամ ժողովրդի մէջ պատուելիները զանգատ էին յայտնում վանեցիների ապերախ վարմունքի դէմ, կշտամբում էին նրանց ընթացքը, վըշտանում էին տեսնելով, որ հակառակ իրանց անձնուէր ջան-

քերին և եռանդին, վանեցիները չեն ուզում ուղիղ ճանապարհի վրայ գալ: Բայց ահա հասաւ 1895 պատմական թուականը, տնտեսական տագնապը Վանում իր բարձրագոյն աստիճանին հասաւ. Ամերիկայից և Եւրոպայից առատութեամբ գումարներ ուղարկուեցան Պորտ ընկերութեան Վանի մասնաճիւղի հասցէյով՝ վանեցի կարօտեալներին օգնելու նպատակով: Պաստօր Ռէյնոլցը ընդարձակ գործարան բացաւ և սկսեց հազարաւորներ զործ և նպաստ տալ. այդ գրութիւնը շարունակուեց մօտ 4 տարի, մինչև 1898 թուի վերջերը. մինչև այդ ժամանակները, ծաղրի և նախատինքի ենթակայ եղող պատուելիները ահա վանեցի զիւղական և քաղաքացի հասարակութեան աչքում այժմ դառնում են սուրբ, փրկիչ և ահա այս կերպով Քրիստոսի բախտը բացուած է. բաւական թուով վանեցիները մօտից շրփում ունենալով բողոքական քարոզիչներին հետ, հողեւոր վերանորոգութեան պէտք են դգում: Այժմ կարելի է համարել ամբողջ Վանի նահանգում մօտ 100-ի շափ բողոքական անդամներ. բողոքական ընտանիքների թիւը հազիւ թէ 10-ի հասնի:

Բողոքականութիւնը յիշեալ 1895 թուից սկսած մինչև այժմ շատ փայլուն գործունէութիւն է ցոյց տալիս, առաքելական գործը շատ ընդարձակուած է, 15—20 տարի առաջ ցանած սերմերն էլ սկսել են բողբոջիլ, ծիւեր տալ և տարածուել:

Պրոպականդայի գործը ընկած է յաջողութեան ճանապարհի վրայ, իր շէնքը այլևս հաստատուն հիմքերի վրայ դրուած է: Այսօր բազմաթիւ դպրոցներ ունի քաղաքի և Հայոց Զորի, Գաւաշի, Շատախի, Արճէշի մէջ: Այդ դպրոցների վարիչները միսիօնարութեան ձեռնասուն սաներն են, որոնք 7—8 տարի բողոքական շրջանակի մէջ գիշեր ու ցերեկ ապրելով բարոյական և նիւթական սնունդ միանգամից ստանալով, այսօր երախտագիտաբար պարտաւոր են ծառայել իրանց հոգեւոր ծնողին—մայր դպրոցին:

Պաստօր Ռէյնոլցը մօտ 30 տարի է լինում, որ պրոպականդայի գործով Վան է գտնուում իր աիկնոջ հետ: Այս անձը մարմնացած գործունէութիւն է, երբեմն վարում էր թէ տեսչի, թէ քարոզչի և թէ բժշկի պաշտօն. թէև այժմ բժշկութիւնը մի ուրիշի յանձնուած է, բայց դրա փոխարէն իր վրայ է ծանրանում բողոքական շրջանակի ամբողջ գործը. միսիօնարութիւնն այժմ միայն պրոպականդայով չի բաւականանում, 1895 թուից սկսած՝ բացել է որբանոց. որբանոցի սաները ուսման հետ սովորում են նաև միջանի արհեստներ, ջուլհակութիւն, կօշկակարութիւն, մուճակագործութիւն, փականագործութիւն և այլն և այլն: Այդ երկսեռ որբանոցի և բազմաթիւ արհեստա-

նոցի մատակարարական և ելամտական բարձրագոյն իրաւասութիւնը Րէյնոլցին է պատկանում:

Անշուշտ հարցնողներ պիտի լինին թէ բողոքական միսիօնարութիւնը Վան մտնելով վանեցիներին աւելի փնասել թէ օգտակար է եղել: Այդ հարցին այսպէս կարող եմ պատասխանել: Եթէ իբրև ազգային եկեղեցու բարոյական շէնքի նախանձախնդիր՝ նայենք բողոքականների գործունէութեան վրայ, պիտի տեսնենք որ մեր եկեղեցին փնասում է նրանց գործունէութիւնից, դաւանական պառակտումն նորանոր դժբախտութիւններ կարող է առաջացնել Վանի հայ հասարակութեան մէջ, ինչպէս եղել է դա տաճկահայ շատ ուրիշ թեմերում, հայը մի դաւանանքի պատկանելիւ չի կարողացել համերաշխ ապրել, ուր մնաց միքանի դաւանանքի բաժանուելիս: Լուսաւորչական, բողոքական, կաթողիկ հասարակութիւնների մէջ յաճախ պատահել են անմիտ, դատարկ բայց իրանց հետեանքով՝ աղէտալի և խիստ փնասակար վէճեր: Նոր դաւանանք ընդունողները, լինին դրանք բողոքական թէ կաթողիկ, երևակայում են իրանց բառի բուն նշանակութեամբ «վերանորոգուած, սրբացած և երկնքի յաւիտենական թագաւորութեան փառքը վայելելու միակ արժանիք ունեցողներ»: նայում են իրանց «անուղղայ, խաւարի մէջ խարխափող, ամբարիշտ» արեւակիցների վրայ, իբրև գեհնի արժանի ժառանգներ լրայ: Սա խնդրի բարոյական փնասակար կողմն է: Իսկ միւս կողմից եթէ նայելու լինենք խնդրի վրայ, պիտի տեսնենք որ բողոքական միսիօնարութեան մուտքը Վանում վանեցիների համար ունեցել է մեծամեծ բարիքներ և օգուտներ:

Նախ՝ կրթական գործում մենք տեսնում ենք որ բողոքական դպրոցները վանեցիներին ստիպում են ուշագրութիւն դարձնել իրանց անկերպարան վիճակի մէջ անուանական դոյութիւն ունեցող դպրոցների վրայ: Բողոքական դպրոցները սկզբից մինչև այժմ մրցում են առաջ բերում իրանց և լուսաւորչական դպրոցներում:

Միսիօնարական դպրոցները Վանի ծխական դպրոցներից աւելի նրեթական յարմարութիւններ ունենալով կարողացել են քառորդ դարում ձրի կրթութիւն սալ հազարաւոր չքաւոր հայ գաւազների: Այս դպրոցները վերջին 8—10 տարիներում աւելի գործնական ծրագրի են հետևում: Դպրոցներին կից բացուած է երկսեռ օրբանոց, ուր հազարից աւելի օրբեր և օրբուհիներ տարիներով պատասպարուելուց, կերակրուելուց և ուսում ստանալուց յետոյ սովորում են իրանց բընական հակումներին համեմատ յարմար արհեստներ, օրբանոց-

ները համար ամենակարևոր կէտը սա է: 1895 - 96-ի աղէտներից յետոյ, երբ Թիւրքիայում հազարաւոր որբերի համար պատրաստարաններ բացուեցան Թիւրքահայ քաղաքների, գիւղերի վանքերի մէջ, Թիւրքահայերի կենտրոնական վարչութիւնն— Պոլսի պատրիարքարանն որբանոց ասելով ըմբռնեց՝ այնպիսի մի պատասպարան, ուր կարելի է հաւաքել որբեր և նրանց տալ հաց և 3—4 տարուայ վերացական կրթութիւն. արդեօք այդ չէ՞ պատճառը որ այդ որբանոցների արած ծառայութիւնն այսօր շատ քիչ աչքի է ընկնում: Վանի նահանգում բացուեցան նպաստընկալ (գլխաւորաբար Ջանշեանի անունով) որբանոցներ Նարեկի, Վարազի, Կարմընուրի, ո. Գրիգորի, Բաշկալէի կայն մէջ. նրանցից ուսանք 4—5 տարուայ չափ իրանց գոյութիւնը պահելուց յետոյ այժմ արդէն փակուած են. իսկ ուսանք այժմ էլ շարունակուում են: Ծշմարիտ է, որ այդ որբանոցներում պատասպարուողները բախտ ունեցան թշուառութեան ճիրաններից ազատուելու, բայց ապահով ապագայի չկարողացան պատրաստուել, ահա այստեղն է կայանում ազգային և բողոքական որբանոցների ամենախոշոր տարբերութիւնը, բողոքականների որբերից շատերն 3—4 տարի որբանոցի մէջ սրևէ արհեստի ծառայելուց, իրանց շրջանն աւարտելուց յետոյ, անմիջապէս Վանի շուկան են մտնում, 1—2 տարի էլ այսուայն արհեստանոցներում աշակերտելուց յետոյ, աէր են դառնում արհեստի և այդ կերպով շատ թէ քիչ ապահովում են իրանց վիճակը, այդ բախտն ունեն ոչ թէ միայն որբերն այլ նաև որբունհիներից շատերը, որոնք սովորում են մասնաւորապէս ոստայնանկութեան դոքագործութիւն կոչուած ճիւղը: Արդէն ուրիշ ասթիւ ասել եմ թէ Վանի իգական սեռի մէջ տարածուել է ջուլհակութեան արհեստը. ահա բողոքականների շրջանակն եղաւ զլիսաւոր զարկ տուողն այդ բանին, բողոքականների ամուսնացած որբունհիներից շատերն այսօր իրանց ամուսիններին զգալի կերպով օգնում են:

Բողոքականների վանեցիներին ցոյց տուած օգուտների մէջ յիշելու արժանի է նրանց բժշկական ճիւղի մէջ ունեցած ծառայութիւնը, որի սկիզբը նոյնքան հին է, որքան բողոքականութեան մուտքը: Ծշմարիտ է, Պորտ ընկերութիւնը մինչև այժմ դեռևս չի կարողացել տալ վանեցիներին փորձ, հմուտ, մասնապէս բժիշկներ, բայց անուբանալի է որ դոկտոր Բէյնուլը և դոկտոր Ըշըր հարիւբաւոր վանեցիներ են ուղարկել Քրիստոսի մօտ իրանց արուեստի թէօրիան գործնականացնելու համար. բայց և այնպէս անուբանալի է, որ շատ պարագաներում օգտակար եղել են, գոնէ բողոքականների դեղարանը իր թարմ և բազ-

մատեսակ դեղերով խիստ կարևոր տեղ է բռնում: Վանն արգէն երկու դեղարան ունի, մէկը քաղաքայինն, է իսկ միւսն էլ սա. առաջինը վերջինի հետ երբէք չի կարող մրցել: Մինչև անցած տարի բողոքական միսիօնարութիւնն ունէր նաև մի փոքրիկ հիւանդանոց 7—8 մահճակալով. այս կողմից շատ նեղութիւն էին քաշում, այս տարի վերջապէս այդ թերին էլ լըրացուցին, շինեցին եռայարկ հոյակապ և ընդարձակ մի հիւանդանոց, որ պատիւ կարող է բերել բողոքականներին: Վանը չունի հասարակութեան համար քաղաքային հիւանդանոց, թէև մշակում է այդ գաղափարը, սակայն դեռ իրազործուելուց հեռու է երևում:

Բողոքական միսիօնարութիւնը տնտեսապէս ուրիշ կերպով էլ օգտակար է լինում վանեցիներին: Ինչպէս ասել եմ իր տեղում, Վանը ներկայումս ենթարկուած է տնտեսական խիստ տազնասպալի վիճակի. ելեմուտի անհաւասարակշռութիւնն չափազանց նկատելի է. այս դրութիւնը շարունակուած է 6—7 տարիներից իվեր, այս կերպով Վանը չափազանց ընկած է և աւելի պիտի ընկնէր, եթէ Պորտ ընկերութեան Վանի մասնաճիւղը բաւական խոշոր գումարներ Ամերիկայից և Եւրոպայից Վան մտցնելու դերը չունենար: 1895 թուից սկսած մինչև այժմ միսիօնարների ձեռքով աւելի քան 200,000 օսմ. լիւրայ փող է մտել Վան: Ներկայումս տարեկան 10-1 2,000 օսմ. լիւրայ մտնում է: Կարծեմ փոքր թիւ չէ կազմում այս գումարը Վանի աղքատիկ ելեմուտի բիւտջէի մէջ:

Ահա բողոքական միսիօնարութեան Վանում ունեցած դործունէութեան ամենահամառոտ նկարագրութիւնը: Այժմ թող թէլուզներն և էզոնումիստները լուծեն այս հարցը, թէ բողոքականները միասնէ կն թէ շահեցրել են վանեցիներին, ներկայիս մէջ օգնւտ են տալիս նրանց, թէ միաս կն հասցնում:

Այսպէս թէ այնպէս բողոքականն իր արմատը հաստատել է Վանում: Ծերունի Րէյնոլց իր կեանքի վերջին օրերում պիտի մխիթարուի տեսնելով՝ այնքան չարչարանքներով ցանած սերմերի բեղմնաւորումը: Եւ եթէ Պորտ ընկերութիւնն յաջողի Վանում վերանորոգուած մի համայնք ունենալ, պէտք է խոստովանել, որ այս պատեօրի հաստատակամութեան, համըրատարութեան շնորհիւն է: Այս 30 տարուայ ընթացքում Պորտի կողմից շատ առաքեալներ ուղարկուեցան Վան, բայց նըրանք չկարողացան տոկալ, դիմանալ, կամ այնքան անձնուրաց կերպով չկարողացան իրանց գործին տէր մնալ. ոմանք անձնական պատճաններով, ոմանք յուսահատութիւնից, ոմանք դոկտոր Րէյնոլցի բռնած զիրքից ձանձրանալով թողին հեռա-

ցան: Միայն Րէյնոլցը և իր տիկինն որոշել են Վանում թաղուել: Շատ հետաքրքիր է իմանալ թէ ինչպէս մէկն է այդ պատեօրը. արդարև աննշան մի առաքեալ չէ այդ անձը. վայելում է Պորտի կատարեալ վստահութիւնը. նրա գիւթիչ գրիչը Պորտի առաջ հրաշք է կատարում, վստահացնում են ինձ, որ այս պատուելին մանաւանդ վերջին 10 տարիներում, որևէ մերժում չի ստացել Պորտից իր արած բազմաթիւ առաջարկութիւններէ, խնդիրներէ մէջ. շատ հակառակորդներ է ունեցել Վանում իր դէմ, հակառակորդներ, որոնք անձամբ Պորտի առաջ մեղադրել են նրան, բայց այդ բոլորին յաղթել է նա իր զօրեղ գրչով և խելքով: Վանեցիներին եթէ հարցնելու լինէք թէ ի՞նչպէս մէկն է Րէյնոլցը ձեզ պիտի պատասխանեն թէ այդ պատուելին կեղծաւոր, խորամանկ, վերին աստիճանի կրօնամուկ և նեղ հայեացքների և գաղափարների տէր մի անձնաւորութիւն է: Եթէ վերանորոգուած համարուածներին, այսինքն բողոքական վանեցիներին այդ հարցումն անէք, պատասխանը սա պիտի լինի. «գոկգոր Րէյնոլցը վերին աստիճանի ուղղամիտ, արդարախոհ, ազատամիտ մի անձ է»: Իսկ մենք այս համոզումն ենք զոյացրել Րէյնոլցի նկարագրի մասին:—Իր քարոզութեան առաջին տարիներում կատարեալ ամերիկացի բարոզիչ էր. դէպի վանեցիները վերաբերուած էր շատ քաղցրութեամբ, ուղամտութեամբ և խորագիղութեամբ, սակայն կամաց-կամաց՝ ապրելով Վանի մթնոլորտում, շիտում ունենալով վանեցիներէ հետ՝ ազդուեցաւ և իր բնաւորութեան մէջ իրաւ է անհաճոյ կողմերը շատցան, որից սակայն վանեցիները գանգատելու իրաւունք չունին... Այժմ պատեօր Րէյնոլցը Յիսուսի առաքեալներին տուած պատուէրի կէսն ունի, այսինքն օձի խորագիտութիւն: Ծճմարիտ է որ շափազանց կրօնամուկ է և պահպանողական, սակայն իր այս գաղափարն էլ բաւական փոփոխութեան կամ ճիշտ կը լինի ասել անուանապէս սրբագրութեան ենթարկուած է: Այժմ գոնէ ցոյց է տալիս թէ համոզուած է սա ճշմարտութեան հայերին «վերանորոգելու» համար չպէտք է աշխատել նրանց բոլորովին հեռացնել իրանց դարևոր եկեղեցական աւանդութիւններից, զգուշութեամբ պէտք է վերաբերուել դէպի Լուսաւորչի, Ներսէսների, Սահակների և Մեսրոպների անունները:

Այժմ տեսնենք թէ «վերանորոգուած»—այսինքն բողոքականացած հայերը ի՞նչ նկարագիր ունեն: Տեսնում ենք, որ չնչին բացատրութեամբ սրանք բաւի բուն նշանակութեամբ զգուելի նկարագրի տէր են, վերին աստիճանի կեղծ, խաբերայ, և անազնիւ են, շատերն իրանց անձնական շա-

հի համար բողոքական անունն են կրում իրանց վրայ, օժանք էլ իրանց օտարասիրութեան պատճառով «վերանորոգուած» են, որպէսզի իրանց «հին գլուխ» լուսաւորչական արիւնակիցներին անուանեն «տղէտ, մեղաւոր և խաւարամիտ, նախապաշարուած, մոլորուած, սատանայի ծառայ» եայլն եայլն:

Պահանջել վանեցիներից լինել «կատարեալ, որպէս Հայրն երկնաւոր» — դա անմտութիւն է, եանկիների հայրենիքում անգամ այդօրինակ գերմարդ գտնելն անկարելի է, ուր մնաց Վանում: Բայց մարդասիրաբար օգնել չքաւոր վանեցուն կրթութիւն, մտաւորապէս դարգանալու, դա շատ անհրաժեշտ է և շքանորհակալութեան արժանի: Վանի միսիօնարութիւնն սկզբում չէր ուզում հաշտուել այդ մտքի հետ, սակայն տարիների ընթացքում փորձուելով կամաց-կամաց համոզուեց, և այժմ բաւական տարբեր ծրագրով ուզում է օգտակար լինել վանեցիներին, միևնոյն ժամանակ աստուածահաճոյ գործեր կատարել: — Դպրոցի ուսումնական ծրագիրն տարէցտարի կանոնաւորել, բժշկական դործն աւելիեաւելի ընդարձակել, անկարողներին ձրի դարման և դեղ մատակարարել, անոք և անճար որբեր հաւաքել մուսցուած գիւղերի այսուայն անկիւններից, նրանց պատսպարել, նիւթական և բարոյական հաց տալ, ծանօթացնել վանեցիներին գիտութեան կատարած հրաշքների հետ, ահա օրինակելի գործ...

Առանց հիացումի և ոգևորութեան անկարելի է մտնել Այգեաստանի Աւօի դար կոչուած՝ գեղեցկագիր և օղաւէտ բլուրի վրայ ձգուած ընդարձակ շէնքի պարխապների գոնից ներս: Կարծես թէ մտնում էք մի փոքր քաղաք, ուր ամեն ինչ կարելի է գտնել: Միքանի ժամ հարկաւոր է միսիօնարների այդ «կօնախի» զանազան մասերը շրջելու և նրանց հետ ծանօթանալու համար: Անկարելի է նկարագրել այստեղ այդ հսկայ շինութեան մասերը, ձեզ ապշեցնող և հիացնողն ոչ թէ շէնքի գեղեցկութիւնն կամ ճարտարագիտական ոճն է, ոչ, դա մի վնասէք, որովհետև շինութեան զանազան մասերն զանազան ժամանակներում շինուած լինելով ներդաշնակութիւնից բոլորովին զուրկ են, զրա փոխարէն դուք տեսնում էք խառնի-խուռն ձգուած բազմաթիւ պարզ, բայց իրանց բովանդակութեամբ շատ պիտանի հողաշէն հաստատութիւններ: Այստեղ միսիօնարութեան հնաշէն ժողովարանի—որ միաժամանակ ծառայում է իբրև սերտարան դպրոցի աշակերտների համար— վարի յարկւած գետեղուած են դասարանները, դպրոցական կարէնէտները. այստեղ միմեանց դիմաց կան միքանի ուրիշ երկյարկանի շէնքեր, որոնց վերի յարկերը ծառայում են իբրև

ԿնՆարան գիշերօթիկ որբերի համար, իսկ ցածի յարկերը իբրև  
 ճաշարան, շտեմարան, բաղնիք, փուռ կամ թոնրատուն և զա-  
 նազան արհեստանոցներ, ուր 100-ից աւելի որբեր իրանց  
 վարպետների հրահանգների համեմատ վարժութիւններ են ա-  
 նում այսուայն արհեստի մէջ, մեծ ոգևորութիւն է տիրում  
 մանաւանդ ջուլհականոցում, ուր 13 հատ դէզգեհահ կայ դօրի  
 համար, նրանց դիմացի պատի առջև բարձր գիրքի վրայ շա-  
 բուած են նոյն թուով ճախարակներ, որոնց առաջ նստել են  
 որբուկներ և որբուհիկներ և համբերատար ոգով պարտցնում  
 են մանիչը, մանում են և մանում. միքիչ հեռուն տարածում է  
 ուրիշ երկյարկանի մի շէնք, զա էլ ալջկանց վարժարան, աղ-  
 ջըկանց որբանոց, ԿնՆարանն է. միսիօնար պատուելիների և  
 վարժուհիների բնակարաններից դուրս աւելի հեռու կանգնած  
 է գերմանական որբանոցը, որի երկյարկանի շէնքը անցած  
 տարի հիմնուեց, աւարտուեց. գերման բարերարների անունով  
 որդեգրուած որբուհիները հաւաքուած են այդ շէնքի մէջ. դէ-  
 պի արեւմուտք բարձրանում է մի ուրիշ հոյակապ շէնք, որ իր  
 ծաւալով և գիրքով ամենահսկան է, զա էլ հիւանդանոցն է,  
 որի եռայարկ շէնքի հիմքը անցած տարի դրուեցաւ և զրեթէ  
 աւարտել է, ամենաառողջ մարդն անդամ այս շէնքի վերին  
 յարկում շուռ զալիս պիտի նախանձի հիւանդների վայելած  
 տեսարանին և ծծած օդին և ցանկութիւն պիտի ունենայ այդ  
 սենեակներում պսակելու բախտն ունենալու համար հիւանդա-  
 նար: Հիւանդանոցից դէպի հարաւ պարսպապատի վրայ շի-  
 նուած է միայարկանի դեղարանը, որ զարդարուած է եւրոպա-  
 կան դեղասնների կատարելութեան հետ մրցող բազմատեսակ և  
 թարմ: Դեղերով, դեղարանի վրայ այս տարի շինուեց մի ուրիշ  
 դահլիճ էլ, որ պիտի ծառայի իբրև գրադարան-ընթերցարան:  
 Դէպի հիւսիս բաւական երկար հեռաւորութեան վրայ բարձրա-  
 նում է մի ուրիշ երկյարկանի շէնք, որ իր պատահանների  
 շտեմնուած մեծութեամբ այցելուի ուշքը զբաւում է, զա էլ  
 բողոքականների նոր ժողովարանն է, որի հիմքը այս տարի  
 ձգուեց, և ծախքը հանգանակուեց մասամբ տեղացի «եկեղեցու  
 անդամներից»: Դարձեալ դէպի հիւսիս կան ուրիշ վարժու շէն-  
 քեր, ուր պատասպարում են որբերի մի մասը: Էլ հեռուն չե-  
 թանք: Սրանք էլ բաւական են Պորտի անուան մի փառաւոր  
 պսակ հիւսելու համար: Ճշմարիտ մարդասիրութիւն, քրիստո-  
 նէական մարտը գործունէութիւն, ահա այս շէնքերի տակն է  
 երևում: Ահա թէ ինչո՞ւն է կայանում վանի բողոքական մի-  
 սիօնարութեան անզուգական մեծագործութիւնը: Արդեօք այդ  
 շէնքերի մէջ տիրող եռուզեռը հազարապատիկ աւելի տղաւո-

րիչ չէ՞, քան բողոքականութեան քարոզած աւետարանական ամենավսեմ արտայայտութիւնները կամ Դաւիթի սաղմոսների հետևողութեամբ պատրաստուած անտանելի, ձանձրալի անհամ-անհոտ և անմիտ հոգեշունչ (!) երգերը: Ուրախութեամբ յայտնում ենք, որ Պորաբ իր գործնական ուղղութիւնը աւելի և աւելի ընդարձակելու հետամուտ է: Մէկ շաբաթ առաջ սայլերը ճոճալով Վան քաղաք հասցրին հպարտ միսիօնարութեան սեփականութիւն կազմող մի մեքինայ, որի պաշտօնը պիտի լինի դարի աղալ, տախտակ կտրել և ջուր քաշել վիր:

## XXVI

Կաթոլիկ միսիօնարութիւն. Դոմինիկեան կրօնաւորների մուտքը Վանում. գործունէութիւն մինչև 1896 թիւը. հայր Չարմըտանի գումարները. սոկիների զինգ-զընդիւնը և վանեցիկների հոգու փրկութիւնը. սով և կաթոլիկութիւն. հայ-կաթոլիկ տասնորդութիւն Վանում. «փարա վար, կաթոլիկ վար. փարա եօխ, կաթոլիկ եօխ». հայ կաթոլիկ մատուռներ. գործունէութեան արդիւնքը. վանեցու հայեացքը ներկայումս գումանական խնդիրներում:

Ամերիկեան միսիօնարութիւնն արդէն իր արմատը հաստապել էր Վանում, երբ 1880-ական թուերին Թիւրքիոյ բոլոր շատ թէ քիչ նշանաւոր հայակենդան քաղաքներում բոյն դնելուց յետոյ, կաթոլիկ դաւանութիւնը դոմինիկեան կրօնաւորների ձեռքով փորձում է Վանումն էլ սկսել իր պրոպագանդան: Առաջին անգամ իբրև առաքեալ Վան են մտնում երկու կրօնաւորներ, պէն Դիւպլան և պէն Ժագ: Սրանք Այգեստանի ս. Յակոբի թաղամասում իրանց բնակութիւնը հաստատելուց յետոյ, թէև ձեռնարկութիւններ անում են պրոպագանդայի գործը առաջ տանելու համար, սակայն Ամերիկեան միսիօնարութեան նիւթական և բարոյական կարողութիւնից զուրկ լինելով տասնեակ տարիներ են անցնում և մազի չափ գործ չեն կարողանում տեսնել, միայն միսիթարում են նրանով որ ծլխախոտի Բէթիի ընկերութեան Վանայ մասնաճիւղը կազմող օտար քաղաքացի (մեծ մասամբ կալնեցի) հայ կաթոլիկ անդամները չունենալով հայ-կաթոլիկների համար յատուկ ազօթատեղի և հովիւ, իրանց հոգևոր պէտքերի համար զիմում են իրանց լատինական եկեղեցուն:

Դոմինիկեան կրօնաւորների այս անպտուղ գործունէութիւնը տևում է մինչև հոշակաւոր 1896 թուի աշունը: Ամերիկեան միսիօնարութիւնը արդէն մէկ տարի առաջ սկսած էր իր նպաստի գործը բուռն ոգևորութեամբ, երբ դեռ դոմինիկեանների տեղական ներկայացուցիչները անշարժութեան մասնուած,

երբեմն-երբեմն միայն իրանց ատամները կրճատում էին տեսնելով նրանց ոգևորութիւնը, սակայն ինչպէս ամբողջ հայերին նոյնպէս և վանեցիներին «հոգեպէս ուղղութեան բերող» 1896-ի աղէտը, վերջապէս գործի ճանապարհ բացաւ հոգևոր պէսերի համար: Ահա 1896 թուի աշնան հանգուցեալ պէս Դիւպլանին, փոխարինող պէս Սիմոնը հապճեպով ելնում է վանի մօտիկ գիւղերը և հազարաւորների միջից 27-ի չափ որբեր հաւաքում է և բերում է տեղաւորում է իրանց ծախքով հոգացող որբանոցի մէջ և ապա ձեռնարկում են նաև հաւաքել աղջկանց պատըսպարանի համար 30-ի չափ որբ աղջիկներ, սկզբում միայն նրանց պատսպարան տալով և նիւթական պէտքեր հոգալով, իսկ քիչ յետոյ նաև միացնում են դրան ձրի կրթութիւն: Ահա այս գեղեցիկ առիթը հնարաւորութիւն է տալիս կրօնաւորների մի քիչ աջ ու ձախ քարոզութիւններ անել և կաթոլիկներ պատրաստել. դարձեալ պէսերի գործունէութիւնը մնում է խիստ սահմանափակ վիճակի մէջ պապական փարախին դիմողների թիւը տակաւին շատ աննշան և գրեթէ 0-ի հաւասար է. 1898-ի յայտնի սովը գալիս է դոմինիկեաններին օգնելու: Սոված վանեցիների ազդակը հասնում է երկինք, քարացած սրտերն անգամ շարժւում են: Հայր Շարմլտան Եւրոպայի մէջ սկզբում լոկ մարդասիրութեան անուան տակ և քիչ յետոյ «մուրրուած հայերի հոգիները փրկելու» նպատակով հազարաւոր մարդասէրներից հաւաքած գումարները՝ 20,000 լիրայի չափ (մօտ 400,000 ֆրանկ) արագաբար սկսում է փոխադրել վան, յանձնարարելով պեոներին, որ որբանոցներ, դպրոցներ բացուեն և սովածներին նպաստ տրուի. միւս կողմից դոմինիկեան կրօնաւորների կարգը առատ նուէրներ է փոխադրում իր վանի մասնաճիւղին միևնոյն նպատակի համար, ահա քեզ ոգևորութիւն: Պէտքերը կրակ են դառնում, զնպնգուն ոսկիների քսակները ձեռներում բռնած՝ սկսում են շրջել քաղաքի փողոցները և գիւղերի մէջ և հրաւեր կարգալ սովածներին պապի հօտի մէջ մտնել և հոգեպէս ու ֆիզիկապէս փրկութիւն գտնել. ամեն տեղ յայտարարում են. «էհէր կաթոլիկ վար, փարայ վար»—«եթէ կաթոլիկ կայ, փող էլ կայ»: Ահա ամեն կողմից լսում են ձայներ «խէր Աստուծոյ, ես կաթոլիկ եմ, օգնեցէք ինձ, փարան, փարան»: Քաղաքի Կոլորդար կոչուած թաղամասի բնակչութիւնը գրեթէ շատ աննշան բացառութեամբ յայտարարում է, թէ կաթոլիկ եմ և ուրեմն նոյն թաղի մէջ մատուռ է հաստատուում. կամաց-կամաց միւս միջանի թաղերի մէջն էլ ամենակուլ սովը հարիւրաւոր զոհերի գրգում է «փրկութեան ճանապարհը գտնելու համար»

նուազած ձայնով բղաւել «կաթուղիկ եմ կաթուղիկ, օգնեցէք»։ Դոմինիկեանները տեսնելով՝ որ հունձը առատ է, օրէցօր աւելի և աւելի սոստանում է, դիմում են հայ-կաթուղիկ հասարակութեան Պոլսոյ կաթողիկոս—պատրիարք Ազարեանին։

Ազարեանը թէև սկզբում խնդիրն անկարևոր համարելով բաւականանում է ուղարկելով Վան, բիթլիզցի Ստեփան վ. Զուհուտեանին, բայց երբ համոզում է թէ ամբողջ Վան արդէն կաթուղիկ դառնալու պատրաստ է, Վանը Մշոյ առաջնորդութիւնից անկախ թեմ է հրատարակում և իբրև Վանայ հայ-կաթուղիկների առաջնորդ՝ Մխիթարեան միաբաններից նոյն ժամանակ Պոլսում գտնուող Անտոն վարդապետ Զնտօեանին Վան է ուղարկում։ Հայր Զնտօեանն արագութեամբ Վան հասնելուց յետոյ, հայ-կաթուղիկների համար բացուած երկու մատուռների մէջ կանոնաւոր ժամասացութեան հիմ դնում է, միւս կողմից էլ ֆոէոներից իրան յանձնուած գումարները առատութեամբ բաժանում է իրան դիմողներին։ Գիւղերի մէջ կաթուղիկ ճանաչուողների թիւը աւելի է մեծանում։ Դոմինիկեանների սիրտըն անսահման և աննկարագրելի ուրախութեամբ լցւում է, Ազարեանին, Շարմլտանին, Պապին, մէկ խօսքով ամբողջ աշխարհին յայտարարում են իրանց առաքելական յաջողութիւնը։ Զարմանալին այն էր, որ չափազանց խորամանկ ճանաչուած կաթուղիկ կղերականները միամտաբար հաւատում էին, թէ, ով որ մէկ անգամ յայտարարի թէ ինքը կաթուղիկ է, կամ իր ծննդեան վկայականի (համխտիէ քոչանի) մէջ հայ բառի վրայ աւելացնի «կաթուղիկ» բառը, իրօք նա պիտի փրկուի կամ իրանց պէս կաթուղիկ պիտի լինի։ Սակայն նրանց յուսախարութիւնը կատարեալ եղաւ, երբ վերջացող սովի հետ, վերջացաւ նաև եւրոպացի մարդասէրների նպաստի գործը, ուրեմն և կաթուղիկութեան դիմողների թիւը։ Այժմ, միքանի ամիս առաջ իրանց կողմից եղած յայտարարութեան, թէ «կաթուղիկ վար, փարա վար», վանեցիները փոխարինում են «փարա վար, կաթուղիկ վար, փարա եօք, կաթուղիկ եօք», (այսինքն եթէ փող կայ, կաթուղիկ կայ, եթէ փող չկայ կաթուղիկ չկայ)։ Եւ անա կաթուղիկների թիւն ինչ արագութեամբ որ աճել էր, նոյն և աւելի մեծ արագութեամբ սկսում է նուաղել։ Այժմ Վանում թէ զիւղացիներից և թէ քաղաքացիներից հազիւ թէ 10-ի չափ կաթուղիկ կայ, սրանք էլ անձնական և շահի խնդիրներով կապուած են այդ անուան հետ և ստիպուած են պաշտօնապէս ցոյց տալ թէ կաթուղիկ են, թէև մինչև այսօր դեռ գաղափար չունեն այս դաւանութեան մասին։

Այժմ Վան՝ իբրև հայ-կաթուղիկ առաջնորդական թեմ առիկեմբեր, 1904.

նուանապէս գոյութիւն ունի: Անտոն վ. Ջնտօեան անգործութիւնից և սարապութիւնից ձանձրանալով հեռացաւ Մուշ:

Կաթողիկ կրօնաւորներին մնում է այժմ մխիթարուել իրանց անունով գոյութիւն ունեցող մէկ երկսեռ վարժարանով. բացի այդ վարժարանից հ. Անտոնի իրաւասութեան տակ կայ երկու երկսեռ վարժարան, բացի վարժարաններից հայ-կաթողիկներին համար կան երկու մատուաներ իրանց երկու ողորմելի քահանաներով, որոնք գիւղացի վարդապետներ են, և կաթողիկ դասնալով մինչև մահ ապահովուած են, իրանց ստացած պատարագամատոյցով (ամեն օր պատարագ անում են և իբրև վարձ ստանում են 1 ֆրանք): Հայ-կաթողիկ մատուաների մէջ ժամերգութիւն կատարում է իրանց զպրօցի աշակերտներով, ժամերգութեան մասնակցում են քահանան, փոզասացներ, իսկ կիրակի օրերում նաև զպիւր—աշակերտներ, իսկ ժողովրդից ոչոք:

Գոմինիկեանների այսքան տարուայ ցոյց տուած գործունէութեան վրայ նայելով կարելի է տեսլ, թէ սրանք անկարող են վանում պապական եկեղեցի հաստատել, մինչև այժմ իրանց ընտրած գործունէութեան ձևը, ցոյց տուած ընդունակութիւնն որևէ յոյս չի կարող ներշնչել գոնէ ապագայում յաջողութիւն ունենալու համար, ո՞վ գիտէ թերևս դարձեալ իրանց զպրօցներին կանոնաւոր կերպարանք տան և այդ կերպով յաջողին, թէև դրա վրայ էլ շատ յոյս ունենալու չէ: Խիտ անսպասելի և այլանդակ տպաւորութիւն արաւ վանեցիկների վրայ պէտերի այն տգեղ ընթացքը, որ առաջին քալափոխին իսկ նրանք ցոյց տուին, աւելորդ չեմ համարում այդ խնդիրը համառօտ կերպով 1—2 տողի մէջ ամփոփել: Պէտ Սիմոն իբրև ահաուչ սրբեր հաւաքելուց ժօտ մէկուկէս տարի յետոյ, ձանձրանալով կամ աւելի ճիշտ աննպատակ համարելով հայ որբուկներին իրանց մայր եկեղեցին ուղարկել հաղորդուելու համար, դատկական տօնի ութիւ կարգադրում և պատուիրում է աշակերտներին երթալ կաթողիկներէ եկեղեցին և այնտեղ խոստովանուել և հաղորդուել. որբերը այդ առաջարկը մերժում են ընդունել, միքանի ընդգիմադրողներ արժանանում են պէտ Սիմոնի անարգական խօսքերին և մինչև իսկ ծեծին, որի հետևանքը լինում է այն՝ որ բոլոր որբերը, 27-ի չափ, խորհում են դիմել հայոց առաջնորդարանին, յայտնել իրանց վրայ գործ դրուած ճնշումը և պատապարան խնդրել. և եթէ առաջնորդարանը ընդունի իրանց խնդիրը, թողնել կաթողիկների որբանոցը. տարարին 7—8 որբեր, որոնք իրանց մարմնի վրայ կրել էին Պէտ Սիմոնի բռունցքի հարուածները, չսպասե-

լով այդ որոշման իրագործումին, նոյն գիշերը դեռ լոյսը չբացուած՝ հեռանում են որբանոցից և ուղղակի դիմում են առաջնորդարան, պատմում են եղելութիւնը և տեղ են խնդրում: Առաջնորդական տեղապահ Ստեփան վ. Աղապաղեան՝ անմիջապէս կարգադրում է Վարազայ որբանոց փոխադրել նրանց, և ահա յաջորդ երկու օրուայ մէջ բացի մէկ հիւանդից, մնացած բոլոր որբերն էլ միմեանց հոտից վազում են առաջնորդարան և 26 հոգի (յետոյ հիւանդ որբն էլ է հասնում) միանգամից ուղարկւում են Վարազայ որբանոց և պատասպարւում են: Ահա պէս Սիմոնի այս ընթացքը շատ անհաճոյ տպաւորութիւն գործեց հասարակութեան վրայ: Այդ սխալը քաւելու համար, պէս Դրֆրանս առնում է պէս Սիմոնի ձեռքից տեսչութեան պաշտօնը և յանձնում է պէս Ժաղին և երբ նորից սկսում են նոր որբեր հաւաքել, այդ անզուգուցութիւնից խրատուած խիստ խոհեմ վերաբերում են ցոյց տալիս դէպի որբերի կրօնական զգացումները:

Գալով վանեցու ներկայումս դաւանական խնդիրներում ունեցած հայեացքին՝ պէտք է ասել, որ վանում կայ մէկ խոշոր, շատ խոշոր դասակարգ, որ կրօնի մասին շատ ազօտ գաղափար ունի, իսկ դաւանութիւնների կամ յարանուանութիւնների մասին գրեթէ գաղափար էլ չունի. այս դասակարգի հաւատոյ հանգանակն այն է, որ նա խոստովանւում է թէ ինքը հայ քրիստոնեայ է, հայերի կրօնը շատ ուղիղ է, հայոց եկեղեցու ձէսերն ու արարողութիւնները շատ սքանչելի են, թէ ինչո՞ւն է կայանում հայ կրօնի ուղղութիւնը կամ հայ եկեղեցու ձէսերի սքանչելիութիւնը նա չի կարող բացատրել, միայն համոզուած է: Իսկ շատ թէ քիչ զարգացած համարուած դասակարգը այժմ տարբեր հայեացք ունի այս խնդրի մասին, նա այն համոզումն է գոյացուցել, թէ որևէ մէկը լուսաւորչական, լուսերական կամ պապական լինելովն չէ որ հանդերձեալ կեանքի մէջ վարձրի է արժանանում: Հայ եկեղեցին շատ լայն ոգի, ազատ սկզբունք է դաւանում, որ այսօր ժողովրդի ծայրայեղ տգիտութեան պատճառով չափազանց աղաւաղուած է, մենք մեր եկեղեցու դաւանութիւնն, ինչ էլ որ լինի, պահելու ենք, լոկ այն նպատակով, որպէսզի մեր եկեղեցին իբր ինքնուրոյնութիւնը պահպանի, քանի որ ներկայ պայմաններումն է գտնւում մեր ազգը, անհրաժեշտ է դաւանութեան ինքնուրոյնութիւնը: Վանեցիները այս դասակարգը միևնոյն ժամանակ չափազանց մեղադրում է լուսերական և պապական միսիոնարութիւններին, հայ ժողովրդի մէջ նրանց արած պրոպագանդայի համար, մենք չենք ուզում նրանց բարոգած և ցոյց տու-

ած արքայութեան մէջ տեղ ունենալ, թող այդ կեանքի երանութիւնը միայն իրանք վայելեն, միայն թէ ետ մնան մեր ժողովրդի մէջ պառակտումն ձգելուց: Մենք շատ գոհ պիտի լինենք նրանցից, եթէ նրանք հոգևոր պրոպագանդայի փոխարէն օգնեն մեզ միայն մեր միտքը կրթելու, լուսաւորելու համար, մենք կրթուելու, լուսաւորուելու հակառակ չենք, ընդհակառակն չափազանց փափագող ենք, բայց մեր ձեռքում ունեցած միջոցներն անբաւարար են, եթէ կամենում են, թող աշակցեն մեզ այս գործի մէջ, բաւական է, որ մեր միտքը մի քիչ բացուի, լուսաւորուի, ազատ և սեփական դատողութիւն ունենանք, այն ժամանակ մեր ինքնուրոյն համոզուուքով կարող ենք մեր ցանկացած դաւանանքն ունենալ և նրան հետեւել: Եւ որ՝ որեւէ ծառայութիւն անելու փափագ ունի հայ ժողովրդին, թող չմտնայ նրա կրօնի շէնքին. այդ շէնքն արդէն իր հնութեամբ պատկանելի է, եթէ վերանորոգութեան պէտք կայ, թողէք որ մենք ինքնաբերաբար զգանք. ով որ ցանկանում է մեզ այս կամ այն կեանքի մէջ դէպի փրկութիւն առաջնորդել, թող նա թողնէ երևակայական ցնորքները, ենթադրութիւնները և մազի չափ գործնական աշակցութիւն անէ մեզ, մենք շատ գոհ կը լինենք:

Վերջացնելով, մնում է խոստովանուել՝ որ հակառակ մեր բուն ջանքերին, չկարողացանք մեր նիւթը փափագելի կերպով մշակել: Անշուշտ ընթերցողը պիտի նկատի, որ շատ թերութիւններ մտան նիւթի մէջ: Ընթերցողների արդարացի քննադատութիւնից շատ թէ քիչ ազատ մնալու համար, այսքանն ասեմ, որ շատ անյաջող հանգամանքներում ձեռնարկեցինք այս գործին և այդ կարող են ըմբռնել միայն նրանք, որոնք միամտութիւն կ'ունենան Վանում այս տեսակ մի գործի յանձնառու լինել:

Մենք միայն մխիթարուած պիտի զգանք մեզ, եթէ լսենք թէ այս գրուածքով յաջողած ենք շատ թէ քիչ ազատ գաղափար տալ ընթերցողներին, Վանի հայերի մասին առանց չափազանցութեան և աշտուութեան դիմելու: Մենք աշխատել ենք իրողութիւնները ներկայացնել իրանց իսկական գոյներով և վիճակով:

ԾՆՐՈՒԿ

# ՉԱՐԼԶ ԴԻԿԵՆԶԻ

## ԾՆՆԴԵԱՆ ԱՐՁԱԿ ԵՐԳԵՐԻՑ \*)

Թարգմանեց բնագրից Մխիթար Տէր-Անդրէասեանց

Գլուխ Դ.

### ՈԳԻՆԵՐԻՑ ՎԵՐՁԻՆԸ

Կամայուի, հանդարտ ու լուեիայն երևոյթը մօտեցաւ: Երբ կանգնեց նրա մօտ, Սկուռը չորեց նրա առաջին, որովհետեւ նոյնիսկ այս Ոգուն շրջապատող օդը, կարծես, խորհրդաւոր խաւար էր տարածում:

Նա փաթաթուած էր մի մուգ—սև շորի մէջ, որ ծածկում էր նրա զլուխը, գէձքը, մարմինը: Երևում էր միայն մի մեկնած ձեռք, որ այդ շորից դուրսն էր փնայել: Առանց դրան դժուար կը լինէր տեսնել նրան մութի մէջ, կամ ջոկել շրջապատող խաւարից:

Նա զգաց, որ մի հսկայ բան է մօտեցել իրան և նրա խորհրդաւոր ներկայութիւնը հանդիսաւոր երկիւզով լցրեց իր սիրտը: Աւելի ոչինչ չգիտէր նա, որովհետև Ոգին ոչ խօսում էր և ոչ շարժուում:

—«Գալիք Ծննդեան Ոգին ևս դու», հարցրեց Սկուռը:

Ոգին չպատասխանեց, միայն ձեռքը մեկնեց առաջ:

—«Ի՞նչ այն բաների ստուերն ևս ցոյց տալու ինձ, որ դեռ տեղի չեն ունեցած, բայց սպագայում պիտի տեղի ունենան», շարունակեց Ոգին: «Այդպէս չի, Ոգի»:

Հանդերձի վերին մասը ծալձլոտուեց մի վայրկեան, կարծես Ոգին խոնարհեցրեց զլուխը: Այդ էր Սկուռի ստացած միակ պատասխանը:

\*) Տես «Մուրճ», № 11.

Թէպէտ այս վերջին ժամանակս Սկոուշը բաւականին ընտելացել էր Ոգիներին, բայց այդ համը երևոյթը այնպէս վախեցրեց նրան, որ նրա ոտները սկսեցին դողալ և երբ որ պատրաստուեց հետեկու Ոգուն, զլաց, որ դժուար թէ կարողանայ ոտի վրայ մնալ: Ոգին մի բոպէ կանգ առաւ, կարծես, նրա դրութիւնը նկատելով, ուզում էր միջոց տալ նրան ուշքի գալու:

Իսկ Սկոուշի բանը դրանով աւելի ևս վատացաւ: Մի անորոշ սարսափով նա գուշակեց, որ այդ մտայլ ամպի միջից երկու ոպեղէն աչքի հայեացք է յառած իր վրայ, մինչդեռ ինքը, ինչքան էլ լայն է բաց անում աչքերը, ոչինչ չի կարողանամ շոկել խաւար գանգուածի միջից, ըացի ոպեղէն ձեռքից:

— «Ապագայի Ոգի», գոչեց նա, «իմ տեսած ոգիներիս մէջ ամենից շատ քեզինց եմ սարսափում: Բայց որովհետեւ յայտնի է ինձ քո նպատակը, որ բարի է և որովհետեւ ես յոյս ունիմ այսուհետեւ բոլորովին ուրիշ կերպ ապրել և ուրիշ մարդ դառնալ,—պատրաստ եմ երախտապարտ սրտով կրել ներկայութեանդ ծանրութիւնը: Դու չես խօսելու ինձ հետ»:

Պատասխան չկար: Ձեռքը ուղիղ դէպի առաջ էր մեկնած:

— «Առաջնորդի ինձ», ասաց Սկոուշը: «Տար ինձ: Գիշերը շուտ է անցնում, և ժամանակը թանգ է ինձ համար, գիտեմ: Տար ինձ, Ոգի»:

Երևոյթը ինչպէս որ եկել էր, այնպէս էլ սկսեց հեռանալ: Սկոուշը հեռուում էր նրա հանդերձի ստուերի միջով, որ կարծես նրան բարձրացնում ու ամուսնում էր հետը:

Հազիւ թէ նրանք քաղաքը մտան, աւելի գուցէ քաղաքը մօտեցաւ ու նրանց իր մէջն ամփոփեց: Ինչ և իցէ, նրանք քաղաքի սրտի մէջն էին արդէն, բոլորսյում, վաճառականների շրջանում, որոնք տակնուվրայ էին լինում և փողի զընկզընոց հանում իրանց քսակներից, խմբերով խօսակցում, նայում իրանց ժամացոյցներին, մտամոլոր խաղում իրանց ահագին ոսկէ կնիքներով և այլն և այլն, ինչպէս որ տեսել էր յաճախ Սկոուշը:

Ոգին կանգ առաւ «դործի մարդկանց» մի փոքրիկ խումբակի մօտ: Սկոուշը, նկատելով, որ Ոգու ձեռքը դէպի այդ խումբն է մեկնած, մօտեցաւ որ ականջ դնի նրանց խօսակցութեանը:

— «Ոչ», ասաց մի խոշոր, չաղ մարդ, հրէշաւոր կզակով: «Մի առանձին բան չգիտեմ նրա մասին: Գիտեմ միայն որ նա մեռել է»:

— «Ե՞րբ է մեռել», հարցրեց մի ուրիշը:

— «Կարծեմ, այս գիշեր»:

— «Բն, ի՞նչ է պատճառը», հարցրեց երրորդը, իր ընդարձակ ծխախոտի ամանից բաւականին ծխախոտ հանելով: Ես կարծում էի, թէ նա երբէք չի մեռնելու»:

— «Աստուած գիտի», ասաց առաջինը յօրանջելով:

— «Ի՞նչ արաւ, տեսնե՞ք, իր կարողութիւնը», հարցրեց մի կարմիր երեսաւոր՝ պարոն, որի քթի ծայրին մի կտոր աւելամիս կար կախ, որ օրօրում էր, նագուհաւի կատարի կարմիր մտի նման:

— «Չեմ լսել», ասաց լայնակզակ մարդը կրկին յօրանջելով: «Գուցէ ընկերութեանն է թողել: Այնքանը գիտեմ, որ ինձ չի թողել»:

Այս հանաքը ընդհանուր ծիծաղով ողջունուեց:

— «Երևի թաղումը շատ հասարակն է լինելու», ասաց նոյն պարոնը. «որովհետև կեանքուժս նրա մօտ գնացող-եկող մարդ չեմ տեսել: Եկէք մենք մի խումբ հաւաքուե՞նք, գնանք»:

— «Ես հակառակ չեմ, եթէ հոգեհայ է լինելու», հկատեց այն պարոնը, որի քթի վրայ աւելամիս կար: Իսկ եթէ րելեխ չլինի, ես գնացող չեմ»:

Կրկին ծիծաղ:

— «Բանից դուրս է գալիս որ ձեր մէջ ամենատնշահասէրը ես եմ եղել», ասաց առաջին խօսողը, «որովհետև ես երբէք ոչ սև ձեռնոց եմ հագնում, ոչ էլ քելեխ եմ ուտում: Այնուամենայնիւ ես առաջարկում եմ գնալ, թէ կ'ուզէք: Որ միտ եմ անում, դուրս է գալիս, որ նրա ամենամօտ բարեկամը ես եմ եղել, որովհետև երբեմն իրար հանդիպելիս կանգ կ'առնէինք ու մի երկու խօսք կասէինք: Յտեսութիւն, ցը՞»...

Պատգմներն ու ականջ գնողները ցրուեցան և ուրիշ խմբերի խառնուեցան: Սկոռլին ծանօթ էին դրանք, այդ պատճառով հարցական հայեացք գցեց Ոգու վրայ, այդ խօսակցութեանց բացատրութիւնը խնդրելով:

Երևոյթը դուրս սահեց մի փոքոց ու մատով ցոյց տուեց իրար հետ զրոյց անող երկու մարդու: Սկոռլը կրկին ականջները սրեց, յուսալով իր ուզած բացատրութիւնը սրանցից իմանալ:

Սրանց էլ նա շատ լաւ էր ճանաչում: Ծատ հարուստ ու ազդեցիկ գործի մարդիկ էին: Նա իր պարտքն էր համարում միշտ աշխատել այդ մարդկանց աչքում բարձր պահել իրան «գործի մարդու» տեսակէտից. միմիայն այդ տեսակէտից, իհարկէ:

— «Ի՞նչպէս էք», ասաց մէկը:

— «Դձեք ինչպէս», պատասխանեց միւսը:

— «Լաւ եմ», սասց առաջինը: «Քեօփազը պըծմաւ, հա...»

— «Ասում են», պատասխանեց երկրորդը: «Ի՞նչ ցուրտ է...»

— «Փամանակն էլ է ցրտի, Ծննդեան տօներին էլ ցուրտ չլինի: Դուք էլ, հօ, սառցի վրայ սահողներինցը չէ՞ք»:

— «Ո՛չ, ո՛չ, իհարկէ. էլ բան ու գործ չունեմ: Յտեսութիւն»:

Էլ ոչ մի խօսք: Դրանով էլ վերջացաւ նրանց խօսակցութիւնն ու նրանք հեռացան իրարից:

Առաջ մի արամազիբ էր զարմանալու, որ Ոգին կարևորութիւն է տալիս այդպիսի, ըստ երևոյթին, գոեհիկ խօսակցութիւնների. բայց՝ իներքուստ համոզուած՝ որ այստեղ մի որևէ անյայտ խորհուրդ պիտի լինի, մտքի տակ ընկաւ, թէ ո՞րն է, արդեօք, այդ խորհուրդը: Դժուար թէ մի որևէ առնչութիւն լինէր նրա վաղեմի բարեկամ Յակոբի մահուան հետ, որովհետև այդ անցած բան էր, իսկ այս Ոգու բանը ապագայի հետ էր: Ոչ էլ նրա մօտ ծանօթներից որևէ մէկին կարող էր վերաբերուել այդ խօսակցութիւնը: Սակայն անկասկած էր մի բան. ու՛մ էլ վերաբերուելու լինէր, սակայն իրա համար այդտեղ մի խորհրդաւոր խրատ կար: Նա վճռեց մտաբերել ալկանջին հասած խօսքերը, տեսած բաները, առանձին ուշք դարձրնել իր սեփական ուրուականի վրայ, երբ նա կ'երևայ, և յոյս ունէր այդպիսով հեշտութեամբ գտնել հանելուկի բանալին:

Նա իր հայեացքը ուղղեց հէնց այն անկիւնը, ուր որ առհասարակ կանգնում էր ինքը, բայց մի ուրիշ մարդ էր կանգնած նրա սովորական տեղում և թէպէտ ժամացոյցի սլաքը՝ նրա այդտեղ լինելու ժամն էր ցոյց տալիս, բայց իրան նմանող ոչոքի չէր գտնում ներս խուժող բազմութեան մէջ: Սակայն այդ շատ էլ չզարմացրեց նրան, որովհետև նա իր մտքումը վճռել էր փոխել իր կեանքի եղանակը. մտածում էր ու յոյս դնում, թէ անս այդպիսով կատարուած է նրա նոր-կեանք սկսելու խորհուրդը:

Նրա կողքին՝ հանգիստ ու ժուայլ՝ կանգնած էր Ուրուականը, ձեռքը դէպի առաջ մեկնած: Երբ նա սթափուեց իր մտածածուրդը դրութիւնից, Ուրուականի ձեռքի շարժւածքից ու նրա դէպի ինքը բռնած գիրքից նրան թուաց, թէ մի գոյգ աներևոյթ աչք յառած են իր վրայ: Նա սկսեց դողալ, կարծես ցրտից:

Նրանք թողին «գործի» բեմը և քաղաքի մի մռայլ մասը

գնացին, ուր առաջ Սկուռը երբէք չէր եղել, սակայն ծանօթ էր նրա դիրքին ու վատ համբաւին: Փողոցները կեղտոտ ու նեղ էին, կրպակներն ու տները—ողորմելի, մարգիկ կիսամերկ, հարբած, ոտարորիկ, զգուելի: Կեղտոտ և ծուռուծուռ փողոցներից ու տների դարպասներից՝ աղբակոյտների պարշահոտութիւն էր փչում. ամբողջ թաղը յանցանքների, անտաակութեան ու թշուառութեան մի լոյն էր:

Այս անարգ որջուս մի տան կողքի ծածկոցի տակ մի կրպակ կար, լիքը երկաթեղէնով, ցնցոտիներով, շիշերով, սուկորներով ու ուտելիզէնի կեղտոտ փշրանքով: Կրպակի յատակին կուտուած էին ժանգոտած բանալիներ, մեխեր, շլթաներ, չանգալներ, սղոցների, կշեռքների ու կշուաքարերի, ամեն տեսակ անպէտք երկաթեղէնի գէզեր: Ո՛ւս գարգն էր կտրուած՝ քրքրել ու լոյս աշխարհ հանել զգուելի ցնցոտիների, գարշահոտ ճարպի ու ոսկրների տակ սնուած ու թագնուած գաղանիքը: Այս կրպակում, հին աղիւններից շինած բուխարու առաջ, նստած էր գլուխը ճերմակ մի ստահակ, մօտ եօթմանասուն տարեկան, որ մի գարշահոտ, կարկատուած վարադոյրով իրան ցրտից սպահոված, իր չիբուխն էր ծխում ու իր փառահեղ հանգիստը վայելում:

Սկուռն ու Ուրուականը այս մարդուն մօտեցան հէնց այն ժամին, երբ կրպակը մտաւ, մի ծանր կապոցով բեռնաւորուած կին: Հազիւ սա ներս էր մտել, երբ մի ուրիշ կին էլ մտաւ, նոյնպէս բեռնաւորուած, սրա յետքից ներս մտաւ մի մարդ, հնամաշ հագուստով, որ պակաս զարմացած չէր սրանց տեսնելով, քան թէ սրանք—իրար ճանաչելով: Միքանի վայրկեան զարմանքից ստոած մնալուց՝ յետոյ, երեքն էլ չիբուխը բերնին ծերունու հետ միասին թուլացան ծիծաղից:

—«Թող առաջինը օրավարձով բանող կինը լինի», գոչեց նա, որ ամենից առաջ էր մտել: «Լուացարարուհին թող երկրորդը լինի, իսկ կապալառուի ծառան - թող լինի երրորդը: Լսիք, Ձօ (Յովսէփ), մի բան կայ երեւի, որ մենք երեքս էլ այստեղ հանդիպեցանք իրար:

—«Սրանից լաւ տեղ չէիք կարող գտնել», ասաց պառաւ Ձօն, չիբուխը բերնից հանելով: «Համեցէք դահլիճը: Դուք հօ վաղուց էք ստացել այդ իրաւունքը, այն միւս երկուսն էլ նոյնպէս օտար չեն մեզ համար: Սպասեցէք կրպակիս դուռը փակեմ: Ա՛հ, նրա ճուռոցը: Հաւատաս այստեղ թափուած երկաթի կտորտանքի մէջ սրա չանգալների չափ ժանգոտածը չգտնուի. ինչպէս որ, հաւատացած եմ, ոսկորի կտոր չէք գտնել այստեղ, իմոնցից հին, հն, հն: Մենք ամենքս էլ հաւատարիմ

ենք մեր կոչմանը. լաւ ենք գտել իրար: Մտէք դահլիճը, դահլիճը մտէք»:

«Դահլիճը»—ցնցոտի վարագոյրի քամակի տարածութիւնն էր: Ծերուկը կրակը հաւաքեց մի հին երկաթի կտորով և, իր ծխող լապտերի պատրոյզը չիբուխի գլխովն ուղղելով, (որովհետև գիշեր էր)—կրկին բերանը դրաւ:

Այդ միջոցին կանանցից այն մէկը, որ խօսում էր քիչ առաջ իր կապոցը յատակը նետեց և լրբարար նստեց աթոռի վրայ, ձեռները խաչեց ծակներին ու համարձակ հայեացք գցեց միւս երկուսի վրայ:

— «Ուրեմն ի՞նչ, ի՞նչ կայ, որ տիկին Դիլբըն», ասաց կինը: «Ամեն մարդ իրաւունք ունի իր հոգսը քաշելու: Սա միշտ այդպէս էր անում»:

— «Իսկ որ ճշմարիտ է. մանաւանդ Սա», ասաց լուսցարարունին:

— «Դէ, ուրեմն ի՞նչ ես աչքերդ պլլած կանգնել, վախեցածի նման, այ կնիկ. ո՞վ է իմաստունը, որ իմանայ մեր արածը: Իսկ մենք հօ իրար չե՞նք մեղադրելու կարծեմ»:

— «Իհարկէ, ո՞չ», ասացին միասին տիկ. Դիլբընը և տղամարդը: «Յոյս ունենք—ո՞չ»:

— «Ուրեմն շատ լաւ», գոչեց կինը: «Բաւական է: Այս մի քանի բանը կորցնելով, ո՞վ է զրկւում, տեսնենք: Մեռելի ընչի՞ն են պէտք որ»...

— «Իհարկէ, պէտքը չեն», ասաց տիկ. Դիլբընը ծիծաղելով:

— «Թէ ուզում էր մահից յետոյ էլ պահել այս իրերը այդ անպիտան քեռիքսը», շարունակեց կինը, «ինչո՞ւ կենդանութեան ժամանակ ոչոքի հետ բարեկամութիւն չէր անում, որ մեռնելիս նրա աչքերը փակող մէկը գանուէր նրա կողքին և մեն-մենակ չփչէր վերջին շունչը»:

— «Ճշմարիտ խօսք ու արդար դատաստան», ասաց տիկ. Դիլբընը:

— «Ես կը ցանկանայի, որ այդ դատաստանը մի քիչ աւելի ծանր լինէր», պատասխանեց կինը. «և կը լինէր էլ, հաւատացնում եմ, եթէ կարողանայի մի երկու ուրիշ բանի էլ հասցնել ձեռքս: Բաց արա կապոցս, պառաւ Ձօ, և դիմն ասա: Պարզն ասա: Ոչ առաջինը լինելուցս եմ վախենում և ոչ էլ քաշում եմ, թէ կը տեսնեն դրանք: Այստեղ իրար հանդիպելուց առաջ էլ մենք շատ լաւ գիտէինք, կարծեմ, թէ ի՞նչ գործի տէր ենք մենք: Մեղք բան չի: Բաց արա կապոցը, Ձօ:

Սակայն՝ սիրալիբ բարեկամները թոյլ չտուին. հնամաշ սև

շորաւոր մարդը, առաջ ընկնելով, ի ցոյց դրեց իր աւարը, որ շատ էլ ճոխ չէր: Մի-երկու կնիք, մի գրչաման, մի գոյգ թևքի կոճակ, մի էժանագին քորոց—ուրիշ ոչինչ: Այս բոլորը խիստ քննութեան ու դնահատութեան ենթարկեց ծեր-Ջօն, ամեն մէկի գինը, որ տրամադիր էր տալ, նշանակեց պատի վրայ և, նկատելով որ այլևս բան չմնաց,—գումարը տուեց:

— «Ահա ձեր հաշիւը», ասաց Ջօն, և նոյնիսկ եթէ սպանէք էլ ինձ, վեց պէնս էլ չեմ աւելացնի: Ո՞վ է յաջորդը»:

Յաջորդը տիկ. Դիլբընն էր: Միքանի սաւան ու երեսուցբլիչ, միքանի շորեղէն, մի գոյգ թէյի գդալ, հին ձևի, մի գոյգ շաքարի ունեւի և միքանի կօշիկ: Նրա հաշիւն էլ նոյն կերպով գրուեց պատի վրայ:

— «Տիկիներին ես միշտ աւել եմ տալիս: Դա իմ թուրութիւնս է, որ քանդում է ինձ», ասաց ծեր-Ջօն: «Ահա ձեր հաշիւը: Եթէ մի հատ պէնս աւելին պահանջէք, փոխանակ այս բոպէիս հարցը վերջացնելու,—ես կը փոշմանեմ իմ առատահոնութիւնիցս ու կէս-կոտն կը պակսեցնեմ տուածիցս»:

— «Այժմ իմ կապոցս բաց արա, Ջօն, ասաց առաջին կինը:

Ջօն չօքեց, որ աւելի յարմար լինի բանալ և կապերը քանդելով, մի մեծ կտոր ծանր, մթազոյն ճոթ հանեց դուրս:

— «Այդ ի՞նչ է», ասաց Ջօն: «Երևի անկողնի վարագոյրներն են»:

— «Հա՛», պատասխանեց կինը ծիծաղելով և իր ծալած ձեռների վրայ յենուելով: «Վարագոյրներն են»:

— «Երևի օդերի հետ միասին թոյրել էս վրիցը, հէնցոր աչքերը խփել է»:

— «Իհարկէ», պատասխանեց կինը. ինչո՞ւ չանէի:

— «Հարստանալու համար ես ծնուած դու», ասաց Ջօն, «և անկասկած կը հարստանաս»:

— «Անկասկած, ես ձեռքս ետ չեմ քաշում, երբ նա մեկնըւում է մի բան թպպացնելու, մանաւանդ մի այդպիսի մարդու խաթեր, ինչպիսին որ նա էր. կարող եմ հաւատացնել քեզ, Ջօն», սառնասրտութեամբ պատասխանեց կինը: «Այդ իւրը չկթացընես վերմակի վրայ»:

— «Նրա՞ վերմակն է», հարցրեց Ջօն:

— «Բա՞ սեմինը պիտի լինի», պատասխանեց կինը: «Կարող եմ հաւատացնել, որ նա առանց վերմակի էլ չի մըսի այժմ»:

— «Յոյս ունիմ վարակիչ հիւանդութիւնից չմեռաւ նա, հա՛», ասաց ծեր-Ջօն գործը թողնելով ու վեր նայելով:

—«Մի վախենալ, պատասխանեց կինը, եթէ այդպէս լինէր, ես նրան մօտեցողը չէի. կարօտ չէի: Իսկ այս շապիկը տնադիր մինչև աչքերդ մթնի, այնուամենայնիւ ոչ մի հատիկ ծակ չես գտնի և ոչմի մաշած տեղ: Նրա շապիկներից ամենալաւն է և շատ էլ ընքունն է: Փչանալու էր, եթէ ես չվերցնէի»:

—«Ի՞նչպէս թէ փչանալու», հարցրեց ծեր-Ջօն:

—«Անկասկած այդ շապիկը հագին էին թաղելու», պատասխանեց կինը ծիծաղալով: «Յիտարի մէկը հաղցրել էր արդէն, բայց ես կրկին հանեցի: Եթէ այդ դէպքումն էլ մարդ հասարակ կրտաւ չըանեցնի, էլ ի՞նչ բանի է պէտք ուրեմն կտամ: Մի քիչ էլ դեռ աւել է նրան կտաւ: Տգեղանալու տեղ չունի, որ կտաւ տղեկացնի նրան»:

Սկուռը այս խօսակցութիւնը սարսափով էր լսում: Ծերունու լապտերի աղօտ լուսով իրանց աւարի շուրջը ժողովուած, սրանք շարժեցին նրա ատելութիւնն ու զուանքը, որ հազիւ թէ աւելի սաստիկ լինէր, եթէ դրանց փոխարէն շարսատանաներ լինէին, մարդկային մտի առևտուր անելիս:

—«Հն, հն», ծիծաղեց նոյն կինը, երբ ծեր-Ջօն մի ֆլաշելի քսակ հանելով գրպանից, վճարեց ամեն մէկին համեկիքը: Տեսնում էք, թէ ի՞նչ եղաւ նրա վախճանը: Ամենքին փախցընում էր նա իրանից, քանի որ կենդանի էր, որպէսզի մեռնելուց յետոյ մեղ խանդարող չլինի: Հն, հն, հն»...

—«Ոգի», ասաց Սկուռը, ոտքից մինչև գլուխը զողալով: «Տեսնում եմ, տեսնում եմ: Այդ դժբախտ մարդու վիճակը կարող է կրկնուել և իմ գլխիս: Այդ ճանապարհն եմ բռնել ես էլ: Տէր ողորմած, ի՞նչ բան է այս»:

Սարսափած յետ քաշուեց նա, որովհետև տեսարանը փոխուել էր և այժմ նրա առջը մի մահճակալ էր, մերկ ու անվարագոյր, որի վրայ, մի հնամաշ սուսանի տակ մի բան կար, որ, թէպէտ և անձայն, սակայն սարսափահար էր սնում նրան:

Սենեակը խիստ մութն էր, այնպէս որ ոչինչ չէր կարող տեսնել, թէպէտ Սկուռը, մի գաղտնի դրդման հպատակուելով, այսուայն կողմն էր նայում, աշխատելով իմանալ, թէ ի՞նչ սենեակ է այդ: Դրսից մի աղօտ ճառագայթ ընկաւ անկողնի վրայ, որի մէջ, պղտկուած—կողոպտուած, անխնամ, ընկած էր այն մարդու մարմինը առանց հսկողի կամ սպացողի:

Սկուռը նայեց Ուրուականին: Նրա անյողդող ձեռքը ուղղուած էր դէպի դիակի գլուխը: Այն սաստիճան անխնամ էր ծածկուած նա, որ Սկուռը մի մատով կարող էր բանալ նրա

երեսը: Նա մտածում էր դրա մասին, զգում դրա հեշտութիւնը և ցանկանում էր անել,—բայց չէր կարողանում ոչ ծածկոցը յետ քաշել և ոչ ազատուել այդ տեսարանից:

Ո՛հ սառը, սառը, խիստ, զարհուրելի Մահ, կանգնիր այստեղ սեղանդ և շրջապատիր նրան իշխանութեանդ տակ գտնուած բոլոր անուարասափով, որովհետև քոնն է այստեղ: Բայց սիրեցեալ, յարգելի ու սլատուաւոր գլխից դու չես կարող մի մազ էլ փոխել քո սարսափելի նպատակներիդ համար կամ թէ դէմքի մի հատիկ գիծը զուելի դարձնել: Ո՛չ այն պատճառով, որ նրա ձեռքը ծանրացած չի լինում և վայր չընկնում, երբ բարձրացնում ես, ոչ էլ այն, որ սիրտը բարախում է, կամ, բազկեր ակը խփում, այլ այն պատճառով՝ որ նրա ձեռքը բաց է եղել, առատ ու արդար, սիրտը ազնիւ ջերմ ու քնքուշ, իսկ բազկերակի արիւնը—մարդկային: Հարուածիր, Ուրուական, հարուածիր և իսկոյն նրա բարի գործերը դուրս կը բղխին նրա վէրքից և նրա անմահ անունը կը յաւէրժացնին աշխարհքում:

Ոչ մի ձայն չարտասանեց այս խօսքերը Սկոուջի ականջին, սակայն նա լսեց այդ խօսքերը, անկողնին նայելով: Նա մտածում էր, թէ արդեօք ի՞նչ կը լինի այդ մարդու առաջին միտքը, եթէ նա յարութիւն առնի: Ժլատութիւն, ընչաքաղցութիւն ու վաստակ, որ նրան այս «ճոխ» վախճանին են հասցրել, լաւ տեղ են հասցրել...

Նա ընկած էր մութ ու դատարկ տանը, մէկ-մէկակ. ոչ մի մարդ կամ կին, ոչ մի երեխայ չկար, որ ասէր. «Նա բարի էր, նա այս կամ այն բարութիւնն է արել ինձ. ես էլ ի յիշատակ նրա մի հատիկ բարի խօսքի, բարութիւն կ'անեմ նըրան»: Կատուն էր գուռը չանգուտում, իսկ վառարանի տակից մկները կրծտոցի ձայն էր գալիս: Ի՞նչ էին փնտրում նրանք մահուան այս օթեանում կամ ինչո՞ւ էին նրանք այդպէս անհանգիստ ու կատաղած:

Սկոուջը չէր համարձակուում մտածել:

—«Ոգի» ասաց նա, «սարսափելի տեղ է այս: Ես չեմ մոռանա, հաւատացնում եմ, այս դասը: Գնանք»:

Բայց Ոգին իր անշարժ մատով շարունակում էր նրա ուշադրութիւնը գիակի գլխի վրայ հրաւիրել:

—«Հասկանում եմ, թէ ի՞նչ ես ուզում», սրտասխանեց Սկոուջը: «Կը կատարէի ցանկութիւնդ, եթէ կարենայի: Բայց չեմ կարող Ոգի: Չեմ կարող»:

Կրկին, կարծես, նայեց նրան:

—«Եթէ այս մարդու մահը յուզել է որևէ մէկին այս քա-

դարում, ասաց Սկուռլը, համարեա շնչասպառ, ցոյց տուր ինձ նրան, Ոգի, աղաչում եմ քեզ»:

Ոգին մի րոպէ թևերի նման բացեց իր սև հանդերձը նրա առաջ և կրկին հաւաքելով, ցոյց տուեց մի սենեակ, ուր օր ցերեկ էր, մէջն էլ մի կին իր որդկերանցով:

Հոգսերից անհանգիստ նա սենեակում յետ ու առաջ էր անում մէկին սպասելով. ամեն մի ձայնից կանգ էր առնում, դուրս նայում պատուհանից, նայում ժամացոյցին, աշխատում էր կար անել, բայց իզո՛ւր... համբերութիւն չունէր նոյնիսկ խաղացող երեխայոց ձայնը լսելու:

Վերջապէս լսուեց դռան ցանկալի թրխկ-թրխկոցը: Նա շտապեց դէպի դուռը և գիմաւորից ամուսնուն, որի գէժըը մտածույր ու ճնշուած էր, թէպէտ երիտասարդ էր նա: Արտայայտութիւնը աչքի ընկնող էր. մի տեսակ լուրջ ուրախութիւն էր նրան, որից նա ամաչում էր և որ աշխատում էր զըսպել:

Նա նստեց ձաշի, որ պահել էին նրա համար կրակի վրայ և երբ կինը, երկար լուութիւնից յետոյ, թոյլ ձայնով հարցրեց, «Ի՞նչ նորութիւն կայ». նա կարծես դժուարանում էր պատասխան տալու:

— «Բարթ է, թէ չար» հարցրեց կինը, շտապեցնելով:

— «Չար», պատասխանեց նա:

— «Ուրեմն քանդուեց, պրծաւ մեր առնը...»

— Ո՛չ, կառուիւն, գեռ յոյս կայ»:

— «Եթէ նա մեղմանայ», ասաց կինը զարմացած, յոյս կայ: «Եթէ այդպիսի մի հրաշք տեղի ունենայ—իհարկէ, յոյս կայ»:

— «Նրա բանը մեղմանալուց անցիլ է այժմ», ասաց ամուսինը: «Նա մեռել է արդէն»:

Կինը մի քնքոյշ ու բազմահամբեր արարած էր երևում, եթէ միայն մեղ չի սխալեցնում նրա գէժըր արտայայտութիւնը: Սակայն նա զո՞հ մնաց, լսելով ամուսնու ասածը և իր սրտի բաւականութիւնը արտայայտեց ձեռները միացնելով: Իսկոյն և ի՞թ նա փոշմանեց և տրտմեց, բայց առաջին զգացմունքն էր, որ նրա սրտիցը ըղիկեց:

— «Այն կէս-հարրած կնոջ ասածը, որ անցեալ երեկոյ, երբ ես ուզում էի տեսնել նրան ու մի շարաթ յետաձգել տալ մեր պարտորը, ուրեմն նրա ասածը ճիշտ է եղել, իսկ ես կարծում էի, թէ պարզապէս չկամեցաւ ինձ տեսնել: Ո՛չ միայն շատ վատ է եղել ուրեմն նրա դրութիւնը, այլ ուղղակի մեռնելիս է եղել մարդը»:

— «Ո՞ւրիս է լինելու կտակած մեր պարտքը»:

— «Չգիտեմ: Բայց մինչ այս մինչ այն, մենք էլ կը պատ-  
րաստենք փողը, և եթէ մինչև անգամ չհասցնենք էլ, զժուար  
թէ նրանից էլ անխիղճ մի պարտատէր լինի վիճակուած մեզ,  
յանձին նրա ժառանգի: Այս գիշեր, յամենայն դէպս, մենք կա-  
րող ենք հանգիստ քնել Կարոլին»:

Այն, ասացէք ինչ որ կ'ուզէք, բանն այն է, որ նրանց  
սրտի քարը կարծես վերցրին: Երեխայոց դէմքերը, որ հա-  
ւաքուած իրանց ծնողաց շուրջը, լուռ ականջ էին դնում, թէ-  
պէտև ոչինչ չէին հասկանում նրանց խօսակցութիւնից, — պայ-  
ծառացան: Առհասարակ ամբողջ տունը բախտաւորուեց նրա  
մահով: Այդ դէպքից առաջացած միակ զգացմունքը — ուրախու-  
թիւնն էր անկասկած:

— «Ճոյց տուր ինձ մահի հետ կապ ունեցող գոնէ մի հա-  
տիկ քնքշութիւն», ասաց Սկոուշը. «թէ չէ այն մութ սենեա-  
կը, որից այժմ դուրս եկանք, միշտ պիտի մնայ աչքիս առա-  
ջը, Ոգի»:

Ոգին առաջնորդեց նրան քաջ յայտնի միբանի փողոցնե-  
րով. ճանապարհին Սկոուշը այս կողմ այն կողմ էր նայում  
զինքը գտնելու նպատակով, բայց ոչմի տեղ ինքը չէր երևում:  
Նրանք մտան խեղճ Բոր Կոէզլիտի տունը, որ արդէն մի ան-  
գամ այցելել էր նա և տեսան որ մայրն ու երեխերքը նստո-  
տել են կրակի շուրջը:

Անձայն, անշուղի: Չարածճի փոքրիկ Կոէզլիտները ար-  
ձաններն նման նստոտած էին մի անկիւնում և նայում էին  
Պետրոսին, որի առաջը մի զիբք կար: Մայրն ու աղջկերքը  
կար էին անում նոյնպէս անձայն, անշուղի:

«Եւ առեալ մանուկ մի կացոյց ի մէջ նոցա. և ընկա-  
լեալ զնա ի գիրկս իւր, ասէ ցնոսա: Որ մի անգամ յայսպիսի  
մանկտոյն ընկալցի, յանուն իմ, զիս ընդունի և որ զիս ըն-  
դունեցի, ոչ զիս ընդունի՛ այլ զայն՝ որ առաքեացն զիս»:

(Մարկոս, թ. 36)

Որտեղ էր լսել Սկոուշը այս խօսքերը: Երպում հօ  
չէր: Արդեօք, այն տղան հօ չէր կարգացել այդ խօսքերը, երբ  
ինքն ու Ոգին ներս էին մտնում շէմքից: Եւ ինչո՞ւ չի շարու-  
նակում այլևս:

Մայրը իր կարը զցեց սեղանի վրայ և ձեռքը դրեց երե-  
սին:

— «Այս գոյնն էլ մթնացրեց աչքերս» ասաց նա: «Այդ  
գոյնը... Ա՛խ խեղճ Տայնը-Տիմ...»

— «Կրկին պարզուեցան աչքերս», ասաց Կոէզլիտի կինը:

«Ճրագի լուսիցն է թուլանում իմ տեսողութիւնս, իսկ ես չեմ կամենում, որ ձեր հայրը, տուն գալով, նկատի աչքերիս թուլութիւնը, չեմ ուզում. նրա գալու ժամանակն էլ պէտք է որ մօտ լինի»:

— «Անցել էլ է», պատասխանեց Պետրոսը զիրքը ծալելով: «Վերջին օրերս կարծեմ նա սովորականից աւելի դանդաղ է ման գալիս, մայրիկ»:

Կրկին լուծիւն: Վերջապէս մայրը հաստատ ու ուրախ ձայնով, որ միայն մի անգամ թուլացաւ, ասաց.

— «Այո, որդուն շալակած—ուրիշ էր նրա ման գալը, Տայնը Տիմին շալակած—շատ արագ էր ման գալիս իսկապէս»:

— «Ես էլ եմ յիշում. այո, յաճախ էր հայրիկը շալակում նրան», գոչեց Պետրոսը:

— «Ես էլ», բացագանչեց միւսը, և ապա ամենքն էլ:

— «Եւ նա շատ թեթեւ էր» ասաց մայրը, իր կարը շարունակելով, «հայրն էլ այնպէս էր սիրում նրան, որ շալակած ման ածելուց երբէք չէր նեղանում: Ահա հայրներդ էլ դռանն է»:

Կինը շտապեց դիմաւորել և ներս մտաւ փոքրիկ Բորը, շալը վզովը տուած, որ անհրաժեշտ էր խեղճ մարդուն: Թէյը նրա համար պատրաստ էր վառարանի առաջին, ամենքն էլ աշխատում էին որքան կարելի է աւելի ծառայութիւն անել նրան: Ապա երկու փոքրիկները բարձրացան նրա ծնկներէ վրայ և ամեն մէկը իր փոքրիկ թուշը հօր երեսին դնելով, կարծես, ուզում լինէր ասել. «ոչինչ, հայրիկ, դարդ մի անիլ»:

Բորի սիրտը բացուեց դրանց հետ և նա ուրախ-ուրախ խօսակցում էր ամենքի հետ: Նա նայեց սեղանի վրայի կարին և զովեց կնոջ ու աղջիկների շնորհքն ու աշխատասիրութիւնը: «Կիրակի օրուանից շատ վաղ կը վերջացնէք», ասաց նա:

— «Կիրակի... Ուրեմն, Ռոբերտ, դու այսօր գնացել ես», ասաց կինը:

— «Այո, սիրելիս», պատասխանեց Բորը: «Ափսոս, որ դու էլ չկայիր: Այնպիսի մի կանաչ տեղ է, որ քէֆդ կը գար: Բայց դեռ շատ անգամ ես տեսնելու: Ես նրան խոստացել եմ ամեն կիրակի գնալ այնտեղ: Իմ խեղճ, խեղճ երեսայ», գոչեց Բորը: «Սեղճ իմ բալիկ»:

Յանկարծ նրա սիրտը լցուեց և նա չկարողացաւ զսպել իր հեկեկանքը: Իր զաւակի այդքան մօտ լինելն էր, երևի, պատճառը, որ նա չկարողացաւ զսպել իրան:

Նա դուրս եկաւ սենեակից և սանդուխներով բարձրացաւ վերին յարկի ուրախ ու լուսաւոր սենեակը, որ զարդա-

րուած էր կանաչ ճիւղերով: Այդտեղ մի աթոռ կար երեխայի մօտ դրած. նկատուում էր, որ մի քիչ առաջ էլ այդտեղ նստող է եղել: Խեղճ Բորն էլ նստեց ու միքիչ ուշքի գալուց ու զինքը հաւաքելուց յետոյ, համբուրեց փոքրիկ երեսը: Ապա ցած իջաւ արդէն հաշտուած իր ճակատագրի հետ:

Հաւաքուեցան կրակի շուրջը և սկսեցին զրոյց անել, մինչդեռ մայրն ու աղջկերքը շարունակուում էին իրանց կարը: Բորը պատմեց նրանց Սկոուշի քրոջ-որդու անչափ բարութեան մասին, որին հազիւ մի անգամ էր միայն տեսել, բայց որը, այսօր փողոցում պատահելով և նկատելով որ միքիչ... շատ քիչ-տխուր է, ինչպէս որ մի ժամ առաջ էր, օրինակ— հարցրեց, թէ ի՞նչ դժբախտութիւն է եկել գլխին: Եւ, որովհետեւ զժուար թէ նրա նման դուրեկան մարդ մէկն էլ դստուի, Բորը պատմեց նրան գլխին եկածը: Իսրտէ ցաւում եմ, «պ. Կռէչիտ, ասաց նա, իսրտէ ցաւակցում եմ ձեզ ու ձեր բարի կնոջը: Բայց դէ՛ որտեղից էր նա իմացել այդ»:

— «Ի՞նչն էր որտեղից իմացել, սիրելիս»:

— «Բա՛, որ դու բարի կին ես», պատասխանեց Բորը:

— «Ամենքն էլ գիտեն այդ», ասաց Պետրոսը:

— «Հէնց այդ է որ գտար, որդիս», գոչեց Բորը: «Անպայման ամենքն էլ գիտին: Իսրտէ ցաւակցում եմ», ասաց նա, «ձեր բարի կնոջը: «Եթէ մի որևէ բանով կարող եմ ծառայութիւն արած լինել ձեզ», ասաց նա, իր այցետոմսը տալով, «եկէք ինձ մօտ, խնդրեմ, ահա ձեզ հասցէն»: \*Արդ, ոչ թէ այն օգնութիւնն է գնահատելի որ նա կարող է անել ձեզ, գոչեց Բորը, ոչ այնքան այդ օգնութիւնը, որքան նրա քաղցր խօսքն է հիացնում ինձ:

Այնպէս էր թւում ինձ, թէ այդ մարդը ճանաչում էր Տայնը-Տիմին և իսկապէս ցաւակցում էր մեզ:

— «Հաւատացած եմ որ դա մի բարեհոգի մարդ է», ասաց տիկ. Կռէչիտը:

— «Աւելի ևս կը համոզուէիր, սիրելիս, եթէ տեսած ու խօսած լինէիր հետը: Չգարմանս, եթէ նա Պետրոսին մի լաւ պաշտօնի դնի»:

— «Մէկ լսի՛ր է՛, Պետրոս», ասաց տիկ. Կռէչիտը:

— «Այն ժամանակը», գոչեց աղջիկներից մէկը, «Պետրոսը իրա համար մի լաւ «ընկեր» կը գտնի և կը ջոկուի մեզնից»:

— «Չահլա մի տանի՛ր դէ՛», պատասխանեց Պետրոսը դէմքը ծամուելով:

— «Մի օր հէնց այդ էլ, իհարկէ, կարող է պատահիլ», ասաց Բորը. «Թէպէտ մինչև այդ դեռ շատ ժամանակ կայ»:

Գեկտեմբեր, 1904.

սիրելիս: Բայց ի՞նչպէս, կամ ե՞րբ և բաժանուելու լինենք իրարից, ես հաւատացած եմ որ մեզնից ո՛չ ոք չպիտի մոռանայ խեղճ Տայնը-Տիմին, որովհետև նա եղաւ առաջինը որ անջատուեց մեզնից. ուրեմն չմոռանանք նրան երբէք»:

— «Երբէք, հայրիկ», գոչեցին ամենքը:

— «Ես շատ բախտաւոր եմ», ասաց փոքրիկ-Բորը, «շատ բախտաւոր»:

Տիկին Կոէչիտը համբուրեց նրան, համբուրեցին և աղջիկերքը, իսկ Պետրոսը սեղմեց նրա ձեռքը: Ո՛ր, դու, Տայնը-Տիմի մանկական հոգի, Աստուածանից էիր դու:

— «Ոգի», ասաց Սկուռը, «ես զգում եմ, որ մօտեցել է մեր անջատման ժամը: Զգում եմ, թէպէտ չգիտեմ ինչից կամ ի՞նչպէս: Աստ ինձ, ո՞վ է այն մեռած մարդը, որ մենք տեսանք»:

Ապագայ Ծննդեան Ոգին առաջուան պէս առաջնորդեց նրան, — թէպէտ, կարծես, այժմ արդէն մի ուրիշ ժամանակ էր (իսկապէս վերջին տեսիլքների մէջ, կարծես, ո՛չ մի հետևողականութիւն չլինէր, բացի մի հանգամանքից, այն է, որ այդ բոլոր տեսիլքներն էլ ապագային էին վերաբերում) — առաջնորդեց նրան գործի մարդկանց մի ժողովավայր, ուր, սակայն, բացակայ էր ինքը, Սկուռը: Ոգին, զլուխը վերցրած գնում էր անդադար կարծես դէպի մի ցանկալի վախճան. բայց Սկուռը խնդրեց նրան մի բոլորէ կանգ առնել:

— «Այս բաղը», ասաց Սկուռը, «որի միջով մենք թռչում ենք այժմ, վաղուց է որ իմ մշտական պարապմունքիս տեղն է: Ես տեսնում եմ այն տունը: Թող մի նայեմ, թէ ի՞նչ եմ լինելու ես ապագայում»:

Ոգին կանգ առաւ. նրա ձեռքը միւս կողմն էր ուղղուած:

— «Տուն» հակառակ կողմն է, դոչեց Ոգին, ինչո՞ւ ես այդ կողմը ցոյց տալիս:

Անխնայ մատը չփոխեց իր ուղղութիւնը:

Սկուռը վազեց իր գրասենեակի պատուհանի մօտ և ներս նայեց: Դա այժմ էլ գրասենեակ էր, բայց իր գրասենեակը չէր: Կահաւորութիւնը իրանը չէր. ինքը չէր և աթոռի վրայ նստողը: Ուրուականի մատը այժմ էլ չէր փոխում իր նախկին ուղղութիւնը:

Նա կրկին հասաւ Ուրուականին և զարմացած, թէ ինչո՞ւ և ո՞ւր են գնում, հետևեց նրան մինչև որ հասան մի երկաթէ դռան: Մտնելուց առաջ նա մի կանգ առաւ ու աչք ածեց շուրջը:

Գերեզմանատուն էր: Ուրեմն այն ողորմելին, որի անու-

նը այժմ պիտի լսի, այստեղ է թաղուած... հողի տակ: Նրան վայել տեղ էր այդ: Շրջափակուած տներով, ծածկուած որոմու-խոտով, որ ժահուան և սչթէ կեանքի արտադրութիւն են, ամեն կողմը գերեզմաններ և զգուելի պարարտութիւն: Իսկապէս նրան վայել մի տեղ...

Ոգին կանգ առաւ. գերեզմանների մէջ ու մատնացոյց ա-րաւ նրանցից մէկը: Նա դողալով մօտեցաւ: Ուրուականը նոյնն էր, անփոփոխ, բայց սարսափում էր, մի նոր, խորհրդաւոր նշանակութիւն գտնելով նրա տեսքում:

— «Առաջ քան մօտենամ այդ բարին, որ դու մատնացոյց ես անում», ասաց Սկուռը, «պատասխանիր հետևեալ հարցիս. այս բոլորը անպատճառ պիտի տեղի ունենայ ապագայում, թէ միայն կարճ է տեղի ունենալ»:

Ոգին շարունակում էր մատնացոյց անել նոյն գերեզմանը, որի մօտ կանգնած էր:

— «Մարդուս այս կամ այն ընթացքն է, որ մի որոշ վախ-ճանի է հասցնում նրան, եթէ մարդ յամառում է իր մի անգամ ընտրած ճանապարհում», ասաց Սկուռը: «Իսկ եթէ մարդ փո-խի իր ընթացքը—վախճանն էլ, յետևապէս, պիտի փոխուի: Ասան ինձ, որ այսպէս կը լինի և քո ցոյց տուածներդ»:

Ոգին անշարժ էր, ինչպէս միշտ:

Սկուռը, դողդողալով, մօտեցաւ նրա ցոյց տուած գերեզ-մանին և անուշադրութեան մատնուած գերեզմանաքարի վրայ կարդաց իր սեփական անունը. էբենազար Սկուռը:

— «Այն մահճակալի վրայի մարդը քն էի ուրեմն», գոչեց ծնկաչոք Սկուռը:

Մատը գերեզմանի վրայից դէպի նրան դարձաւ և կրկին — յետ:

— «Ո՛չ, Ոգի, ո՛, սչ, սչ...»

Մատը անշարժ էր:

— «Ոգի», գոչեց նա, ամուր բռնելով նրա շորը, «լսի՛ր ինձ: Ես՝ էլ առաջուայ մարդը չեմ: Ես չեմ կամենում այսու-հետև այն մարդը լինել, որ էի քեզ տեսնելուց առաջ: Իսկ եթէ այլևս սչմի յոյս չկայ ճակատագիրս փոխելու—էլ ինչո՞ւ ես ցոյց տալիս ինձ այս ամենը»:

Այստեղ առաջին անգամ ձեռքը, կարծես, շարժուեց:

— «Բարի Ոգի», շարունակեց նա մնալով ծնկաչոք, «դու որ միջամտում ու խղճում ես ինձ, ասա ինձ որ դեռ յոյս կայ փոխելու ճակատագիրս, կենցաղիս եղանակը փոխելով:

Ազնիւ ձեռքը—դողաց:

— «Այսուհետև ես կը յարգեմ Ծննդեան տօնը իմ սրտում»

և կ'աշխատեմ ամեն տարի տօնել: Ես իմ կեանքիս առաջնորդ կ'ընտրեմ Անցեալ, Ներկայ ու Ապագայ Ծննդեան Ոգիներիդ և երբէք չեմ մոռանայ ձեր տուած դասը: Ո՛հ, ասան, ինձ, որ հընարաւոր է ջնջել այս քարի վրայ գրածը»:

Այո հոգևարքի ժամին նա բռնեց Ուրուականի ձեռքը, որ աշխատում էր ազատուել նրանից. բայց նա հեշտ բաց թողնողը չէր: Ոգին յետ մղեց նրան վճռողաբար:

Յուսաբեկուած, վերջին անգամ պաղատագին ձեռները բարձրացնելով, նա մի փոփոխութիւն նկատեց Ուրուականի հանդերձի ու ձևի մէջ: Նա կուչ եկաւ, թուլացաւ, փոքրացաւ ու մահճակալի սիւնը դարձաւ:

Գլուխ Ե.

### Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Այո, և այդ սիւնը իր սեփական մահճակալինն էր: Մահճակալն էլ էր իրանը, սենեակն էլ: Ամենից լաւն ու մխիթարականն այն էր, որ ապաշխարելու ժամանակ էլ ունէր ինչքան ասես:

— «Պիտի ապրեմ Անցեալում, Ներկայում, և Ապագայում», կրկնեց Սկոուլը, վերկենալով տեղից: «Թող այդ երեք Ոգիներն էլ գործեն իմ մէջս: Ո՛հ, Յակոբ Մառլէյ: Փառք Աստըծուն ու Ծննդեան տօնին: Ծնկաչոք եմ փառաբանում, Յակոբ, ծնկաչոք»:

Նա այն աստիճան թեւաւորուած ու ողորուած էր իր բարի տրամադրութիւնովը, որ նրա խզուած ձայնը հազիւ հազ էր հասցնում նրա հարցերի պատասխանները: Ոգու հետ ունեցած իր վերջին ընդհարման միջոցին այնքան էր լացել ու կոծել, որ նրա երեսի արասսուքը դեռ չէր չորացել:

— «Սրանք հանուած չեն», գոչեց Սկոուլը, ձեռքը գցելով անկողնի վարագոյրներից մէկին, «սրանք հանուած չեն իրանց օղակների հետ միասին: Սրանք իրանց տեղումն են, ես էլ եմ այստեղ և այն բաների ստուերները, որ պատահելու էին, կարող են դեռ ցրուել: Կը ցրուեն, պիտի ցրուեն, գիտեմ»:

Նրա ձեռները այս միջոցին հագուստովն էին զրաղուած. շրուումուռ անելով, աստառն ի վեր հագնելով, այս կամ այն կողմ քաշելով, ամեն կերպ ծալծլելով ու օտարոտի ձև տալով:

— «Զգիտեմ, թէ ի՞նչ անեմ», գոչեց Սկոուլը ծիծաղախա-

որն և միաժամանակ լալազին ձայնով. և այդ ժամանակ մի կատարեալ Լաօկօօն ներկայացնելով, երկար գուլպաները մարմընովը տուած: «Փետուրի նման թեթև եմ, հրեշտակի նման բախտաւոր, աշակերտի նման ուրախ: Գլուխս պտոյտ է գալիս, կարծես հարբած լինեմ: Ուրախ Ծնունդ ամենքին ու բախտաւոր Նոր տարի: Հուռո՛ւմ, հա՛...»

Նա թռչկոտել էր, զնացել դահլիճը և այժմ կանգնած էր այնտեղ անհանգիստ:

— «Ահա այն թասը, որի մէջն էր ճաշը», գոչեց Սկոռւջը, կրկին ցնցուելով ու պտտուելով վառարանի շուրջը: «Ահա այն դուռը, որի միջով ներս մտաւ Յակոբ Մառլէյի Ուրուականը: Ահա այն անկիւնը, որ Ներկայ Ծննդեան Ոգին նստած էր: Ահա այն պտտուհանը, որից ես տեսայ թափառող Ոգիներին: Ամեն ինչ իր տեղն է, ամենն էլ իսկ որ տեղի է ունեցել: Հա-հա-հա...»

Իսկապէս դա մի փառաւոր ծիծաղ էր, ևս առաւել նշանաւոր այն պատճառով, որ բղխում էր մի մարդու հոգուց, որ արդէն քանի-քանի տարի չգիտեր, թէ ինչ բան է ծիծաղ ասածը: Եւ դա ճանապարհ էր բաց անում մի շարք փայլուն ծիծաղների համար:

— «Զգիտեմ թէ ամսի ո՞ր օրն է», ասաց Սկոռւջը: «Զգիտեմ, թէ ո՞րքան ժամանակ եմ անցկացրել Ոգիների հետ: Ոչինչ չգիտեմ: Կատարեալ երեխայ եմ դարձել: Բայց միաս չունի: Դարդ չեմ անում: Թող երեխայ դառնամ: Հուռո՛ւմ, հա՛...»

Եկեղեցու զանգերի ուրախ ներդաշնակութիւնը, որի նըմանը նա երբէք չէր լսած, — ընդհատեց նրա հիացմունքը: Զանգի-զանգ եկէք ժամ, զանգի զանգ, եկէք ժամ... Օ՛, ինչ փառաւոր է, ի՛նչ փառաւոր:

Նա վազեց դէպի պտտուհանը, բաց արաւ ու դուրս հանեց գլուխը: Ո՛չ ամպ, ո՛չ մառախուղ. պարզ, լուսաւոր, ուրախ թարմ ու ցուրտ օր է: Երկնակամարը, երկնային օդը — թարմ ու քաղցր, զանգահարութիւնը — ուրախ: Օ՛հ, փառաւոր, փառաւոր...

— «Ի՞նչ օր է այսօր», գոչեց Սկոռւջը, դիմելով տօնական շորը հագին մի տղայի, որ այդտեղ անցուդարձ էր անում գուցէ հէնց նրան դիտելու նպատակով:

— «Հ՞ը», հարցրեց տղան, ինչքան որ ասես զարմացած:

— «Ի՞նչ օր է այսօր, լաւ տղայ», ասաց Սկոռւջը:

— «Այսօր», պատասխանեց տղան, «դէ Ծննդեան տօնն է, էլի՛»:

— «Ծննդեան տօնն է», ասաց ինքն իրան Սկոռւջը: «Ու-

րեմն ես քնով չեմ անցրել: Ուրեմն Ոգիները այն բոլորը մի գիշերումն են արել: Դէ նրանք ինչ որ ուզենան կարող են անել: Իհարկէ, կարող են: Իհարկէ, կարող են: Էյ-հէյ, լաւ տըղայ»:

—«Հը», պատասխանեց տղան:

—«Ճանաչո՞ւմ ես այն հաւալածառի խանութը, երկրորդ փողոցի անկիւնում», հարցրեց Սկոուշը:

—«Պէտք է որ ճանաչեմ», պատասխանեց տղան:

—«Ի՞նչ խելօք տղայ ես եղել», ասաց Սկոուշը: «Երեկ լի տղայ, չգիտե՞ս, ծախուել է, արդեօք, այն մրցանակի հնդուհաւը, որ կախ էր այնտեղ: Ոչ թէ այն փոքր—մրցանակ ստացածը, այլ այն մեծը»:

—«Ո՞րը, այն որ ինձ չափ չկա՞յ», հարցրեց տղան:

—«Ի՞նչ շնորհալի երեխայ է», ասաց Սկոուշը: «Ձուարձութիւն է սրա հետ խօսալը:—Այո, դոչադ»:

—«Այժմ էլ այնտեղ կախ է», պատասխանեց տղան:

—«Իսկապէ՞ս, ասաց Սկոուշը, դէ, ուրեմն գնայ, առ»:

—«Ձեռ ես գցել դու ինձ»... գոչեց տղան:

—«Ձէ, չէ», ասաց Սկոուշը, «ես լուրջ եմ խօսում: Գնա, սառ ու ասա բերեն այստեղ, որ ասեմ իրանց, թէ ո՞ւր պիտի տանեն: Մշակի հետ յետ արի, ես բեզ մի շիլինգ փող կը տամ: Իսկ եթէ հինգ բոպէն չըրացած յետ գաս—կէս կոտն կը տամ»:

Տղան գնդակի նման թռաւ: Ամենահմուտ ձեռքով գցած գնդակն էլ նրանից արագ չէր լինի:

—«Ուղարկելու եմ Բոր Կոէչիտին», շշմաց Սկոուշը: ձեռները տրորելով ու ծիծաղից թուլանալով: «Նա չի իմանայ, թէ ո՞վ է դրկել: Երկու Տայնը-Տիմի չափ կը լինի: Մի այսպիսի հանաք Մոլլա-Նասրէզինն էլ չի արել...»

Հասցէն գրելիս նրա ձեռքը դողում էր, բայց և այնպէս նա գրեց մի կերպ և սանդուխներով իջաւ մուտքի դուռը բանալու և այնտեղ ներքեում սպասելու հաւալածառի մշակին: Այդտեղ կանգնած, սպասելիս, նրա աչքովն ընկաւ դռան մուրճը:

—«Մինչև մահս պիտի սիրեմ այս մուրճը», գոչեց Սկոուշը, ձեռքը վրէժն դնելով: «Առաջ հագիւ թէ նայելիս լինէի նոյնիսկ սրա վրայ: Ի՞նչ ազնիւ է դէմքի արտայայտութիւնը: Մի զարմանալի մուրճ է սա:—Ահա և հնդուհաւը: Եալլա, ո՞ւր մնացիք դուք: Ուրախ Ծնունդ ձեզ»:

Բայց հնդուհաւ եմ ասում, հա՛: Այդ մեծութեան թոչունը

երբէք չի կարող ոտների վրայ կանգնել: Իսկոյն և եթ ոտները նրա տակին կը փշոտուեն կնքամոմի նման:

— «Բահ, անհնար է մինչև Կեօմդէն-Տաուն շալակած տանել», ասաց Սկոուլը: «Մի կառք վերցրէք»:

Այս խօսքերը նա հազիւհազ կարողացաւ արտասանել, ծիծաղից խեղդուելով, հռհռալով վճարեց հնդուհաւի փողը, ծիծաղից թուլանալով տուեց կառքի փողը, ծիծաղից պայթելով տուեց երեխային խոստացածը, և երբ վերադարձաւ, ընկաւ բազկաթոռի վրայ, այնքան ծիծաղեց, որ շունչը կտրուեց ու սկսեց հեծկլտալ:

Երեսն ամիսիւր հեշտ չէր նրա համար, որովհետև ձեռները դեռ դողում էին սաստիկ, իսկ այդ գործը ուշադրութեամբ անելու բան է, ինչպէս յայտնի է: Բայց եթէ քթի ծայրն էլ կտրէր նոյնիսկ, մի կտոր կպչուն սպեղանի կը կպցնէր ու իսկի էլ դարձ չէր անիլ:

Նա հագաւ իր ամենալաւ շորերն ու վերջապէս փողոց դուրս եկաւ: Ժողովուրդը դուրս էր թափուում տներից, ինչպէս որ նրան ցոյց էր տուել ներկայ Ծննդեան Ոգին: Ձեռքերը մէջքին դրած, ժպտերես, Սկոուլը, անցնելիս անտղում էր ամեն մէկին հիացած: Նրա հայեացքը այն աստիճան անդիմադրելի դուրեկան էր, որ երեք-չորս քէֆները-քեօք տղայ ասացին բարի լոյս, պարոն, շնորհաւոր Ծնունդ: Եւ յետոյ Սկոուլը յաճախ կրկնում էր, որ նա երբէք այդպիսի ուրախ ձայն չէր լսած:

Միքանի քայլից յետոյ նա պատահեց դէմուդէֆն եկող մի վայելչակազմ պարոնի, որ նախորդ օրը եկել էր իր գրասենեկը և ասել. «Կարծեմ, Սկոուլ ու Մաուլէյին է»: Նրա սիրտը ճնշուեց, մտածելով, թէ հանդիպելիս ի՞նչ աչքով է նայելու իրան այդ պարոնը, բայց այժմ նա գիտէր իր անելիքը:

— «Ազնիւ պարոն», ասաց Սկոուլը, աւելացնելով իր քայլըն ու բռնելով պարոնի զոյգ ձեռքը: «Ինչպէ՞ս էք դուք: Յոյս ունեմ, որ յաջողութիւն ունեցաք երէկ. շատ լաւ բան էք անում. Ծնորհաւորում եմ, Ուրախ Ծնունդ, պարոն»:

— «Պարոն Սկոուլ»:

— Այո, ասաց Սկոուլը: «Այդ է անունս, վախենում եմ որ հաճելի չլինի ձեզ: Թոյլ տուէք ներողութիւն խնդրել ձեզնից: Եւ չէք բարեհաճիլ, արդեօք...» այստեղ Սկոուլը փսփսաց նրա ականջին:

— «Տէր-Աստուած», գոչեց պարոնը շնչասպառ: «Հանաք հօ չէք անում, յարգելի պ. Սկոուլ»:

— «Մնդրեմ», ասաց Սկոուլը: «Եւ ոչմի քող-կողպէկ պա-

կաս: Հաւատացնում եմ ձեզ, որ դրանով ես միայն իմ առաջ-  
ուայ պարտքերս եմ վճարում: Արէք ինձ, խնդրեմ, այդ շնոր-  
հը»:

— «Ազնիւ պարոն», ասաց միւսը, նրա ձեռքը սեղմելով.  
«չգիտեմ ինչո՞վ բացատրել այդպիսի առատու...»:

— «Ո՛չ մի խօսք այլևս, խնդրեմ», պատասխանեց Սկոուշը:  
«Համեցէք ինձ մօտ, խնդրեմ. կը գա՞ք»:

— «Կը գամ», գոչեց պարոնը և պարզ է որ կատարելու  
էր իր խոստումը:

— «Շնորհակալ եմ», ասաց Սկոուշը: «Անչափ պարտաւո-  
րեցրիք ինձ: Յիսուն անգամ շնորհակալ եմ ձեզնից: Օրհնեալ  
լինիք»:

Նա դնաց ժամ, զքօսնեց փողոցներում, նայեց այս կողմ  
այն կողմ գնացող եկող ժողովուրդին, գգուեց երեխայոց գլուխ-  
ները, հարց ու փորձ արաւ մուրացկաններին, ցած նայեց խո-  
հանոցները \*), վերը նայեց պատուհաններին. այդ ամենը նը-  
րան գուարճութիւն էր պատճառում: Երբէք նա չէր երագել,  
որ մի որևէ զքօսանք, կամ մի որևէ ուրիշ բան, կարող լինի  
այդ աստիճան բախտաւորեցնել իրան: Ճաշից յետոյ նա իր  
քայլերն ուղղեց քրոջ-որդու տունը:

Տասը-տասնուհինգ անգամ նա անցաւ դռան մօտով, սիրտ  
չանկելով բազխել դուռը: Վերջը մօտեցաւ ու բազխեց:

— «Տանն է պարոնը, սիրելիս», ասաց Սկոուշը աղախ-  
նին. «Ի՛նչ սիրուն աղջիկ ես, շատ»...

— «Այո՛, պարոն»:

— «Որտե՞ղ է, սիրելիս»:

— «Սեղանատանն է, պարոն, տիկնոջ հետ միասին: Հա-  
մեցէք վերև, հիւրասենեակը, խնդրեմ»:

— «Շնորհակալ եմ: Նա ինձ ճանաչում է», ասաց Սկոուշը,  
ձեռքը մեկնելով դէպի սեղանատան դուռը: «Ես կը մտնեմ  
այնտեղ սիրելիս»:

Զգուշութեամբ դուռը բանալով, նա ներսնայեց սենեակը:  
Նրանք սեղանն էին տնտղում, թէ կարգի՞ն է, արդեօք, ամեն  
ինչ. թէպէտ սեղանը պակաս տեղ չունէր, բայց դէ՛, նոր տուն  
դրածները միշտ նախանձախնդիր են լինում այդ հարցում, աշ-  
խատելով որ պակասութիւն չլինի:

— «Փռէ՞ր», ասաց Սկոուշը:

Սեղձ հարսը վեր թռաւ վախից:

\*) Անգլիական տներում խոհանոցները ներքևի յարկումն են լինում:  
Ծ. Թ.

— «Այս ռւմն եմ տեսնում, Տէր Աստուած», գոչեց Ֆռէզը:

— «Ես եմ քո բռնի-Սկոուշը: Եկել եմ ճաշի: Թոյլ ես տալիս ներս մտնել, Ֆռէզ»:

Թոյլ տանլ. դեռ լաւ է, որ բեռու ձեռքը դուրս չընկաւ ուժգին թափահարութիւնից: Հինգ ընդունում նա այնքան ընտելացաւ, կարծես տանը լինէր: Դժուար է երևակայել աւելի սրտազին ընդունելութիւն: Նոյն ընդունելութիւնը ցոյց տուեց հարսն էլ: Նոյնն արաւ Տոպէոն էլ, երբ որ եկաւ. նոյնը— հաստիկ բռնին, երբ որ եկաւ. նոյնը՝ և ամեն մի նոր ներս մտնող: Սքանչելի հասարակութիւն, հրաշալի խաղեր, փոխադարձ սէր ու յարգանք... Կատարեալ բախտաւորութիւն:

Յաջորդ առաւօտը վաղ նա եկաւ իր գրասենեակը: Օ՛հ, շատ վաղ: Մտքումը զրել էր այնքան վաղ գնալ գրասենեակ, որ Բոբ Կոչգիտին՝ ուշացած ներս մտնելիս բռնի: Ահա թէ ի՞նչ էր դրել մտքումը:

Այդպէս էլ արաւ, այն: Խփեց ժամի իննը—Բորը չկար: Բարոբդ անցաւ—Բորը չկար: Տամութ ու կէս ընդէ նա ուշ եկաւ իր ժամանակից: Սկոուշը դուռը բաց էր թողել, որ տեսնի նրան իր տակառանման որջը մտնելիս:

Դեռ ներս չմտած նա վերցրել էր զգակը, յետ տուել իր շալը: Մի ակնթարթում նա թռաւ իր աթոռի վրայ ու սկսեց գրիչը ճոճապահել, աշխատելով հանել լաց թողած ընդհանրի փոխարէնը:

— «Ա՛յ տղայ», մըթմըթաց Սկոուշը, աշխատելով իր սովորական ձայնը բանացնել, որքան որ հնարաւոր է. «Ի՞նչ ես ասում, որ օրուայ այս ժամանակն ես գրասենեակ գալիս»:

— «Ես ինքս գիտեմ մեղքս, պարոն», ասաց Բորը. «այն, իսկապէս ուշացել եմ»:

— «Ուշացել», կրկնեց Սկոուշը: «Այն, իհարկէ, ուշացել ես: Մէկ շնորհ բեր այստեղ, պարոն»:

— «Տարին մէկ անգամ է միայն պատահում այսպէս», առարկեց Բորը, դուրս գալով տակառից: «Այլևս չի կրկնուի այդ: Երէկ մի քիչ ուրախութիւն եսք արել, տէր իմ...»

— «Ահա թէ այժմ ինչ եմ ասելու քեզ, բարեկամս», ասաց Սկոուշը: «Ես այդպիսի բաների երկար համբերողը չեմ: Եւ այդ պատճառով», շարունակեց նա, վերկենալով աթոռից և այնպիսի ոյժով հրելով Բորին, որ նա կրկին, ետ-ետ գնալով, իր տակառն ընկաւ, «և այդ պատճառով անհա աւելացնում եմ ոտճիկդ»:

Բորը դողաց և՛ մօտենալով քանոնին՝ մի ընդէ մտադրուեց վերցնել ու Սկոուշի ճակատին ածել, ապա բռնել նրան

ու հաւար կանչել, որ հարեանները հաւաքուեն ու օգնեն իրան կապել այդ գծին:

— «Շնորհաւոր Ծնունդ, Բոբ», ասաց Սկոուլը խփելով նրա մէջքին. նրա լրջութիւնը այլևս կասկածի տեղ չէր թողնում: «Տայ Աստուած, որ այս անգամ Ծնունդը ուրախութիւնով տօնեն, ազնիւ բարեկամս, մինչև այժմ ես քեզ ուրախ օր չեմ տուել այսքան տարի: Ռոճիկդ աւելացնում եմ և այսուհետև կ'աշխատեմ չզլանալ քո բազմատանջ ընտանիքիդ համար ձեռքովս եկած օգնութիւնը, և հէնց այսօր մենք ձեր գործերը կը կարգադրենք երեկոյեան թէյի ժամանակ, Բոբ: Զաղ արա կրակները և իսկոյն ևեթ գնայ քեզ համար մի առանձին ածուխի—արկղ գնիր, Բոբ, կուէ գիտ»:

Բանից դուրս եկաւ որ Սկոուլը միայն խօսքով չէր լաւ մարդ դարձել: Նա իր խոստացածից շատ-ու-շատ աւելին կատարեց: Իսկ Տայնը-Տիմի համար (որ չէր մեռել) նա դարձաւ երկրորդ հայր: Նա դարձաւ բարի բարեկամ, բարի տէր, բարի մարդ, որի նմանը միայն հինաւուրց Լոնդոնն էր արտադրում, կամ ազնիւ հին աշխարհի մի ուրիշ լաւ, հին քաղաք, կամ գիւղաքաղաք: Ոմանք ծիծաղում էին նկատելով նրա փոփոխութիւնը, իսկ նա ուշադրութիւն չէր դարձնում, որովհետև նա բաւականին խելօք էր, որպէսզի հասկանար, որ այդ տեսակի մարդկանց համար բարի գործից ծիծաղելի բան չկայ աշխարհիս երեսին: Գիտենալով, որ այդպիսիները յամենայն դէպս կոյր պիտի լինեն, նա աւելի լաւ էր համարում, որ նրանց աչքերը ծիծաղից փակուեն, քան թէ հիւանդութիւնից, որ իհարկէ, աւել վատ էր: Իր սիրտն ուրախ էր և նա բաւական էր գրանով:

Նա այլևս ոչ մի յարաբերութիւն չունեցաւ Ոգիների հետ, բայց մինչև մահը չմոռացաւ նրանց տուած դասը: Միշտ նրա մասին ասում էին, թէ ոչոք Ծննդեան տօնը այնպէս չի տօնում, ինչպէս Սկոուլը: Երանի մեր ամենքիս մասին էլ կարելի լինի նոյնը կրկնել,—մեր ամենքիս մասին: Եւ ուրեմն, ինչպէս որ Տայնը-Տիմն ասաց, Աստուած օրհնի մեզ, ամենքիս»:

\*  
\* \*

Լուռ կնոց, սիրտ իմ. այս աշխարհում  
Դարդ ինացող չես գտնի.  
Մեզ պէսներին ջուրն է բերում,  
Ջուրն էլ մի օր կը տանի:

Գետի երեսն ընկած տաշեղ—  
Մենք գնում ենք հն առաջ...  
Հանգիստ չունինք և ոչ մի տեղ,  
Լսող չկայ մեր առաջ:

Լուռ կնոց, սիրտ իմ. ուրիշներին  
Ափսոս է մեր ցաւն յայտնենք.  
Դարդն ընկեր է, մեզ անմեկին,  
Մինչ գերեզման կը տանենք:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

## ԴԱՐԱԼԱԳԵԱԶ ԿԱՄ ՎԱՅՈՑ ՁՈՐ \*)

Մարտիրոսի շինական հասարակութիւնը սահմանակից է Նախիջևան գաւառին և գտնուում է Դարալագեազի արևելահարաւային լեռնաշղթաների—Քէչալ-դաղ (Ղանլի-քեօլ), Քիւքի դաղը, Սաֆարխան Սանգեառի, Շրէլտ և Համասուր-դաղ լեռների ծոցերում և նրանց ստորոտների հարթավայրերի վրայ և մասամբ Արփաշայի աջևձախ ափերի: Այդ լեռներից սկիզբն են առնում Արփաշայ, Ջուլ չայ, Ախսայ չայ և Մարտիրոս չայ վտակները, որոնք խոնոնում են նրան 16—17 վերստ հեռաւորութեան վրայ: Այդ հասարակութեան լեռներն ու գաշտերը վաղուց են զրկուել իրանց անտառներից ու մերկացել, բացի Ջուլի անտառաբաժինը, որի ծառերի փոխանակ միայն մացառներն են մնում: Ամենաբերրի և գեղեցիկ վայրերը պատկանում են Ջուլ գիւղի թուրքերին: Այդ հասարակութեան մէջ (ինչպէս և Քէչիշքեանդու հասարակութեան) թուրքերը և հայերը բնակուում են իրարից անջատ. առաջինները բնակուում են գլխաւորապէս Ախսա չայի և Ջուլ չայի մօտերում, իսկ հայերը Մարտիրոս չայի և նրա աջ կողմի—Ազատակի և Գոռի գաշտավայրերում:

Այդ հասարակութեան թուրքերը խիստ աղքատ են, բացի Ջուլ, Ջղաթայ և Հախլու գիւղերից, սակայն բոլորն էլ յայտնի են իրանց գողութեամբ, մանաւանդ Գիօմուր, Գեաբուդ, Ախսա, Ջուլ և Կաբախլու գիւղերի բնակիչները, որոնք բացի Դարալագեազու գիւղերին, հանգստութիւն չեն տալիս նաև Նախիջևան գաւառի մերձակայ գիւղերին ու հարստահարում իրանց սահմանների վրայ բնակուող Ջիրբայիլի թափառականներին ամառները:

Այս հասարակութիւնը բաղկացած է 18 գիւղերից, որոնցից 13-ը թուրքեր են, իսկ հինգը հայեր:

\*) Տես «Մուրճ», № 11.

Թուրք գիւղերի անունները և տների թիւը ամեն մի գիւղում.

	1886թ. այժմ տուն			1986թ. այժմ տուն	
1. Հախլու . . . . .	3	7	8. Պարաքեանդ . . . .	10	15
2. Եխտա . . . . .	38	46	9. Ղարախլու . . . . .	33	40
3. Գեօմուր . . . . .	38	47	10. Գարալար . . . . .	14	19
4. Պեմուրշիրար . . . . .	11	17	11. Պեարուդ . . . . .	19	25
5. Պաշալթի . . . . .	5	11	12. Մարաթուդ . . . . .	26	29
6. Աղաթայ . . . . .	13	19	13. Չիրախլու . . . . .	5	8
7. Աուլ . . . . .	98	116			

Այժմ ծանօթանանք հայ գիւղերի հետ:

Մարտիրոս չայը սկիզբն առնում է Սաֆարխան Սանգեանի լեռնից ու հարաւից դէպի հիւսիս ուղղութեամբ հոսելով միանում է Արփաշային: Այդ վտակի ակունքներից եօթը վերստ հեռաւորութեան վրայ, նրա աջ ափին գրուած է Մարտիրոս գիւղը, իսկ ձախ ափին տասնհմէկ վերստ հեռաւորութեան վրայ, ձորի մէջ Փաշալու գիւղը: Փաշալուի միջով անցնում է Նախիջևանու գուառի ճանապարհը: Տասներկու տարի է, որ Մարտիրոս գիւղից Փաշալու է փոխադրուել շինական կառավարութիւնը և հինգ տարիէ, որ բացուել է այստեղ միդասեան արքունական դպրոցը: Փաշալուի բնակիչները գաղթել են Սալմաստից: Գլխաւոր պարապմունքը երկրագործութիւնն է և անասնապահութիւնը: Գիւղից մի վերստ ներքև, ձորի մէջ, սկսել են խաղողի այգիներ էլ տնկել: Չնայելով որ այդ գիւղի հողերը արդիւնաւէտ են, այնուամենայնիւ թէ երկրագործութիւնը և թէ անասնապահութիւնը յետ է մնացել հարևան գիւղերից, շնորհիւ փաշալուցիների ծուլութեան, որով 13 տուն միայն հաց ծախու չեն առնում, մնացածները բոլորն էլ հացի կարօտութիւն ունին: քսան տներ էլ կան, որ լծկան չունին առանձնապէս իրանց դաշտերը հերկելու: Այդ գիւղում ամենմի հոգուն ութը փութ 17 ֆունտ հողէ հասնում, ընդամենը ջրային և անջրդի: Այգրատութեան մեծ պատճառը այն է, որ վարելահողերը անջրդի են, որը հեշտութեամբ կարելի էր վերացնել, եթէ փաշալուցիները փոխանակ ամեն ճիգ թափելով՝ իրար օրավարը խելու, աշխատէին իրանց «Հորկու» անունով իւրաից ջուր բերելու, ուր երկու բահ ջուր հօսում է անպէտք: Այդ ջուրը կարող էր առատապէս ոռոգել նրանց ցանքերը, ու բախտաւորացնել նրանց: Շատ ոչխար ունեցողը 50 հատից աւելի չունի. երկու տուն ունեն այդքան ոչխար. քսան հատ տաւարից էլ աւելի տաւարատէր չկայ: 1886 թուի

ընտանեկան ցուցակով Փաշալուն կազմում է՝ 67 տուն, իսկ այժմ՝ 120 տուն: Բնակիչների թիւը ընդամենը 884 հոգի է, որոնցից 460 հոգին արական են՝ 424-ը իրական: Ունին մի քահանայ, 20—23 հոգի գրագէտներ (եթէ չհաշուենք այժմեան ուսումնարանում սովորողներին), մի մանրունքի խանութ, վեց ջրաղաց, մի դարբնոց և մի ձիթահանք: Ապրում են ճոխ և աւելի մաքուր, քան Գնդեվազու հասարակութեան գիւղերը, մանաւանդ իրական սեռը, այնպէս, որ եթէ մի փաշալուցի կնոջ հագնելու շորերը ու պարանոցի դրամները ու արծաթեայ գօտին և այլն ծախենք, երկու Հէրհէրցու տուն կը կառավարէ:

Շրջապատում լինելով Գիօմուր, Գեաբուդ, Ախտա և Ջուլ գիւղերի թուրքերով, որոնց գլխաւոր պարագլուխը գողութիւնն է, ենթարկուած են նրանց կեղեքումներին ու հարստահարութեանը: Փաշալուցիները բարոյապէս յետինն են Մարտիրոսի հասարակութեան պիւղերից:

Ինչպէս ողջ դարալագեացիները, այնպէս էլ փաշալուցիները օգտուում են վարելահողերից սաստիկ անհաւասար կերպով, այսինքն մի տան մէջ կան քիչ թուով ընտանիքներ, բայց օգտուում են այնքան հողով, որը մնում է խոպան, չեն կաւորանում վարել, ցանել, իսկ միւսը ունի բազմաթիւ ընտանիք, սակայն կամ բնաւ հող չունի, կամ եթէ ունի էլ, շատ աննշան և անբաւարար. զրկուածները, գոռում գոչումով հարց են բարձրացնում հողերը բաժանելու, բայց սովորաբար հողաբաժանութեան իրաւունքը ոչ թէ այդ զրկուածների ձեռքն է անցնում, այլ միշտ հարուստ և ազդեցիկ մարդկանց:

Փաշալուցիները 1899 թ. կազմեցին համախօսական իրանց հողերը բաժանելու, բայց ահա թէ ինչով պսակուեցին ներանց յոյսերը: Այստեղ էլ զրկուած գիւղացիները երկար խորհրդածելով ընտրեցին իրանց միջից համախօսականով հինգ հոգի ամենաբարեխիղճ հարեաններից, հաւատարմատարներ, լիազօրներ (վէքիներ) վարելահողերը բաժանելու համար. բայց այդ լիազօրները, այն հողերը, որոնք պէտք է հասցնէին իրանց զրկուած հարեաններին, իրանց վերցրին, գիւղը դարձաւ խոտվութեան ու կոռւի ասպարէզ: Բողոքներ զնացին լիազօրների դէմ, տեղական ոստիկանութեանը: 1899 թուից մինչև 1904 թիւը մաքառելով, ուժասպառ լինելով, լոեցին ու մնացին տեղները, հաւաստի լինելով, որ արդար հողաբաժանութիւնը երբէք չի վերականգնուի իրանց մէջ:

Նախիջևանու գաւառի և Դարալագեաղի սահմանազօծ վրայ գտնուում է Մարտիրոս գիւղը, շրջապատ ունենալով արեւելքից Եազիւրտ և հարաւից Քէչալ-դաղ լեռները, Մարտիրոս չայի աջ ա-

փին: Գիւղի դիրքը ընդարձակ է և հիանալի: Ինչպէս Գնդիվազը իր բարձր դիրքից նայում է հարաւային Դարալագեազին, այնպէս էլ Մարտիրոսը երես առ երես նայում է Գնդիվազին ու հիւսիսային Դարալագեազի կանաչ լեռների կրճքին ու ձիւնապատ գագաթներին: Այդ երկու գիւղերի առաջ Վայոց Ձորը ներկայացնում է իր անհամար լեռների ու բլուրների ցուցահանդէսը: Գարնանից սկսած՝ մինչև ամառուայ վերջը, այդ գիւղը կախարդական է իր ծաղկաւէտ հովիտներով, ականակիտ և սառնորակ աղբիւրների շրերով, որի համար Վայոց Ձորին տիրող Պոօշ իշխանը ընտրել էր իրան ամարանոց: Շատերը կարծում են, որ հէնց այդ գիւղն է եղել Հոգոցիմ գիւղը, Յովսէփ կաթողիկոսի հայրենիքը, անմահացնելով իր հետ Հոգոցիմ անունը: Հին գիւղի աւերակները դեռ ևս չեն անհետացել, որի աւերակ եկեղեցին վերանորոգուելով մարտիրոսացիների ձեռքով, կանգնած է այժմեան Մարտիրոսի մէջ, մեծ աղբիւրի մօտ, որի վրայ կանգնած է հին ժամանակից մի մեծ խաչ քարի յիշատակարան, 5 արշին երկայնութեամբ:

1886 թուի ընտանեկան ցուցակով կազմում էր Մարտիրոսը 106 տուն, այժմ դարձել են 160 տուն: Բնակիչները թիւն է ընդամենը 1319 հոգի, որոնցից 681 իգական, իսկ 638 հոգի արական: Ինչպէս Դարալագեազի հայերի մեծամասնութիւնը, այնպէս էլ մարտիրոսցիները, գաղթել են Ստրպատականի Սալմաստ գաւառից 1828 թուին: Իբրև լեռնային գիւղ, ուռի և բարտի ծառերից բացի ուրիշ ծառեր չեն բուսնում այստեղ: Այգիների փոխարէն մարտիրոսցիները կարտոփիլ են ցանում ութը գիսիատին տարածութեան վրայ, որ լաւ աճում ու արդիւնք է տալիս, որով Մարտիրոսը անուանի է Դարալագեազում իր կարտոփիլով, գովելի է նաև իր համեղ պանրով: Յորենը ու գարին մէկին հինգ արդիւնք են տալիս լաւ տարին, մնացած տարիները ոչ աւելի քան մէկին երեք-չորս: Ամենից շատ ցանող գիւղացին այստեղ 7—10 բեռ սերմն է ցանում: Մարտիրոսցիների գլխաւոր աղքատութեան պատճառը հացի պակասութիւնն է, որը բաւարարութիւն չէ տալիս նրանց ու ստիպում է անասունները վաճառել, պարտքեր անել և այդ դրութիւնը ստիպում է նրանց յաճախել Ռուսաստան, որտեղ մարտիրոսցիները պարապում են մուրացկանութեամբ, նաև առևտրով: Ամեն աշուն, երբ վերջանում են դաշտային աշխատութիւնները, մարտիրոսցիները խումբ-խումբ դիմում են պանդխտութեան դէպի Ռուսաստան և գարունը գալուն պէս վերադառնում են ամեն մէկը 40—60 բուրլի գումար բերելով իրանց հետ, որով հայթայթում են իրանց կարիքը: Այդ գիւ-

ղից երկու տներ ընտանիքով գաղթել են Ռուսաստան, մէկը Եարոսլաւ միւսը Արմաւիր: Անասնապահութիւնը նոյնպէս նախանձեղի գրութեան մէջ չէ, այնպէս, որ 3—4 տներ ունեն միայն 100 գլուխ ոչխարներ, իսկ շատ տաւար ունեցողները 20-ից աւելի տաւար չունին: 160 տանից 30—40 տուն «լըծկան» տաւար չունին, ապրում են բանուորութեամբ իրանց վարելահողերը կիսարար տալով: Երկրագործութիւնը կատարուում է հին նահապետական ձևով, թէև 6—7 տուն ունին նոր տեսակի երկաթէ գութաններ: Մարտիրոսում կան երեք մանրունքի և մէկ ճոթեղէն ապրանքի խանութներ, տասն և մէկ ջրաղաց: Բախտաւոր են խմելու ջրի կողմից, որովհետև հէնց գիւղի միջից բղխում են երեք պատուական աղբիւրներ. կլիման ևս հիանալի է, որի շնորհիւ բնակիչները առողջ, յաղթանդամ և ամուր կազմուածքով մարդիկ են: Զնայելով, որ այստեղ գինի չէ ստացւում հողից, այնուամենայնիւ մարտիրոսցիները աւելի ենթակայ են արբեցութեան, քան թէ միւս գիւղացիները, որովհետև գինին և օղին առատապէս բերւում են այստեղ Նախիջևանի գաւառից և Մալիշկայ գիւղից: Ունեն մի քահանայ: Վեց-եօթը տներ կան, որոնց ընտանիքները բազկացած են 18—20 հոգուց: Ցաւալին այն է, որ այդ բազմաթիւ ընտանիքների մէջ, նաև ամբողջ գիւղում, չկան որևէ արհեստաւորներ:

Մարտիրոս գիւղի հայերը՝ գերազանցում են իրանց քաջութեամբ՝ Մարտիրոսի շինական հասարակութեան բոլոր հայ գիւղերի բնակիչները: Իբրև սահմանագծի վրայ գտնուող գիւղ, շատ անգամ ենթարկուել են աւազակների յարձակման, օրինակ յայտնի աւազակապետ Նաբիի, Մամադ Հասանի ևայլն: Բայց աւազակները փոխանակ նրանցից բան կորզելու, միշտ ընդհարման ժամանակ հազիւ իրանց գլուխն են ազատել ու փախել: Նոյնիսկ անցեալ օգոստոս ամսի վերջերը, Եագիւրտ լեռան վրայ յայտնուեցին 9 աւազակներ, որոնցից 2-ը յարձակուեցին երեք մարտիրոսցի հնձուրների վրայ, կամենալով թոցնելու նրանց մօտ արածող ձին: Հնձուրներից մէկը, Ենօք Մուրադեանը, վերցնելով իր ասիական հրացանը, գրաւում է մի գիրք ու սկսում է հրացան արձակել աւազակների վրայ, իսկ միւս եղբայր Ստեփանը ուղղակի յարձակւում է մանդաղով աւազակներից մէկի վրայ ու վիրաւորում է նրա թևը, որից յետոյ աւազակները կարծելով թէ Ենօք Մուրադեանի ձեռքին ունեցած հրացանը նոր սխտեմի հրացան է ու կարող է իրանց վնասել, միքանի անյաշող հրացաններ արձակում են Մուրադեանների վրայ ու անհետանում:

Նախիջևան քաղաքը հեռու է Մարտիրոսից մի օրուայ ճանապարհով: Գիւղացիք բեռնած գրաստներով անգամ հասնում են Նախիջևան իրիկունը, առաւօտեան դուրս գալով Մարտիրոսից:

Մարտիրոս գիւղից 2 վերստ հեռու արեւելեան կողմը կայ մի հին վիմափոր եկեղեցի՝ գմբէթաձև առաստաղով, շինած Մատթէոս վարդապետից Պոռ իշխանի օրով (ՁԼԵԹ): Այդ եկեղեցին 9 քայլ երկարութիւն ու լայնութիւն ունի: Արեւմտեան դրան մօտ կայ մի վիմափոր գաւիթ: Այդ մենաստանի արեւմտեան կողմը 2 վերստ հեռաւորութեամբ, փոքրիկ բլրի վրայ կան մեծ գեղեցկաբանդակ խաչքարեր իրանց արձանագրութեամբ, որոնք կանգնած են (ՁԻԴ և ՁԻՀ) թուերին նոյնպէս Պոռի իշխանութեան ժամանակ:

Փաշալու գիւղի արեւմտեան կողմը չորս վերստ հեռաւորութեամբ գտնուում է Փոռ գիւղը:

Հագիւ գտնուի Դարալագեաղում մի գիւղ, որի բնակիչներին կարելի լինի համեմատել Փոռ գիւղի բնակիչներին հետ թէ արթնութեան, ճարտարութեան և թէ աչքաբացութեան ու ժրութեան կողմից: Փոռ գիւղն առաջինն է նոյնպէս մաքրութեան ու կենցաղավարութեան կողմից, այնպէս որ ամեն մի ուրիշ գիւղացի մտնելով այստեղ, կարծում է թէ քաղաք է մտել: Փոռցիք Պարսկաստանի Սաւրի գիւղից են գաղթած:

Մի 10—15 տարի առաջ խաչագողութեամբ պարապողներ կային: Թէև մեր շատ գիւղերում եղել են խաչագողներ, բայց խաչագողի ամենակատարեալ տիպարը ներկայացնում են Փոռցիքը: Նրանց պայմանական լեզուում կան «խաչի գետաուկը»<sup>1)</sup> «օլրած»<sup>2)</sup> «Ֆոհիկը»<sup>3)</sup>, «թալիկ թալիկ թալոզը»<sup>4)</sup>, «հաւի աչքը»<sup>5)</sup> «ջուր մի արա»<sup>6)</sup>, «չուանի»<sup>7)</sup> «ծառի»<sup>8)</sup> կայլն բառերը:

Այժմ դադարել է խաչագողութիւնը Փոռում, տեղի տալով առևտրականութեանը Ռուսիայում (Արմաւիր, Ռոստով), որը մեծցնելով Փոռցու մէջ հայրենի օջախի սէրը, հրապուրում է նրան թոզնել իր տուն տեղը, հայրենի կտուրը և ընտանիքը «բերանում բռնած» այս քաղաքից այն քաղաքը թափառել, ոսկու ու արծաթի սիրոյ համար:

<sup>1)</sup> Խաչի գետաուկը՝ Կովկասի լեռներից անցնող գետաուկն է նրանց ճանապարհի վրայ: <sup>2)</sup> Օլրած՝ մէկ ուրբի թղթաղրամ: <sup>3)</sup> Փոհիկ՝ 1 բուրբի արծաթ: <sup>4)</sup> Թալիկ թալիկ թալոզը՝ զինուոր: <sup>5)</sup> Հաւի աչք՝ 20 կոպ.: <sup>6)</sup> Ջուր մի արա՝ մի յայտնիր: <sup>7)</sup> Չուանի՝ բանը երկար է: <sup>8)</sup> Ծառի՝ հասկանում են, զլիսի ընկել են:

Միքանիսը մնալով երկար ժամանակ առանց ընտանիքի, օտարութեան մէջ և ձանձրանալով այդ դրութիւնից, փորձեցին գաղթել Ռուսաստան ընտանիքով, միանգամայն հրաժարական տալով ծննդավայր Փոռ գիւղին: Փորձը դարձաւ սովորութիւն, որից յետոյ մինչև այժմ գաղթել են Փոռից Ռուսաստան 25—30 ընտանիք և օրէցօր այդ հոսանքն սկսում է աւելի շատանալ: Այսպիսով Փոռը հետզհետէ դատարկւում է ու մնում են բացակայողների աւերակ տները. մնացողների վրայ ծանրանում են հարկը և հասարակական ծախսերը, և նրանք նոյնպէս զգուհելով կոպիտ երկրագործութիւնից, կամենում են շուտով փախչել Փոռից: Եթէ այդ վարելահողերը ուրիշ գիւղացիներ թողնէին դրացուն, որը մի կտոր հողի համար մեռնում է և գիտէ հողի արժէքը, ուրախութիւնից իրան կը կորցընէր, բայց փոռեցու համար թ'նչ նշանակութիւն ունի այդ բանը:

Փոռը 1886 թուին լազկացած էր 55 տնից, այժմ մնացել են 50 տուն. այդ 5 տները գաղթել են Ռուսաստան: Փոռը ունի մի գրեթէ անգրագէտ քահանայ, որը նոյնպէս մըտադիր է գաղթել Ռուսաստան, մի հիւան և երեք ոսկերիչներ: Առաջ խաչագողները գրեթէ բոլորն էլ գիտէին ոսկերչութեան արհեստը, որովհետև այդ բանը ձեռնտու և պիտանացու էր նրանց նպատակին, բայց խաչագողութիւնը վերջանալուց յետոյ, վերջացաւ և այդ արհեստը: Ինչ վերաբերում է երկրագործութեանն ու անասնապահութեանը, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ սրանք գտնւում են բոլորովին ընկած դրութեան մէջ, շնորհիւ վերևում յիշուած հանգամանքների ու տնտեսական պայմանների: Փոռը տուել է մինչև այժմ մի օֆիցեր և երեք-չորս համալսարանականներ կովկասի զանազան քաղաքներում բնակուած փոռեցիներից:

Փոռից չորս և փաշալուից ութ վերստ հեռաւորութեան վրայ գտնւում է Ազատակ գիւղը: Ինչպէս Փոռը նոյնպէս էլ Ազատակը հիանալի տեսարան ունին. վերջինիս հայեացքը գրկում է նաև արևելեան Դարալաղեաղի և մինչև նրա սահմանագծի հորիզոնը: Այդ գիւղը «Ազատակ» անունը ստացել է հետևեալ աւանդութիւնից: Ազատակի հարաւային կողմը կայ մի փոքրիկ լեռ, որի վրայ գտնւում է գեռես մի աւերակ բերդ և մի մատուռ: Այդ բերդում մի հայ իշխան իր ժողովրդի հետ ապաստանելով, երկար ժամանակ պաշտպանուել է թշնամիներից ու ազատել է թէ իրան և իր հետ ապաստանողներին, որի համար էլ ազատակցիք գիւղը հիմնելիս յատկացրել են նրան Ազատակ անունը: 1853 թուի ռուս-թրքական պատերազմի

ժամանակ, երբ ապստամբեց դարալագեազցի Շիրին սուլթանը ուսաց տէրութեան դէմ և կամենում էր կոտորել Դարալագեազի հայերին, ազատակցիները քաշուեցին այդ բերդը իրանց պաշտպանելու ու ազատելու համար:

Ազատակ գիւղի բնակիչների մեծ մասը Պարսկաստանի Սաւրի և Սարամէր գիւղից են գաղթել, 7—8 տուն էլ նրանց հետ միաժամանակ գաղթել են Մուշից: 1886 թուի ընտանեկան ցուցակով կազմում էին 73 տուն, այժմ դարձել են 110 տուն: Բնակիչների թիւն է 919, որոնցից 462 հոգի արական են, 457 հոգի իգական: Բոլոր վարելահողերը թէև ջրովի են, բայց ջուրը չէ բաւականացնում նրանց, որովհետև դաշտերը ոռոգող ջուրը մի բահից աւելի ջուր չունի: Գիւղացիների կէս մասը գրեթէ հացը ծախու են առնում: Համգայ տները ցանում են 5—6 բեռ սերմ ու ստանում 20—35 բեռ: Միջանի տներ ցանում են Ղարաբախու և Դաշալթի գիւղերի թիւրքերի հողերը կիսարար: Մինչև 1890 թիւը ազատակցիները ամառուայ արօտատեղիներ չունէին, այդ թուից սկսած ձեռք բերեցին իրանց գիւղի համար բաւարար արօտատեղիներ, շնորհիւ իրանց խոհեմ և բարեմիտ «իշխաններին», որով անասնապահութիւնը ապահով պայմանների մէջ դրուելով, առաջ գնաց: Արփաչայի ափին ազատակցիները ունին մօտաւորապէս 22 բետան տեղ պատուական հող «Թէզ Սարար» անունով, որը կազմում է նրանց խոտանոցն ու անտառարածինը. ափսոս, ազատակցիք չեն կարողանում ամրացնել գետի ափերը, որ չփչանան գարնան յորդութիւնից: Առատարակ ազատակցիները աւելի լաւ երկրագործներ են և գնահատում են հողը, քան թէ իրանց զրացի փոռեցիները: Ազատակ մտնելիս, աչքիդ են ընկնում այդ գիւղացիք իրանց աշաւուրջ և ուրախ պատկերներով: Հիւրասիրութեան կողմից գովելի են ամբողջ Դարալագեազում: Ունին մի քահանայ, որը տարբերում է Դարալագեազի անգրագէտ քահանաներից իր փոքր ինչ գրագիտութեամբ ու բաւականին ազդեցիկ մարդ է գիւղական շրջանում: Ազատակում կան 3—4 հիւսններ, մէկ դարբնոց, մէկ կլեկչի, երեք ջրագաց, մէկ մանրունքի և երկու ճոթեղէն ապրանքի խանութներ: Ազատակիցներն էլ գնում-դալիս են Ռուսաստան և նոյնիսկ ընտանիքով միանգամայն այնտեղ գաղթում: Այժմ տասը տուն՝ ընտանիքով բնակւում են Ռուսաստանի զանազան քաղաքներում: Անցած տարի սրանցից մէկը եկել էր (այն էլ զինուորակոչից հարկադրուած), հայերէն մի խօսք անգամ չգիտէր ու բացատրում էր ազգականների հետ ուս լեզուով: Երբ գալիս է աշունը, չուող թոշունների պէս անհանգիստ կիր-

պով փախչում են Ռուսաստան, ընտանիք և տուն թողնելով՝ մշակի ու բախտի բերմունքին. մի մասը վերադառնում է գարնանը, միւս մասը մնալով այնտեղ պարապում է առևտրով, բանւորութեամբ ու մուրացկանութեամբ: Մտնելով Ազատակ, կը տեսնէք գիւղացիներին, որը հին նահապետական շորերով, որը թունդ ևրոպական (նորեկները), միքանիսը կէս ևրոպական, կէս ասիական շորերով, այսինքն հագած և պալտո և տրեխ և կրահմալով շապիկ և թուրքի կօշիկներ: Ինչպէս խայտաճամուկ է նրանց հագուստի տարազը, նոյն դրութեան մէջն է նըրանց գործն ու պարապմունքը, որի համար ազատակցուն ոչ կատարեալ երկրագործ, ոչ վաճառական և ոչ արհեստաւոր կարելի է ասել. խեղճերն իրանք էլ չգիտեն որին են նուիրուած: Մի ժամանակ ազատակցիների իգական սեռը, ինչպէս փոռեցիների նոյնպէս և փաշալուցիների գեղեցկութեան կատարեալ տիպարն էր ներկայացնում ամբողջ Դարալագեագում, բայց այժմ ընդհակառակը, որովհետև երիտասարդները երկար մնալով Ռուսաստան և վարակուելով այնտեղ սիֆիլիս ախտով, հայրենիք վերադառնալիս վարակեցին իրանց խեղճ ընտանեաց ու այլանդակեցին գեղեցիկ սեռը: 9—10 տուն այժմ վարակուած են այդ ախտով, շատերն էլ թէև բժշկուել են, բայց անյարմար են դարձել ծննդաբերութեան համար: Առհասարակ այդ երբեմն պատուական գիւղը այժմ ընկած է բարոյապէս: Այստեղ կանայք շատ ճոխ հագնուում են ու կատարեալ մրցում են իրար հետ, հանգերձի, ոսկու ու արծաթի զարդեր ունենալու մէջ:

Փոռ և Ազատակ գիւղերից ութը վերստ դէպի հիւսիս և Փաշալու գիւղից տասն վերստ դէպի արևմտահիւսիս, չորս ձորեր գլուխ գլխի տալով կազմում են մի խաչաձև գիծ, որի կենտրոնում դրուած է Սոյլան գիւղը, Արփաշայ գետի աջ ափին. Կարուածատէր Կ. Զանփուլագեան Սոյլանում ունի մի մեծ պարսպապատ տուն, որը յիշեցնում է միջնադարեան ամրոցն երբ: Զնայելով որ Զանփուլագեան Կարապետն ունի այնքան հող, որը կարող է բաւականացնել 15—20 տուն բնակիչներին և խիստ յարմար է երկրագործութեան, այգեգործութեան, շերամապահութեան և ինչ բանի համար ասես, սակայն այդ պատուական հողը թողուած է երեսի վրայ և անմշակ: Պարսպի առջև գտնուող անտառը, առաջին ընդարձակ անտառն է Դարալագեագում, բայց դարձեալ անմշակ, տնկուած անկարգ, անկանոն ուռնու և բարդիի խառնիխառն ծառերով. ունի բաւականին տարածութեան վրայ վարելահող, որը ոռոգելու համար հեշտութեամբ կարելի է առու հանել և դրախտ դարձնել, բայց այդ մասին ո՞վ է հոգ տանում: Նոյնիսկ ձիանքի ջուղը, որոնց համար Զանփուլա-

գեանը ունի նաև ամառուան համար ընդարձակ արօտատեղի Գեօյգաղ լեռան վրայ, Դարախլըղ անունով, հետզհետէ պակասում է, այնպէս, որ նրանց թիւը, որ համնում էր մի ժամանակ 200-ի, այժմ մնացել է 44:

Սոյլանը 1886 թ. ընտան. ցուցակով կազմում էր 4 տուն. զրանցից երեքը գաղթել են Գնիշիկ և Աղխաչ գիւղերը, թողնելով Սոյլանը Ջանփուղգեաններին:

Սոյլանից  $2\frac{1}{2}$  վերստ հեռաւորութեան վրայ, Արփա չայ գետը, իր աջ կողմին կազնած ժայռի տակ, կազմում է մի փոքրիկ կղզի, որի վրայ գտնուում է Դաշալթի թուրք գիւղը, բաղկացած հինգ տանից, վարակուած բորոտութեան ախտով: Ժայռի գլխին, թուրքերից փոքր ինչ հեռու գտնուում են երկու հայ ընտանիքների տներ, որոնք իրանց մի համաբնակչի սպանուելուց յետոյ, դաշալթեցիների համաձայնութեամբ գրուեցին և փոխադրուեցին այստեղ: Այդ կամըջի վերին մասը, գլուխը, անյայտ դարերից քանդուած էր և մեր նախնեաց այդ մեծ և փառաւոր գործը ոչ մի օգուտ չէր տալիս դարալագեագցիներին, որոնք տարի չէր անցնում, որ մի զոհ չտային Արփաչային գարնան ժամանակ: Այդ կամուրջը Այար գիւղի մօտ գտնուած քարեայ հին կամըջի պէս նշանաւոր է նրանով, որ միւսցնում է հիւսիսային Դարալագեագի մի մասը հարաւային Դարալագեագի հետ: Այդ երկու կամուրջներն էլ գրուած են Նախիջևան գաւառի ճանապարհների վրայ, և ապացուցում են, թէ որքան ծաղկած է եղել մի ժամանակ Դարալագեագը: Տողերիս գրողի առաջարկութեամբ հաւաքեուց 500 ռ. և վերանորոգուեց Դաշալթի կամուրջը, որի գերաններն ու տախտակները ազատակցիները բաց թողեցին ձրիապէս:

Արփաչային սեղմում են իրար մէջ երկու վիթխարի ժայռեր, Դաշալթից  $\frac{1}{4}$  վերստ հեռաւորութեամբ: Խոր՝ անզնգային ժայռոտ յատակի տակ մտնելով Արփաչայն ուռչում, եռում, լճանում, ժայթքում է ու գրոհւտալով դուրս է գալիս կատաղած վիշապի պէս դէպի աւերակ Մողան քաղաքը ու քերելով նրա ժեռոտ ափերը, մինչև քաղաքի ծայրին գրուած այժմեան Մող թուրք գիւղը, դուրս է գալիս Մալիշկեայ և Այար գիւղերի հովիտները: Այդ յիշուած երկու վիթխարի ժայռերի յատակը նոյնպէս ժայռոտ է, որի տակ մտել է Արփաչայը: Հէնց այդ ժայռոտ յատակի վրայից մեր աշխարհաշէն նախնիքը մի միջնորմ են բարձրացրել 20 արշին երկայնութեամբ և 6 սորշին լայնութեամբ ու հաւասարեցնելով նրա բարձրութիւնը աջ և ձախ ափերի հետ, կազմել են մի զարմանալի շքեղ և ահօելի կամուրջ, ժայռերը միացնելով իրար հետ:

Վերջացնելով Մարտիրոսի հասարակութեան նկարագրութիւնը, պէտք է նկատենք որ Փոռ, Ազատակ, Փաշալու, Սոյլան և Դաշալիի գիւղերի բնակիչները, մասամբ և Մարտիրոս գիւղի, շփուելով ուսական տարրի հետ, իւրացրել են և իւրացնում են հետզհետէ նրա սովորութիւնները, վարք ու բարքը կային: Օրինակ, իգական անունները ուսացնելով, պոչերին կպցնում են «ուշկայ» և «ինկայ» մասնիկները.—Աննա—Աննուշկայ, Վառվառէ—Վառինկայ կային, նոյնպէս էլ արական անունները, — Յովհաննէսին անուանում են Վանօ, Գէորգին—Եգօր, Կարապետին—Գերասիմ կային: Սօսակցութեան մէջ գործ են ածում ուս բռներ, օրինակ. տօ լաճ, «սըմավարը կիպիտ» էլէ, արաբան «զապրագատ» արինք. քաշեց պաչի մի սհաթ» կային: Փողոցներում, ու խնջոյքներում լսում է նրանց ախորժակով ու ջրալի պատմութիւնը Ռուսաստանի բուֆէաների, ստանցիաների, տրաքտիրների, բարիչնաների, հասարակաց տների մասին կային:

Պանդխտութեան մասին գաղափար են տալիս հետեւեալ թուերը.

Միայն 1903 թուին բացակայել են Փոռից 128 հոգի, Փաշալուից 105 հոգի, Մարտիրոսից 142 հ. և Ազատակից 129 հոգի. ընդամենը 504 հոգի:

Վայոց Ձորի միւս հասարակութիւնների հետ ծանօթանալը թողնենք ապագային:

Մ. Տ.—Ա.

\*  
\* \*

Աղբիւրի մէջ մի մարալ  
Շուքն է տեսեր եղնիկին  
Ու ման կու գայ միտլար  
Մուրի կ~մուրի կ եղնիկին:

էն եղնիկն էլ երազին  
Մարալի ձէնն է առեր  
Ու ման կու գայ մարալին  
Մուրի կ~մուրի կ զօր~գիշեր...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

## ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ \*)

Ե.

Յուլիսի 7-ին առաւօտեան ճանապարհ ընկայ Տաթևից հարաւարեւմուտք, նպատակ ունենալով հասնել Քաջարանց գիւղը, որի հեռաւորութիւնը վանքից կը լինի մօտ 30 վերստ: Տաթև գիւղում վարձել էին ինձ համար մի ձի և մի շորի իրանց երիտասարդ տէրերով:

Գուրս գալով վանքից անցանք նրա միջանի ջրաղացների մօտով և քարէ կամրջով, որ մեզ հասցրեց վանքի տակով հոսող գետակի միւս ափը: Պէտք է նշուի կատել որ այդ գետակի մէջ հարաւից թափուում է մի այլ գետակ, որ ընդունում է իր մէջ դարձեալ հարաւից երրորդը: Վանքից ներքև, չհասած Մեծ Անապատին, երեքն էլ միացած թափուում են Որոտնը, իբրև մի օժանդակ, որին մենք տուինք՝ Տաթևի գետակ անունը: Այդ երեք ճիւղերը կոչուում են Քարհանոնց, Աղանձու և Զղրուանի: Ընթանալով դէպի հարաւ, մենք մերթ բարձրանալով, մերթ իջնելով, անցանք միջին գետակի ձորով, ապա ամենահարաւայինի հովտով գիւմում էինք դէպի Գազբոյլ լեռնագօտին: Այդ գետակները իրարից բաժնող բլուրներից մէկի վրայից յետագարձ հայեացք ձգեցի և տեսայ հորիզոնի հիւսիսային մասում մեզ ծանօթ Իշրխլուի ձիւնապատ դաղաթները: Իմ առջև՝ դաւար, ճոխ արօտատեղիներով և խոտահարքներով ծած-

\*) Տես «Մուրճ», № 11.

կուած Գաղբոյլի պարսպածև լեռնաշարքն էր դիզացած: Այլ թևի վրայ անտառապատ Հարսնավազ գօտին էր բաժանում մեզ հին Բազաց աշխարհից կամ այժմեան Մադանից (Հանքերից): Չախ կողմից՝ Լորուայ ձորի անձրուպետ լեռներն էին: Տաթևի կահակաւոր լեռնադաշտը՝ այդպէս պարփակուած՝ բարձրանում էր դէպի հարաւ, մինչև Գաղբոյլ լեռնագօտու ստորոտը:

Սարալանջերի վրայ ցիր ու ցան երևում են օբաներ, շրջապատուած արածոյ հօտերով և նախիրներով, որոնց խառն են և ձիեր, էշեր ու ջորիներ:

Անցնում ենք մի հայ օբայի մօտով: Տէրերը հազիւ են կարողանում ահագին դագանակներով յետ քշել մեզանից կառաղի գայլանման շներին: Վրամների առաջ հայ կանայք զբաղուած են իրանց գործով, մի տեղ չորթան են շինում և արևի տակ շարոտում դրանց սպիտակ կոնիկները. մի այլ տեղ խնոցի են հարում, երրորդ տեղ օջախի վրայ կաթ են տաքացնում: Ահա մի պառաւ կին խնամք է ցոյց տալիս նոր լոյս աշխարհ եկած գոմշի ձագին. նրա շուրջը ցատկոտում են և վազվզում հորթուկների, գառնուկների և շան լակոտների հետ խառնիխուխոն՝ բոկոտն և կիսամերկ մանուկներ:

Բնութեան ծոցում, այդ մաքուր ու զով օդում, ճախ արօտատեղիներում, անուշ ու սառնորակ ջրերի փերին անասուններն էլ են իրանց գոհ ու զուարթ ըզգում: Տեսէք, ինչպէս փայլում են նրանց մօրթիները. կարծես իւրով օծուած լինին անաշէնները...

Հասանք վերջապէս և ձիւնի շերտերին: Այստեղ կարելի է անսնել գետերի և ամպերի գոյացումը: Սառած ձիւնի հաստ խաւերը արեգակի ճառագայթների տարութիւնից կամաց-կամաց գորրչանում են և մշուշի նման վեր բարձրանում, վեր սողում, կուտակւում իբրև ամպեր լեռների գագաթների շուրջը և սպասում օդային հոսանքներին՝ հեռու երկրներ չուելու համար: Իսկ ձիւնի հալուած, պսիւած կաթիլները սառցային կամարի տակ կենդանանում, միանում են իրար հետ. կաթիլ-

ների զատ-զատ ծնկոցը վտակների մեղմ կարկաչին է դառնում: Այդ վտակները ցառկոտելով բարերի վրայով, խփուելով ժայռերի անշարժութեան, զայրանում են, փրփրում և ցատում է փոխում դրանց անուշ կարկաչինը. իսկ երբ բոլոր վտակների ալիքները մի-ախառնում են ու դեռ կազմում՝ արդէն առնական կորով արտայայտող մունչին է լսում. զգում էք միլիօնաւոր մանր ոյժերից գոյացած մի զօրութիւն, որը կարող է շինել և կործանել, նայած ուղղութեան և հանգամանքներին...

Սարայանջի ամենավերին մասերում ծխում էին թուրք օբաներ: Մի ժայռի դլխին խաղում էին թուրք երեխաներ, որոնք մեզ նկատելով պարաք համարեցին գէթ միքանի խօսքերով էլ է հայհոյել հեռուից:

Միքանի պտոյտ էլ և արահետը մեզ հասցրեց Գազբոյլի թամբաձև ոյնին: Մեր առջև՝ հին Չորք կամ Կապան գաւառն է, որ մի ժամանակ ծառայում էր Սիւնեաց հօր նախարարների համար իբրև անառիկ միջնաբերդ:

\* \* \*

Անդնդախոր, նեղ, խճճուած ձորերի և բարձրաբերձ, խիտառխիտ կանգնած լեռների մի աշխարհ էր այդ, որ հէնց առաջի հայեացքից իր աւելի դաժան ու խրոխտ արտաքինով տարբերում էր հարևան գաւառից: Բիզբիզ կանգնած հսկայ լեռների ամբոխի մէջ բարձրադըլուխ դէպի երկինք էր ցցուած բոլորի յետևում մի ձիւնապատ, սրածայր դադաթ:

— Ի՞նչպէս է այն սարի անունը, հարցնում եմ ինձ ուղեկցող ձիւնապանից և ջորեպանից:

— Է՞ն, սար ա էլի...

— Անձնը:

— Չգիտեմ, աղա:

—Ի՞նչպէս թէ չգիտէք: Առաջին անգամն էք տեսնում...

—Աղա, բաշխիր... մենք էլ առաջին անգամն ա, որ Քրջարանց ընք ըրնում...

—Լաւ, բայց ինչո՞ւ վարձուելիս ինձ ասել էիք թէ ծանօթ է ձեզ ճանապարհը:

—Իմ հէրս միքանի անգամ անցել ա էդ ճամբով, ինձ էլ ասել ա թէ ինչպէս պէտմա զընալ, պատասխանեց ձիապանս:

—Հէր օրհնածներ, դրձ համար էք ինձնից հինգ անգամ աւելի վարձ պահանջում, քան մի օրէէ ակցիզնուց... Ուրեմն, ինձ խաբել էք, ասելով թէ ճանապարհը գիտէք...

—Դէ, բաշխիր, աղա, չենք գիտացալ որ սարի, գետի, ձորի անուններ ըս մեզնից հարցնելու: Դէ ճամբան էլ դուզ ճամբայ ա...

Ի՞նչ պէտք էր արած: Մի քարի գլխին թիկն էր տուել մի թուրք հովիւ. նրան գիմեցի ցոյց տալով ինձ հետաքրքրող սարը:

—Խուստուփ, եղաւ նրա պատասխանը:

Այդ գաղաթը պատկանում է այն լեռնագօտուն, որ հարաւից անջրպետում է Ձորք գաւառը Արեւիքից կամ Մեղրու կողմերից: Ուրեմն ես գտնում էի Ձորք գաւառի հիւսիսային սահմանագծի՝ Գաղբոյլ լեռների վրայ, որտեղից տեսնում էի հակառակ անջրպետի ամենաբարձր կէտը: Այդ տարածութիւնը ուղիղ գծով երևի 20 վերստ լինի: Եւ, այդ համեմատաբար շնչին տարածութեան վրայ կուտակուած են որքան ձորեր, լեռնապարեր, սրածայր գաղաթներ, անդունդներ, խոխոմներ. լեռնային վթիսարի կնճիռների մի զարմանալի լաբիւրինթոս ու քաօս... Այդ գաւառում մի ժամանակ աւելի մեծ թուով բերդեր կային, քան եկեղեցիներ: Այդ գաւառում, մինչև Դաւիթ բէգը գեռ չէր մարել ազատութեան ոգին՝ միշտ թագնուած մնալով, ինչպէս մոխրի տակ ծածկուած կրակ:

Ահա Սիւնեաց իշխան Վասակի «ամուր գաւառներից» մէկը: Նախքան մտնենք այդ երկիրը՝ մի բարոյական պարտք համարենք—15 դար շարունակ Վասակ «Ուրացոյի» հասցէին լսուող անէծք ու հայհոյանքի փոխարէն ունկնդնել և մի անաչառ ձայն, որ բարձրացրեց մեր պատմութիւնը առաջին անգամ լուրջ քննական սգուով ուսումնասիրող Գարագաշեանը: Նրա հռչակաւոր «Քննական Պատմութեան» մէջ երևան են գալիս, թէ Վասակի խրոխտ և քաջ նախնիները իրանց կորովի անհատականութեամբ և թէ ինքը դժբախտ Վասակը—կղերական կուսակցութեան միակողմանիութեան այդ զոհը, իբրև զրպարտուած և չհասկացուած մի խոշոր պատմական դէմք: Թող սերուի մեզ, եթէ քաղուածօրէն առաջ բերենք այստեղ միքանի կտորներ Գարագաշեանի յիշած գրքից:

«Սուտ է և զրպարտութիւն, ինչպէս յայտնի է յընթացից և ի գործոց Վասակայ, ըստ վաւերականագոյն պատմութեան Փարպեցւոյն, թէ այս «խորհրդական, հանճարեղ և յառաջիմաց անձն»—(Կորիւնի խօսքերով)—էր հակառակ քրիստոնէութեան և թշնամի ազգին, ինչպէս բամբասուած է յանիրաւի: Դարձեալ, եթէ Վասակ վաղուց էր ուրացեալ և գաղտ ի բանի ընդ Յազկերտի, միթէ կը խռովէր ընդ մեկնել Վարդանայ իւրովքն երթալ ի Յոյնս, և կը դարձունէր զնա յետս նամականով և դեսպաններով. ոչ ապաքէն կ'ուրախանար մանաւանդ, ինչպէս նա և կուսակիցք նորս, որ այնպիսի նշանաւոր անձ մը, որպիսի է Վարդան, պակսեցաւ հանդերձ իրովքն ապստամբութեան (ուխտապահայ) խումբէն: Այնչափ խռովելն և յուզել Վասակայ և իւրոցն՝ կը ցուցնէ, թէ չէին նոքա միտեալ յուրացութիւն, ուստի և գատչելն նոցա յետոյ ի Վարդանեանց, ունէր այլ պատճառ, ինչպէս պիտի տեսնենք յետոյ: Անհնար էր Հայոց ընդունել կրակապաշտութիւնն ազգովին, իսկ զինուր ընդդիմանալ Յազկերտի՝ էր վտանգաւոր. ուստի լաւագոյն հնարքն էր՝ թողուլ մոգուց կատարել զիւրեանց պաշտօնն, այն է քարոզել մոգութիւնն ի Հայս, հաստատել կրակի պաշտօնը՝ շինելով ատրուշաններ: Անտարակոյս, մոգքն արհամարհուելով ժողովուրդէն՝ կամ յուսահատեալ պիտի մեկնէին, և կամ գործը պիտի չգրտնէր յաջողութիւն: Եւ եղաւ իսկ այնպէս, ինչպէս կը վկայէ Փարպեցին»... «Կղերին պարտքն էր փոխանակ գաւառ դաւառ

չըջելով յապստամբութիւն գրգռելոյ ժողովուրդը՝ վառել զնոսա հոգևորապէս ընդդէմ մօտալուտ վտանգին: Իսկ նախարարք, յետ գիջանելոյ կամաց թագաւորին—տալոյ մուտ մոգուց իւրաքանչիւր յերկիր իւր՝ կրնային հաստատուն մնալ յուխտին իւրեանց յԱւետարանն, ինչպէս արարին իսկ):

Կղերական կուսակցութեան գրգամբ Վարդանը և նրա կողմնակիցները որոշում են ապստամբուել: Եւ տեսնելով թէ ապստամբուելու խորհուրդը բացուում է և մեծ շլաս պիտի հասնէր դանդաղելուց «առնելով ժողով՝ եպիսկոպոսաց և նախարարաց՝ որոշեց (Վարդան) յայտնել զիրան Մարզպանին Վասակայ, որ տակաւին չէր գիտեր: Ապա յանկարծ մտնելով նա և ընկերք նորա բազմութեամբ առ Վասակ՝ յայտնեցին նմա խորհուրդը և կը ստիպէին զնա միարանել ընդ նոսա. Վասակ, որպէս սակ փարպեցին՝ ցուցուց դանդաղութիւն: Յիրաւի կը դանդաղէր Վասակ, նախ՝ վասն զի իբրև Մարզպան (փոխարքայ) ինքն կը կրէր պատասխանատուութեան բոլոր ծանրութիւնը, և ունէր երկխոյզ իւր որդուց համար (պատանդ էին պարսից թագաւորի մօտ). երկրորդ՝ հաւանական է թէ անխորհուրդ եռանդեան արդիւնք կը գտնէր գործը, ինչպէս կը վկայէ ինքն իսկ Փարպեցին, թէ Վարդան ոչ այնչափ յազթութեան յուսով, որչափ մարտիրոսութեան փափաքով մղուած էր յայն խորհուրդ» \*)... «Ձանք Վասակայ և իւրոցն օգտեցին գրեթէ ոչինչ: Մարտիրոսական տենչը զօրաւոր էր ուխտապահ կոչուած մասին մէջ, մանաւանդ որ կղերին մեծ և երևելի մասն էր քաջալերիչ և խրատատու: Ուստի Յազկերտ որոշեց զինու զօրութեամբ նուաճել զապստամբութիւնն»: Հայերը պարտութիւն կրեցին. ըիջ զօրք հաւաքուեց, զօրքի մի մասն էլ ակամայ էր եկած կոխ և փախուստ դարձաւ:

«Մեծ յարգութեամբ հանգերձ, զոր ունինք առ Վարդանեանս, իբրև արդարև վկայս՝ պարտիմք խոստովանել, թէ չէր բնաւ իմաստութիւն միով մասամբ միայն ազգին, ամենևին զուրկ արտաքին օգնութենէ՝ խիզախել Սասանեան պէս խրոխտ զօրութեան դէմ, զոր հռովմէական պետութիւնն անգամ չիշխեց զրգռել: Սոյն այս կէտն է որ կ'արդարացնէ հակառակ կողմը: Եթէ Վասակ, որ արդէն հակառակ էր ապստամբութեան խորհրդոյն, տեսնելով ևս Յունաց և գրեթէ բոլոր բրիտտոնեայ աշխարհին հրաժարելն օգնելէ Հայոց, և իբրև ապստամբութիւն՝ աղարտելն Հայոց շարժումը, բաժնուեցաւ երևելի մասով մը միաբանութենէն, ինչպէս կը ցուցնէ Փարպեցին,

\*) Ընդգծումները և փոկագծի մէջ խօսքերը իմն են:

այս դիպաց հաւատարմագոյն պատմիչը՝ չէր ամենեին դատապարտելի. մանաւանդ որ Վասակ ամեն ջան ի գործ դրաւ, իբրև միջնորդ ի կողմանէ թագաւորին՝ յետս կացուցանել զազգն ապստամբութենէն, թէպէտ ամեն ջան Վասակայ մեկնուեցաւ իբրև խաբէութիւն: Եթէ ընդունինք, թէ Վարդան, իբրև նախանձաւոր քրիստոնեայ, ունէր պատճառ ընտրելու անյոյս պատերազմ մը, տեսնելով հաւատոյ աչօք մարտիրոսութեան պակ՝ պարտինք ընդունել, թէ Վասակ, իբրև իմաստուն քաղաքագէտ՝ ունէր գոնէ նոյնչափ պատճառ ջանալու խափանել այն պատերազմն, իբրև յանդուգն ձեռնարկութիւն: Կուսակցութեան կամ չափազանց եռանդեան ոգևով գրուած պատմութեան բոլոր վճիռներն կ'ունայնանան խոհեմութեան կանոնին առջև: Հալածանաց դէմ բարոյական զէնքն է օրինաւոր. բայց երբ հարկը կը ստիպէ բռնութիւնը բռնութեամբ վանել՝ խոհեմութեան կանոնը կը մտնէ մէջ:—Ո՞ր թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այլու՞մ թագաւորի, և ոչ նստեալ նախ խորհիցի, եթէ կարձիցի իցէ տասն հազարաւ զգէմ ունել զայնորիկ, որ գայցէ ի վերայ նորա քսան հազարաւ. ապա թէ ոչ՝ մինչդեռ հեռագոյն իցէ, հրեշտակութիւն առաքեալ աղաչեսցէ ի խաղաղութիւն (Ղուկ. Ժ. 32):—Մեր գանգատը չէ այն դիւցազն խմբին դէմ, որ իբրև բոյլ մի՞ համարուած է և պիտի համարուի միշտ հայ երկին զարդ, այլ է այն միակամիներուն դէմ, որ մի կողման եռանդը դիտելով մանր՝ չեն նայիր անգամ միւսոյ կողման իմաստութեան: Վարդանանց պատմութիւնն է ըստ մեզ երկու կուսակցութեանց պատմութիւն. մին հոգևոր, աստուածային, որ զերկնաւորն միայն ունի ինքեան նպատակ, միւսն՝ մարմնաւոր և աշխարհական, որ ըստ մարդկային մթնոլորտն անդր չանցնիր: Որովհետև ազգին վստահութիւնը գրաւող երկու պատմիչք, Փարպեցին և Եղիշէն, մանաւանդ վերջինն, ի բարձրացուցանելն զմին, զմիւսն կ'իջեցունեն չարաչար՝ աւիրաւ դատում մը տիրած է յազգին ընդդէմ Վասակայ\*):

Միւսեաց տէր Վասակը, պարսից արքայից արքայի այդ փոխանորդը բովանդակ, Մեծ Հայաստանում, ս. Մեսրոպի աշակերտ Կորիւնի վկայութեամբ՝ «էր այր խորհրդական և հանձարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեան Աստուծոյ»: Նա պատկանում էր ուժեղ անհատականութիւններով հուշակուած մի նախարարա-

\*) Գարսագեան «Քնն. պատմ.», մասն զ. եր. 132—134 և 142—143:

կան տան, որ IV—V-րդ դարում ամենամեծ ազդեցութիւնն ու դիրքն ունէր Հայաստանում: Նրա հաւը կամ պապի հայր քաջ Վաղինակը ամուսնացել էր Աղձնեաց (Սասունի կողմերի) բզեչխի դստեր հետ և, երևի, Սասունի լեռներից վերցրած իր զեղեցկուհու ծննդավայրը պատուելու նպատակով՝ Անդովի անունն էր տուել իր անդրանիկ զաւակին: Եւ այդ Անդովը իր սեգ, խրոխ և խիզախ բնաւորութեամբ Սասունի ծովափերում մեծացած մի առիւծ էր, որի հարուածների կսկիծը չէր մոռանում արքայից արքայ Շապուհը: Պարսից մայրաքաղաք Տիզբոնը աւերող Անդովկին անկարող եղաւ Շապուհը նուաճել պաշարելով նրան անառիկ Բաղաբերդում: Անդովը Մամիկոնեանների փեսան էր: Սիւնեաց և Մամիկոնեան հզօր նախարարներից ծնուեց Վասակի հայր Բաբիկը, որ իր քաջութեան և հօների վրայ տարած բազմաթիւ յաղթութիւնների շնորհիւ կարողացաւ ամոքել Շապուհի վրէժխնդրութիւնը իրանց ցեղի վրայից: Բաբիկի քոյրը (Վասակի հօրաքոյրը) էր իր զեղեցկութեամբ և կամքի ոյժով հռչակուած Փառանձեմը, որ եղաւ հայոց դժբախտ Արշակ Թագաւորի կինը: Անյուշ բերդում կաշկանդուած Թագաւորի ամուսին Փառանձեմը 13 ամիս Արտազերս \*) բերդում պաշտպանուեց պարսից դէմ: Այդ Փառանձեմի զաւակն էր երիտասարդ Պապ Թագաւորը, որ ձգտում էր ոչնչացնել Հայաստանում հրով և սրով աճած կղերական ֆէոդալիզմը, սակայն խելացի վերանորոգիչը ոչ միայն ստոր զրպարաութիւնների ենթարկուեց կղերի կողմից, այլև սպանուեց այդ կուսակցութեան օժանդակութեամբ... Վասակի քոյրը Հայաստանի յունական բաժնի (Փոքր Հայք) Թագաւոր Արշակ Գ-ի կինն էր, իսկ Վասակի Դարա անունով եղբայրը այդ Թագաւորի զօրքերի սպարապետը: Վասակի երկու որդիներին (Ստրնբրսէ՛հ և Բաբիկ) պարսից արքունիքում պահում էին իբրև պատանդ: Վասակի դուս-

\*) Կաղզմանի մօտ այժմ Գերս անունով գիւղը:

որը մարդու էր գնացել Վարազվազանին, որ իր աներոջ  
դէմ քրտութեամբ գործող մի սրիկայ դուրս եկաւ. այդ  
Վարազվազանը պարսից արքունիքում աշխատում էր  
սեւացնել Վասակին, որպէսզի վայր գլորելով նրան տի-  
րանայ Սիւնեաց իշխանութեան:

Այդ բոլոր մանրամասնութիւնները ցոյց են տալիս  
որ Սիւնեաց նախարարական ընտանիքը հզօր անհատա-  
կանութիւններից կազմուած մի նշանաւոր ցեղ էր, առիւծ-  
ների զարմեւեւ զարմանալի չէ, եթէ ճիշդ է թէ Վասակը  
ձգտում էր Հայոց աշխարհի թագաւորական պսակով  
զարդարել իր գլուխը. նրա պատուին, հարստութեան,  
ոյժին և գիրքին, ինչպէս և նրա «խորհրդական, հանձա-  
րեղ, յառաջնաց և իմաստուն» ճակատին նոյնքան կը  
սազէր այդ պսակը, որքան սազում էր «մարտիրոսական  
պսակը» Վարդանին...

\*  
\* \*

Գաղթոյլի լեռնագօտուց սկսեցինք իջնել մի խոր  
և նեղ ձորի լանջի արահետով: Մեր շուրջը բուսակա-  
նութիւնը արդէն չունէր այն ճոխութիւնը, որ մենք  
թողինք սարի հիւսիսային կողմում: Սարարանջերի վե-  
րևի մասերում այսուայն կողմում թուրք օբաներ էին  
երևում:

Ձորի յատակը չհասած, մի աղբիւրակի մօտ իջանք  
հանգստանալու: Ժայռերի տակից լսում էր կարաւնե-  
րի կղկղոցն, որ այդ անդնդախոր ձորերի ճնշող լու-  
թեան մէջ առանձին ախորժանքով էր հնչում: Խճը-  
ճուած խոր ձորեր, վիհեր, գիբ-գիբ լեռներ պատած  
ցանցառ անտառներով, դարերով մթնոլորտային գործօն-  
ների ազդեցութիւնից աւերուած ժայռեր, հող ու խիճով  
ծածկուած դառիվայրեր—և ոչ մի շինութիւն մեր շուրջ-  
ստակում էր զգում մարդ այդ խոր, ամայի և լուռ ձորե-  
րի աշխարհում:

Երբ իջանք ձորի յատակը այնտեղ տեսանք մի գե-

տակ: էլ աւելորդ էր հարցնել ուղեկիցներինցս թէ ինչ գետակ է այդ, որովհետեւ, ինչպէս տեսանք, նրանք էլ առաջին անգամն էին այս կողմերում:

Այդտեղ ճանապարհը երկուսի էր բաժանուում, մէկը գետի ափով ուղիղ դէպի հարաւ էր ընթանում, իսկ միւսը դարիվեր բարձրանում էր դէպի աջ:

— Հայրդ ասել է թէ օր ճանապարհը ընտրենք, հարցրի հեղնութեամբ ձիապանից:

— Աղա, հրէն մի ծառի տակին մի թուրք է նստած, քընամ նրան հարցնեմ, պատասխանեց նրա փոխարէն ջորեպանը:

— Չմոռանաս գետակի անունը հարցնել, ասացի նրան:

Թուրքը խորհուրդ էր տուել դարիվեր շաւղով շարունակել մեր ճանապարհը: Մենք այդպէս էլ արինք:

— Բաս գետի անունը:

— Աղա, գետ ա էլի. իր համար քընում ա... Հարցրի, ամա լաւ չլսեցի. Գիրթաղ-չայ ա, ինչ ա...

Ինձ զարմացնում էր այն որ այդ մարդիկ էլ առաջին անգամ լինելով այդ կողմերում նոյնքան էին հետաքրքրւում շրջակայքով, որքան դրանց անասունները:

Ջորեպանս հեծաւ իր վիթխարի ջորին, որի բեռը կէս պուդ էլ չէր լինի, և վեր սլացաւ, յայտնելով որ ճանապարհը դէպի Գաջարանց հէնց այն է, որ կայ: Բարձրացանք և իջանք մի այլ ձոր: Գարձեալ մի գետակ, որ դէպի հարաւ էր հոսում:

— Հայրդ բոն չի ասել այդ մասին, հարցրի քմծիծաղով ձիապանից, որ ոտքով էր քայլում մեր յետևից: Պատասխանի փոխարէն աչքերը գետին դցեց տղան, իսկ նրա ընկերը, բազմած ջորու վրայ, անձնավստահութեամբ համոզում էր մեզ՝ հետևել իրան վերևի արահետով:

— Աղա, հիմա ես լաւ դիտամ, էսպէս ա, էսպէս, քչիք:

Մի քիչ վիճելուց յետոյ, թէև տատանուելով, բայց

հնազանդուեցի. և կոյրը կոյրին պէտք է առաջնորդէր...

Արահետը անընդհատ վեր է բարձրանում և ստանում արևմտա-հիւսիսային ուղղութիւն:

—Տօ, ո՛ր ես տանում մեզ, հարցրեցի համբերութիւնս հատած:

—Աղա, եկէք, եկէք, էսպէս առ:

—Ի՞նչպէս թէ էդպէս է, դու յետ-յետ ես գնում, հեռանում ես, նկատեցի իրան:

Նա կանգնեց շուարած և կոտրուած իջաւ ջրուց, քորեց վզակիծը և ասաց.

—Ի՛է էս չեղաւ, ապա, բաշխիր: Պէտք ա յետ բընանք: Էս փիս տեառաւ... շատ փիս պեան տեառաւ...

Չորի ներքեւում ծառերի արանքով հազիւ նըշմարոււմ էր միւս կածանը: Իջայ ձիուց և, չուզենալով յետ գնալ եկած ճանապարհով, սարալանջի գառիվայրով ուղղակի գիւմեցիքը ներքև: Իմ առաջնորդներս սաստիկ խցճահարում էին և ամօթից էլ ձէն չէին հանում...

Ես յիշում էի որ մենք պէտք է իջնենք Բեգուայ գետի հովիտը, որ Քաղբոյլի լեռնագօտուն զուգընթաց ուղղութիւն ունի արևմտքից-արևելք: Ի՛էպ հարաւ հասող այն երկու գետակները Բեգուայ գետի օժանդակները պէտք է լինէին: Ի՛հաէի որ Քաջարանց գետեզուած է Սիսու գետի ափին, որ Բեգուայ գետից հարաւ է գլուխը և հոսում է սկզբում նրան զուգընթաց և ապա միայն, Բագաց աշխարհը մտնելուց առաջ, միանում է նրա հետ և իբրև մի գետ առաջ գնում, կրելով Կապանի կամ Չառնգուր գետ անունը մինչև Արարս թափուիլը: Պէտք էր, ուրեմն, յիշած գետակի հոսանքով գնալ մինչև որ դուրս գանք Բեգուայ գետի հովիտը:

Իջնել ներքև գիրք բարբարոս, փշերով ու մացառներով ծածկուած սարալանջով բաւական անախորժ զբօսանք էր, և ես մինչև որ ձորի ստորոտում հոսող գետակի ափն հասայ՝ հալից ընկել էի արդէն: Մեր օտերի տակից, խոտերի միջից դուրս էին թռչում մայր կաքաւներ,

անպաշտպան թողնելով սիրուն ձագուկները մեր ձեռքում:

Գետակը հասում էր նեղ ապառաժոտ ձորում: Մառերի ստուերի տակ մի քիչ հանգստացանք. սառը ջրի մէջ երես ու գլուխ լուացինք, զովացանք և առաջ գընացինք մի արահետով, որ քայլովից եթէ ոչ սատանի, գէթ այժմի հնարագիտութիւն էր պահանջուէ: Տարաբախտաբար, քաղաքային նստակեաց կեանքը ձրտեղից կարող էր զարգացնել սոսների և շարժումների այդպիսի ճարպիկութիւն. մնում էր չափազանց զգուշութիւններով քայլել նեղ շաւղով և ամեն ըտպէ վախժիւնը ներքև, գետակի մէջ, գլորուելուց:

Երկար ժամանակ գնում էինք անիծած ձորով, առանց հանդիպելու սրէէ մարդու, թէև երևում էին կիսատապառա մշակուած հողեր ձորալանջերի վրայ:

Մէկ էլ յանկարծ աննկատելի կերպով մենք մեզ տեսանք կանգնած կտուրների վրայ, քիչ էր մնում որ ձիւ ընկնէր կտուրի վրեւածքով ուղիղ խրճիթի մէջ: Մի կոյտ ողորմելի, իրար կպած, կիսագետնափոր տնակների հարթ կտուրների վրայ միքանի թուրքեր ինչոր բոյսից չուաններ էին գործում: Նրանք, զարմանքից ապուշ կտրած, մեզ վրայ այնպէս էին նայում, ինչպէս երևի ամերիկացի վայրենիները կոլումբոսի վրայ...

—Էդ ազան ինչ բան ունի էս ձորերում, նա ո՞վ է, հարցնում էին նրանք կամացուկ իմ շորեպանից:

—Ինձեներ է, եկել է հանքեր սրոնելու, ասաց տաթեւացին, չգիտեմ՝ հանաքո՞վ, թէ ինքն էլ այդպէս էր համոզու. . .

Իջնելով այդ Ղարաբաշ կոչուած գիւղի զառիվայրից մեզ ծանօթ գետակի ձորը, միքանի քայլ արինք և դուրս եկանք Գեղուայ գետի սքանչելի հովիտը, որ ամբողջապէս դարաւոր հսկայ ընկուզենիների մի պուրակ էր ներկայացնում: Գեղուայ յորդառատ, լայն գետը խորխա շառաչիւնով իր սրընթաց փրփրադէզ ալիքներն էր գլորում, հասելով արևմտքից դէպի արևելք: Հեռւում,

որանցից գետն էր դէպի մեզ թաւալում, ձորի երկու  
 դալար ու դէք ցցուած կողերից մէկը՝ մեր կողմինը՝ ծուռում  
 էր և մտնում հակառակ լեռների թիկունքը: Երկու կո-  
 ղերի արանքում ծառերի պուրակ էր փռուած և գետը  
 կարծես ուղղակի նրա սակից լինէր ժայթքում:  
 Այդ լեռների վերևի մասում մի ճեղք էր բացուած,  
 որից գէնը երևում էր վիթխարի ձիւնագագաթ լեռ-  
 նագօտու մի փոքրիկ կտոր միայն:

\*  
 \* \*

Գեղուայ եզերքով ձգուած ճանապարհը այժմ աչ-  
 քիս լայն խճուղու տպաւորութիւն էր թողնում: Երթևեկ-  
 կութիւնը կենդանութիւն էր տալիս այդ հովտին. մենք  
 հանդիպում էինք թուրք գիւղացիների բեռնաբարձ ձի-  
 ւերով, շորիներով և էշերով: Պատահում էին թուրք ե-  
 րեխաներ և կանայք. այս վերջինները ինձ տեսնելիս  
 իսկոյն շտապում էին չաղբաներով ծածկել իրանց ե-  
 րեսները, թողնելով բաց իրանց մերկ սրունքները: Գե-  
 տի հակառակ ափին Մալլալը թուրք գիւղն էր:

Ձորեպանս գործեալ բազմեց իր, զորու վրայ, և  
 քչեց սուտջ, բնաւ չմտածելով որ իր ընկերը ամբողջ  
 ճանապարհը ոտքով է քայլել:

—Տօ, ինչ կը լինի որ թողնես ընկերդ էլ մի քիչ  
 նստի շորիդ և հանդստանայ: Ախր որ բեռս ծանր լինէր  
 չէ՞ որ դու էլ պէտք է ընկերիդ պէս ստքով քայլէիր...

—Էաւ ես ասում, ազա, մի քիչ էլ քընանք՝ կը  
 թողնեմ որ նա էլ նստի, ասաց նա, աշխատելով ամեն  
 կերպ ջնջել մեր թափառումների պատճառած վատ տը-  
 պաւորութիւնը:

Մենք արգէն հասել էինք այնտեղ, ուր Գեղուայ  
 գետը թափուում է Օխչու գետի մէջ: Այնտեղ ուր միա-  
 նում են Ձորքի այդ երկու գեղանի գետերը՝ գանուում  
 են հոչակաւոր Ձեփու բերդի աւերակները: Դա այն  
 Ձեփուն է, ուր Ասլամազ Դուլի խանը իր զօրքերով ան-

կարող եղաւ դիմադրել 'Դաւիթ բէգի երկու քաջ համահարզների՝ Մխիթար Սպարապետի և Տէր-Աւետիբի՝ հնարագիտութեան և կատաղի գրոհի առաջ:

Երկու ճիւղերը միանալով կազմում են ահագին գետ, որ շարունակում է իր սրընթաց վազքը գէպի արևելք, անցնում է Աչախու և Հալիձորի բերդերի արանքով և մտնում Բազաց աշխարհը:

Չհասած երկու ճիւղերի միախառնման տեղը, մենք մտանք Գեղուայ գետը, որովհետև նրա վրայով կամուրջը քանդուել էր: Չիս լողիլող հասաւ միւս ափը: Որքան և աշխատում էի ոտներս ասպանդակներից հանել և բարձր պահել ջրից, բայց և այնպէս այնքան խորն էր գետը, անգամ ամենածանծաղ մատում, որ ջրով լցուեցին կօշիկներս:

Անցնելով գետը, մենք շրջեցինք այն լեռնապատու ծայրով, որ ընկած է Գեղուայ և Օխչու գետերի մէջինչպէս անջրպետ և յայտնի է Փիրամպու անունով: Այժմ մենք գտնուում էինք Օխչու գետի հովտում և նրա հոսանքի դիմաց գէպի արևմուտք էինք գնում: Այժմ ու ձախ կողմից հովիտն են բացւում խոր ձորակների անկերջ շարքեր: Սարալանջերը՝ անտառապատ, բաց տեղերը՝ մշակուած արտեր, աւելի բարձրերում արօտատեղիներ:

Անցնելով Քրդիկենց ու Հանգ հայ գիւղերի մօտով, և Օխչի թուրք գիւղի միջով՝ մենք մինչև «ժամեր տալը» հասանք Քաջարաց հայկական գիւղը, որ աւելի ծանօթ է Գեջանան թուրք յորջորջմամբ: Նեղ, ծուռուծուռ, զառիվեր, կեղտոտ փողոցներով հասանք գիւղական քահանայի երկյարկանի տնակի առաջ: Իջնելով ձիուց ես հազիւ էի կարողանում քայլել. այնքան յոգնել էի...

\*  
\* \*

Երեցակիները նկատելով մեզ՝ իսկոյն սկսեց աւելել և կարգի բերել պատշգամբը: Ծուռով եկաւ և գիւղի քահանան՝ մի առայգ թուխ-կարմիր տղամարդ: Բար-

ձրացանք պատշգամբը, որի սիւներից մեխած էին բարայժերի գլուխներ ահագին պողերով, իսկ սիւների արանքում բաշուած թօկերից կախկխած էին ծամերի նման հիւսուած բանջարի ցողուններ: Փոքրիկ բակը՝ առանց դարբասի և միայն կիսատ-պուստ քարի պատերով էր բաժանուած փողոցից: Բակին կից՝ գիւղական ժամը.—քառակուսի մի շինութիւն անտաշ քարերից, հողածածկ կտուրով: Ծուռած, փայտէ ցածրիկ զանգատունն էր ցոյց տալիս, որ այդ շինութիւնը մարագ չէ, այլ եկեղեցի: Այսօր նրա մի հատիկ փոքրիկ զանգակի զօղանջիւնն էլ չլսուեց. քահանան զբազուած էր: Եկեղեցուց մինչև դեռը կուշ են եկել խեղճ ու մեղճ տնակներ:

Այն բոլորը ինչոր մարդկային էր՝ ալքատութեան և տգիտութեան դրօշմ էր կրում այդ հրաշալի և ճոխ բնութեան մէջ, որ կարող էր մրցել Զուիցերիայի ամենաղեղեցիկ տեսարանների հետ: Հէնց այդ գեաը. ինչպիսի՞ դեղեցկութիւն և միաժամանակ ի՞նչ ահագին էներգիա նրա անզուսպ ալիքների մէջ: Եւ այդ անբաւ ոյժը, ինչպէս և շրջապատող բնութեան դեղեցկութիւնը և հարստութիւնները կորչում են մեր կեանքի զժբախտ հիւսուածքի շնորհիւ...

Այդ հայ գիւղը շրջապատուած է Փիրդօուզան, Օրչի և Շաբազին թրքաբնակ գիւղերով: Քաջարանց գիւղում 70 ծուխ կամ մօտ 600 շունչ հայեր են ապրում: Եւ այդքան մարդկանց տրուած է միմիայն 439 գետեատին հող, որից 200-ը արօտատեղի: Այդ պատառիկների մի մասն էլ գեռ ուղում են խլել հարեան թուրք գիշաախչները՝ բէգերը... Փաղափար կազմելու համար հողի այդ սակաւութեան մասին բաւական է իմանալ որ նոյն Զանդեզուրի Բազարչայ ռուսական գիւղի 65 ծուխին յատկացրուած է 3262 գետեատին հող:

Բնականաբար քաջարանցցին աղքատ է և պանդըրութիւնը տնտեսական անհրաժեշտութիւն է նրա համար. ± եղ, նոյնքան կով, 50—60 ոչխար ունեցողը լաւ տուն է համարուում: Աջող տարին այդպիսի տունը հա-

զիւ այնքան դարի, ցորեն, չավգար և բակլա է ունե-  
նում որ իրան բաւականութիւն է տալիս: Անաշուղ տա-  
րիներում 6 ամսուայ պաշարը պէտք է դրամով գնել:  
Ինչպէս ծայրը ծայրին հասցնեն աւելի չքաւորները,  
առանց դիմելու պանդխտութեան...

Սեպտ. 20-ից մինչև մայիսի 20 այդ հովիտը ձիւնի  
տակ թաղուած է. հազորդակցութիւնը պահպանուում է  
միայն Բագաց աշխարհի կամ Մագանի հետ: Պոստային  
հազորդակցութեան մասին խօսեցն անգամ աւելորդ է:  
Գարոցի երես չեն էլ տեսել, գիւղական տէրտէրի  
մօտ են քիչ-միչ կարգալ-գրել սովորում... Տխուր մտած-  
մունքներով պաշարուած նայում էի շուրջս, մէկ էլ տես-  
նեմ փողոցում մի ուսու շիկամօրուս մուժիկ, յետքին ա-  
րած մի թուրք, որի ուսով դցուած էր խուրջին՝ ինչ որ  
գործիքներով: Հնարագէտ ուսը ֆոնոգրաֆ էր ման  
ածում դիւզից դիւզ և քաղաքակրթութեան զէթ այդ  
բարիքի մասին կարոց էին հասկացողութիւն կազմել  
ձորերում մուսցուած մարդիկ: Ինձ համար մի սիր-  
պոլի էր այդ «կուլտուրորեքերի» ներկայութիւնը Քաջա-  
րանցի պէս տեղում...

\*  
\* \*

Գիշերը քնել պատշգամբում չէի կարողանում. թա-  
ղիքների և գորգերի մէջ ապաստանուած լուերի լե-  
գիօնները յարձակուել էին ինձ վրայ, ինչպէս մի թշնա-  
մի օտարականի վրայ: Ես ստիպուած էի դիտել աստ-  
ղազարդ երկինքը, լսել հզօր գետի անվերջ երգը մինչև  
լուսաբաց: Ժամի 6-ն էր, երբ մի քաջարանցցի ձիապանի  
և շորեպանի հետ ճանապարհ ընկայ Օխչու գետի հո-  
սանքով դէպի վեր, նպատակ ունենալով անցնել Գո-  
փուջքով Գողթան գաւառը:

Մարդ չէր կշտանում այդ յորդ գետի հմայող գե-  
ղեցիկութիւնից: Ամեն քայլափոխում նա ջրվէժներ է  
ներկայացնում, փրփրած, կապուտակ կոհակները գահա-

վիժուելով ներքև պատում էին հունի գողաւորութիւնների մէջ, յորձանք տալիս և կայտառ դազանի նման դուրս ցատկում, զարնում գետաքարերին և խայտալով առաջ վազում խօլական դռում գոչիւնով: Այդ գետը ուժ ու սիրտ տուող, խիզախութիւն ներշնչող մի ինչ-որ զգացմունք էր զարթեցնում, կարծես կենսուրախ և ազատասէր երգ լինէր նա երգում:

— Այո, հրէն Նազուր-գարան, ուզում ես նրա վերայով բարձրանանք և ուղիղ դուրս գանք Ռամիս, Յազնայ գետի ձորը: Կդ ճամբան աւելի գժուար ա, համա կարճ ա. — ասաց ջորեպանս:

— Ոչ, ես ուզում եմ բարձրանալ Գափուջով, որի բարձրութիւնը, գիտե՞ս, Փոքր Մասիսին հաւասար է...

Մեր գիմաց այն լեռնագօտու մի մասն էր երևում, որ սկսելով Սեանայ լճի հարաւային կողմից հասնում է մինչև Արաքսի ափը և բաժանում Միւնիքը Արարատեան աշխարհից: Մենք տեսնում էինք մեր գիմաց այդ լեռնագօտու այն մասը, որի այն կողմում Գողթման դաւառն է: Այդ ձիւնապատ բարձրաբերձ լեռների գլխին կան մեծ ու փոքր լճեր, որոնց մօտ գնալու համար պէտք էր դիշերելու առանձին նախապատրաստութիւններ, որ ես չունէի: Այդ լեռներից է սկսում և դէպի արևելք ձգւում Օխչու գետի հարաւային եզերքով մինչև Խուստուփը լեռների այն անջրպետը, որ բաժանում է Չարք կամ Կապան դաւառը Մեղրիի մահալից կամ հին Արևիք դաւառից:

Այդպիսով, ուրեմն, մեր առջև Գողթմի լեռնագօտին էր իր Գափուջը դազալով, աջ՝ Փիրամզայի լեռներն էին, ձախ՝ Խուստուփի լեռնաշարքը: Այդ կերպ երեք կողմից սանդրակատար սարերով պարփակուած լեռնադաշտի այս ու այն կողմում երևում էին օրաներ, հօտեր, նախիրներ:

Այդ դաշտի խորաուբորտ տեղերը սառած ձիւնի ահագին շերտերով էին ծածկուած: Մենք քայլում էինք այդ սառցարանների վրայով, որ այնքան ամուր էին, որ չէին կոտրւում մեր կենդանիների ստրերի տակ:

—Աղա, տեսնում ես, հրէն հեռու, սարի գլխին, ձիւնի վրայ սև-սև կէտեր, քարայծերի սուրուներ (հօտեր) են,—ասաց շորեպանս ձեռքով ցոյց տալով դէպի Գափուշղի ձիւնապատ կատարները:

Ճիշտ որ արեգակի տակ փայլող ձիւնի վրայ նշմարւում էին սև շարժուն կէտեր: Քարայծերը չափազանց ճարպիկ են և զգոյշ. նրանց բոյլերը միայն վաղ արշալոյսին են լիջնում ներքև արածելու: Հէնց որ արևը մի քիչ բարձրանում է՝ նրանք բաշտում են վերև ու անառիկ դիրքեր բռնում լեռնաշղթայի վերին մասերում, ուր նրանք աւելի սպահով են սրտոգների դնդակներինց:

Ժամի 8<sup>1</sup>/<sub>2</sub>-ն էր, երբ մենք սկսեցինք վեր բարձրանալ՝ Գողթնը կապանից բաժանող այդ տիտանեան անջրպետի վրայ: Դիր, օլսր-մոլոր, քարքարոտ, նեղ արահեալ միայն սահաւ երթևեկութեան հետքեր էր կրում: Զմեռը, երբ ամբողջ այդ դարիվերն ծածկուած է ձիւնով ճանապարհորդները կապում են իրանց անասունների չորս ոտքերը և սահում նրանց հետ մինչև ներքև:

Վերերբի մեծ մասը հետիոտա անցայ: Սրտի բաբախումը և շնչասպառութիւնը ստիպում էին յաճախ կանգ առնել հանգստանալու համար:

Ժայռերի վրայ նստած յետ էի նայում դէպի Օխչիի ձորը, որ արդէն լքցուած էր մշուշով: Հիւսիսից երևում էր Խուստուփը իր վեղարանման գագաթով:

Միքանի ջանքեր ևս և մենք հասանք Գափուշղի մէջքը...

Մեր առջև էր փռուած Մայր-Արաքսի ընդարձակ հովիտը: Գետի միւս կողմի ափերն էլ էին երևում: Հեռու հորիզոնում՝ դարձեալ լեռների շարք Քամբու գագաթով, որի վրայ դեռ երևում էին ձիւնի բծեր: Դէպի Արաքսը լիջնում էին թէ Գողթնի թէ Պարսկա-Հայաստանի բազմաթիւ ձորերն ու ձորակները:

Բայց ի՞նչ ահագին տարաբերութիւն Գափուշղից հիւսիս և հարաւ: Արաքսի հովիտը խանձուած անապատի տպաւորութիւն է թույնում Սիւնեաց աշխարհի հա-

մեմատութեամբ: Դէպի Արաքսը իջնող ձորերի յատակները միայն՝ օաղխի նման կանաչին էին տալիս, իսկ շուրջը— անապատ: Եւ այնտեղ ուր մարդկային բրախք չի թափւում, արուեստական ոռոգում չկայ— ամայութիւն, քայքայում...

Դէպի Արաքսի հովիտը նայող սարերի լանջերը կարծես մաշկը բերթած վիթխարի մարմիններ լինեն՝ չլիրաւոր, գլգլուած, աւերուած: Բուսական խաւից զուրկ այդ լանջերը մթնոլորտային աղբակների ներգործութեան ենթարկուած՝ քայքայւում են և աւազի, հողի ու քարերի փխրուն, անկայուն շեղների վերածւում: Բուսականութիւնը՝ ցանցառ ու խզճուկ, իսկ ժայռերի ծերպերում թագնուած սառցարանները նուազած...

Բաւական է յորդ անձրև կամ սաստիկ կարկուտ օր հողի, աւազի, խիճի և ժայռերի կտորները, խառնուելով դէպի ներքև գլորուող ջրի հոսանքի հետ, ցեխի թանձր լաւա կազմեն և դառնան Գողթնի պատուհաս սելաներ:

Հին ժամանակներում, երևի, անտառներով էին ծածկուած այդ լանջերը: Ծառերը իրանց ստուերներով աւելի երկար էին պահպանում դեռնի խոնաւութիւնը, բնականաբար խոտերի աճմունքն էլ աւելի ճոխ էր և, հետևաբար, սարերի մակերևոյթը զրկուած չէր դալար գորգանման մարդից: Ուրեմն, այն քայքայումն ու աւերումը, որին ականատես ենք մենք այժմ, հազիւ թէ տեսած լինէին «գեղեցիկ և դինուէտ Գողթանի» գուսանները: Սակայն դարերի ընթացքում շատ արհաւիրքներ, մոնղոլական վայրագութեան ու անդթութեան չափազանց շատ հարուածներ կրեց Հայաստանի և՛ այդ մասը, ուստի զարմանալի չէ, եթէ փոխուեցին թէ մարդիկ և թէ բնութիւնը...

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

## Ա Մ Պ Ի Կ

(Պուշկին)

---

Փսթորկից յետոյ, ճ՛վ վերջին ամպիկ,  
Կապոյտ երկնքում մնացել ես մենիկ.  
Միայն դու ես որ՝ ստուեր ես ածում  
Եւ զուարթ օրը քիչ արամեցընում:

Քիչ առաջ երկինք գու բռնել էիր  
Քեզ բեկբեկում էր ահեզ, գոռ փայլակ.  
Ահա ելի որոտ արձակում էիր  
Կշտացընելու երկիրը անյազ:

Ժամդ հասել է, բնւ է, հեռացիր,  
Անցաւ տարափը, ուռճացաւ երկիր.  
Ձեփիւնն գգուերով ծառեր ու թփեր  
Խաղաղ բարձունքից կը վանի քեզ էլ:

## ՎՐԱՅ ԿԵՆՆՔԻՑ ԵՒ ԳՐԱՆՈՒԹԻՒՆԵՑ

Բանաստեղծ Ակակի Ծերեթեկին:—Վրաց մամուլի յօդուածները հայերի մասին:—Հրատարակչական գործը և գրական նորութիւններ:—Գրական ֆոնդ կազմելու իղձեր:

Վրաց կեանքի վերջին ամսուայ ամենախոշոր երևոյթը—նշանաւոր բանաստեղծ Ակակի Ծերեթեկու հիւանդութիւնն է: Վաթսուներկինգամեայ, բայց դեռ ևս շատ ժիր, առաջնակարգ ծերունի գրողը ստացել է զէմքի կաթուած և կորցրել աչքերից մէկի տեսողութիւնը: Ամբողջ Վրաստանը լարուած ուշադրութեամբ հետևում է իր «սիրելի երգչի» առողջական վիճակին. նրա բժիշկները շարունակ բիւլլետեններ են տպում լրագրներում, վերջինները ծանուցումներ են անում յօգուտ հիւանդի արուած զբաժանան նուէրների մասին, զետեղում են իրանց էջերում ցաւակցական նամակներ ու վիճում նիւթական միջոցներից բոլորովին զուրկ, ալիզարգ հիւանդին անուելիք օգնութեան այս կամ այն ձևի նպատակայարմարութեան մասին... Այդ ցաւակցական գրութիւններում գործածուած մակղիրների ու ածականների մէջ մեր առանձին ուշադրութիւնը զբաւեց «Մեր ժամանակի Ռուսթաւելի» յորջորջումը. ուրեմն կայ հասարակաց կարծիք, որ պահանջում է զնելու Ծերեթեկու անունը 12-րդ դարու վրաց հաշակաւոր բանաստեղծ, «Լնձենաւորը» պօէմայի ստեղծող, Եոթա Ռուսթաւելու անուան կողքին:

Վերջին երկու տարուայ ընթացքում մենք բաւական առատ նիւթ ենք ժառակարարել «Մուրճ»-ի ընթերցողներին պ. Ա. Ծերեթեկու բացասական կողմերի մասին: Մենք չէինք կարող անտես անել այդպիսի մի անուանի գրողի կրքոտ յարձակումները հայերի գէմ: Չէինք կարող խաբել մեր ընթերցողներին, ծածկելով նրանցից եղելութիւնը: Միևնոյն ժամանակ մեզ համար կատարեալ տանջանք է եղել միշտ խօսելու թէ Ծերեթեկու և թէ մեր հարկանների միւս նոյնքան խոշոր բանաստեղծ իշխ. Իլիա Ճաւճաւաձէի անհամակրելի, մարդատեաց գործերի մասին, որովհետև երկուսին էլ սրտանց սիրում ենք

իրբն շնորհալի բանաստեղծների և խոնարհուած ենք նրանց տաղանդի առաջ...

Քառասուն տարուց աւել է, որ ճաւճաւաձէն ու Ակակին (այսպէս է ստորագրուած իշխ. Ծերեթելին իր բոլոր գրուածները) իշխուած են գուզնթացարար վրաց բանաստեղծական կաճառում: Այդտեղ դրանք այն երկու արեգակներն են, որոնց շուրջը պտտուած են այդ շրջանի միւս բոլոր երիտասարդ ու հասակաւոր «երգիչները»:

Ակակու քնարը խիստ բաղմիրանագ է, բայց նրա տիրապետող մոտիւր հուժկու ու թախծալի հայրենասիրութիւնն է: Յաճախ նա երգում է իր սիրելի Վրաստանը յանձին մի չըքնաղ օրիսրդի կամ պճնազարդ, պատուազուրկ տիկնոջ: Նա չէ սիրում կրկնութիւններ և միշտ կարողանում է գտնել արտայայտութեան նոր ձևեր, նոր պատկերներ, նոր համեմատութիւններ: Նրա տաղանդի մի առանձնայատկութիւնը կայանում է արտայայտութեան առասպելականութեան համեմղ պարզութեան մէջ: Զարմանալի կերպով յաջողում է նրան քաղցրալուր, անբռնաղբօս յանգերի հիւսումը, յանգեր, որ մի ախորժալի մուզիկայի են վերածում նրա արտագրութիւնները...

Այդ յատկութիւններն են պատճառը, որ Ակակու բանաստեղծութիւնները անպայման կերպով յափշտակում են ընթերցողներին, թէև նրանք յաճախ չեն պարունակում իրանց մէջ մի առանձին խորութիւն:

Մենք մի այլ անգամ կ'աշխատենք ծանօթացնել մեր ընթերցողներին Ակակու միքանի առաջնակարգ ոտնաւորների բովանդակութեան հետ:

Վերջին երկու ամսուայ ընթացքում «Իվերիան» տպագրեց մի շարք յօդուածներ հայերի մասին: Մենք աւելորդ ենք համարում մանրամասն խօսել նրանց մասին, որովհետև նրանք գլխաւորապէս կրկնութիւններ են յիշեալ լրագրի նախկին որոճածների: Պէտք է լինել ամենաջերմեռանդ «Իվերիական»՝ այդպիսի գրուածների բովանդակութիւնը առանց մի սպանիչ ձանձրոյթի լսելու համար: Շատանանք ուրեմն միայն միքանի աչքի ընկնող կէտերով:

Ինչպէս յայտնի է, 17-դ դարում մի հնդկաբնակ հայ, Իսրայէլ Օրի անունով, ճիգեր էր թափում սպատելու՝ ևւրուպական պետութիւնների օգնութեամբ՝ Հայաստանի մեծ մասը Պարսկաստանի ու Տաճկաստանի տիրապետութիւնից: Այդ եռանդոտ հայրենասէրին նուիրուած յօդուածում, որ կրում է «Իսրայէլ Օրին ու հայկական շովինիզմի հնութիւնը» վերնա-

գիրը, «Իվերիան» (№ 231) հաւատացնում է, իբր թէ յիշեալ հայ մարդը խաբել է Պրուսիայի Վիլհելմ իշխանին, ասելով նրան՝ թէ ինքն ուղարկուած է Եւրոպա նաև այն ժամանակուայ Վրաստանի թագաւոր Գիօրգու կողմից և որ, իբր, թէ Վրաստանը կաղմում է Մեծ Հայաստանի մի մասը և բնակեցըրած է ամբողջապէս հայերով: Վիլհելմը, աւելացնում է «Իվերիան», Օրիին մի նամակ տուեց Գիօրգու թագաւորի անունով, բայց հնգկաստանցի հայն հասցրեց այդ նամակը Նախիջևանի հայ իշխաններին, որոնք և պահեցին այն իրանց մօտ: Իր այդ դատողութիւններին ծառայող փաստերը լրագիրը քաղել է նորերս լոյս տեսած մի բաւական ընդարձակ գըրքից հայերի վերաբերեալ, որի մասին յոյս ունենք հաշիւ տալու մեր ընթերցողներին մօտիկ ապագայում:

Նոյն «Իվերիան» քննադատելով միևնոյն համարում Մեսրոպ վ. Տէր-Սովսիսեանի մի ուսերէն աշխատասիրութիւնը («Раскопки церкви св. Григорія близъ Эчмиадзина»), աշխատում է հերքել նրա ասածները հայոց ճարտարապետութեան ինքնուրոյնութեան մասին և կարծիք է յայտնում, թէ հայերը օգտուել են վրաց եկեղեցական ճարտարապետութիւնից:

Սօսելով Գ. Վերմիշեանի իշխ. Իլիա Ճաւճաւաձէի դէմ գրած յայտնի ուսերէն գըրքի մասին, նոյն լրագիրը (№ 190) հեղնօրէն ասում է, թէ այսօրուայ հայերէն զասագըքերում ուրիշ բաներ է գրած վրաց ու Վրաստանի մասին, քան Վերմիշեանի ասածները և թէ «հայերէն աշխարհագրական քարտէզը հասցնում է Հայաստանի սահմանները մինչև Դոն գետը»... Բայց թողնենք, ընթերցող, այդ տարօրինակ մարդկանց՝ գուարճանալու իրանց անվայել կատակներով ու անցնենք գործին...

Նոյն վարմանալի լրագիրը հաւատացնում է (№ 216), թէ կոմս Մ. Տ. Լօրիսմելիքեանին պէտք է վրացի ընդունել այն պարզ պատճառով, որ նրա նախնիքները, Հայաստանից Վրաստան անցնելով, բնակութիւն են հաստատել այստեղ... Իսա աշխարհի օրէնք է (?), աւելացնում է մեր իմաստուն «Իվերիան» և հայերը իրաւունք չունեն այդ մասին գանգատուելու: «Միթէ Լօրիսմելիքեանի խիղճը չէր տանջի իրան, — բացազանչում է նա — որ հայ համարէր իրան»... Է՛հ, թողնենք այդ էլ, ընթերցող, և էլի շարունակենք մեր ճանապարհը...

Մի ուրիշ համարում «Իվերիան» հարկ համարեց մինչև իսկ խառնուելու «Արարատ»-ի և «Մշակ»-ի միջև ծաղած մի փոքրիկ վէճի մէջ Աւետարանը աշխարհաբար թարգմանելու մասին: Վրաց լրագիրը համամիտ չէ «Մշակ»-ին: Նրա կար-

Ճիշդով ներկայ դարում այլևս ոչ մի աշխարհաբար լեզու չի փրկի կրօնական գրքերը՝ մոռացման տրուելուց, «քանի որ նրանց տեղը կարող են բռնել լաւ վէպերն ու այլ բարոյական գրքերը»... Ինչպէս տեսնում էք, այդ սարսափելի պահպանողական լրագրին խորթ չէ նաև խօսել մէկ-մէկ չափազանց արմատական լեզուով...

Վերջին ժամանակներս բաւական ծաղկել է վրաց մէջ հրատարակչական գործը: Բացի բազմաթիւ մասնաւոր անհատներէ, դրանով պարսպում են միաժամանակ երեք ընկերութիւններ. դրանք են՝ «Վրաց մէջ գրագիտութիւն տարածող» և Թիֆլիսի ու Բուժայիսի «Վրաց հրատարակչական» ընկերութիւնները: Դրանցից առաջինը ձեռք է գարկել այժմ աւելի խոշոր գրուածներէ հրատարակութեան: Մօտ օրերս լոյս կը տեսնեն դրա ջանքերով տպագրուող պատկերազարդ ընդարձակ «Վրաստանի օրացոյցը» (մօտ 400 էրես), «Հաւաքածու վրաց բանաստեղծութիւնների» (երկու մեծ հատոր) և «Վրաց գրականութեան պատմութիւնը»: Բուժայիսի ընկերութիւնը տպագրում է գլխաւորապէս վիպական գրուածներ, իսկ Թիֆլիսի հրատարակչականը կենտրոնացնում է իր գործունէութիւնը առաւելապէս «Ցնորիս-Փուրցելի» լրագրի և նրա պրէմիաների շուրջը: Եկող յունուար ամսից միաժամանակ հանդէս են գալու երկու նոր ինստիտուտ խմբերի հրատարակութիւններ: Դրանցից առաջինը, բազկացած գլխաւորապէս կանանցից՝ կազմակերպել է «Սիլի» (ճառագայթ), իսկ երկրորդը—«Ցիսկարի» (արշալոյս) ընկերութիւնները: Առաջին խմբի նպատակն է տպագրել հանրամատչելի գիտական գրքոյկներ, իսկ երկրորդինը—տալ ընդարձակ վիպական գրուածներ՝ թէ՛ ինքնուրոյն և թէ՛ մանաւանդ թարգմանական:

Առանձին յաջողութիւն ունեցաւ այս տարի յիշեալ «Թիֆլիսի հրատարակչ. ընկերութիւնը»: Դրա տպած «Ցնորիս-Փուրցելի» լրագիրը տարածուած է այժմ, վրաց և հայոց պարբերական հրատարակութիւնների համար մի չլսուած քանակութեամբ—վեց հազար օրինակով... Լրագիրը, որ լոյս է տեսնում շաբաթը 7 անգամ և ունի էլի շաբաթական երկու առանձին պատկերազարդ յաւելուած, չափազանց մեծացրեց տարուայ ընթացքում իր ծաւալը, զինը միևնոյնը թողնելով: Բացի դրանից, նա բարեխղճօրէն կատարեց տուած խոստումը պրէմիաների մասին. նոյեմբերի սկզբին նրա բոլոր բաժանորդները ստացան վրաց հանգուցեալ տաղանդաւոր վիպագրող Ա. Դազբէգի գրուածների ժողովածուն, բազկացած 1204 մեծ

էջերից, այսինքն մի գործ, որ առանձին վաճառուում էր 4 ըուրլուց աւելի գնով: Ձանց ենք անում միւս աւելի մանր պրէմիաները և աւելացնում, որ այդ բոլորը (լրագրի հետ) ստանալու համար ընկերութեանը պէտք էր վճարել միմիայն վեց ըուրլի փող... Շատ ուրախալի երևոյթ:

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ այդ թերթը այժմ շատ է տարածուած ոչ միայն Գութայիսի ու Գորու, այլև Թիֆլիսի հայերի մէջ... Թէ՛ սր աստիճան տարածուած է նա Թիֆլիսի հայերի շրջանում կարելի է մակարերել այն սգաւոր յայտարարութիւններից, որ յաճախ տպւում են այնտեղ ննջեցեալների տէրերից. դրանցով խնդրում են «յուզարկաւորել հանգուցեալին դէպի Հաւարարի Շաճքորեցոց Կարմիր Աւետարան եկեղեցին»... Բաղաքիս շուկաներում ամեն օր կը պատահէք հայ վաճառականներին ու արհեստաւորներին խումբ խումբ կանգնած ու բարձրաձայն «Ցնորիս Փուրցելի» կարգալիս...

Իբրև գրական նորութիւն, կարող ենք հաղորդել նաև այս նոյեմբեր ամսից միաժամանակ երկու մանկական պարբերական շրատարակութեան լոյս տեսնելու մասին: Մեր ընթերցողներին ծանօթ հայագգի տիկին Ան. Թուամանեան—Ծերեթելուն իրաւունք տրուեց հրատարակելու նորից դադարեցրած «Ջէջիլի» (Արտ) ամսագիրը, իսկ երեք վրացի տիկիներին էլ թոյլատրուեց լոյս ընծայելու «Նակագուլի» (Վտակ) անունով մի նոր օրգան, որ տպւում է ամիսը երեք անգամ՝ մի առանձին մանկավարժական—թերթ յաւելուածով: Դա դուրս է գալիս ամիսը 2 անգամ փոքրահասակ երեխաների, իսկ մի անգամ էլ պատանիների համար (մինչև 14 տարեկան). մանկավարժական մասը ծնողների համար է. երեքը միասին արժէ տարեկան 5 ըուրլի: Ինչպէս արդէն լոյս ընծայուած համարներից երևում է, թէ «Ջէջիլի»-ին և թէ «Նակագուլի»-ին աշխատակցում են վրաց համարեա բոլոր յայտնի գրողները: «Նակագուլի»-ի խմբագիրն է յայտնի բանաստեղծուհի տիկին Մարիամ Դէմուրիան, որ կրում է սովորաբար Գանդեգիլի (ճգնաւոր) կեղծանունը:

Ակազի Ծերեթելու հիւանդութիւնը առաջ բերեց վրաց հասարակութեան մէջ ցանկութիւն ոչ միայն նիւթապէս ապահովացնելու այդ նշանաւոր, բայց բոլորովին չբաւոր ազգային գործիչին, այլև հիմնելու գրապէտների (գրողների) մի մշտական ֆոնդ: Գրական ֆոնդի հիմնելու միտքը նոր չէ մեր հարեան

ների մէջ: Նրանք այդ կողմից մի քայլ առաջ են գնացել հայերից: Սրանից 11 տարի առաջ վախճանուեց գժանոցում Ա. Ղազբէզը: Աւանդում էր հոգին ծայրահեղ աղքատութեան մէջ, չունենալով նոյնիսկ իր այնքան սիրած թիւթիւնի համար մի քանի գրօշ, այն մարդը (ընդամենը 43 տարեկան), որ ամբողջ տասը տարի բուռն ոգևորութիւն էր ներշնչել վրացի կարգացողներին իր չքնաղ, հոգեշունչ գրուածներով... Նրա տրագիքական մահը ցնցեց անտարբերներին և թաղումից անմիջապէս յետոյ հաւաքուեց 2000 բուբլի ու յանձնուեց «Վրաց մէջ գրադիտութիւն տարածող ընկերութեանը» գրական ֆոնդ հիմնելու համար: Սակայն շուտով բարձրացած ոգևորութիւնը թուլացաւ ու չքացաւ և ֆոնդի գործը մնաց դարձեալ անշարժ: Ծերունի բանաստեղծին հասած դժբախտութիւնը նորից ուժգին զարկ տուեց այժմ վրաց վաղեմի իղծին և մեզ մնում է ցանկանալ, որ նրանց գոնէ այս անգամ յաջողուի գլուխ բերելու այդ գեղեցիկ գործը:

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ

## ՔՆՆԱԳՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԸՏԵՆՇԱՍՈՒԹԻՒՆ

Ռ. Խանազադի՝ «Թղալիզմ քե Մասերիալիզմ». ուսումնասիրութիւն Թաւրիզ, 1904. դինն է 10 կողէկ:

31 երեսներէ բաղկացած այս գրքոյկը կը շօշափէ այն բաւական բարդ հարցը—թէ ի՞նչ դեր կատարած են ու կը կատարեն իգէալիստ և մասերիալիստ վարդապետութիւնները մարդկային կեանքի պատմութեան մէջ: Հեղինակը՝ հաւատարիմ աշակերտ օրթոտոքս մարկսիզմի, անպայման ջատագով կը կանգնի տնտեսական մատերեալիզմի: Քաղաքակրթութիւններ, մարդկային պատմութիւնը կը ղեկավարուի միմիայն, բացառապէս տնտեսական գործօնով, թէ գաղափարական ֆակտորը ոչ մէկ ազդեցութիւն չունի ազգերու և ժողովուրդներու պատմական բարեշրջումին, էվոլուցիային մէջ: Կամ ուրիշ աւելի հասկանալի խօսքերով, մարդիկ, մարդկային գործերը կը վարուին միմիայն նիւթի՝ տնտեսական ուժի՝ ազդեցութեան տակ, իսկ մնածումը՝ մտքի ուժը՝ մարդերու կեանքին, անոնց ճակատագրին վրայ քոլորովին անզօր են:

Պ. Մանազադը կը հաստատէ, օրինակ, որ մարդկային պատմութեան ամենախոշոր բոպէներէն մէկը, ֆրանսական մեծ յեղափոխութիւնը արդիւնք է միմիայն տնտեսական էվոլուցիայի: Թէ Մոստէսքիէժները, Վոլթէճները, Ռուսօները, Դիւրօները և ամբողջ էնսիկլոպէտիստները, որ վերանորոգեցին մարդկային ուղեղը, սպացուցին, հաստատեցին ու հռչակեցին մարդկային իրաւունքները, ոչ մէկ դեր, ոչ մէկ ազդեցութիւն չեն ունեցած մարդկային կեանքի, մարդկային պատմութեան այդ հսկայական յեղաշրջումին մէջ:

Այսպէս, հեղինակը ակնարկելով պատմական այդ նշանանաւոր դէպքին՝ կը գրէ. «այդ՝ ոչ թէ այն ժամանակուայ գիտնականների քարոզած մտքերի և գաղափարների շնորհով է լինում, այլ և՛ յարդիւնաբերական միջոցների ու տեխնիկայի զարգացման և տնտեսական յարաբերութիւնների՝ փոխուելու շնորհով»: Ուրիշ տեղ մը դարձեալ կ'աւելցնէ. «Եւ ընկաւ (ճոր-Գեկտեմբեր, 1904.

տուրիւնը) ոչ թէ XVIII ու XIX դարերի փիլիսոփաների մեծահատոր շարադրութիւնների ազդեցութեամբ, և այլ իրերի ընական ընթացքի, տնտեսական ներքին փոփոխութիւնների պատճառով»:

Ուրեմն, պարզ է թէ, այս տարամերժ էքսկլիւզիվ աշխարհայեացքի համեմատ՝ մարդկային միտքը, մարդկային գործունէութիւնը ապարդիւն տարրեր են հասարակական երեոյթներու, կեանքի փաստերու առաջացումին ու զարգացումին մէջ: Մարդը դատապարտուած է տեսակ մը ֆատալիզմի և իր բոլոր ճիգերը ուղղելու կեանքի առաջադիմութեան մեքենան այսուայն կողմ, որպէսզի փութացնէ իր բարօրութիւնը—աւելորդ ջանքեր են: Ուրեմն գիտունը իր աշխատանոցը, տնտեսագէտն ու ընկերաբանը իր ուսումնասիրութիւններն ու հետազոտութիւնները, փիլիսոփան իր ընդհանրացումները կատարեն թէ ոչ—միևնոյն է...

Այս անխուսափելի եզրակացութիւնը հեղինակին ալ աչքէն չի վրիպիր, բայց պաշտպանողականի փոխարէն յարձակողական դիրք կը բռնէ և կը ճգնի հեզութեամբ բանին տակէն դուրս ելլել: «Ի՞նչ—բացազանչում է իդիօլոգը.—ուրեմն, մինչև այդ ժամանակ, անհատը ոչինչ անելիք չունի պատմութեան մէջ, նա պիտի ձեռները ծալած նստի, մինչև որ երբի ընթացքը իրանց գործը կատարեն: Կը նշանակէ, մարդիկն էլ նոյն հլու մեքենաներն են կեանքի ձեռքում ու պիտի անխօս հպատակուեն իրանց ճակատագրին...» Ու կ'աւելցնէ. «Պիտի հրպատակուել, թէ չպիտի հպատակուել—այդ ուրիշ ինդիր է, միայն թէ այդպէս է կեանքը և այդպէս է անողոր պատմութիւնը: Սակայն եթէ անհատը անկարող է պատմութեան անիւը շուռ տալ ու նրա ուղղութիւնը փոխել, այդ դեռ իհարկէ չէ նշանակում, թէ նա—անհատը—ոչ մի կատարելիք դեր չունի: Ամենից առաջ, անհատը պէտք է բոլորովին անաչառութեամբ որոշի ու ըմբռնէ պատմութեան դժած ուղին, պիտի ուսումնասիրէ ու հասկանայ նրա ներկայ շրջանի ստեղծած հանգամանքները, պայմանները և ամեն կերպ ջանալով յարմարուել այդ հանգամանքների հետ, ամբողջ ուժերով պէտք է աշխատի, որ մարդկութիւնը կարելի եղածին չափ շատ և հաւասարապէս օգտուի դրանցից»:

Այս բոլոր խօսքերը առանց պատասխանելու եղած առարկութեան, առանց ջրելու այդ շփոթեցնող եզրակացութիւնը, մարդուն իմացական, բարոյական և տնտեսական գործնէութեան բացարձակ անզօրութիւնը կը շեշտեն իրերու ընթացքին վրայ: «Մարդ կեանքի ձեռքում մի հլու մեքենայ է». անհատին միակ

պարտականութիւնն ու գործը պէտք է ըլլայ «յարմարուել» այն հանգամանքներուն ու պայմաններուն հետ, որոնց մէջ կ'ապրի:

Այս տեսութիւնը՝ որքան անընդունելի, նոյնքան վրդովեցուցիչ է, որովհետև ան կը հռչակէ մարդուն անկարողութիւնը՝ իր ճակատագրի տնօրինութեան մէջ:

Ի հարկէ, կասկած չկայ, որ տնտեսական ֆակտորը՝ պատմական էվոլյուցիային մէջ խաղացեր է ու պիտի խաղայ առաջին, մեծագոյն, արեւակն գերը: Բայց այդ միակ գործօնով բացատրել կուտուրայի, բաղաբաղրթութեան վարգացումը — դժուար պիտի ըլլար: Հասարակական երևոյթները չափազանց ըարզ են, այնպէս որ անոնցմէ անսխալ ընդհանրացումներ, օրէնքներ հանելը, շատ հեշտ չէ:

Մարկսին փառքի տիպոսը անոր մէջ է, որ ընկերաբանութեան — սոցիոլոգիային — կիրարկելով գիտական մէթոտը՝ կրցաւ պատմական իրողութիւնները ուսումնասիրել ու բացատրել այնպիսի ձևով մը, որը գիտական է: Մարկսը գտաւ, որ ամբողջ պատմութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ դասակարգային կռիւ մը, և թէ ամբողջ պատմական էվոլյուցիան կը դառնայ տնտեսական առանցքներու շուրջը: Այսպէս Սպինոզայի ցեղակիցը վճռապէս ապացուցեց, որ տնտեսական գործօնը կուտուրական կեանքի խարխիսն է: Բայց թէ Մարկսը չէր ընդուներ այդ գործօնէն դուրս, կամ անոր հետ զուգընթաց ուրիշ գործօն, որը արագացուցած կամ դանցադեցուցած ըլլայ պատմական էվոլյուցիայի ընթացքը — հազիւ թէ կարելի ըլլայ հաստատապէս պնդել այդ մասին:

Եթէ ինքը՝ Մարկսը՝ վերածնուէր ու իրեն հետևողներուն մէջ ընկնէր, ապահովաբար պիտի վերաւորուէր իրեն վերագրուած այդ պապական անսխալականութեան համար, որով կը խօսին պ. Սանազադները...

«Կապիտալի» հանճարեղ հեղինակն անգամ իր մէկ քանի ենթադրութիւններուն մէջ սխալուեցաւ: Իր կատարած փառաւոր ճիգէն հիպնոսացած՝ կը հաստատէր որ կապիտալիստ կազմակերպութիւնը իր մէջ պարունակող քայքայման ուժին իսկ հետևանքով՝ պիտի տապալի քիչ ժամանակի մէջ — և Մարկս այդ ժամանակը 19-րդ դարէն անդին չէր անցներ: Բայց անցաւ 19-րդ դարը և բուրժուա կազմակերպութիւնը դեռևս կանգուն է և ո՞վ գիտէ, թէ երբ կը հասնի Մարկսի գուշակութիւնը: Մարկս կը հաստատէր նոյնպէս, որ փոքրիկ սեփականատիրութիւնը քիչ ժամանակի մէջ տեղի պիտի տայ մեծ սեփականատիրութեան առաջ: Բայց այսօր ներուպայի մէջ կա-

տարուած վիճակագրութիւնները ցոյց կուտան, թէ Մարկս իր այդ ենթագրութեան մէջ ալ սխալած է: Փոքրիկ սեփականատիրութիւնը՝ մանաւանդ գիւղատնտեսական՝ ոչ միայն չի ջընջուիր, այլ կարելի է ըսել, որ կ'աճի հետզհետէ, գոնէ առայժմ:

Այս ամենը կ'ապացուցանեն, որ վտանգաւոր է ըսցարձակ վճիռներ արձակել: Մարդկային ամեն երևոյթ յարաբերական է: Այսօրուան ճշմարտութիւնը՝ վաղուան սխալն է: Մարդկային միտքը՝ այս կամ այն հեղինակութեան անուշով—որքան որ ալ անոնք անժխտելի ու բարձր ըլլան—երկաթէ շրջանակներու մէջ աննելը՝ մեղանչել է նոյնիսկ էվոլուցիայի օրէնքին դէմ:

2.

Ձերտալի՝ «Սիրոյ Զոհեր» պօէմա, Բագու, 1904. դ. 3 կողմէ:

«Սիրոյ Զոհեր»-ուն նիւթը կը դառնայ խարուած և մայր դարձած աղջկան մը շուրջը, որ «անպատուութիւնէ», ամբոխային դատաստանէ խոյս տալու համար գետակի մէջ կը նետէ իր գաւակը և յետոյ իր գործած հղեռնէն խղճահարուած՝ ինքն ալ կ'երթայ միանալ իր անպսակ սիրոյ պտուղին:

Աղջիկ-մայրերու դրաման հին է ու սովորական: Հետաքրքիրը այս պօէմային մէջ այն է, թէ ինչպէս մշակած է հեղինակը այդ հասարակ թեման: Շերամը արտիստի խառնուածք չունի: Տաղաչափական արուեստի նկատմամբ ունեցած հասկացողութիւնն իսկ շատ թերի է: Մաքուր ներշնչումի փոխարէն ան կը դիմէ այլևայլ հնարքներու... «Սիրոյ Զոհեր»-էն չափազանց ոռմանտիկ հոտ կը բուրէ: Եւ այդ՝ գուցէ անոր համար, որ հեղինակը անկեղծօրէն չէ զգացած իր նիւթը: Այդ աղջիկ-մոր դրաման աւելի մտածին է, քան իրական: Պատկերին շրջանակը ոռմանտիկական հասարակ էֆֆէկտներովը կազմուած է: Հեղինակը պօէման «ամարանոցային կեանքից» է վերցուցեր, որպէսզի դիւրութիւն ունենայ ոռմանտիկ գէկորի մը՝ այսինքն լուսնեակ գիշեր, անտառ, գետակ և այլն-ի մէջ պարզելու: «Սիրոյ Զոհերը» ոչ միայն զեղարուեստի, այլև հոգեբանութեան ու տրամաբանութեան պարզ օրէնքներուն դէմ կը մեղանչեն: Շերամի հերոսուհին՝ հօրը յանցանքը դաւակին քաւել կու տայ...

Հայրդ ինձ խաբեց, հիմայ դու քաւիր  
Նորա յանցանքը, փրկիր, ազատիր  
Նորա խեղճ հոգին...

2.

«Պեղատու ծառերի բուծարան եւ այգիք» Եղբ. Գ. և Մ. Փրիդոնեանց-  
ների:

Չնայած նրան, որ Անդրկովկասը թէ իր կլիմայով և թէ հողով շատ նպաստաւոր է այգեգործութեամբ պարապելու հա-  
մար, այս վերջինս մեղ մօտ շատ դանդաղ է աճում: Սանգարող  
պատճառների մէջ վերջի տեղը չի բռնում և այն հանգաման-  
քը, որ մեր այգեատէրերը ծանօթ չեն և չեն կարողանում շոկել  
պտղատու ծառերի լաւ և շահաւէտ տեսակները, այլ աճեցնում  
են այն տեսակները, որոնք դեռ պապերի ժամանակից ընդու-  
նուած են այս կամ այն տեղում: Մինչդեռ արտասահմանեան  
այգեգործութիւնը առաջ է բերել ահագին քանակութեամբ  
պտուղների նոր տեսակները, որոնք թէ իրանց պտղատու-  
թեամբ, թէ գիմացկանութեամբ և թէ համով, հոտով գե-  
րադանցում են տեղականները:

Մեր առաջ դրուած Եղբ. Փրիդոնեանցների հրատարակած  
ցուցակը՝ ծանօթացնում և առաջարկում է մեր այգեատէրերի  
ուշադրութեան թէ արտասահմանեան և թէ Անդրկովկասեան  
ընտիր տեսակների հետ: Եղբ. Փրիդոնեանցների պտղատու  
ծառերի բուծարանը այդ տեսակ հիմնարկութիւնների շարքում  
բռնած է առաջնակարգ և պատուաւոր տեղերից մէկը:

Եղբ. Փրիդոնեանցները, ունենալով բուծարանին կից սե-  
փական այգիներ, նախ քան մի որեւէ տեսակը գնողներին առա-  
ջարկելու, փորձում են նրա յատկութիւնները իրանք: Նրանց  
բուծարանի երկրորդ ոչ պակաս գին ունեցող առաւելութիւնն  
է տեսակների անուանացուցակի ճշտութիւնը:

Թէ իր արտաքինով և թէ բովանդակութեամբ Եղբ. Փրի-  
դոնեանցների հրատարակած ցուցակը շատ տարբերում է  
առհասարակ հայերէն լոյս տեսնող այդ կարգի գործերից և աւելի  
շուտ յիշեցնում է արտասահմանեան և ուսաց լաւ Փիրմաների  
հրատարակած ցուցակները:

Գիրքը ունի հետևեալ մասերը.

ա) Տունկեր ուղարկելու պայմանները:

բ) Միքանի խօսք պտղատու այգիներ գցելու և ծառեր  
տնկելու մասին:

գ) Ցուցակ պտղատու ծառերի և թփիկների:

դ) Բոյսերի հիւանդութիւնը և նրանց բժշկութիւնը:

ե) Բոյսեր բժշկելու գործիքներ և մթերքներ:

Իսկ գրքի վերջում բերուած է գինեգործութեան մէջ գոր-  
ծածուող մեքենաների և գործիքների ցուցակը:

Եթէ աչքի առջ առնենք այն հանգամանքը, որ հայ գիւղատնտեսական գրականութեան մէջ համարեա չկայ ոչ մի ձեռնարկ, որը ծանօթացնէր այգեգործութեան մէջ պահանջուող նոյնիսկ տարրական ճշմարտութիւնները և հասկացողութիւնները հետ, կը հասկանանք, թէ ինչ մեծ ծառայութիւն են արել հայ այգետէրերին Եղբ. Փրիդոնեանցները, կցելով իրանց գրքոյկին ք և և մասերը:

Գիրքը զարդարուած է մեծ թուով յաջող և գեղեցիկ կատարուած նկարներով: Ցանկալի է, որ այս գիրքը մեծ քանակութեամբ տարածուէր մեր այգետէրերի մէջ, մանաւանդ որ դրա համար առանձին ծախք չէ հարկաւոր, պէտք է միայն գիւմիլ Եղբ. Փրիդոնեանցներին (Ст. Скр. и Зак. ж. д. плодовые сады и питомники Бр. Г. и М. Придоновыхъ) որոնք ցուցակը ցանկացողներին ուղարկում են ձրի:

ԵՐ. ՍԱՐ.

### ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԿԵՐ

- 1) Ռ. Ստնազատի՝ «Իգէալիզմ թէ Մատերիալիզմ» ուսումնասիրութիւն. (արտ. «Տարազ»-ից) Թաւրիզ, 1904. գ. 10 կ:
- 2) «Լուսնեակ գիշերին» էսկիզ, Իս Էկալաձէի (Բոսանթ Կօբա) թարգմ. վրաց. Ղ. Կ. Թիֆլիս, 1904, գ. 5 կ:
- 3) Շերամի՝ «Միրոյ Զոհեր» պօէմա, Բագու, 1904, գ. 3 կ:
- 4) Սաժակի՝ «Հարկերը Տաճկաստանում» ուսումնասիրութեան մի փորձ, Բագու, 1904. գ. 40 կ:
- 5) Ա. Ահարոնեանի՝ «Լուսթիւնը» վէպ. Թիֆլիս, 1904, գ. 60 կ:
- 6) Յուսիկ եպիսկոպոսի՝ ա) «Հայրապետ. աթոռի մասին համառօտ տեսութիւն» բ) «Թուղթ Սիմէօնի Սոյ կաթողիկոսի առ Փիլիպ. Էջմիածնի կաթողիկոս» — (արտ. «Արարատ» ամսագրից) Վաղարշապատ, 1904. գ. 30 կ.:
- 7 Հաշիւ Հայոց Դրամատիկական Ընկ. 1903/4 տարեշրջանի գործունէութեան Թիֆլիս, 1904:
- 8) Տարևոր Տեղեկագիր Հանրական Ատենին Յանձանձանաց հայազգ. հաստատութեանց Բատալիոյ վասն 1903 ամի. Նոր-Ձուղա 1904:
- 9) Ե. Թոփչեանի՝ «Լոյս» գրպանի պատկերազարդ օրացոյց 1905 թ. գ. 20 կ.:

- 10) Ե. Թոփչեանի՝ «Լոյս» պատկերազարդ պատի հատուածական օրացոյց 1905 թ. գ. 50 կ:
- 11) Ե. Բազդասարեանի ձայնագրած «Մի լար բլբուլ» երգը. գ. 50 կ:
- 12) Կ. Բասմաշեանի՝ «Անիի յիշատակ» լուսանկարչական հաւաքածոն, Անիի յատակագծով և հայ ու ֆր. բացատրութեամբ Պարիզ, 1904, գ. 80 կ:
- 13) А. С. Дагбашянъ: «Полный русско-армянскій словарь», VII выпускъ, 1904, Тифлисъ, ц. 1 р. 20 к.
- 14) Յովհ. Թումանեանցի՝ «Սասունցի Դաւիթը» հրատ. Ստ. Լիսիցեանի և ընկ. Թիֆլիս, 1904, գ. 15 կ:
- 15) Յովհ. Թումանեանցի՝ «Անուշ» հրատ. Ստ. Լիսիցեանի և ընկ. Թիֆլիս, 1904, գ. 15 կ.:
- 16) Յովհ. Թումանեանցի՝ «Լեզեաններ» հրատ. Ստ. Լիսիցեանի և ընկ. Թիֆլիս, 1904, գ. 15 կ:
- 17) Շանթի՝ «Երգեր» հրատ. Ստ. Լիսիցեանի և ընկ. Թիֆլիս, 1904, գ. 15 կ:
- 18) Շանթի՝ «Լեռան Աղջիկը» հրատ. Ս. Լիսիցեանի և ընկ. Թիֆլիս, 1904, 15 կ:

## ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՀԻՑ

ԲԻՕԼՈԳԻԱՅԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ XIX ԴԱՐՈՒՄ \*)

### VII

Բիօլոգիական նշանաւոր տեսութիւններ: Ժառանգականութեան վերաբերեալ թէօրիաներ: Զարգացման և «աղէաների» թէօրիաներ: Զարկ Դարվինի վարդապետութիւնը:

Նախորդ գլուխներում ես փորձեցի ժամանացոյց անել անցեալ դարի ամենանշանաւոր բիօլոգիական հետազօտութիւնների վրայ: Հասկանալի է, որ մի այսպիսի յօդուածում անկարելի է ամփոփել մի բեղմնաւոր դարի բոլոր հետազօտութիւնը

\*) Տես «Մուրճ», № 8.

ների պատմութիւնը. օրինակ, ես չխօսեցի մի շարք հետաքրքիր ուսումնասիրութիւնների մասին, որոնք վերաբերում են համեմատական մարմնագննութեանը (сравнительная анатомія) նոյնպէս անկարող եղայ կանգ առնել բնախօսական շատ կարևոր հետազոտութիւնների վրայ, որոնց մասին խօսելը շատ կընդարձակէր յօդուածիս ծաւալը:

Առաջ քան վերջացնեմ յօդուածս կարևոր եմ համարում միքանի խօսք ևս ասել անցեալ դարի բիօլոգիական նշանաւոր տեսութիւնների մասին:

Առհասարակ նկատուած է, որ երբ կատարուում են բազմաթիւ ուսումնասիրութիւններ և հարստանում է գիտութեան փաստային մասը, այն ժամանակ գիտնականների մէջ նկատուում է ձգտում ընդհանուր հայեացք ձգել այդ փաստերի վրայ ամփոփել նրանց և ընդհանուր եզրակացութիւններ դուրս բերել նրանցից: Պատահում է երբեմն, որ այդ եզրակացութիւններից միքանիսը հաստատուած են լինում այնպիսի ճիշտ գիտողութիւնների վրայ, որ ստանում են օրէնքների նշանակութիւն:

Նոյն երևոյթը տեղի ունեցաւ նաև անցեալ դարի բնագիտների մէջ, որոնք ձգտում էին ընդհանուր փիլիսոփայական հայեացք ձգել ժողովուած բազմաթիւ գիտողութիւնների վրայ: Այս հոսանքը մանաւանդ բնական էր նրանով, որ ժողովուած փաստերը իրանք մղում էին գիտնականներին դէպի լայն ամփոփումներ, դէպի սպեկուլացիա:

Իրան միթէ ապշեցուցիչ չէ այն գիւտը, որը ցոյց է տալիս բուսական և կենդանական թագաւորութեան զարմանալի նմանութիւնը: Բոյսերն ու կենդանիներն կազմուած են միևնոյն հիմնական տարրերից—բջիջներից, բոյսերը շնչում են կենդանիների և մարդկանց նման. բոյսերը յաճախ մննդուած են կենդանիների նման և յաճախ շարժումներ են անում վերջինների նման.—անս մի շարք փաստեր, որոնք չէին կարող չկաշկանդել գիտնականների միտքը: Բոլորին հետաքրքրում էր այդ զարմանալի նմանութեան աղբիւրը:

Միւս կողմից հետաքրքիր միտքը որոնում էր պատճառներ այն զարմանալի երևոյթի, որի հիման վրայ, բոլոր կենդանի էակների սաղմերը իրանց զարգացման առաջին շրջանում բոլորովին նման են իրար—այսինքն ներկայացնում են մի հատիկ բջիջ: Իսկ շատ կենդանիների սաղմեր նման են լինում իրար նաև իրանց զարգացման յետագայ շրջաններում: Որքան աւելի էին գիտնականները խորասուզուած այս տարօրինակ ե-

երևոյթները քննութեան մէջ, այնքան աւելի հետաքրքիր խընդիրներ էին ծագում:

Ամենախորհրդաւոր երևոյթներից մէկը ժառանգականութեան երևոյթն է, որը, ինչպէս յայտնի է, կայանում է նրանում, որ ծնողների ֆիզիկական կամ հոգեկան յատկութիւնները անցնում են ժառանգներին: Չնայած որ դրանք ամենասովորական և հանրածանօթ երևոյթներ են՝ այնուամենայնիւ նրանց մասին դեռ որոշ հայեացք չէ կազմուել գիտութեան մէջ:

Մեզ մինչև այժմ դեռ յայտնի չէ, ծնողների ո՞ր յատկութիւնները եւ ո՞րպիսի պայմաններում կարող են անցնել ժառանգներին: Օրինակ ինչո՞ւ մէկ ղէպըում որդիները ժառանգում են մօր ղէպըի գծերը, միւս ղէպըում հօր բնաւորութիւնը կամ ընդհակառակը: Ինչո՞ւ յաճախ որեւէ մարդու առանձնա-յատկութիւնները ժառանգում են ոչ թէ որդիները, այլ թոռները, հօրեղբորորդիները կային: Տարաբախտաբար այս հարցերի համար որոշ պատասխան չկայ գիտութեան մէջ: Ժառանգական երևոյթները մօտաւորապէս միատեսակ են արտայայտւում թէ կենդանական և թէ բուսական թագաւորութեան մէջ:

Որ այս երևոյթները դեռ բոլորովին մութն են՝ հաստատւում է նրանով, որ գիտութիւնը մ'ինչեւ այժմ՝ ըլորովին անգոր է եղել զուշակելու ժառանգական երևոյթները բացի միջանի ղեպըներից: Օրինակ գիտնականները այժմ անկարող են ասել, թէ որեւէ մարդու կամ կենդանու ձր առանձնայատկութիւնը կը ժառանգուի:

Գիտնականները շատ զբաղուեցին ժառանգական յատկութիւնների անցնելու պրոցեսով. վերև տօիթ ունեցայ ասելու, որ բոլոր էակների սաղմերը իրանց զարգացման առաջին շրջանում ներկայացնում են մի հատիկ խոշորացուցային բջիջ: Գիտնականները այժմ չեն կասկածում, որ այդ բջիջ-սաղմերը արդէն ստացած են լինում իրանց ծնողների առանձնայատկութիւնները: Ուրեմն իւրաքանչիւր խոշորացուցային սաղմ արդէն պարունակում է իր մէջ իր ծնողների ֆիզիկական եւ հոգեկան առանձնայատկութիւնների սիստեմը. չնայած որ այդ շրջանում սաղմը դուրկ է լինում որեւէ գործարանից:

Օրինակ մի որեւէ թռչունի սաղմը ներկայացնում է սկզբբում մէկ չնչին կէտ. սակայն այդ «չնչին կէտը» իր մէջ պարունակում է ծնողների փետուրների, գոյնի, կտուցների ձևի, բնաւորութեան գծերը սաղմային դրութեան մէջ: Անս ամենա-

տարօրինակ երևոյթներէց մէկը: Ուղղակի անհնարին է երևակայել այս երևոյթը:

Մի շարք երեւելի գիտնականներ ուսումնասիրելով այս երևոյթը փորձեցին կազմել թէօրիաներ այս երևոյթները բացատրելու համար: Մէկ թէօրիա էլ առաջարկեց հոշակաւոր Չարլզ Դարվինը: Սակայն թէ Դարվինի «պանզենեզիսը» (ժառանգականութեան վերաբերեալ հիպոթեզ) և թէ միւս գիտնականների վարդապետութիւնները այժմ համարոււմ են անհիմն և անզօր ժառանգական երևոյթները բացատրելու համար: Ուստի աւելորդ էմ համարոււմ կանգ առնել նրանց վրայ:

Կենդանիների մէջ եղած նմանութիւնը արիթ տուեց գիտնականներին ենթադրել, թէ նրանք ունեցել են մէկ ընդհանուր ծագում: Կենդանիների զանազան տեսակները առաջացել են ոչ թէ անկախ մէկը միւսից, այլ կապուած են իրար հետ ազգակցական կապերով—ահա այն եզրակացութիւնը, որին անխուսափելի կերպով հասան գիտնականները քննելով ժողովուած բազմաթիւ փաստերը: Պէտք է ասել, որ այդ հայեացքի հաստատուելը գիտութեան մէջ ահապին հետեւանքներ ունեցաւ և մեծ զարկ տուեց գիտութեան զարգացման: Անցեալ դարի բիօլոգիական հետազոտութիւնների մեծագոյն մասը կատարուած է այդ գաղափարի զրգմամբ:

Սակայն նախորդ գլուխներում մենք տեսանք, որ խկապէս հիմնական տարբերութիւններ չկան կենդանական և բուսական թագաւորութիւնների մէջ, ընդհակառակը այդ երկու թագաւորութիւնների ներկայացուցիչները իրանց կեանքի գլխաւոր ֆունկցիաներով և իրանց կազմութեամբ շատ նման են իրար: Ահա այս հանգամանքը ստիպեց գիտնականներին աւելի ևս ընդարձակել իրանց տեսութիւնը. գիտնականները հասան այն եզրակացութեան, թէ ոչ միայն բոլոր կենդանիներն են կապուած ազգակցական կապերով, այլև առահասարակամբողջ կենդանական եւ բուսական աշխարհները ունեցել են մէկ ընդհանուր սկզբնաւորութիւն, մէկ ընդհանուր ծագում: Այդ կարծիքը մասամբ ապացուցոււմ է նրանով, որ երկու թագաւորութիւնների սահմանում այժմ էլ գտնուում են այնպիսի էակներ, որոնք մասամբ բոյս են, մասամբ կենդանի («զօֆիտները»—կենդանաբոյսերը): Նոյն եզրակացութեանն են բերում նաև սաղմագիտական և այլ շատ գիտողութիւններ:

Շնորհիւ այս նոր գաղափարների՝ բիօլոգների աշխարհայեացքը զարմանալի կերպով ընդարձակուեց, բոլորի առաջ լայն

հորիզոն բացուեց. նոր վարդապետութիւնը ներկայացնում էր օրգանական աշխարհը իբրև մէկ ընտանիք, որի անդամները կապուած են սերտ ազգակցական կապերով. թէ բոյսերը և թէ կենդանիները՝ ունենալով ընդհանուր ծագում՝ ցրուել են երկրագնդի զանազան կողմերը, ենթարկուել են զանազան ազդեցութիւններին, ուստի և զգալի կերպով փոփոխուել են: Եւ ինչպէս ցոյց են տալիս երկրաբանական հետազոտութիւնները՝ այդ դարաւոր փոփոխութիւնները ընդհանրապէս եզել են յօգուտ առաջադիմութեան, յօգուտ զարգացման: Այժմեան կենդանիները և բոյսերը, ըստ վերոյիշեալ վարդապետութեան, նախնական պարզ էակներին սերունդներն են:

Այս տեսութիւնը կոչուում է զարգացման կամ առաջադիմութեան թէօրիա, որ այժմ ընդհանուր ընդունելութիւն է գտել գիտնականների շրջանում:

Երկրաբանութիւնը զօրեղ փաստեր է տալիս ինպատ այդ թէօրիայի: Ըստ երկրաբանների հետազոտութիւններին՝ երկրագնդի շերտերը պարունակում են իրանց մէջ հին ժամանակներում ապրած կենդանիների և բոյսերի քարացած մնացորդները, որոնք հարուստ նիւթ են մասակարարում երկրագնդի պատմութեան համար: Երկրագնդի ամենամեծ շերտերում գտնուում են միմիայն ամենապարզ էակներին մնացորդներ, իսկ երբ հին շերտից անցնում էք դէպի միջին և նոր շերտերը, յաջորդաբար հանդիպում էք աւելի ու աւելի զարգացած ու բարդ կազմուածք ունեցող բոյսերի և կենդանիների մնացորդներին:

Այդ ինչորը ամենից աւելի պարզեց հանճարեղ Ֆրանսիացի գիտնական՝ Ժորժ Կիւվիէն, որի զարմանալի նուրբ երկրաբանական հետազոտութիւնները իսկապէս հիմք դրեցին այժմեան պալեօնտոլոգիային: Սակայն Կիւվիէն իր ժողոված նշանաւոր փաստերին տարաբախտաբար բոլորովին սխալ բացատրութիւն տուեց: Կիւվիէն և նրա հետ միասին միւս հռչակաւոր գիտնական՝ Լուի Ագասիսը կարծում էին, թէ երկրագնդի կեղեր ժամանակ առ ժամանակ ենթարկուել է սարսափելի աղէտների, որոնք սրբել, ոչնչացրել են գոյութիւն ունեցող բոյսերը և կենդանիները. մեռած կենդանիներին և բոյսերի դիակները պահպանուել են երկրագնդի շերտերում: Ուրեմն՝ ըստ Ագասիսի և Կիւվիէի երկրագնդի պատմութիւնը բաժանուում է շրջանների, որոնցից իւրաքանչիւրը վերջացել է մի սարսափելի աղէտով, որի շնորհիւ անհետանում էր ամբողջ օրգանական աշխարհը: Աղէտից յետոյ նորից ինքնաբերաբար առաջանում էին կենդանիներ և բոյսեր, որոնք զարգանում էին և բազմանում, մինչև որ նոր աղէտը նորից ոչնչացնում էր նրանց:

Այս վարդապետութիւնը յայտնի է աղէտների թէօրիա-  
անունով (теория катастрофы), որը նկարագրել է ժորժ Կիւլիէն  
իր «երկրագնդի յեղափոխութիւնների և այն փոփոխութիւննե-  
րի մասին, որոնք ծագում են նրանց (յեղափոխութիւնների)  
շնորհիւ կենդանական թագաւորութեան մէջ» աշխատութեան  
մէջ:

Ըստ այս ուսմունքի՝ երկրագնդի զանազան շերտերում  
գտնուած կենդանիների մէջ չկայ ազգակցական կապ, ու-  
րովհետև իւրաքանչիւր շրջանի բոլոր էակները կատարելա-  
պէս ոչնչացել են աղէտի շնորհիւ, իսկ նոր շրջանի էակները  
բոլորովին նոր են ծագել, ուրեմն ոչ մի կապ չկայ նորերի և  
հնրերի մէջ:

Ուրեմն «աղէտների թէօրիան» կատարելապէս հակասում  
է վերև առաջ բերած զարգացման թէօրիային: Ըստ վերջինի  
օրգանական աշխարհը պատմութեան ընթացքում ամենևին չէ  
ունեցել ընդհատումներ, կենդանի էակների շղթան չէ կը-  
տրուել երբեւիցէ, ուրեմն հին ու նոր կենդանիները շաղկա-  
պուած են իրար հետ ազգակցական կնպերով այնպէս, ինչպէս  
մի որևէ ազգի հին և նոր սերունդները կապուած են լինում  
իրար հետ:

Ո՞րը այդ երկու թէօրեաններից տարաւ յաղթանակը:

Անցեալ դարի առաջին կիսում գիտութեան մէջ տիրում  
էր «աղէտների թէօրեան» թէև կային գիտնականներ, օրինակ  
հուշակաւոր Ժան Լամարկը, Սենտ Լիլերը, որոնք այդ թէօրեան  
գտնում էին անհիմն, սակայն դրանց առարկութիւնները չէին  
ունենում ցանկալի ազդեցութիւն: Նոյնիսկ XIX դարի երկրորդ  
կիսում դեռ կային այնպիսիներ, որոնք պաշտպանում էին ա-  
ղէտների թէօրիան: Օրինակ վաթսուներկան թուականներում  
լոյս տեսաւ յայտնի գիտնական Լուի Ագասիսի ընդարձակ աշ-  
խատութիւնը «Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների  
բնական պատմութիւնը» խորագրով:

Այդ աշխատութեան մէջ Ագասիսը միանալով ժորժ Կիւ-  
լիէի կարծիքին՝ յայտնում է, թէ կենդանի էակների պատմու-  
թիւնը բաժանուած է միջանի՝ մէկը միւսից անկախ՝ շրջաննե-  
րի: Վերջիններից իւրաքանչիւրը ունէր իր բնորոշ ֆլորան և  
ֆաունան, որոնք շրջանի վերջում ոչնչանում էին, իսկ նոր  
շրջանի սկզբում առաջանում էր այնպայ պատճառներով բոլո-  
րովին նոր ֆլորա և ֆաունա:

Մակայն յետադայ երկրաբնական ուսումնասիրութիւննե-  
րը ցոյց տուեցին, որ Ագասիսի և Կիւլիէի վարդապետութեան  
հիմնական միտքը սխալ է. բոլոր դիտողութիւնները բերում

էին այն եզրակացութեան, թէ երկրագնդի կեղեւը պատմութեան ընթացքում չէ ենթարկուել պարբերական յեղափոխութիւնների կամ աղէտների: Այս ուղղութեամբ կատարուած աշխատութիւններից ամենանշանաւորը պատկանում է հանճարիղ անգլիացի գիտնական Չարլզ Լեաէլին, որի հոշակաւոր «Երկրաբանութեան սկզբունքները» յոյս տեսաւ 1830 թուականին: Անգլիացուն յատուկ հաստատամտութեամբ քննելով վերոյիշիալ խնդիրը՝ Լեաէլը ակներև դարձրեց հին վարդապետութեան հիմնական սխալները, ապացուցանելով միևնոյն ժամանակ, որ երկրագնդի կեղևը զարգացել է առանց ընդհատումների, առանց յեղափոխութիւնների:

«Աղէտների թէօրիայի» հիմնական միտքը սխալ լինելով՝ ինքնըստինքեան ընկնում էին նաև թէօրիայի այն մասերը, որոնք հաստատուած էին սխալ հիմքի վրայ: Այդպիսով պարզուեց, որ անհիմն է կենդանիների և բոյսերի բաժանումը՝ մէկը միւսից անկախ խմբերի:

Նոր հոսանքը քանի գնում նոյնքան մեծ ծաւալ էր ստանում. վերջիվերջոյ գիտնականները հասան այն համոզմանը, որ միակ լուրջ ու գիտական տեսութիւնը զարգացման կամ էվոլյուցիայի թէօրիան է և այդ համոզմունքը տիրում է գիտութեան մէջ մինչև մեր օրերը:

Մէկ խնդիր այնուամենայնիւ մնում էր անորոշ, չպարզուած: Մենք ստեցինք, որ գիտնականները համոզուած էին, թէ այժմեան կենդանի էակների բազմաթիւ տեսակները առաջացել են սկզբնական պարզ տեսակից և զարգանալով հասել են մեր օրերին: Այս տեսակէտը ընդունում էր գիտնականների մեծագոյն մասը: Բայց, երբ խօսք էր լինում այդ առաջադիւմութեան կամ էվոլյուցիայի պատճառների մասին, կարծիքները բաժանուում էին:

Անցեալ դարի սկզբում այդ խնդրի մասին իր հեղինակաւոր կարծիքը յայտնեց ժան Լամարկը, որը համաշխարհային առաջագիմութիւնը վերագրում էր միջավայրի արգեցութեանը. տարբեր միջավայրերում ապրող օրգանիզմներ ստիպուած են լինում փոփոխուել իւրաքանչիւրը յարմարուելով տեղական պայմաններին: Իսկ այն օրգանիզմները, որոնք անկարող են լինում յարմարուել միջավայրին, ոչնչանում են:

Գիտնականներից շատերը ընդունում էին, որ միջավայրի արգեցութիւնը իրաւ կարող է փոփոխութիւններ առաջ բերել օրգանական աշխարհում, սակայն այդ գործօնին չէին տալիս

հիմնական նշանակութիւն. նրանց կարծիքով էվոլյուցիայի միակ պատճառը չէր կարող լինել միջավայրի ազդեցութիւնը:

Այս խնդիրը պարզուեց XIX դարի վաթսուներեակն թուականներին շնորհիւ Չարլզ Դարվինի հանճարեղ աշխատութիւնների: Դարվինի մատուցած բազմաթիւ ծառայութիւններից ամենամեծը կայանում է նրանում, որ նա գտաւ համաշխարհային հսկայական պրոցեսի—էվոլյուցիայի պատճառը: Ինչո՞ւն է կայանում Դարվինի գիտը: Դարվինը ձգտում էր պարզել այն հարցը, թէ ինչո՞ւ կենդանիները և բոյսերը առաջադիմել են դարերի ընթացքում \*):

Երկար ժամանակ Դարվինը պատասխան չէր գտնում այդ հարցի համար, բայց վերջապէս մէկ կողմնակի հանգամանք օգնեց խնդիրը պարզելու: Պատահմամբ Դարվինի ձեռքն ընկաւ Թովմաս Մայլթուսի մէկ աշխատութիւնը, որի մէջ Մայլթուսը այն կարծիքն էր յայտնում, թէ երկրադնդի վրայ ազդաբնակութեան աճումը կատարւում է սաստիկ արագ կերպով, մինչդեռ ապրուստի միջոցները չեն շատանում նոյնպէս արագութեամբ: Ուրեմն, ըստ Մայլթուսի՝ ազդաբնակութեան մէկ սրտը մասը պիտի ոչնչանայ սնունդ չլինելու պատճառով:

Դարվինը նկատեց, որ իսկապէս նոյնպիսի երևոյթ կատարւում է ամբողջ օրգանական աշխարհում. թէ բոյսերը եւ թէ կենդանիները չափազանց արագ եւ չափազանց շատ են ըագմանում, այնպէս որ, եթէ նրանք բոլորը վարգանային, երկրագնդի ամբողջ մակերևոյթը շուտով կը ծածկուէր կենդանի էակների խիտ շերտով: Բայց իրողութիւնն այն է, որ նոր սերունդների մեծագոյն մասը ոչնչանում է սնունդ և տեղ չլինելու պատճառով: Օրինակ մէկ որևէ ձկնի միլիոնաւոր ձուիկներից աճում և կատարեալ զարգացման է հասնում 1—3 հատ, մնացեալները ոչնչանում են: Նոյնպէս իւրաքանչիւր ծառ ամեն տարի արտադրում է միլիոնաւոր սերմեր, որոնցից կատարեալ զարգացման հասնում են միայն միքանիսը:

Կարելի է ասել, որ Դարվինի համար Մայլթուսի գրուածքը նոյն նշանակութիւնն ունեցաւ, ինչ որ մէկ ուրիշ հանճարեղ անգլիացու—Նիւտոնի համար ծառից ինձոր վէր ընկնիլը: Այս երկու գէպը նրանով են նման, որ թէ Նիւտոնի և թէ Դարվինի գլխում նախապատրաստական աշխատանքը կատարուած է եղել գիտը անելու համար և բաւական է եղել մէկ

\*) Դարվինի վարդապետութեան մասին այստեղ կը խօսեմ համառօտ կերպով: Նոյն խնդրի մասին առիթ եմ ունեցել ակելի ընդարձակ գրելու իմ «Դարվինից» գրուածքի մէջ (Դարվինից, երկրորդ տպագրութիւն 1904 թ.):

պատահական հանգամանք, որպէսզի երկար ժամանակ հետաքրքրող խնդիրը լուծուին ստանայ:

Դարվիինի միտքը գտել էր ուղիղ ճանապարհը: Դարվիինը մտածում էր, թէ ճիշտ է, որ ամեն տարի կենդանիների և բոյսերի սերունդների մեծագոյն մասը ոչնչանում է ապրուստի միջոցներ չունենալու պատճառով, ապա վերին աստիճանի անհաւանական է, որ մահուան դատապարտուած էակները հեշտութեամբ զիջեն կեանքի ասպարէզը իրանց բախտաւոր ընկերներին: Իրաւ Դարվիինը գտաւ բազմաթիւ օրինակներ, որոնցով ապացուցեց, որ բնութեան մէջ տեղի է ունենում ահռելի համաշխարհային կռիւ անհատական գոյութիւնը պահպանելու համար: Այս երևոյթը Դարվիինը անուանեց «կեանքի կռիւ»:

Յետոյ Դարվիինը հարց տուեց, թէ ո՞րպիսի օրգանիզմներ կը տանեն յազթանակը կեանքի կուում, և եկաւ այն եզրակացութեան, որ գոյութեան կուուի շնորհիւ հաւանական է, որ կոտորուեն թոյլ օրգանիզմները, իսկ զօրեղները, ճարպիկները պահպանեն իրանց գոյութիւնը և բազմանալով արտադրեն իրանց նման ընտիր սերունդներ:

Եթէ այդ բոլոր դատողութիւնները ճիշտ են, ապա ուրեմըն բնութիւնը գոյութեան կուուի միջոցով անընդհատ ընտրում է առաջացած սերունդներից ընտիրներին, իսկ թոյլերին ոչնչացնում: Ահա այս մշտնջենաւոր ընտրութեան շնորհիւ է, որ կենդանիները և բոյսերը դարերի ընթացքում անընդհատ զարգացել են և առաջադիմել:

Այս տեսակ ընտրութիւնը Դարվիինը անուանեց «ընտրան ընտրութիւն»: Վերջին խօսքերով Դարվիինը ցանկանում էր շեշտել, որ այս դէպքում ընտրութիւն անողը ինքը բնութիւնն է, ուրեմն այս պրոցեսը անգիտակցական է:

Դարվիինը ցանկանալով ընթերցողների համար աւելի ևս պարզել այս երևոյթը, դիմեց համեմատութեան. բնական ընտրութիւնը համեմատեց արուեստական ընտրութեան հետ. ինչպէս որ մարդիկ դարերի ընթացքում ընտրելով իրանց ընտանի կենդանիներից և բոյսերից ամենաընտիր անհատները՝ ազնուացրել են ընտանի կենդանիների և բոյսերի ցեղերը (արուեստական ընտրութիւն), այնպէս էլ բնութիւնը անընդհատ ոչնչացնելով թոյլ անհատներին և պահպանելով լաւերին ազնուացրել է վայրենի կենդանիների և բոյսերի տեսակները (բնական ընտրութիւն): Սակայն մինչդեռ արուեստական ընտրութեան մէջ ղեկավարող ոյժը մարդու խելքն է, ուրիշ խօսքով մինչդեռ արուեստական ընտրութիւնը կատարուած է գիտակցօրէն, բնական ընտրութիւնը ընդհակառակը հետևանք է

անգիտակցական ոյժի—գոյութեան կուռի: Չնայած այդ տարբերութեան երկուսի հետևանքներն էլ նոյնն են. այսինքն երկու դէպքումն էլ առաջանում է զարգացում, առաջադիմութիւն:

«Դարվինի գլխաւոր ծառայութիւնը, ասում է էրնստ Հեկկելը, կայանում է նրանում, որ նա գտաւ կենդանական և բուսական տեսակների ծագման ընտանի պատճառները և այդպիսով հաստատեց մեքենայական կամ մոնիստական աշխարհայեացքի ճշտութիւնը... Մինչդեռ Ագասիսը ընդհակառակը աշխատում էր ամենուրեք դուրս մղել այդ մեքենայական պրոցէսը և ամեն տեղ բնական ոյժերը թողած՝ գիմում էր գերբնական ոյժերի»...

Դարվինի գաղափարները ահագին ազդեցութիւն ունեցան թէ ժամանակակից գիտնականների և թէ յետադայ սերունդների վրայ. կարելի է առանց չափազանցութեան ասել, որ XIX դարի երկրորդ կիսում երևացած բիօլոգիական բոլոր հետազոտութիւնների մեծագոյն մասը ներշնչուած է Դարվինի գաղափարներով:

Յայտնի գիտնական՝ Գրանտ Ալլենը հետևեալ գեղեցիկ խօսքերով է նկարագրում դարվինիզմի ազդեցութիւնը թէ բիօլոգիայում և թէ բիօլոգիայի հետ կապ ունեցող ուրիշ գիտութիւններում:

«Դարվինիզմի ազդեցութիւնն օրէցօր տարածւում է աւելի լայն և աւելի խորը կերպով: Մէկ խումբ գիտնականներ իրանց բնախօսական, մարմնագնական և սաղմագլխաւորական հետազոտութիւնները կատարելիս ղեկավարում են դարվինիզմով. շատերը աշխատում են դարվինիզմը հոգեբանութեանը յարմարացնել. ուսումնասիրելով կենդանիների խելքն ու բընազդումը, աշխատում են դարվինիզմի օգնութեամբ լուծել մարդկային ոգուն և զգացմունքներին վերաբերեալ ամենադժուար խնդիրները: Մէկ փիլիսոփայ աշխատում է դարվինիզմը յարմարացնել բարոյագիտական խնդիրներին, մէկ ուրիշը սոցիօլոգիայի և քաղաքատնտեսութեան հարցերին: Մէկ տեղ նրա սկզբունքները յարմարացնում են էստիտիկային, մի ուրիշ տեղ տրամաբանութեանը և այլն: Լեզուագիտութիւնը նոր լոյս է ստանում դարվինեան մեծ լապտերից: Դարվինի ուսմունքը մանկավարժութեան վրայ էլ ունեցաւ իր ազդեցութիւնը: Դարվինիզմի շնորհիւ մեր բոլոր մաքերը յեղափոխուեցին: Նոյն մաքերը հեղեղեցին ամբողջ աշխարհը, իրանց հսկայական և թարմ ուժովը չոր ու ցամաք գիտութիւններին, գեղարուեստին և փիլիսոփայութեանը կենդանութիւն տուեցին»...

ՍՍ.ՄՈՒԷԼ ԲՍԱՍՂԵԱՆ

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռասսասական Կանոնադրութիւնների 40-ամեակը. — Հիմնական ռեֆորմների սերս կայր. — Ի՞նչ է պահանջում ուսու շաւագոյն ինտելիգենցիան. — Իշխ. Քուսնակները և «НОВОЕ ОБОЗРЕНИЕ»: — Ֆիկցիոնալական սէյմի ըացումը: — Ռասսասական վճիռներ: † Ա. Ն. Պրպին: — Ասուածաշունչը մայրուստերեն: — Մատուշի միջանկի օրգանների մասին պատմական կարգադրութիւններ: — Էջմ. Սիւնդի կարգադրութիւնը ու ցանկալի ըացում նրա մէջ: — Սիւնդիսների պատգամաւորութիւնը ներք. գործ. միւնիստիւն:

Մայրաքաղաքի մամուլը օգտուում է իրան տուած համեմատական ազատութիւնից և շարունակում է խիստ քննադատութեան ենթարկել ներքին կեանքի բոլոր պակասութիւնները, մատնանիչ անել այն հիմնական սկզբունքների վրայ, առանց որոնց անկարելի է սպասել փոփոխութիւն ներկայ դժուար կացութեան մէջ: Դատաստանական Կանոնադրութիւնների 40-ամեակը աւելի ևս լաւ առիթ ներկայացրեց խօսելու և գրելու այն հիմնական ըեֆորմների մասին, որոնք ցանկալի են երկրի բարօրութեան տեսակէտից:

Ինչպէս յայտնի է, ճորտերի ազատութեան հետ Կայսր Ալէքսանդր II-ը ուսւ ժողորդին տուաւ և դատաստանական մեծ ըեֆորմներ, որոնց արտայայտութիւնն էր 1864 թ. նոյեմբերի 20-ին հրատարակած Դատաստանական Կանոնադրութիւնը: Այդ ըեֆորմների նպատակն էր՝ ներմուծել Ռուսաստանում «արագ, արգար, ողորմած և բոլոր հպատակների համար հաւասար դատաստան»: Նոր դատավարութիւնը պէտք է անկախ լինէր ազմինիստրացիայի ազգեցութիւնից, ապահովուած էր դատաւորների անկախութիւնը իրանց պարտականութիւնները կատարելու մէջ, քրէական գործերի քննութիւնը ներկայացնում էր հասարակական խղճին — երգուեալ «հաւատարմութեան» ներքի վճռին, դատավարութիւնը դառնում էր հրապարակային, մրցողական, բերանացի և ճանաչում էր կողմերի հաւասար իրաւունքները, մտցնում էր երգուեալ հաւատարմատարների ինստիտուտը:

Ռուս հասարակութիւնը ցնծութեամբ ընդունեց այդ ընթացիւնները. արդարադատութեան գործը ապահովուած էր համարուում Ռուսաստանում: Բայց այդ հիմնական ընթացիւններէ հետ միաժամանակ պահպանուած էր բիւրոկրատիայի գերիշխանութիւնը: Այդ հանգամանքը եղաւ գլխաւոր պատճառ, որ 1879 թուականից սկսած զանազան լրացումներով, կրճատումներով և «ժամանակաւոր» կարգադրութիւններով փոխուեցան դատաստանական ընթացիւնների շատ հիմնական սկզբունքներ, առանց որ դրանք նոյնիսկ մտցնուեն երկրի շատ տեղերում: Այժմ այդ ընթացիւնների 40-ամեակի առիթով մամուլը և զանազան տեղերում երդուեալ հաւատարմատարներ՝ համագումարների մէջ ճառախօսները ցոյց են տալիս, որ ներքին կեանքի վերածնութիւնը կախուած է մի շարք հիմնական ընթացիւններից. առանց մէկին միւսը պիտի ենթարկուի այն վիճակին, որին հասաւ դատաստանական ընթացիւնը: Առանց խիստ օրինական կարգուկանոնի, անձի, խօսքի, համագումարումների և ընկերակցութիւնների կազմելու ազատութեան, առանց հասարակութեան մասնակցութեան երկրի օրէնսդրութեան մէջ՝ անկարող է Ռուսաստանը զարգանալ և բարօրութեան հասնել, առաջադիմել:

Ռուս ժողովրդի լաւագոյն ներկայացուցիչների կարծիքով՝ որպէսզի, զարնանային տրամադրութեան տակ յուսալի ծլվլոցները անհետեանք շանցնեն, պէտք է խնդրել, որ առանց յետաձգելու կատարուեն լուրջ աշխատանքներ և ուսս հողի մէջ խոր արմատներ գցեն քաղաքակիրթ մարդկութեան մշակած հասարակագիտական անժխտելի սկզբունքները...

Դեկտ. 2-ին ներկայացել են ներքին գործոց մինիստրին Պետերբուրգի և Մոսկուայի երդուեալ հաւատարմատարների խորհրդի պատգամաւորները՝ յանձնելու համար մինիստրին՝ խորհուրդների ընդուած որոշումները: Մինիստրը ընդունել է միայն խորհուրդների նախագահներին. պ. պ. Տուրչանինովին և Նեվեադոմսկուն: Աչքի անցնելով որոշումները, մինիստրը յայտնել է, թէ անկարող է ընդունել այդ որոշումները, որովհետեւ նրանց մէջ պարունակուում են պետական կազմը փոփոխելու պահանջներ:

Այդ «զարնանային տրամադրութիւնը» շատ համեստ արտայայտութիւն ունեցաւ կովկասում: Իշխաններ թումանովների հասարակական-գրական 14-ամեայ գործունէութիւնը պատուելու նպատակով թիֆլիսում, նոյեմբերի 27-ին կայացած մի երեկոյթում անդական ուսս, հայ և վրացի ինտելիգենցիայի մի մասը առիթ ունեցաւ մտքերի փոխանակութեամբ ցոյց տալու, որ նա ջերմ կերպով համակրում է առաջադէմ ձգտումներ:

բին: Կովկասի ինտելիգենցիան ցոյց տուեց, որ ինքը համա-  
ռուսական ինտելիգենցիայի մարմնից և արիւնից է և նրանից  
տարբեր հայեացքներ չունի պետական-հասարակական հարցերի  
մասին: Եւ «НОВОЕ ОБОЗРѢНІЕ»-ն իշխ. Թումանովների ղեկավար-  
ութեամբ, ինչպէս և նոր խմբագրութեամբ, կարող է համա-  
րուել այդ ինտելիգենցիայի ձգտումների թարգման: Չի կարե-  
լի չհամաձայնուել, որ այդ փոքրիկ թերթը իշխ. Թումանովնե-  
րի ղեկավարութեամբ աշխատել է իր փոքրիկ, բայց մաքուր  
ձայնը հնչեցնել ռուս մամուլի այն խմբի մէջ, որ անդադար  
պաշտպանում էր Ալեքսանդր II-րդի մեծ ընդունման մէջ ար-  
տայայտուած սկզբունքները, պահանջել է այդ ընդունման  
տարածումը նաև ծայրերում, առանց խեղաթիւրումների:

Ազգերի փոխադարձ յարաբերութիւնների մէջ „НОВ. ОБ.“  
պաշտպանել է միշտ արդարութիւնը. Վելիչկոնների և վրացի  
շովինիստների հայատեցութեան դէմ մաքառելով, իշ. Թումա-  
նովները ձգտել են ազգերի համերաշխութեան գաղափարին ծա-  
ռայել: Եւ ո՞վ չի կարող համաձայնել որ ծագումով հայ այդ ընտա-  
նիքը՝ աշխատել է Կովկասի իւրաքանչիւր ազգին տալ, ինչ կարող  
էր. իշխ. Գ. Մ. Թումանովը, ինչպէս և նրա քոյրը (վրաց «Ձեջի-  
լի» մանկ. թերթի խմբագիր-հրատարակիչը) իրանց գործունէու-  
թեամբ դարկ են տուել վրաց գրականութեան: Կարելի է ասել  
որ իշ. Թումանովները իրանց կոսմպոլիտական ուղղութեամբ  
հայի բնաւորութեան ոչ խորթ մի առանձնայատկութեան ար-  
տայայտիչ հանդիսացան:

Այդ երեկոյթը միւս կողմից ցոյց տուեց որ հայ, ռուս և  
վրացի ինտելիգենցիայի մէջ ընդհանուր շփման շատ կէտեր կան,  
իրանց կուլտուրական ձգտումներով դրանք շատ մօտ են իրար,  
մինչդեռ այդ նոր թուրք ինտելիգենցիայի բացակայութիւնը ա-  
պացուցում էր որ մահմեդական տարրը մեր երկրում դեռևս  
չունի մտաւորական շահերի բաւականաթիւ ներկայացուցչու-  
թիւն:

Լ. Ս.

Դիկա. 7

—Նոյեմբեր 26-ին բացուեց Ֆինլանդական Սէյմի հեր-  
թական ժողովը: Բարձրագոյն թոյլատրուած է որ Սէյմի  
զբաղմունքների ժամանակ Ֆինլանդիայում զտնուեն այն ան-  
ձինք, որոք հեռացրուած էին երկրի վարչութեան կարգադրու-  
թեամբ:

—Պետերբուրգի դատաստանական պալատը դասակարգա-  
յին ներկայացուցիչների մասնակցութեամբ նոյեմբերի 30-ին

յայտարարեց իր վճիռը ներքին գործոց մինիստր Պլեվէի սպանութեան գործի առիթով: Մեղադրուածներինց Սազոնով՝ զըրկուելով բոլոր իրաւունքներից, դատապարտուած է տաժանակիր աշխատանքների անորոշ ժամանակով, Սիկորսկիյ՝ բոլոր իրաւունքներից զրկուելով 20-ամեայ տաժ. աշխատանքների:

— «Кавказ»-ին հեռագրում են դեկտ. 3-ին Գանձակից. «փոխ-նահանգապետ Անդրէեվի սպանութեան գործում մեղադրուողներին» զինուորական դատաստանով՝ Գրիգոր Դուկասովը և Ֆարաշեվներից մէկը՝ դատապարտուած են զրկուելով իրաւունքներից առաջինը՝ Դուկասովը կախաղան բարձրացնուելու, իսկ երկրորդը՝ տաժանակիր աշխատանքի ուղարկուելու ցկեանս: Միւս Ֆարաշիվը զինուորական դատարանով արգարացրուած է:

— Նոյեմբերի 27-ին Թիֆլիսի դատաստանական պալատի I քրէական դէպարտամենտում, պալատի արդամ Ֆ. Ֆ. Դէպպի նախագահութեամբ՝ և պալատի անդամներ Վ. Կ. Օրլովսկու Ե. Եա. Դոբրովեանսկու մասնակցութեամբ, քննեց, դնսփակ, Տէր-Յովհաննէս Յովհաննիսեանց բահանայի և Ալէքսանդրպոլի բնակիչներ պահեստի պրապորշչիկ Հայկ Ամատունու և Սիմոն Յարութիւնովի գործը, որոնք մեղադրուում էին Պատժազրքի 264 և 266 յօդուածների հիման վրայ: Երեսնի նահանգական դատարանը, գործադրելով 264 և 266 յօդուածները, դատապարտեց մեղադրեալներին բանտարկութեան վեցից մինչև ութ ամիս: Թիֆլիսի Դատաստանական Պալատը, մերժելով մեղադրանքը պատժական օրէնսգրքի 264 և 266 յօդուածներով, մեղաւոր ճանաչեց մեղադրեալներին այնպիսի գործողութեան մէջ, որ նախատեսուած է Պատժական Օրէնսգրքի 2-դ մասի 98-դ յօդուածում, որ դնում են հաշտարար դատաւորները, և Բարձրագոյն մանիֆէստը գործադրելու պատճառով մեղադրեալներին պատժից ազատեց: Պալատում մեղադրում էր Թիֆլիսի դատաստանական պալատի պրոկուրորի օգնական Ն. Ի. Նէստէլբերգէր, մեղադրեալներին պաշտպանում էին երգուեալ հաւատարմատար Տ. Ն. Յովհաննիսեանց և երգուեալ հաւատարմատարի օգնական Գ. Ի. Սատիսեան:

— Էջմիածնի Սինոդի հրամանը ամուսնացողներից բժշկական վիսյական պահանջելու մասին:

«Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին Ամենայն Ռուսաց Ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի:

Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան Ի Սինոդիս լուան զյայտարարութիւն թեմակալ առաջնորդին հայոց Աստրախանի Ի 4 հոկտեմբերի տարւոյս թ. 154, որ ունի զայս-

օրինակ. «Իրականութիւն էր արդէն, վկայեալ ի բազմաց բազում անգամ, զի վիեներական անուանեալ հիւանդութիւնք ամենուրեք ծաւալ մեծ ընկալեալ ի ժողովրդականս մեր թէ ի քաղաքացիս և թէ ի գիւղականս անգամ թունաւորեն և քայքայեն զֆիզիքական և բարոյական կազմ կենաց և բարգաւաճման ներկայ և ապագայ սերնդեան: Հետեանք այդպիսւոյ ծանր աղէտ չարեաց է և այն՝ զի օր ըստ օրէ բազմանան խնդիրք պսակալուծութեան ի հոգևոր ատեանս մեր այնպիսիք, որք շարժառիթ ծագմանս իւրեանց ունին զախտաւորութիւն ատն և զվարակումն կնոջ: Որք ի սրտէ և ըստ պարտուց կոչեցեալք են ի ծառայել հասարակութեան, բժիշք և հրապարակախօսք, ի վերջին ժամանակս իբրև զմի ի փրկարար միջոցաց համարեն պահանջել յարանց, մտանոցաց յամուսնութիւն, զբժշկական վկայական վասն առողջութեան: Զիրագործումն այսպիսւոյ օգտակար առաջարկութեան գտանելով ժամանակակից պէտք անհրաժեշտ՝ պատիւ ունիմ խոնարհաբար խնդրելոյ զհաւանութիւն Սիւնհոգոսիզ ս. Էջմիածնի վասն սահմանելոյ ի վիճակիս զպահանջումն բժշկական վկայականի վասն առողջութեան արանց, խնդրողաց զիրաւունս ամուսնութեան»: Հրամայեցին— Առեալ ի նկատ, զի յաճախ դէպք լինին, յորժամ մտանողքն յամուսնութիւն վարակեալ գոլով վիեներական ախտիւք, վարակեն յետ ամուսնութեան և զկենակիցս իւրեանց, լինելով պատճառ քայքայման առողջութեան նոցա և զաւակաց ծնելոց յայդպիսեաց ամուսնութեանց և իբրև անմիջական հետեանք այդորիկ յերևան գան անբաղդութիւն և կործանումն ընտանեաց, յաճախ լինելով առիթ և պատճառ ամուսնալուծութեան, ուստի Սիւնհոգս պատուիրէ թեմակալաց վիճակաց առնել այսուհետև տնօրէնութիւն ըստ թեմից իւրեանց պահանջել յարանց բնակելոց ի քաղաքս և ի մտանեխն նոցա յամուսնութիւն զվկայութիւն բժշկի վասն առողջութեան նոցա և ապա տալ հրաման ամուսնութեան նոցա, իսկ յանձանց, բնակելոց ի գիւղօրայս պահանջել զնոյնպիսի վկայականս բժշկի, եթէ զոն հնարաւորութիւնք առ այն, ի յՅ նոյեմբերի, 1904 ամի, ի ս. Էջմիածին:

Համակրելով այս կարգադրութեան չենք կարող մեր ամոսանքը չյայտնել, որ հարցը աւելի լայն չի դրուած և բրժշկական վկայականի պահանջումը չի տարածուած նաև կանանց նկատմամբ. կան բազմաթիւ ժառանգական ևայլ հիւանդութիւններ, որոնցից ազատ չէ և գեղեցիկ սեռը, ինչո՞ւ չպահանջել բժշկական վկայական երկու կողմերից էլ հաւասարա-

պէս. սկզբունքը կիսատ-պռատ ընդունելով չարիքը մնում է առանց կատարեալ դարմանի:

— Լոնդոնի բիբլիական ընկերութիւնը Աստուածաշնչի ուրիշ թարգմանութիւնների հետ լոյս է ընծայել նաև մալթոուսական լեզուով կատարուած թարգմանութիւնը: Պրագայի համալսարանի պրոֆեսոր Պոլլայ, որ խմբագրել է այդ թարգմանութիւնը, վերջերուսմ գիմել էր Պետերբուրգի գիտական ճեմարանը խնդրելով թոյլ տալ տարածելու Ռուսաստանում Աստուածաշնչի այդ թարգմանութիւնը: Ճեմարանը ուղղել է պրոֆ. Պոլլայի այդ միջնորդութիւնը ս. Սինոդին, որը պատասխանել է, թէ այդ խնդիրքը չի կարող բաւարարութիւն ստանալ:

— Նոյեմբերի 26-ին վախճանուեց յայտնի ռուս գիտնական և գրող Ալէքսանդր Նիկոլայովիչ Պրպին, որ տուել է ռուսաց գրականութեան, ազգագրութեան և հասարակական շարժումների պատմութեան նշանաւոր ուսումնասիրութիւններ: Նրա խմբագրութեամբ թարգմանուել են ևրոպական շատ առաջնակարգ գրուածքներ, գլխաւորապէս գրականութեան պատմութեան ճիւղի մէջ: Նա մերձաւոր մասնակցութիւն է ունեցել Современникъ և Вѣстникъ Европы լուրջ ամսագրների մէջ: 1897 թուականին Պրպինը ընտրուած էր ակադեմիայի անդամ: Հանգուցեալը իր հայացքներով պատկանում էր ռուս ազատամիտների լաւագոյն ներկայացուցիչների խմբին:

— Ներքին գործոց մինիստրի կարգադրութեամբ 3 ամսով դադարեցրուած է վրասակար ուղղութեան համար «Сынъ Отечества», նախազգուշութիւն է արուած «Наша Жизнь», «Право» թերթերին:

— Ներքին գործոց մինիստրը ընդունել է ռուս սիօնիստների պատգամաւորութիւնը և ասել նրան, որ ուշադրութիւն կը դարձնի նրանց գործունէութեան վրայ: Ի միջի այլոց նա խնդրել է սիօնիստների ներկայացուցիչներից հազորդել իրանց ընկերներին, որ նրանք կարող են ազատ աշխատել և թէ նրանց գործունէութեան այսուհետև արգելք չի զնուելու:

## ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պոտ-Արտուրի վիճակը:

Պատերազմի դաշտում բոլորի ուշադրութիւնը այժմ կենտրոնացած է Պոտ-Արտուրի վրայ: Երկու կռուող բանակները, ինչպէս և ամբողջ աշխարհը, Պոտ-Արտուրի անկման հետ կապում են պատերազմի ապագայ աջողութեան այս կամ այն կողմ թեքուելու հարցը: Ճապոնացիները աշխատում էին գրաւել Պոտ-Արտուրի շուրջը գտնուող այն ամրութիւնները, որոնցից նրանք կարող լինէին ուժակոծել Պոտ-Արտուրում մնացած ռազմականները: Այդ նաւատորմի ջնշումով Տոզօն կարող էր իր ամբողջ ծովային ուժը կենտրոնացնել Բալտիկեան նաւատորմի դէմ: Եւ ճապոնացիներին աջողուեց մեծ զոհաբերութիւններով տիրել հոչակաւոր 203 մետր բարձրութիւն ունեցող Փորտը, չնայած ռուսների դիմադրական բոլոր ուժերին: Այդ դիրքից ճապոնացիները մէկը միւսի յետեից ոչնչացրին ռուսական ռազմակաները Պոտ-Արտուրի նաւահանգստում: Մնացել էր «Севастополь»-ը, որի դէմ Տոզօն ուղարկեց իր ակնանակները: Վնասուած է համարուում և այդ զրահակիրը: Այդպիսով ճապոնական նաւատորմի դը կարող է այսուհետեւ ինկատի ունենալ միմիայն բալտիկական էսկադրան, որին իբրև օժանդակ, ստում են, պէտք է ուղարկուի 3-րդ էսկադրան:

Ռուսաց երկրորդ էսկադրային և րոպական պետութիւնների և անդլիական անխաղաղանների կողմից ցոյց տուած աջակցութիւնը մեծ զայրոյթ է պատճառել Ճապոնիայում: «Չէզոքութեան» այդ կերպ ըմբռնումը շատ բնորոշ է մերկանտիլ եւրոպայի հոգեբանութիւնը հասկանալու տեսակէտից: Շահի համար ամեն ինչ վաճառող և րոպացիների համար մորալ մտաւորները միշտ բռնում են վերջին, տեղը: Էլ ինչու զարմանալ Ֆրանսիայի և Գերմանիայի կողմից «չէզոքութեան» խախտումները վրայ, երբ նոյնը անում է Ճապոնիայի դաշնակից պետութիւնը, թոյլ տալով իր կապիտալիստներին՝ օգտուելու շահաւէտ առևտրից...

Առևտրի բան է, իսկ առևտրական շահն է Ջոն-Բուլլի բոլոր գործողութիւնների շարժառիթը: Մենք տեսանք անցեալ անգամ թէ ինչպէս այդ շահին զոհ են բերուել և թիրաքիայի քրիստոնեաները...

### ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

«Ա.Բ.Ե.Կ.Է.», մտանցոյց է անում «Տարտիկնակ մեցոււմ մը, զոր յոյն և երբեմն ալ հրեայ աղջիկներ կը մղեն հայ աղջիկներու դէմ՝ անոնց ձեռքէն խլելու համար հայ փեսացուներ»: Եթէ այս տեսակ սիրային ողիսականների մէջ ստէպ օտարուհիներն են որ յաջողութեան մրցանակը խլում են, թերթի կարծիքով պատճառն այն է, որ հայ աղջիկները նուազ ճարտար են ամուսին ձարելու մէջ, քան յոյն և հրեայ աղջիկները, որոնց բովանդակ շնորհը կայանում է միայն հրապոյր ազդելուն մէջ և որոնց ճարտարութիւնը սակայն շատ անգամ զղջումի և յուստիարարութեան տեղիք է տալիս և աղիտարեր հետեանքներ ունենում հայ երիտասարդների համար:

Նոյն թերթը՝ ոմանց կողմից արտայայտուած փափաքի հակառակ՝ աւելորդ է համարում ՄայրաՎանքի յաւելումը Սիսի մէջ, կրք արդէն իսկ բուականինից աւելի թիւ են կայմում երուսողէմի և Արմաշի վանքերի արտադրած երիտասարդ կուսակիցները: Լուսազոյն է գտնում որ Պիլիկեան ծառանգաւորացը վերածուի մի օգտակար հաստատութեան, օրինակի համար՝ երկրագործական վարժարանի կամ Արհեստանոցի, որոնց այնքան պէտք ունին Սեւեբը:

«Բիւզանդիոն»-ը նոյնպէս համակիր է երևում նոյն մտքին և բաց է ի բաց հակառակում է Սիսի մէջ Ար-

մաշի նման Գպրիվանք կամ Ժառանգաւորաց վարժարան բանալու զաղափարին:

«Պ.Ե.Կ.Է.», 1904 թ. թիւ 1—10: Վենետիկ Միթիթարեանների այդ պատկերազարդ «Հայաթերթը» իր աչքի ընկնող շրջութեամբ կարող է մրցել նոյնանման եւրոպական տմենարնտիր հրատարակութիւնների հետ. թուղթը, տպագրութիւնը, պատկերների նրբութիւնը գերազանց են: Գծախատարար նոյնը չենք կարող ասել բովանդակութեան մասին, որ չափազանց աղքատ է և միտկողմանի: Ինչպէս երևում է, որոշ սխտեմ, ծրագիր, նիւթերի ընտրութիւն չունի խմբագրութիւնը, սրի զբաղան-գեղարուեստական ճաշակն էլ հեռու չէ գնացել կեղծ-կլասիկական և վկայարանական ազդեցութիւններէ... Խիստ ընտրութիւն և սխտեմ չի երևում և պատկերների մէջ: Եթէ «Գեղունին» լինէր լուի շքեղ պատկերների մի «արքուն»—հասկանալի կը լինէին հանգիսի բովանդակութեան հետ չկապուած պատահական պատկերները. այդ գէղքում ինչո՞ւ չտալ հանդէսի փոխարէն միայն արքուն... Գափնիներն էլ բաւական էժանացել են Վենետիկում. «բանաստեղծներ», որոնք արտադրել են մի երկու կտակածելի յաջողութիւն ունեցող ոտանաւորներ՝ արժանացել են «Գեղունիի» անմահների ցանկին և բազմիկ են նրա էջերում... Ինչո՞ւ չտալ նաև «Գեղունի»-ի

գործակալների ու բաժանորդների լուսանկարները. չէ՞ որ աւելի ևս շատ կը տարածուէր «հայաթիւրթը» և նրա համակրելի նպատակը— «Որբախնամ գործ մը կատարել» — աւելի մեծ աջողութեան կ'իրագործուէր... ԼըՂու-թիւն, խիստ ընտրութիւն և որոշ սխառտեմ ու ծրագիր կը մաղթէինք «Կեղունիի» խմբագրութեան, որպէսզի գրանց պակասութիւնը չվնասէր հանգիսի արտաքին արժանիքներին:

«Անսիս», թիւ 9—10., սեպտեմբեր-հոկտեմբեր. — Աղօլֆ Թալասո հրատարակած է «Revue Théâtrale» ամսագրի մէջ մի ընդարձակ ուսումնասիրութիւն թիւրք թատրոնի մասին: Այդ գրութեան արժեքով «Անահիտը» ասում է հետեւեալը:

Թալասո Պոլլիս ծնած յոյն մըն է, որ հայերը բաւական մօտէն կը ճանշնայ և կը սիրէ (իր քոյրը հայու մը հետ ամուսնացած է). այս ուսումնասիրութեան մէջ մեծ համակրանքով կը լսուի հայ ցեղի մասին, ի վեր կը հանէ ռահվիրայի գերը. զոր հայերը կատարած են թուրք թատերական գրականութեան և երաժշտութեան ըտզորձումին մէջ, բայց իր հայասիրութիւնը արգելք չէ եղած իրեն տեսնելու ինչ որ թուրքերն ունին լուս, շահական, ինչ սր անսնր արտադրած են մտաւոր ոլորտին մէջ: Իր ուսումնասիրութիւնը կը յայտնէ զայութիւնը թուրք գրականութեան մը, բաւական ընդարձակ, բազմաձև, ուր կան ազնիւ ձգտումներ, և որ անվիճելի կերպով համակրելի արտադրութիւններ ունի՝ մասնաւորապէս թատերական ձևին մէջ: Պ. Թալասոի ուսումնասիրութիւնը հեռու է ամբողջական և իր ամեն կէտերուն մէջ ճիշտ ըլլալէ. թուրք թատրոնի ստեղծման մէջ՝ հայոց զերը լիակատար կերպով չէ ցոյց տրուած հոն. ու կան խել մը սխալ ծանօթութիւններ (ինչպէս Ադամանի մասին իր յիշած մանրամասնութիւններէն մէկ բանին). իր անխառն հիւսցումն ալ՝ թուրք գրական գործերուն համար

զոր կը յիշէ, կընայ վիճելի ըլլալ. այդ գործերը ձևի մէջ թերութիւններ կըրնան ունենալ, կընան զուրկ ըլլալ կենդանութենէ, արուեստի կատարելութենէ. ոչ մէկ որոշ կարծիք յայտնել առ այժմ անհնար է, առանց գործերը ուսումնասիրելու Բայց ինչ որ հիմակուց իսկ անվիճելի է, այն է, որ թուրքերը ունին քնարերգական, վիպական, իմաստասիրական, թատերական գրականութիւն մը, և թատերական գրականութեան մէջ՝ գէթ ձըգտումներով՝ լուսագոյն ուղղութեան մը հետեւած են քան տաճկահայ թատերագիրները. մինչ մերիները — բացի Նար-Պէյէն, որ զրած է Այափրանկան և Պարոնեանէն որ զրած է Արեւելեան սաւաճարոյժը և Պաղատար աղբարը, — գրեթէ միայն ազգային հին պատմութեանէն քաղուած ողբերգութիւններով (որոնք ամենամեծ մասամբ ինքնաուղղութենէ ու իրական կենդանութենէ ըտզորովին զուրկ են) լեցուցած են մեր բեմը, թուրք թատերագիրները անմիջապէս կեանքն առած են իրենց ներշնչարան, ժամանակակից զէպրերը, բարբերը, ընկերական, բարոյական հարցերը նւթընտրած են իրենց թատերագրութեանց համար, և իրենց մեծ մասին — մանաւանդ Ահմէտ Միհրաթի — ձըգտումները եղած են յանդուգն, նորասէր, ազատասէր, օսմանեան հողին ու բարբերը վերանորոգելու, «եւրոպացրենելու» ձգտող, այսինքն թէ՛ բրած են ինքնարեւբարը, հետեւելով ոչ թէ պոլստիան հայ թատերագիրներուն, այլ եւրոպական վարպետներուն, ինչ որ Սունդուկեանց՝ չեռոյ Պովկասի հայ բեմին վրայ հոյակապօրէն կատարուեց:

Պ. Թալասոի ուսումնասիրութեան առաջին մտքը նուիրուած է թերական «Քարակէօզ»-ի և «Օրթա օյանու»-ի ժողովրդական ներկայացմանց. այդ ներկայացմանց համար ալ մենք մեր սովորական արհամարհանքով վերաբերուած ենք միշտ, զանոնք նկատելով իրրև «միմիայն» անբարոյական պատկերացումներ գտեսիլ կըրբերու.

Պ. Թալասօի ուսումնասիրութիւնը ցոյց կուտայ, որ այդ դատաստանը ճիշտ չէ. «Քարակէօզ»-ի ներկայացումները ժողովրդին կրքերը փայփայելու չէ միայն որ ծառայած են, այլև «ծիծաղի շքանորհիւ ժողովրդին թերութիւնները սրբազրելու» պաշտօնը (Թատրոնին հինաւորը, հիմնական պաշտօնը) կատարած են ու Պ. Թալասօ կը յայտնէ թէ «Քարակէօզ»-ի ներկայացմանց մէջ նայնիսկ Մոլիէրի ամբողջ տեսարաններ կան՝ այդ տարրական բեմին պատշաճ նկարագրուած: Գարեթի չէ նաև շնկատել որ այդ «Քարակէօզ»-ի ու «Օրթաօյունու»-ի ներկայացումները, որքան ալ պարզ ու ռամիկ ըլլային, թատրոնի հիմունք մըն էին, ժողովրդական հիմունք մը, գոր թուրքը շատոնց ի վեր ունէր իր մէջ, իր ծոցէն ելած, մինչ մենք հայերս մեր բարբերուն մէջ՝ դէթ քրիստոնէութեան մուտքէն ի վեր երբէք ոչինչ ունեցած ենք, որ թատրոնի սաղմն իսկ ներկայացնէ. թատրոնը, ժ.Թ. գարուն երկրորդ կէսին մէջ, ամբողջապէս եւրոպայէն փոխ առած ենք, և ատոր համար է, որ ան մեր մէջ արուեստական կեանք մը ունեցած է, մինչև Սունդուկեանցի գալուտը. թուրքերը, ունենալով արդէն ժողովրդական թատրոն մը, որ թէպէտ ռամիկ՝ կեանքի դիտողութեան, բարձր ու քննադատութեան վրայ հիմնուած էր, իրենց այդ հին ուղղութիւնը շարունակած են՝ երբ թատրոնի կրօնական ու կատարելագործուած ձևն ընդգրկած են»:

**Մանգումէ.** Հայ գրականութեան և մտաւորականութեան նշանատուր դէմքերից մէկի՝ Եղիա Տէմիրճիպաշեանի լրօն, մոռացուած արգահատելի վիճակն է պատկերացնում, և շատ անպատուաբեր է նկատում հայ համայնրի համար այն պարագան թէ Եղիայի նման զրազէտը անձանօթ օտարուհիի ուսը միայն գտած է իր յոգնարէկ զուլար հազեցնելու համար փոխանակ մտերիմ ու կարեկից ուսին

այն հասարակութեան, որուն շքնադ գաւակն է ինքը, Եղիան:

Հայ ազգի «շքնադ» գաւակներին երևի վիճակուած է գտնել «օտարուհիի ուսը միայն իրենց յոգնարէկ զուլար հանգեցնելու համար»:

**«Մօսկ»**-ում (№ 254) տպուած նորայր Բիզանդացու նամակից մենք իմանում ենք հետեւալը.

